

XVI-XVIII ԴԱՐԵՐԻ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԵՎ
ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНСКОЕ ОСВОБОДИТЕЛЬНОЕ
ДВИЖЕНИЕ XVI—XVIII вв.
И АРМЯНСКИЕ ПОСЕЛЕНИЯ
(СБОРНИК СТАТЕЙ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1989г

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

XVI—XVIII ԴԱՐԵՐԻ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

(ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

A $\frac{1}{11}$ 79897



Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Վ. Բ. Բարխուդարյան (պատասխանատու խմբագիր),
Վ. Կ. Ոսկանյան, Վ. Մ. Մարտիրոսյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Միքայելյանը
և պատմական գիտությունների թեկնածու Զ. Հ. Գալստյանը

S 236

XVI—XVIII դարերի հայ ազատագրական շարժումները
և հայ գաղթավայրերը: (Հողվածների ժողովածու) / ՀԽՍՀ ԳԱ
Պատմ. ին-տ:/ [Խմբ. կոլեգիա՝ Վ. Բ. Բարխուդարյան և
ուրիշ.].—Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989.—230 էջ:

Ժողովածուի մեջ բննարկված ու լուսարանված են Մոլդավիայի և Վա-
լախիայի ժողովուրդների հակաօսմանյան պայքարին հայերի ունեցած մաս-
նակցությունը, XVI—XVII դդ. հայ առևտրական բուրժուազիայի դերը հա-
թողվորդի քաղաքական ազատագրման խնդրում, հայ-վրացական համա-
գործակցությունը՝ կապված XVIII դարի 80-ական թթ. ազատագրական
պայքարի հետ, հուլանդահայ գաղութի դերը հայ ազատագրական մտքի
ձևավորման մեջ: Ժողովածուի հողվածների գերակշիռ մասն առնչվում է
ռուսահայ գաղթօջախների պատմության հետ:

Ժողովածուն նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն հա-
սարակայնության համար:

0505040000 P

S 703 (02)—89 23—88

ԳՄԴ 63 . 3 (22) 43

ISBN 5—8080



Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1989

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն.

Սովետահայ պատմագիտության բնագավառում ձեռք բերված հաջողությունների կողքին նկատելի են նաև որոշ թերացումներ, հետազոտության կարոտ շատ պրոբլեմներ: Դրանցից է հայկական գաղթավայրերի պատմությունը, մի պրոբլեմ, որի նշանակությունը մեր ժողովրդի պատմության համար դժվար է գերազնահատել:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, երիտասարդ սովետական հանրապետությունն իր դրական վերաբերմունքն արտահայտեց գաղութահայության նկատմամբ: 1924 թ. հրապարակվեցին Ալեքսանդր Մյասնիկյանի «Կուսակցությունները գաղութահայության մեջ», իսկ մեկ տարի անց Աշոտ Հովհաննիսյանի՝ «Գաղութահայ խնդիրներ» աշխատությունները:

Եթե մինչև 1920-ական թվականների կեսերը առավել կամ նվազ չափով խոսվում ու գրվում էր գաղութահայության մասին, ապա հետագայում այդ պրոբլեմը դուրս մնաց ուսումնասիրության ոլորտից: Այդ հարցերը հարևանցիորեն շոշափվում էին սոսկ հայ ժողովրդի պատմության համապատասխան թեմաների, մասնավորապես հայ ազատագրական շարժումների և հայ-ռուս հարաբերությունների առնչությամբ:

Միայն 1950-ական թթ. կեսերից գաղափարական աշխատանքներում եղած թերությունները վերացնելու, անհատի պաշտամունքի քննադատության շնորհիվ ստեղծված բարենպաստ մթնոլորտում հնարավորություն ստեղծվեց անդրադառնալ պատմագիտության կողմից անտեսված շատ պրոբլեմների, շրջադարձ կատարվեց նաև դեպի գաղութահայության պատմության հարցերը:

Հետո ԳԱ պատմության ինստիտուտում կազմակերպվեց (1959 թ.) հայ գաղթավայրերի և սփյուռքահայության պատմության բաժին: Երեվանի պետական համալսարանի և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետներում մտցվեց հայ գաղթավայրերի պատմության հատուկ դասընթաց: Ստեղծվեց գաղութահայ-

ցության կամ հայ սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտե (1964 թ.), որը ծավալեց կարևոր գործունեություն:

Տեղին է հիշատակել, որ մեր ժողովրդի պատմության մեջ (մասնավորապես հասարակական-քաղաքական ու մշակութի) հայ գաղթավայրերի նշանակության հարցում չկա միասնական մոտեցում, ընդհանուր տեսակետ: Ավելին, որոշ պատմաբաններ երբեմն անտեսում էին, կամ ըստ արժանվույն չէին գնահատում գաղթավայրերի դերը հայոց պատմության մեջ: Եվ այդ այն պարագայում, երբ դեռևս նախասովետական շրջանում հստակորեն գիտակցվում էր հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Մեծ գրող և մտածող Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի պատմության հանգուցային պրոբլեմների վերաբերյալ արտահայտել է ուշագրավ մտքեր, որոնք զարմացնում են իրենց լայնախոհությամբ, հարազատ ժողովրդի պատմական զարգացման ընթացքն ու հեռանկարներն ըմբռնելու խորաթափանցությամբ: Նրա համար առանցքային է նշել նաև հայկական գաղթավայրերի պատմությունը լուսաբանելու խընդիրը:

1910 թ. Ալ. Շիրվանզադեի հոբելյանի առիթով նա գրում էր. «Կը-ցանկանայինք, որ գրական այս տոնին հայտնվեին և ռուսահայը, և տաճկահայը, և պարսկահայը, և Հնդկաստանի, Ամերիկայի ու Բուլղարիայի գաղթական հատվածները, և ոչ միայն այս տոնին, այլև միշտ նման տոներին, և դա դառնար սովորություն»^{*}:

Երկու տարի անց «Հայագիտության ազգային ֆոնդը» հոգևածում գրվաաանքով նշելով, որ Պետերբուրգի հայ գաղութը, նկատի առնելով պատմագիտության ու հայագիտության խեղճ վիճակը, նախաձեռնել է հատուկ ֆոնդ ստեղծել, և, անդրադառնալով ստեղծվելիք այդ հաստատության խնդիրներին, Թումանյանն ավելացնում է. «Որովհետև այս ամենը երկար տարիների կատարելիք գործեր են՝ առանձին ուշք դարձնել ըստ կարելույն շուտով տալու վերջին դարերի պատմությունը՝ հայերը Ռուսաստանում, հայերը Տաճկաստանում, հայկական գաղթականությունը և հայկական խնդիրը»^{*}:

Անվանի պատմաբան Լեոն, անդրադառնալով նոր շրջանի հայոց պատմությանը, գրում է. «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա

^{*} 2. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 156.

^{*} Նույն տեղում.

կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով... Հասկանալ և բացատրել այն ամենը ինչ XIX—XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագասահ ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, թե նրանից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է (ընդգծումը մերն է — Վ. Բ.), և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»*:

Այսպիսով, թեև ակներև է հայ գաղթավայրերի պատմությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, սակայն սովետահայ պատմագրությունը, փաստորեն միայն վերջին քառորդ դարում է սկսել արգասավոր կերպով զբաղվել դրանով: Արդեն հրապարակի վրա են Ռուսաստանի հայկական գաղթավայրերից Ղրիմի, Նոր Նախիջևանի, Արևմտյան Ուկրաինայի, Արմավիրի մասին աշխատությունները, շուտով կհրապարակվեն նաև Աստրախանի, Հյուսիսային Կովկասի հայ համայնքների պատմության ուսումնասիրության արդյունքները: Հրապարակվել են գրքեր Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի գաղթավայրերի վերաբերյալ, ավարտվել՝ Ֆրանսիայի, Տրանսիլվանիայի հայկական գաղութների պատմության հետազոտումը: Լույս են տեսել ուսումնասիրություններ Նոր Զուլայի, Հնդկաստանի, Սիրիայի և Լիբանանի, Եգիպտոսի գաղութների մասին, հետազոտվում է Ասիայի, Ամերիկայի և մյուս մայր ցամաքների հայկական գաղութների պատմությունը:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ մինչև այժմ այս ուղղությամբ կատարված աշխատանքները, որքան էլ արժանի լինեն դրվատանքի, դեռևս անբավարար են: Սովետահայ պատմագրությունն առայժմ զբաղված է աշխարհի տարբեր երկրների ամենևին չուսումնասիրված գաղութների պատմությանը նվիրված առաջին աշխատությունները հրապարակ հանելով միայն: Գաղութահայության պատմության հարուցած պատմագիտական շատ հարցեր պատշաճ ուշադրության չեն արժանացել, հրապարակի վրա չկան հայ գաղթավայրերի պատմության արդի պահանջների մակարդակով զրկված ընդհանրացնող աշխատություններ:

* Առ, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 73:

Հայտնի է, որ մարդկային հասարակության պատմությունն սկսվել է ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժերով: Բնակչության ղանգվածային տեղաշարժերը հատուկ են եղել հասարակական զարգացման բոլոր դարաշրջաններին: Բնականաբար, տարբեր հասարակարգերում տարբեր պատճառներ ու ձևեր են ընդունել այդ տեղաշարժերն ու գաղթագնացությունը: Անհրաժեշտ է միաժամանակ նկատի առնել, որ արտագաղթներն ամեն անգամ չէ, որ կարող են հանգեցնել կազմակերպված գաղութի ստեղծմանը: Գաղթագնացության ուղին բռնած զանգվածը նոր երկրում ու միջավայրում կարող է պարզապես տարրալուծվել հյուրընկալ ժողովրդի մեջ, առանց համայնք ստեղծելու և հավաքական կյանք ունենալու:

Գաղութ, գաղթօջախ կամ գաղթավայր հասկացության տակ պատմագիտությունն ընդունում է օտար երկրներում հանգրվանած որևէ ժողովրդի այն զանգվածների գոյությունը, որոնք այլ երկրում ու նոր պայմաններում ստեղծում են իրենց համայնքը, ներքին ինքնավարությունը, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորություններն ու դավանանքը, գիրն ու գրականությունը կամ կրում նշված հատկանիշների մի մասը: Ուրիշ խոսքով, երբ այդ զանգվածներն օտար միջավայրում պահպանում են ազգային նկարագիրը և իրենց հատկանիշներով ու համապարփակ կյանքով առանձնանում հյուրընկալող ժողովուրդներից:

Պատմական հին անցյալ ունեցող ժողովուրդներից շատերին է վիճակվել օտար երկնակամարների տակ գաղութներ ստեղծելը: Տնտեսական, ռազմաքաղաքական և այլ պատճառներով շատ ժողովուրդների առանձին հատվածներ հարկադրված են եղել գաղթել հայրենիքից և հանգրվան գտնել մոտ ու հեռավոր երկրներում: Սակայն արտահոսքը և գաղթավայրերի առաջացումը անցողիկ երևույթներ են եղել այդ ժողովուրդների կյանքում և չեն խախտել նրանց բնապատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունը: Հայ ժողովուրդը հարուստ պատմական անցյալ ունեցող այն սակավաթիվ ժողովուրդներից է, որը, տարաբախտաբար դարեր շարունակ կրել է արտագաղթի ծանրությունը և աշխարհի տարբեր երկրամասերում ստեղծել իր գաղթօջախները: Հայկական գաղթավայրերի առաջացումը ոչ թե տարաբախտ պատահականությունների հետևանք է եղել, այլ ցավոք, պարբերական բնույթ է կրել և դարձել նրա պատմական զարգացման առանձնահատկությունը:

Հին աշխարհի առաջավոր երկրներից մեկը՝ Հայաստանը, դեռ վաղ միջնադարում կորցնելով պետականությունը, ընկել է սահմանակից յւ-

շոր պետությունների տիրապետության տակ և, ապա, կրել արևելյան քոչվոր ցեղերի ու պետական միավորումների մեծաթիվ ուժերի դեմ մղվող պատերազմների, նրանց թալանչիական ասպատակությունների ամբողջ ծանրությունը, իսկ հետագայում ընկել թուրքական և պարսկական բռնապետության տակ:

Օտարի ավերիչ արշավանքների և դաժան տիրապետության հետևանքով երկրի ազգաբնակչության մի մասը հարկադրված է եղել թողնել հայրենի երկիրը, դիմել արտագաղթի կամ ենթարկվել բռնազաղթի: Այս եղանակով աշխարհի տարբեր երկրներում առաջացել են հայկական գաղութներ, որոնցից շատերն աշխույժ կյանք են ունեցել և գոյատևել դարեր շարունակ:

Գաղթավայրերում հայ զանգվածները շփվել են հյուրընկալող երկրների ժողովուրդների հետ: Գրեթե առանց բացառության, հայրենակտիվ դեր են կատարել իրենց ապաստան տված երկրների տնտեսական կյանքում, ներքին ու միջազգային առևտրում, արդյունաբերության մեջ: Նրանք նշանակալից մասնակցություն են ունեցել հյուրընկալ երկրների հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Հայ մշակույթը բեղմնավորվել է այդ երկրների կուլտուրայի բարերար ազդեցությամբ և փոխադարձաբար ներգործել դրա վրա:

Հայկական գաղութները նպաստել, ավելին, նշանակալի դեր են կատարել հայ և հյուրընկալ երկրների ժողովուրդների հարաբերությունների, փոխմբռնման ու համագործակցության մեջ:

Հայ գաղթավայրերը բազմաթիվ թվերով կապված են եղել Մայր հայրենիքի հետ: Այդ կապերը, պատմական տարբեր փուլերում տվյալ դարաշրջանի առաջադրած խնդիրների ոգուն համապատասխան, տարբեր բնույթ են ստացել, արտահայտվել այլևայլ ձևերով ու եղանակներով, սակայն մի հանգամանք մնացել է անփոփոխ. Մայր հայրենիքից եկող կենսական այդ կապերը զորավոր են եղել օտար երկնակամարների տակ ծվարած հայկական բեկորների գոյատևման համար: Մոտ ու հեռավոր երկրներում հանգրվանած հայ զանգվածներն անտարբեր չեն եղել հայրենի երկրի նկատմամբ, տեղյակ են եղել նրա վիճակին, այնտեղ կատարվող իրադարձություններին և մշտապես ինչ-որ չափով հոգացել, նյութական ու բարոյական օգնություն ցույց տվել նրան, ապրել հարազատ ժողովրդի պատմական բախտով, նրա ճակատագրով:

Հայկական գաղութները, որպես կանոն, կենդանի կապեր են ունեցել Հայաստանի և հայկական շրջանների հետ: Հայրենի երկրի հետ կապվելու միջոցներից էր առևտուրը: Հայկական գաղթավայրերի վա-

Ճառականները նշանակալի դեր էին կատարում Արևելքի և Արևմուտքի, Պարսկաստանից և արևելյան մյուս պետութուններից Ռուսաստանի և եվրոպական երկրների հետ կատարվող միջազգային առևտրում: Նրանք առևտրական գործունեությամբ շփվում էին Անդրկովկասի, մերձակա և հեռավոր այլ երկրների հայության հետ և այդ եղանակով կենդանի կապ ստեղծում հայրենի երկրի հետ և իրազեկ դառնում նրա վիճակին:

Մայր հայրենիքի հետ շփումներն ու կապերը մեծ շահով իրականացվում էին նաև եկեղեցու միջոցով: Հայ եկեղեցու միավորիչ դերը նշանակալից էր դառնում Հայաստանում պետականության բացակայության հետևանքով: Էջմիածինը գործունեության համահայկական ընդգրկում ուներ և իր թեմերի ու ներկայացուցիչների միջոցով կապված էր գաղթաշխարհի հետ:

Հաճախ այդ կապերն իրականանում էին ոչ թե ուղղակի, այլ միջնորդված ձևով: Հայ գաղթօջախները փոխադարձ շփումներով իրազեկ էին դառնում հայրենի երկրում կատարվող անցքերին, կարևոր իրադարձություններին: Հայտնի են, օրինակ, ռուսահայ գաղթօջախների կապերը միմյանց հետ կամ նրանց, ինչպես և պարսկահայ համայնքների աշխույժ հարաբերությունները հնդկահայերի հետ: Համանման ձևով շփումների մեջ էին Մերձավոր արևելքի և Արևելյան Եվրոպայի հայկական զանգվածները: Պատահական չէ, որ հայկական գաղութների մի ստվար մասը ձևավորվել է ոչ թե Հայաստանից կատարված արտագաղթի, այլ թրեք գաղթավայրի հաշվին: Ռազմարազաբական, տնտեսական ծանր պայմաններից դրդված, հաճախ հայկական գաղութներից հայ զանգվածը գաղթում էր իրեն արդեն ծանոթ ուրիշ երկիր: Ինչպես հայտնի է, հնդկահայ գաղութները, փաստորեն, առաջացան Պարսկաստանից, հատկապես Նոր Զուղայից, Նոր Նախիջևանը՝ Դրիմից, Գրիգորիոպոլը՝ Մոլդավիայից և Բեսարաբիայից, Պետերբուրգի հայ համայնքը՝ ռուսահայ շրջաններից կատարված ներհոսքի հետևանքով:

Հայկական գաղթավայրերը օտար երկրներում, նոր միջավայրի անխուսափելի ազդեցությունը կրելով հանդերձ, պահպանել են հայրենի երկրի բարքերը: Դա վերաբերում է ոչ միայն ազգային սովորություններին ու կենցաղին, այլև կյանքի գրեթե բոլոր ասպարեզներին: Նրանք իրենց հետ տարել են և սերնդից սերունդ փոխանցել նախնիներից ժառանգած կենսահաստատ շատ ավանդներ:

Հայկական գաղթաշխարհը պահպանել է մայրենի լեզուն, ազգային գիրն ու գրականությունը, մշակույթը: Ավելին, տիրապետող ժողովրդի արվեստի ազդեցությունը կրելով հանդերձ, գաղթավայրերում առաջա-

գրմել է հայկական մշակույթը: Դրանով էլ, ի վերջո, հարստացել ու առավել բազմերանգ է դարձել ընդհանուր հայ մշակույթը:

Մայր հայրենիքի և հյուրընկալ երկրների միջև կապեր ստեղծելու, ազգային գիրն ու գրականությունը պահպանելու, հայկական գաղութների մասին վերոհիշյալ ասածներն առարկայական դարձնելու նպատակով հիշատակենք միայն մեկ փաստ: Նոր Զուղայի գրասեր վաճառական Գրիգոր Խալդարյանը Լոնդոնում 1780 թ. հիմնադրում է հայկական տպարան, որը շուտով տեղափոխում է Ռուսաստան: Այստեղ տպարանը գործում է մինչև XVIII դարի վերջը, սկզբում Պետերբուրգում, ապա Նոր Նախիջևանում և Աստրախանում: Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղունյանի տնօրինությամբ Խալդարյանի տպարանում հրատարակվում է ամելիքան 40 գիրք: Այդ գրքերի միջոցով ընթերցողներին, գերազանցապես հայկական շրջաններին ծանոթացնում էին ինչպես Ռուսաստանի պատմությանն ու մշակույթին, այնպես էլ Հայաստանի ու հայ ժողովրդի անցյալին:

Հայկական զանգվածներին կաթոլիկ դավանանքից հեռու պահելու և ազգային նկարագիրը պահպանելու նպատակով տպագրված մի շարք աշխատություններում քննադատվում էր կաթոլիկությունը: Հրատարակված դասագրքերի ու բառարանների միջոցով տպարանը ծառայում էր լուսավորության գործին: Տպագրված գրքերը բազմաթիվ օրինակներով տարածվում էին Ռուսաստանում, օտար երկրների հայկական գաղութներում և բուն Հայաստանում:

Ահա թե փոքրիկ մի տպարանի ընձեռած հնարավորություններով ինչպիսի նշանակալի գործ էր կատարվում հայ և ռուս ժողովուրդների փոխճանաչման, նրանց հարաբերությունների և հայ գաղթավայրերի ու Մայր հայրենիքի միջև հոգևոր-մշակութային կապեր պահպանելու ասպարեզում:

* * *

Հայրենի երկրի հետ հայ գաղթավայրերի կապն առավել մեծ չափերով դրսևորվել է ազատագրական շարժումներով: Դժվար է գերազնահատել ազատագրական շարժումների, առհասարակ ազատագրական գաղափարախոսության դերը հայ ժողովրդի պատմության մեջ:

Մեր ժողովրդի կազմավորման ժամանակաշրջանից, Հայկի և Բելի առասպելական պատմությունից մինչև XX դարը, ազատագրական շարժումները հայ ժողովրդի կյանքում էական դեր են կատարել, դարձել

նրա պատմական դարգացման առանձնահատկությունը: Այդ պատճառով էլ հայոց ամբողջ պատմությունը, գրականությունն ու արվեստը շոգորված են ազատագրական ու ազատասիրական գաղափարներով: Պատմական տարբեր դարաշրջաններում այլևայլ ձևերով են դրսևորվել հայ ժողովրդի ազատագրական ոգորումները, իսկ պետականության գոյության պայմաններում գերազանցապես երկրի անկախությունն ու ինքնուրույնությունը պահպանելու նշանաբանով է ընթացել հասարակական այդ պայքարը:

Տարբեր պատմափուլերում նույնպես այլ ձևերով, առավել կամ պակաս ուժգնությամբ է արտահայտվել նաև հայ ազատագրական շարժումներին գաղութահայության մասնակցությունը՝ կախված հայ զանգվածներին պատասպարած երկրի ռազմաքաղաքական դիրքորոշումից, հայ համայնքի կամ նրա գործիչների հասարակական դերից և պատմական կոնկրետ հանգամանքներից:

Ուշ միջնադարում՝ XVI—XVIII դարերում Թուրքիայի և Պարսկաստանի երկարատև տիրապետությունը, սոցիալական, ազգային ու կրոնական ճնշումները և հալածանքները ծանր վիճակ էին ստեղծել հայ ժողովրդի համար: Երկրում չկային ոչ միայն խաղաղ աշխատանքի պայմաններ, այլև անգամ կյանքի ու գույքի ապահովության և ոչ մի երաշխիք: Հայ ժողովրդի գլխին դամոկլյան սրի նման կախվել էր ձուլվելու և ֆիզիկապես ոչնչանալու վտանգը: Հայ ժողովրդի այս շրջանի պատմության առանցքը, փաստորեն, ազատագրական ոգորումներն էին: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը հայ ազատագրական միտքը, բնականաբար, կապում էր նաև դրսից սպասվող օգնության հետ:

Եվ ահա, Հայաստանում ստեղծված այդ ծանր ու մռայլ ժամանակաշրջանում, հայկական գաղթավայրերը ջերմորեն արձագանքում և իրենց նպաստն են բերում հայրենի երկրում ծավալված ազատագրական շարժումներին: Հայաստանի ազատագրմանն արձագանքեց հատկապես երեք հիմնական ռեգիոնների գաղութահայությունը՝ Արևելյան Եվրոպայի երկրների, Պարսկաստանի ու Հնդկաստանի և առանձնապես Ռուսաստանի, քանի որ իրերի բերումով վերջինս էր շահագրգռված և ի վիճակի իրական օգնություն ցույց տալու հայ ժողովրդին:

Լեհաստանի, Հունգարիայի, Մոլդավիայի և արևելաեվրոպական մյուս երկրների հայկական զանգվածները ակտիվ մասնակցություն են ունեցել թուրքական ագրեսիայի և ապա տիրապետության դեմ ծավալված պայքարին: Լեհահայերը մասնակցել են թուրք-լեհական XVI—XVII դարերի գրեթե բոլոր պատերազմներին: 1683 թ., թուրքերի պարտու-

Թյամբ ավարտված Վիեննայի նշանավոր ճակատամարտում, Յան Սոբեսկու բանակում թուրքերի դեմ կռվում էին նաև 5000 հայեր։ Այդ նույն ճամանակ Գաբրիել Թոխատեցին և ուրիշ հայեր, անտեսելով վտանգը, ակտիվ մասնակցություն էին ունենում Հունգարիայի մայրաքաղաք Բուդայի ազատագրմանը։

Արևելաեվրոպական երկրների աչքի ընկնող հայազգի դիվանագետների, թարգմանիչների և այլ պաշտոնյաների գործունեության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում եվրոպական երկրների ուժերը միավորելու և հակաթուրքական լիզա ստեղծելու՝ նրանց գործադրած ջանքերը։ Բավական է թեկուզ հիշատակել հայազգի դիվանագետներ Կոստանդին դը Սիրիի, Բոգդան Գուրդիի, Մուղավիայի իշխաններ Պետրոս Վարդիկի, Յոհան Հայի և շատ շատերի եռանդուն գործունեությունը հակաթուրքական ուժերի ակտիվացման գործում։ Այդ պայքարում հայազգի գործիչների նախանձախնդրությունը բացատրվում է նաև նրանով, որ նրանք, իրավամբ, այդ պայքարը լծողում էին հայրենի երկրի ազատագրման հետ, Թուրքիայի պարտության ու թուլացման մեջ տեսնում Հայաստանի ազատագրման գրավականը։ Ավելին, արևելաեվրոպական երկրների հայկական շրջաններում այնքան շատ էր շոշափվում Հայաստանի ազատագրման հարցը, որ լեհական արքունիքում հայկական անկախ թագավորություն ստեղծելու ծրագրեր էին մշակվում։ Յան Սոբեսկին այդ առթիվ բանակցություններ էր վարում Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հետ։

XVIII դ. առաջին երեսնամյակում պարսկա-թուրքական տիրապետության դեմ Հայաստանում ծավալված հուժկու ազատագրական պայքարը լայն արձագանք գտավ գաղութներում։ Ինչպես հայտնի է, լեհահայերը կամավորական ջոկատներ էին կազմել հայրենի երկրի ազատագրման պայքարին աջակցելու համար։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը՝ XVI—XVIII դարերը, առանձնահատուկ իմաստ ու նշանակություն են ստանում ազատագրական շարժումների ոռոտական կողմնորոշման տեսանկյունով։ Այդ պատմափուլում էր, որ հայ ազատագրական միտքը, երկար դեգերումներից հետո վերջնականապես հրաժարվեց եվրոպական տերությունների միջոցով ազատագրվելու պատրանքներից և անվերադարձ դիմաշրջվեց դեպի հյուսիսի իր հզոր հարևանը՝ դեպի Ռուսաստան։ Սաղմնավորվեց հայ ազատագրական շարժման ոռոտական կողմնորոշումը, որն աստիճանաբար հասունացավ, խորացավ և դարձավ հայ ժողովրդի ազատագրման միակ հուսալի և ուժեղ ուղին։

Հիրավի, XVI—XVIII դարերում էր, որ թե՛ գաղափարական և թե՛ գործնական քայլեր կատարելու ուղիով նախապատրաստվեց հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

Եթե Արևելյան Եվրոպայի հայկական գաղութների ակտիվությունը դրսևորվում էր հատկապես XVI—XVII դդ., ապա հնդկահայերի շարժումը մեծ թափ ստացավ XVIII դ. երկրորդ կեսին: Հնդկահայ շրջաններում լայն ծավալ ստացած մտավոր-լուսավորական շարժման հասարակական-քաղաքական էությունը օտարի տիրապետությունից Հայաստանի ազատագրության գաղափարախոսությունն էր: Հնդկահայ առևտրական բուրժուազիան շփումների մեջ էր և քաջածանոթ արևմտաեվրոպական երկրների ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքին, ուստի և նրա նշանավոր գործիչների մտայնության վրա ակնհայտ է XVIII դարի եվրոպական լուսավորիչների առաջադեմ գաղափարների ազդեցությունը: Այդուհանդերձ, հնդկահայերը անվերապահորեն կողմնորոշվում էին դեպի Ռուսաստանը, դա լավագույնս վկայում է, որ հնդկահայ գործիչները խորապես ըմբռնում էին ընդհանուր ռազմաքաղաքական իրադրությունը, եվրոպական տերությունների դիրքորոշումը, Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների միջև ստեղծված փոխհարաբերությունները և այդ ամենից հանգում ունալ հետևությունների:

Հայրենի երկրի կենսական ուժերին ապավինելու, Վրաստանի հետ ղաշնակցելու և Ռուսաստանից սպասվող օգնության միջոցով Հայաստանն ազատագրելու, ապա Ռուսաստանի հովանավորության ներքո ապագա հայկական պետության կառուցվածքի մասին հնդկահայ գործիչների առաջադրած գաղափարները ժամանակի համար խիստ առաջադիմական հասարակական-քաղաքական հայացքներ էին և նշանակալից ազդեցություն ունեցան ու նկատելի հետք թողեցին հայ իրականության մեջ:

Ուշ միջնադարի և մասնավորապես XVIII դարի հայ ազատագրական շարժումների մեջ ակնհայտ է Ռուսաստանի հայկական գաղթավայրերի դերը: Ռուսահայ գաղութները հայ-ռուսական հարաբերությունների ամբողջական շղթայի մի կարևոր մասն են կազմել: Պատահական չէ, որ հնից եկող կապերն ամրապնդվում և պարբերական բնույթ են ստանում հայ ազատագրական շարժման և Ռուսաստանի հանդեպ եղած հետաքրքրությունների և ակնկալությունների վերելքի շրջանում՝ XVIII դարում: Պատմական այդ ժամանակաշրջանում են հիմնադրվում Ղլաւրի, Մոզդոկի, Պետերբուրգի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի գաղութ-

ները, աշխույժ կյանքով են ապրում Աստրախանի, Մոսկվայի՝ նախկինում հիմնադրված հայ համայնքները:

Ռուսահայ գաղութները կենդանի կապերի մեջ էին և լավատեղյակ հայրենի երկրի իրավիճակին, այնտեղ կատարվող անցքերին: Այդ պատճառով և ռուսական պետության դրական վերաբերմունքի շնորհիվ նրանք առավել ակտիվ էին արձագանքում հայ ազատագրական շարժումներին: Պյա տեսակետից հատկանշական է հետևյալ փաստը: Ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ էմինը 1762 թ., երբ ժամանում է Աստրախան, նրան միանում են մի քանի տասնյակ զինված հայ երիտասարդ կամավորներ, որոնք պատրաստ էին մեկնել հայրենիք և կռվել նրա ազատագրման համար: Ղզլար քաղաքի մոտ նրան, որպես Հայաստանի ապագա ազատարարի, խանդավառությամբ դիմավորում են ընդամենը մի քանի տասնամյակ առաջ հիմնադրված հայկական գաղութի զինավառ երիտասարդները և հանդիսավորությամբ ուղեկցում քաղաք:

Ռուսահայ օջախները ջանացել են բարձր պահել ազատագրական շարժման ոգին: Նրանք պարարտ հող և համապատասխան մթնոլորտ էին ստեղծում ռուսական կառավարության հետ՝ Հայաստանի ազատագրման նպատակով տարվող բանակցությունների համար: Հատկանշական է, որ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու բոլոր ծրագրերը մտահղացվել են Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութներում:

Ի վերջո, հայկական գաղթավայրերի հայրենասիրական ձգտումների, հայ ժողովրդի ճակատագրի, նրա պատմական բախտի հանդեպ նախանձախնդիր վերաբերմունք ունենալու, ավելին, դրանով ապրելու պերճախոս վկայություն է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական ակտի նկատմամբ գաղթաշխարհի դրսևորած ջերմ վերաբերմունքը:

Հայ նշանավոր գրող, լուսավորիչ Մեսրոպ Թադևոսյանը հեռավոր Հնդկաստանից գրում էր. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն շարչարանքից ազատվեց... երբ որ լսեցի ներկա մեր աշխարհի ազատությունը, սիրտս ուրախությամբ վառվեց»*:

Ռուսահայ գաղութների հավաքական վերաբերմունքն է արտահայտվել Նոր Նախիջևանից հղված շնորհավորական ուղերձում: Նորնախիջևանցիները, ողջունելով հայրենակիցներին հայրենիքի փրկության առթիվ, ափսոսանք են հայտնում, որ արարիչը արծվի թևեր չի տվել

* Մ. Թադևոսյան, Ուղեգրություններ, հոգվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 410:

մարդուն թռչելու Արարատյան երկիր շնորհավորելու «...լեռանցն Արարատայ, զորս փրկեցեալ ի ներքուստ ձեռաց բարբարոսաց»*:

Այսպիսով, դժվար չէ եզրակացնել, որ ուշ միջնադարում աշխարհասփյուռ հայկական գաղութները կապված էին Մայր հայրենիքի հետ և իրենց նպաստն էին բերում Թուրքիայի և Պարսկաստանի բռնատիրական լծից Հայաստանի ազատագրման գործին:

Հոգևածների սույն ժողովածուն ընդգրկում է տակավին 1983 թ. պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի պատմության բաժնի ուժերով կազմակերպված «XVI—XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը» գիտական նստաշրջանի նյութերը: Սովետահայ պատմագրության մեջ այս ժողովածուն այն անդրանիկ գործն է, որը նվիրված է ոչ թե առանձին որևէ գաղութի պատմությանը, այլ հայ գաղթավայրերի պատմության առանցքային մի հարցի: Ընթերցող հասարակայնության ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուով փաստորեն սկսվում է հայկական գաղութների պատմության պրոբլեմային ուսումնասիրությունը: Իր տեսակի մեջ առաջինը լինելով, հուսով ենք, որ ներկա ժողովածուն ճանապարհ է բացելու նման կարգի հետագա հետազոտությունների համար:

* Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթ. դիվան, թ. 55, վ. 78:

Վ. Բ. Բաղխուդարյան


A II 79897

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ՍԿՋԲՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ (XV—XVIII ԴԴ. ՍԿԻՋՐ)

Պատմական սկզբնաղբյուրները վկայում են, որ հայերի առնչությունները արևելյան սլավոնների, ապա և հին Ռուսիայի հետ սկզբնավորվել են վաղ միջնադարում և ականառու են դարձել շուրջ հազար տարի առաջ, երբ Բյուզանդիայի հայկական դինաստիայի և Կիևյան մեծ իշխանության միջև հաստատվեցին քաղաքական, ռազմական և ընտանեկան կապեր, Կիևի մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչը 958—989 թթ. ընդունեց քրիստոնեությունը՝ այն պարտադրելով հին Ռուսիայի ողջ բնակչությանը, որպես պետական համընդհանուր կրոն։ Այս կարևոր իրադարձությունները մեծ պատմական նշանակություն ունեցան ոչ միայն արևելյան սլավոնների՝ որպես ռուս ժողովուրդ ձևավորվելու պրոցեսում, այլև ռուս-հունական քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կապերի զարգացման համար և նպաստեցին հայ-ռուսական հարաբերությունների աշխուժացմանը, հին Ռուսիայի տարածքում հայկական գաղթավայրերի ստեղծմանն ու տարածմանը։ Ինչպես հայտնի է, թուրք-սելջուկների արշավանքների ժամանակներից ուժեղանում են հայերի զանգվածային բռնագաղթերն ու արտագաղթերը դեպի հարևան երկրները, մասնավորապես դեպի հին Ռուսիա, որտեղ փախստական գաղթահայերը գտնում էին ոչ միայն փրկության հանգրվան, այլև բարենպաստ պայմաններ՝ լայնատարած, արգավանդ դաշտեր ու անտառներ, ռուսների բարյացակամությունն ու հյուրընկալությունը, որ մշտապես ցուցաբերվում էր հայ գաղթականների նկատմամբ։

Գաղթավայրերում հայ գյուղացին ու արհեստավորը, առևտրականն ու հոգևորականը գտնում էին ոչ միայն կյանքի ու սեփականության փրկություն, այլև իրենց համայնքներն ու եկեղեցիներն ստեղծելու, հաճախ և ինքնավարություն, սեփական հոգևոր կյանք ու ազգային դեմքը պահպանելու, ինչպես և սովորելու ու սովորեցնելու, հարստանալու և



հարստացնելու հնարավորություն: Հայ գաղթավայրերի բնակչությունը կապվում է իր երկրորդ հայրենիքին, մասնակցում սոցիալ-տնտեսական կյանքին, հոգում իր քաղաքի ու երկրի հուղող հարցերի մասին, մասնակցում երկրի պաշտպանությանը, քանի որ XIII—XV դդ. Ռուսիան, ինչպես և Ուկրաինան տառապում էին թաթար-մոնղոլական բարբարոսների արշավանքներից ու դարավոր տիրապետությունից, ապա և թուրք-թաթարական լծից: Պատմական ծանր իրավիճակը ղգալիորեն նման էր և՛ Ռուսաստանի, և՛ Անդրկովկասի ժողովուրդների համար: Սակայն XV դարում Մոսկովյան իշխանությունը կարողացավ աստիճանաբար «հավաքել» ռուսական հողերը և պայքար սկսել թաթարական բռնակալության դեմ:

Ռուսական ազգային պետությունը 1480 թ. կարողանում է թոթափել թաթարական լուծը և կանգնել ուժեղ տերության դիրքում, ճանաչում գտնելով ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Անդրկովկասում: Այսպես, XV դարի վերջերից հայ-ռուսական և վրաց-ռուսական հարաբերությունների նոր ժամանակներ են սկսվում: Բայց XV դարում հզորանում էր և պատմության բեմ բարձրացող Օսմանյան Թուրքիան: Ինչպես հայտնի է, «թուրք-օսմանյան հորդանքը մուտք են գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք, ամենից առաջ, հիմնում են Կարահիսար ավազակային պետությունը»¹:

Թուրքական արշավանքները, ինչպես և օսմանական դարավոր տիրապետությունը չարիք դարձան ժողովուրդների համար: Ռազմատենչ թուրքերը արտագրական աշխատանքով չէին ղբաղվում, արհամարհում էին այն՝ համարելով ստորացուցիչ մահմեդականների իշխող ազգի համար: Նա, ինչպես գրել է Քեմալ Աթաթուրքը՝ «քարշ էր գալիս ահա այդպիսի ֆաթիհ-նվաճողների հետևից, չէր աշխատում իր հայրենիքում և, ի վերջո հաղթվեց նրանց կողմից»²: Պետությունը, զավթելով նորանոր երկրներ, դարձավ բարբարոս ու նվաճողական ուժ, «միջնադարի միակ իսկական ռազմական պետությունը»:

Թուրքական ագրեսիան ուժեղանալով, հասավ նոր կործանարար «հաջողության»: 1453 թ. Պոլսի գրավումով Թուրքիան վերջ դրեց երբեմնի հզոր Բյուզանդական կայսրությանը, հաստատելով առավել բռնապետական, լենինի խոսքերով ասած «զազրելի ռեժիմը»: Ողջ Եվրոպայի վրա կախվեց թուրքական յաթաղանը: Նվաճած երկրները և ժողովուրդներին թալանելով, նրանց հաշվին մեծացնելով իր ռազմական ու քաղաքական պոտենցիալը, «Բարձր դուռը» ավելի ու ավելի էր ուժեղացնում իր հարձակողական թափը, որին դիմակայելը դժվար էր: Բալկան-

ների ու Անդրկովկասի համար բարեբախտություն էր, որ ուժեղանում էր Մոսկովյան պետությունը՝ գեթ հետագայում օգնություն ակնկալելու համար:

Հայերը Մոսկովյան մեծ իշխանության հետ շփումներ ունեին դեռևս XIV դ. և չէին կարող չնկատել այն կարևոր երևույթները, որոնք տեղի էին ունենում XV դարում և հատկապես երկրորդ դարակեսին, թեպետ Ռուսիան դեռևս հեծում էր թաթարական լծի տակ: Մոսկվան դառնում էր խոշոր տնտեսական ու քաղաքական կենտրոն, որտեղ զարգանում էին արհեստներն ու առևտուրը, աճում էր բնակչությունը, բարձրանում Մոսկովյան մեծ իշխանության հեղինակությունը: Մոսկվայի մեծ իշխան Իվան 3-րդը (1462—1505), շարունակելով իր նախորդների քաղաքականությունը, հաջողությամբ միավորում էր Կենտրոնական Ռուսիայի հրեմնի անկախ իշխանությունների տիրույթները, խելամտորեն օգտագործելով երկրի տնտեսական զարգացման ու քաղաքական անկախության հասնելու համար անհրաժեշտ կենտրոնացված պետություն ստեղծելու ձգտումները:

Կենտրոնացված պետության ստեղծման առաջադիմական նշանակությունը (թեկուզ և միապետության խանձարուրում) ակնհայտ էր միջնադարում, որտեղ թագավորական իշխանությունը հանդես էր գալիս որպես «կարգի ներկայացուցիչ»՝ անկարգության ու քառսի մեջ:

Թագավորական իշխանության հեղինակության բարձրացման նպատակով Իվան 3-րդը վարում էր հեռատես քաղաքականություն, իր կողմը գրավելով թաթար խաներին, հակադրելով մեկը մյուսին, միաժամանակ դիվանագիտական կապեր հաստատելով Եվրոպայի արքունիքների հետ: Իվան 3-րդը, ամուսնանալով Բյուզանդիայի կայսերական տան վերջին ներկայացուցիչ Զոյա—Սոֆյա Պալեոլոգի հետ, կարծես, «օրինական ժառանգ» դարձավ Բյուզանդիայի՝ այսպես կոչված Արևելյան Հռոմեական կայսրերի: Դինաստիական այդ ամուսնությունը նպաստեց Հռոմի պապը, հուսալով հզորացող Ռուսաստանին հանել թուրքական ագրեսիայի դեմ: Բայց պետք էր նախ և առաջ Ռուսաստանն ազատել թաթարական լծից, միավորել երկիրը, այն պաշտպանելով պարբերաբար կրկնվող թուրք-թաթարական արշավանքներից: Ինչպես նկատում է Ֆրիդրիխ Էնգելսը, այդպես էլ ընթացավ Ռուսաստանի միավորման ու ազատագրման պրոցեսը:

Մոսկվայի առաջին իսկ հաջողությունները XV դարի կեսերին նկատելի դարձան Արևմուտքում ու Արևելքում, մասնավորապես Անդրկովկասում: 1466 թ. Մոսկվա է գնում Շիրվանի խանի դստան Հասան Բեկը՝

Ռուսաստանի հետ առևտրական կապեր հաստատելու, իսկ Մոսկովայից էլ Անդրկովկաս է ուղարկվում ռուսական դեսպան Վասիլի Պանինը, նշանավոր Ա. Գանասի Նիկիտինի հետ:

Հոռմի Պողոս 2-րդ պապի կողմից լիազորված Բուրգունդիայի դեսպան Լյուդովիկոս Բուրնակին և ռուսական պետության կողմից Անդրկովկաս ուղարկված Մարկո Ռոսոն եղան նաև Բավրիզում, որտեղ հանդիպեցին Կոնտարինիի և ալյոց հետ, ապա 1475 թ. միասին գնացին Ֆասո (Փոթի՝ Վրաստան): Հոռմի պապն ու Եվրոպայի պետություններն ուզում էին հակաթուրքական պայքարի մեջ ներգրավել Ուզուն Հասանին, Անդրկովկասի իշխաններին և Իվան 3-րդին, որոնց միջոցով և խաչակրաց արշավանք կազմակերպել օրբստօրե հզորացող ագրեսիվ Թուրքիայի դեմ: Սակայն Իվան 3-րդը պետք է նախ ազատվեր թաթարական գերիշխանությունից, որն զգալիորեն թուլացել էր, բայց չէր վերացել: Դարակազմիկ ու բախտորոշ դեր կատարեց Ռուսաստանը և՛ սեփական, և՛ հարևան երկրների պատմության մեջ, 1480 թ. թոթափելով թաթարական լուծը: Ինչպես նկատել է Կ. Մարքսը, զրանից հետո, «մենք Իվան 3-րդին տեսնում ենք միանգամայն անկախ՝ զահի վրա նստած: Նրա կողքին՝ բյուզանդական վերջին կայսեր դուստրը: Ոսկե Հորդայի բեկորները ժողովվել են նրա արքունիքի շուրջը... Զարմացած Եվրոպան, որ Իվան 3-րդի թագավորության սկզբում նույնիսկ հազիվ էր նկատում Մոսկովիայի գոյությունը, շժմել էր իր արևելյան սահմանների վրա հսկայական պետության հանկարծակի հանդես գալուց. և ինքը՝ սուլթան Բայազետը, որի առաջ դողում էր Եվրոպան, առաջին անգամ լսեց Մոսկովիտի գոռողամիտ ճառերը»³:

Եթե Մոսկովիայի հզորացումը այդպիսի տպավորություն էր գործել աշխարհի հզորների վրա, ապա պարզ է, թե ինչքան մեծ էր դրա նշանակությունը իրենց անկախությունը կորցրած և թուրքական նվաճումների նախադռանը գտնվող փոքր ժողովուրդների, մասնավորապես հայերի ու վրացիների համար: Պատահական չէ, որ թաթարական լծի տապալումից անմիջապես հետո, 1483 թ. Իվան 3-րդի մոտ են գնում վրացական թագավոր Ալեքսանդրի դեսպանները՝ Նարիմանը, Դեմիյանը և Խոզի Մարումը (վերջինը հայազգի խոջա Միրաքն էր, որ շատ լավ փոխհարաբերությունների մեջ էր վրացական իշխող շրջանների հետ և կատարել էր դիվանագիտական բանագնացություններ Եվրոպայում): Դեսպանները բերել էին Ալեքսանդրի նամակը, որում իշխանն ընդգծում էր երկրի ծանր վիճակը և խնդրում օգնություն ու հովանավորություն⁴: Սա

մեզ հասած առաջին քաղաքական փաստաթուղթն է, որ խոսում է վրաց իշխանության կողմից ռուսական օգնություն հայցելու մասին:

Ինչպես գրում է պրոֆ. Բաղիլևիչը, ռուս-վրացական (մենք կասեինք նաև՝ ռուս-հայկական) կապերն այդ ժամանակ արդեն «նշանակալիորեն ավելի ընդարձակ են եղել, քան թե մինչև այժմ ներկայացվում է սահմանափակ աղբյուրների հաղորդումով»:

Ինչպես նկատել է Ֆ. Էնգելսը. «Կոստանդնուպոլիսը դեռ նոր էր ընկել թուրքերի ձեռքը, երբ Մոսկովյան մեծ իշխանն իր գերբի մեջ ներգծեց բյուզանդական կայսրերի երկզխանի արժիվը, այսպես իրեն հրռազակելով նրանց ժառանգորդն ու վրիժառուն»:

Պոլսի անկումից հետո քրիստոնյա՝ հունադավան կամ ուղղափառ ժողովուրդները, բնականաբար, իրենց հայացքը պետք է հառեին դեպի բարձրացող ու հզոր Մոսկովյան պետությունը, դեպի «Երրորդ Հռոմը»⁵:

Բյուզանդական կայսրության անկման ու թուրքերի կողմից Պոլսի գրավման ժամանակակից ու ականատես Աբրահամ Անկյուրացին երազում էր, որ «հոռմայեցոց» միջոցով անհավատ «հազարացոց» ձեռքից կազատվի Սոփիայի («Սուրբ Սոփի») տաճարը: Նրա անհայտ մի այլ ժամանակակից իր «Թագուհի մի տեսա» սկզբնատողով պոեմում թուրքական տիրապետությունից Պոլսի ազատագրության մեջ արդեն նշմարում է Մոսկվայի դերը⁶: Ինչպես ճիշտ կոհսել է Աս. Մնացականյանը, Մոսկվայի իշխանի և նրա թագուհու մասին գրված այդ պոեմի հեղինակը նկատի ունի Իվան 3-րդի և Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդինի եղբոր դուստր Սոֆյայի ամուսնության քաղաքական նկատառումները, երբ Պալեոլոգները և Հռոմի պապը հույս ունեին Ռուսաստանի միջոցով (կամ գեթ օգնությամբ) ազատագրել Կոստանդնուպոլիսը: Այսպես, XV դարի երկրորդ կեսին ապրած հայ հեղինակը, հավանաբար, լավ գիտեր Մոսկվայում կատարված դեպքերը՝ Իվան 3-րդի ամուսնությունը Սոֆյայի հետ, Հռոմի պապի միջամտությունն ու հակաթուրքական պայքարին Ռուսաստանին մասնակից դարձնելու ձգտումները: Ուշագրավ է այն, որ պահպանվել են այդ պոեմի տասներկու տարբերակներ՝ փաստ, որ վկայում է XV—XVI դդ. հայերի կողմից Մոսկվային տրվող մեծ դերի ու նշանակության մասին⁷: Այդ փաստերը վկայում են, որ Անդրկովկասում կային որոշակի ձգտումներ Ռուսաստանի հետ քաղաքական-դիվանագիտական կապեր ստեղծելու համար:

Ինչպես ճիշտ նկատել են վրաց ու հայ սովետական պատմաբանները, ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորվելու պրոցեսն սկսվել է XV դարի երկրորդ կեսից, ծավալվել XVI—XVIII դա-

րերում, դառնալով համաժողովրդական քաղաքական ծրագիր, որով ղեկավարվում էին Բալկանների և Անդրկովկասի առաջագիմ գործիչները, հայացքը հասելով դեպի «Ռուսաստան», սպասելով Մեսիային, որը նրանց կապատի բոլոր շարիքներից⁸։ Ֆ. էնգելսը մասնավորապես նշում է Ռուսաստանի դրական քաղաքականությունն Անդրկովկասի նկատմամբ, որի արմատները խորն էին և գալիս էին հնուց։ «Կովկասյան լեռնաշղթայից դեպի հարավ՝ թուրքական տիրապետության տակ էին գտնվում ոչ մեծ քրիստոնեական պետություններ (էնգելսը նկատի ունի վրացական իշխանությունները— Վ. Ո.) և քրիստոնեություն դավանող հայեր, որոնց նկատմամբ ցարիզմը կարող էր իրեն «ազատարար» հայտարարել»⁹։

Եվրոպական պետությունները, որոնց վրա կախված էր թուրքական ագրեսիայի վտանգը, ձգտում էին Ռուսաստանը պատերազմի հանել Օսմանյան կայսրության դեմ և այդ նպատակով «շռայլ» խոստումներ էին անում՝ «Ճանաչելով» Մոսկվայի իրավունքը՝ ինչպես Բյուզանդիայի տիրույթների, այնպես էլ Անդրկովկասի նկատմամբ։ Այսպես, Հռոմի պապը ուսական ցար Վասիլի 3-րդին առաջարկում էր «պաշտպան կանգնել իր հայրենիք Կոստանդնուպոլսին»՝ «ընդհանուր քրիստոնեական բարօրության համար»¹⁰։ 1518 թ. Հռոմի պապի և Մաքսիմիլիան կայսեր կողմից Մոսկվա ուղարկված Ֆրանցիսկ և Անտոնիո դեսպանները Վասիլի 3-րդ ցարին առաջարկում էին պատերազմ հայտարարել Թուրքիային, որը զավթել է «Իբերիան, Ալբանիան և Մեծ Հայքը»¹¹։

Ռուսաստանի հետ դիվանագիտական կապեր հաստատելու նոր փորձեր են արվում XVI դարի երկրորդ կեսին։ 1563 թ. Մոսկվա է գալիս շամախեցի Աբդուլլա խանի դեսպանը, խնդրում հովանավորություն և հայերի հետ վաղեմի առևտրական կապերի վերահաստատում։ Նույն թվականին վերսկսվում են վրաց-ռուսական փոխհարաբերությունները։

1563 թ. վրաց իշխանի հայ ներկայացուցիչը անգլիացի Ջենկինսոնին խնդրում է Մոսկվայի ցարին հայտնել՝ օգնություն հայցելու իրենց ցանկության մասին։ Ջենկինսոնը Իվան 4-րդից ստանում է դրական պատասխան։ Բայց 1558—1583 թթ. Լիվոնյան պատերազմը և թաթարական արշավանքները Ռուսաստանի դեմ խանգարում էին ռուս-վրացական և հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանը։

Դրությունը մասամբ փոխվեց XVI դարի վերջին, Ֆեոդոր Իվանովիչ ցարի և Բորիս Գոդունովի կառավարման օրոք (1584—1596 թթ.), երբ Մոսկվան պաշտոնապես հայտարարվեց Վրաստանի հովանավորն ու տիրակալը։ Քանի որ Թուրքիան նվաճել էր Անդրկովկասի մի մասը, պարսից շահը, հուսալով ստանալ ռուսական օգնություն, պատրաստա-

կամություն է հայտնում Ռուսաստանին «հանձնել» Դերբենդը, Շամախին, Բաքուն: Այդպիսի առաջարկ նա արել էր իր դեսպանի միջոցով Մոսկվայում, ապա և հաստատել, երբ 1586 թ. Պարսկաստանում էր ռուս դեսպան Վասիլչիկովը: Վրաց Ալեքսանդր թագավորը նույնպես խնդրում էր Ռուսաստանի պաշտպանությունը և շահի հետ միասին պահանջում Թերեքի վրա ամրոց կառուցել և զորք ուղարկել՝ նվաճելու Դաղստանի կումիկների իշխանի (շամխալի) երկիրը:

Անգլիայի դեսպան Դ. Ֆլետչերը հիշատակում է, որ 1588 թ. Մոսկվա է եկել Սիոնի պատրիարք Խերոնիմը (Երեմիան), նպատակ ունենալով համոզել ցարին, որ Ռուսաստանը դաշնակցի Իսպանիայի հետ՝ Թուրքիայի դեմ համատեղ պայքարի համար: Նույն նպատակով Վրաստանից դեսպաններ էին մեկնել Մոսկվա: Դ. Ֆլետչերը նշում է, որ այդ բանակցություններն ընթանում էին բարեհաջող, անգամ կազմավորված էր Իսպանիա ուղարկվելիք դեսպանությունը: Բայց գործը ձախողվեց՝ Իսպանիայի դեմ մղված պատերազմում Անգլիայի տարած հաղթանակի հետևանքով, և Անգրկովկասի ժողովուրդները այլևս չէին կարող հույսեր կապել օրըստօրե թուլացող Իսպանիայի հետ:

Թուրքիան ու նրա վասալ Ղրիմը՝ Ռուսաստանի մշտական թշնամիները, շարունակ ասպատակում էին երկիրը, հաճախ հասնելով մինչև Մոսկվա, իսկ 1595 թ. գահ բարձրացած Մահմադ 3-րդ սուլթանը հարմար առիթի էր սպասում՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու համար:

Անգրկովկասի ժողովուրդների շահերը օբյեկտիվորեն կապված էին Ռուսաստանի հետ, նրանց սպառնացող վտանգն ընդհանուր էր, և միայն Մոսկվան կարող էր և պետք է դառնար ազատագրական պայքարի զորավիգ: 1588 թ. մինչև XVII դարի սկիզբը գրեթե անընդմեջ բանակցություններ էին վարվում Վրաստանի և Ռուսաստանի միջև, իսկ դիվանագետ-միջնորդների դերում հաճախ հանդես էին գալիս հայերը:

1590 թ. Մոսկվայից ռազմական օգնություն է խնդրում Վրաստանի Ալեքսանդր իշխանը: Ֆեոդոս Իվանովիչ ցարին ուղարկած հրովարտականում նա գրում է. «Իմ հույսն ու ապավենը աստված է և դու: Հրամայիր պատերազմել շամխալի դեմ և կազիկումիկների երկրում բերդ կառուցել... այն ժամանակ իմ զորքը կմիանա ցարական զորքերին»¹²: 1594 թ. Թորիս Գոգոլնովը կարգադրել էր Դաղստանի շամխալի Տարկի բերդը գրավել ու ճանապարհ հարթել դեպի Վրաստան՝ գիտենալով հանդերձ, որ այդ քայլը կրթեր կբորբոքի նաև Թուրքիայում:

1594—96 թթ. վրաց իշխանի դեսպաններ խուրշուղը և Արամը ռուսական արքունիքից խնդրում են զորք ուղարկել և հպատակեցնել շամխալին: Նույն այդ ժամանակ վրաց իշխանը և Շահ Աբաս 1-ինը հակաթուրքական պայքարի կոշով հայերեն զրված նամակ են ուղարկում Իսպանիայի Թագավոր Ֆիլիպ 2-րդին:

Եթե Իսպանիան ոչինչ չարեց և չէր կարող անել, ապա Ռուսաստանը Թուրքիային է դիմում, միջնորդում, որ «իր հպատակներին» չճնշեն և... Վրաստան է ուղարկում թնդանոթներ, ապա և 6000-անոց զորք՝ ռուս զորավարներ Բուտուրլինի և Պլեշչեևի ղեկավարությամբ: Սակայն 1604 թ., օգտվելով Ռուսաստանում սկսված սովից ու համաճարակներից ստեղծված ծանր վիճակից և, խախտելով խաղաղության համաձայնությունը, Թուրքական փաշան ուխտագրուժ հարձակում է գործում 6000-անոց ռուսական զորքի վրա և շամխալի, զալմուխ մուրզաների ու Թաթարների օգնությամբ ջարդում Անդրկովկասին օգնության եկած ռուսներին:

Ռուս-վրացական համագործակցության այս մարտական մկրտությունը հաստատեց այն փաստը, որ Մոսկովյան պետությունը շահագրգռված է և պատրաստ է օգնել Անդրկովկասի ժողովուրդներին՝ նրանց ազատագրական պայքարում: Սակայն 1600—1603 թթ. մոլեգնող սովը, ապա լեհ-շվեդական ինտերվենցիան և Ռուսաստանի քաղաքական ծանր վիճակը խանգարեցին քաղաքական կապերի, ինչպես և առևտրական հարաբերությունների հետագա զարգացմանը: Համենայն դեպս փաստեր կան այն մասին, որ առանձին հայ և այլազգի վաճառականներ Պարսկաստանից, Արաբիայից, Հայաստանից, Շամախիից և Թուրքիայից Ռուսաստան էին տանում Թանկարժեք գորգեր, մետաքս և այլ ապրանքներ:

Հիմքեր կան ենթադրելու նաև, որ ինչպես XVI, այնպես էլ XVII դդ. հայերն առևտրից դատ Ռուսաստանում հետապնդում էին նաև քաղաքական նպատակներ: 1607—1609 թթ. Մոսկվայում էր հայազգի Ավգուստինոս Բաջեցին՝ կաթոլիկ կրոնավորը, որը հակաթուրքական պայքարին նպաստելու նպատակով վրաց արքայորդի Բագրատի և Հռոմի պապի նվիրակի հետ լինում է նաև Աստրախանում, ապա անցնում Մոսկվա, այնտեղից էլ՝ Լեհաստան ու Արևմտյան Եվրոպա:

XVII դարի երկրորդ քառորդից սկսած հայերի այցելություններն ու հայ գաղութի աճը Մոսկվայում ավելի նկատելի են դառնում: 1626 թ. չորս հայ և երկու ղզլբաշ վաճառականներ հսկայական արժեքի արևելյան ապրանքներ են տանում Մոսկվա¹³, 1641 թ. Դեսպանական

ատյանի հյուրատանը իջեանած հայ, ինչպես նաև հնդիկ վաճառականներ խոջա Մուրադը, Սաֆարը, Ազիզբեկը և Լուկունասը հայտնում են, որ իրենք շամախեցի, բաքվեցի, արդեբիլցի ու սպահանցի եկվորներ են և ուզում են առևտուր անել Մոսկվայում:

Ռուսական կառավարությունը քաջալերում էր հայերի և ընդհանրապես Անդրկովկասի վաճառականների առևտուրը, նրանց այցելությունները ոչ միայն Աստրախան ու սահմանամերձ քաղաքներ, այլև Մոսկվա, թույլատրելով բնակություն հաստատել Ռուսաստանում: 1613 թ. սկսած հայ վաճառականների այցերն Աստրախան հաճախակի են դառնում:

Հայերը Մոսկվա են գնում նաև այլ նպատակներով: Օրինակ, 1632 թ. մի հայ՝ Սարգիս Օվանեսովը, իր ուսու կնոջ հետ Ղրիմից գալիս է Մոսկվա, խնդրում մշտական բնակության իրավունք, հայտնելով, որ Ղրիմից փախել է ազգային ու կրոնական ճնշումների ուժեղացման պատճառով և լսելով, որ Ռուսաստանում հայերին լավ են վերաբերվում: Օվանեսովը թարգմանչի պաշտոնով աշխատանքի է նշանակվում Դեսպանական ատյանում (արտաքին գործոց ատյան): Ուշագրավ է այն փաստը, որ Սարգսի մահից հետո նրա կնոջը նշանակվում է թոշակ¹⁴:

Հայերը Ռուսաստան են գնում նաև Վրաստանից ու Անդրկովկասից, մնում Մոսկվայում, Աստրախանում և այլուր (1627 թ.՝ Ռոման Բեդրին, 1634 թ.՝ Շահնազարը և այլն): Մոսկվայում էին արդեն Նախիջևանի արքեպիսկոպոս դարձած Ավգուստինոս Բաջեցին, Անտոնիոսը, Նազարիոսը և ուրիշներ:

Վրաց ազատագրական շարժման եռանդուն ներկայացուցիչ Թեյմուրազ I-ինը, լինելով Կախեթի թագավոր (1606—1648), վրաց ազգային հերոս Գեորգի Սահակաձեի հետ գլխավորում էր պայքարը իրանական ագրեսիայի դեմ: Նա իր դեսպանի միջոցով Ֆեոդոր Ռոմանով ցարին հղած նամակում նշում է, որ Վրաստան իր փրկությունը տեսնում է Ռուսաստանի օգնության մեջ:

1639 թ. նորից Մոսկվայի պաշտպանությունն ու հովանավորությունն է խնդրում Թեյմուրազը: Տարիներ շարունակ պայքարելով պարսից տիրապետության դեմ, նա մեծապես նպաստում է Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժման ուսական կողմնորոշմանը:

Մոսկովյան կառավարությունը հանգամանորեն ուսումնասիրում էր Անդրկովկասում ստեղծված վիճակը, այնտեղ ուղարկելով դեսպաններ և տեղեկություններ հավաքելով վաճառականների ու կրոնավորների միջոցով:

«Վրաց պատմության» հեղինակ Փ. Գորգիջանիձեն հաղորդում է, որ Գանձասարի Պետրոս կաթողիկոսը 1634 թ. Քարթլի—Կախեթի թագավոր Թեյմուրազ I-ին առաջարկում է համատեղ ուժերով ապստամբել, ընդ որում խոստանում է նրան տալ հայկական 40.000-անոց օգնական զորք¹⁵: Հայերի պատրաստակամության մասին այս արժեքավոր վկայությունը հաստատվում է նաև այլ աղբյուրներով: Հոլլիտինիայի դուքսի դեսպան Օտտո Բրուգեմանը, որը նույն տարիներին վերադարձել էր Պարսկաստանից և 1639 թ. բանակցություններ էր վարում ռուսական արքունիքի հետ, նմանօրինակ առաջարկություն է անում Ռուսաստանին և դարձյալ շեշտում 40.000 հոգով կովի ելնելու հայերի պատրաստակամությունը: Կրեմլի այդ գաղտնի խորհրդակցությանը մասնակցում են նաև աստրախանցի հայեր (Հովհաննեսի որդի Գևորգը և Փիլիպոսի որդի Մարկոսը)¹⁶: Այդ տրամադրությունները և Ռուսաստանին դիմելու հանգամանքները բարելավում են հայ-ռուսական հարաբերությունները, և էջմիածնի նվիրակ Ոսկան վարդապետին հաջողվում է թույլտվություն ստանալ՝ Աստրախանում հայկական եկեղեցի կառուցելու համար:

1637 թ. Մոսկվայից Վրաստան է ուղարկվում Վոլկոնսկու դեսպանությունը, 1638 թ. Մենգրելիայի իշխանը օգնություն է խնդրում Մոսկվայից, իսկ Միխայիլ Ռոմանովի (1613—1645) արքունիքը հայտնում է, որ ցարը շահին գրել է, թե Վրաստանը վաղուց ի վեր եղել է Ռուսաստանի հովանավորության տակ, և պարսից շահը իրեն չպիտի իրավունք վերապահեր նեղել վրացիներին: XVII դ. կեսերից աշխուժանում են ռուս-վրացական դիվանագիտական հարաբերությունները*:

1650 թ. ռուսական հպատակություն է ընդունում Քարթլիի (Իբերիայի) իշխան Ալեքսանդր 3-րդը: Այդ նույն ժամանակ Մոսկվայից Իմերեթիա է մեկնում Ն. Մ. Տոլչանովի դեսպանությունը (1650—1652), որի նպատակն էր ուսումնասիրել երկրամասի տնտեսական ու քաղաքական դրությունը և բանակցել՝ Իմերեթիայի իշխան Ալեքսանդր 3-րդի հպատակությունն ընդունելու հարցի շուրջը: Դեսպանության հետ բանակցություններ վարում էր Ալեքսանդրի գլխավոր դպիր, հայազգի Փեշանգը՝ Անդրեյի որդի Խաթարովը: Փեշանգը ռուս դեսպաններին հայտնում է, որ Իմերեթիայի իշխանը ունի 100 բոյար, 1100 աղնվական և 2000 հոգուց

* Ռուսաստանից Վրաստանի իշխանություններ են ուղարկվել 5 դեսպանություն՝ Ֆ. Ֆ. Վոլկոնսկու (1637—1640), Ֆ. Վ. Ելլինի (1639—1640), Ե. Ֆ. Միշեցկու (1641—1643), Ն. Մ. Տոլչանովի (1650—1652), Ե. Ս. Ժիգովնիկովի (1655) և այլն: Նրանք հետաքրքրվում էին ողջ Անդրկովկասով, կապեր հաստատում Վրաստանի հետ, որտեղ կար զգալի հայ բնակչություն:

բաղկացած անձնական զորամաս, և որ օգնության դեպքում նրանք կկարողանան թոթափել թուրքական լուծը: Բանակցությունների ժամանակ հիշատակվել են նաև այլ հայերի անուններ, որոնք տեղի հայ բնակչությունից էին և ծառայում էին արքունիքում: Կառևորն այն է, որ 1652 թ. Ալեքսանդր 3-րդ իշխանը և նրա առեհադպիր Պեշենգեյը ստորագրում են Ռուսաստանին հպատակվելու և հավատարմության երդմնագիրը, որը դեսպանները տանում են Մոսկվա:

Այսպես, Անդրկովկասի իշխանները, ազնվականները, վաճառականները, վրաց ու հայ եկեղեցու ներկայացուցիչները իրենց և ժողովրդի անունից դիմումներ էին հղում Ռուսաստան, հավաստում իրենց նվիրվածությունը և հավատարմությունը, հուսալով Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել կամ գեթ պահպանել իրենց սեփականությունն ու իրավունքները:

Անդրկովկասի հյուսիսային խանություններում ևս XVII դ. ստեղծվում է որոշակի ձգտում դեպի Մոսկվա: Այդ բացատրվում է շահի ու խաների կողմից բնակչության ոչ իրանական մասի տնտեսական, իրավական և կրոնական կեղեքումների ուժեղացմամբ: Մոսկովյան կառավարությունը հանգամանորեն ուսումնասիրում էր Անդրկովկասում ստեղծված վիճակը, այնտեղ ուղարկելով դեսպաններ և տեղեկություններ հավաքելով վաճառականների, կրոնավորների և գաղթավայրերի բնակիչների միջոցով: Ինչպես նշել է է. Ա. Շևարդնաձեն, «Միմյանց պաշտպանելով մեր ժողովուրդներից յուրաքանչյուրը, ըստ էության, պաշտպանում էր իրեն... Իսկ ամելի դժվարին ժամին մեր ժողովուրդներն իրենց հայացքն ուղղեցին բարի և հավատարիմ հյուսիսային հարևանին՝ Մեծ Ռուսաստանին... Եվ ամբողջ պատմության ընթացքում, տարիներ ու հարյուրամյակներ, մեր ժողովուրդները ձգտել են դեպի մեծ Ռուսաստանը, դեպի ռուս մեծ ժողովուրդը: Այդ դարերը եղան ռուս, հայ և վրաց ժողովուրդների, բոլոր ժողովուրդների անխախտ բարեկամության ամրապնդման դարեր»¹⁷:

Հայաստանում, հայկական գաղթավայրերում ու Անդրկովկասում XVII դարի կեսերին ծավալված ազատագրական շարժմանը մեծապես նպաստում էր Եվրոպայում սկսված պայքարը թուրքական ագրեսիայի դեմ: Մասնավորապես Կրետե կղզու՝ Կանդիայի համար Վենետիկի դեմ մղվող 25-ամյա պատերազմի (1645—1669 թթ.) տարիներին Եվրոպայի կողմից սպասվող օգնության հետ լուրջ հույսեր էին կապվում: Հռոմին և Լյուդովիկոս 14-րդ Թագավորին էին դիմում ինչպես ռուսական կողմից հորոշում ունեցող Ալեքսանդրիայի, Երուսաղեմի ու Անտիոքի պատրիարք-

ները, այնպես և հայ ու վրացի գործիչները, խնդրելով, որ նրանք եռանդուն ջանքեր գործադրեն թուրքահպատակ ժողովուրդներին ազատելու համար: Սաի խաշատուր Գաղատացի կաթողիկոսը, Կ. Պոլսի հայ պատրիարք Հովհաննես Թութունջին, խոշոր վաճառական խոջա Մուրադը դիմումներ էին անում «Արև թագավոր» Լյուդովիկոս 14-րդին, խնդրելով օգնություն և հայտնելով հայերի ու հույների պատրաստակամությունը՝ ապստամբել ու գնալ ընդառաջ «խաշակրաց արշավանքի» ելած «Ֆրանկ» զորքերին:

Սակայն Հռոմի պապն ու Լյուդովիկոս 14-րդը ոչնչով չօգնեցին անգամ վենետիկին, և թուրքերը նվաճեցին Կրետեն: Նրանք ունեին իրենց նկատառումները: Զխոստանալով որևէ իրական օգնություն, նրանք պահանջում էին հայերից ու հույներից՝ ընդունել կաթողիկոսություն և ինքնուրույն, սեփական ուժերով կովել թուրքիայի դեմ՝ ի շահ Հռոմի պապի ու Լյուդովիկոսի, որը սակայն հակաթուրքական ցույցեր անելով և Կոստանդնուպոլսի ափերին նավատորմիդ հանելով, միայն վախեցնում էր Բարձր Դռանը՝ նրանից կորզելով թուրքիայում արտոնյալ առևտուր անելու իրավունք (կապիտուլյացիաներ), փաստորեն ամրապնդելով թուրքիայի տիրապետությունը հպատակ ժողովուրդների վրա: Այսպես, 1660-ական թթ. Եվրոպայի հետ կապվող հույսերը շարդարացան, Հռոմի պապերը, Լյուդովիկոսը և նրա առաջին մինիստր Կոլբերը մնացին անտարբեր. Կանդիայի պատերազմը վերջացավ վենետիկի հանրապետության պարտությունով, և թուրքիան տիրացավ նաև Կրետե կղզուն, շարունակելով իր արշավանքը դեպի Ուկրաինա, Լեհաստան, Ավստրիա... և նմանօրինակ էր նաև Եվրոպայի մյուս հզորագույն պետությունների՝ Հոլանդիայի ու Անգլիայի դիրքը: Թեպետ նրանց առևտրատնտեսական պոտենցիալն ու ռազմածովային հզորությունը լուրջ տվյալներ էին թուրքիայի վրա ուժեղ ճնշում գործադրելու համար, սակայն նրանց կենսական շահերն Անգլիայի ու Հոլանդիայի դիվանագիտությանն ստիպում էին «բարեկամ» մնալ թուրքիային և ոչ մի քայլ չանել հօգուտ Ռուսաստանի, Լեհաստանի և Անդրկովկասի ժողովուրդների:

Հայերը կարող էին հույս դնել միայն Ռուսաստանի ու նրա դաշնակիցների՝ Լեհաստանի և Ավստրիական կայսրության վրա, թեպետ նրանց միջև դեռևս չկար լիակատար համաձայնություն ու միասնական գործողությունների ծրագիր: Այնուհանդերձ 1667 թ. կնքված Անգրուսոսկյան դաշնագրից հետո, հայ-ռուս-լեհական հարաբերությունների մեջ նկատվում է որոշակի բարելավում ու աշխուժություն: Ժամանակի գրավոր աղբյուրների մեջ քիչ են դրա ուղղակի վկայությունները, բայց անգամ

հատուկներ տակնարկները խոստում են այդ մասին և հիմք տալիս նման հեթադրություններին: Համենայն դեպս, շատ որոշակի էր Ռուսաստանի դիրքորոշումը թուրքական ագրեսիայի դեմ պայքարի հարցում: Այդ մասին են խոսում փաստերը:

1668 թ. սեպտեմբերին Կ. Պոլիս են ուղարկվում հայազգի դիվանագետ Վասիլի Դաուդովը և հուլյն Միխայիլ Իվանովը՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի՝ սեպտեմբերի 7-ի հրովարտակով, որպեսզի Բարձր Դռնից պահանջեն արգելել Ղրիմի խանի հարձակումները ռուսական և ուկրաինական հողերի վրա: Դաուդովը պահանջում էր նաև վերականգնել Ռուսաստանի հավատարիմ ու գործունյա քաղաքական գործիչներին՝ Ալեքսանդրիայի պատրիարք Պայիսիոսի և Անտիոքի պատրիարք Մակարիոսի իրավունքները¹⁸: Այս ամենը հայտնի պիտի լինեին հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնք լավ գիտեին նաև Կանդիայի պատերազմում Թուրքիայի հաղթանակի՝ Կրետե կղզին նվաճելու և Լեհաստանի դեմ հարձակողական գործողություններ սկսելու մասին: Կանդիայի պատերազմից հետո Ֆրանսիայի կառավարությունը վերջնականապես հրաժարվեց Թուրքիայի դեմ խաչակրաց արշավանքի մտքից, անգամ մերժեց Ռուսաստանի հակաթուրքական համատեղ պայքարի կազմակերպման առաջարկը: Պարզ է, որ նա չէր էլ մտածում Հայաստանի ու Վրաստանի «փրկության» մասին: Սակայն հայ և վրացի առանձին գործիչներ շարունակում էին «Արև թագավորին» ապարդյուն դիմումներ անել, շտանալով գեթ որևէ հուսադրական խոստում՝ բացի կաթոլիկ պրոպագանդիստների կողմից կրկնվող կեղծ քաջալերանքից ու կաթոլիկ դավանանքն ընդունելու պահանջից:

Այս և նման փաստերը հայտնի էին ոչ միայն Զաքարիա Ագուլեցուն, այլև էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսներին, Գրիգոր Լուսիկովին, Վասիլի Դաուդովին և մյուսներին, որոնք հիասթափվում են Արևմուտքից դեռևս XVII դ. կեսերին:

Առավել հեռատես վրաց և հայ գործիչները, ճիշտ գնահատելով Ռուսաստանի միջազգային դրությունը՝ թուրք-թաթարական ագրեսիայի դեմ պայքարի և հարավային ու արևմտյան սահմանների պաշտպանության անհրաժեշտությունը, հասկանում էին, որ երկրի շահերը պահանջում են տնտեսական-առևտրական ու քաղաքական-ազգային համագործակցություն Անդրկովկասի հետ: Եթե հայ գործիչների կապերը Արևմտյան Եվրոպայի առանձին պետությունների ու Հռոմի հետ միմիայն ձախողված փորձեր էին, ապա Ռուսաստանի օգնությունն ակնկալող գործիչների ծրագրերն արտահայտում էին կողմերի օբյեկտիվ շահերն

ու տարեցտարի ամրապնդվող ազատագրական շարժման ճիշտ կողմնորոշումը:

Թեպետ գրականության մեջ այդ տարիների հայ ազատագրական շարժման վերաբերյալ տեղեկությունները քիչ են, այնուամենայնիվ, այդ քիչն էլ հաստատում է հայ-վրաց-ռուսական բաղադրական կապերի ու ծրագրերի առկայությունը: Հասկանալի է այն զսպվածությունը, որ նկատվում է XVII դարի հայ պատմաբանների երկերում: Ուշագրավ է այն փաստը, որ Զաքարիա Քանաքեռցու (1627—1699) «Պատմությունը» մեզ հասցրել է շատ կարևոր տեղեկություն Գրիգոր Լուսիկովի և վրաց արքայորդի Նիկոլայ Դավիդովիչի մասին: Քանաքեռցին նշում է, որ Թեյմուրազ առաջինի թոռ Իրակլին (նույն ինքը՝ Նիկոլայ Դավիդովիչը) տարվում է Մոսկվա (1653 թ.) և 25 տարի նա ապրում է այնտեղ: Շահ Աբաս 2-րդը քանիցս սուրհանդակ է ուղարկում և նրան հրավիրում իր մոտ, բայց ապարդյուն: Դրանից հետո շահ Սուլեյմանը (1666—1694) ցարին հղած նամակով ու երգմնագրով Մոսկվա է ուղարկում Գրիգոր Լուսիկովին: Վերջինս 1675 թ. ապրիլի 23-ին Իրակլին բերում է Ղազվին, որտեղ էին նաև Սուլեյման շահը, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը, ինչպես և վերջինիս սպասարկող, դեպքերը նկարագրող ու ականատես պատմիչը՝ Զաքարիա Քանաքեռցին¹⁹: Շահը Նիկոլայ Դավիդովիչին հրավիրում է՝ իբր գահին բարձրացնելու համար, սակայն նրա և պարսկական կառավարության միակ նպատակն էր նրան կտրել Ռուսաստանից, մեկուսացնել և թույլ չտալ, որ վրաց գահի հավակնորդը մնա Մոսկվայում և այնտեղից ներազդի Վրաստանի բաղադրական շրջանների վրա: Այս անգամ ևս հաջողվեց պարսից արքունիքի ուխտագրուժ քայլը: Շահը կարողացավ իր մոտ բերել, բռնությամբ մահմեդականացնել Իրակլին և պահել Սպահանում՝ կալանավորի վիճակում (այդ մասին գաղտնաբար Մոսկվա է հաղորդել նրա մայրը):

Շահը դրանով չբավարարվեց: Նա 1676 թ. իր մոտ կանչեց վրաց մյուս թագավորին՝ Վախթանգ 5-րդին (1658—1676), նրանից ևս «ազատվելու» նպատակով: Վախթանգը 1000 զինվորով, շահի համար 60 ուղտերի վրա բարձած թանկարժեք նվերներով և հարձերով ճանապարհ ընկավ դեպի Սպահան: Արաքսն անցնելուց հետո հայտնի դարձավ, որ Սպահանում Վախթանգին նետելու են առյուծների առջև՝ հոշոտմանը: Լսելով այս, նա թունավորվեց և մահացավ: Մարդիկ ու բռնները տարվեցին շահին: Այնուհետև շահը բռնությամբ հավատափոխ արեց նաև Վախթանգի ժառանգորդ Գեորգիին և նշանակեց «շահնավազ խան» (1676—1698), ապա 1706 թ. ուխտագրժորեն սպանեց նաև նրան:

Եթե շահն այդպես քմահաճ ու դաժան էր վրաց թագավորների հետ, ապա պարզ է, թե ինչպիսի կամայականություն էր տիրում պետականությունից զուրկ Հայաստանում: Բավական է հիշել, որ էջմիածնի կաթողիկոսներն անգամ ենթակա էին ոչ միայն շահի, այլև Երևանի խանի քմահաճությանը: Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը, որ ժամանակի կըրթված, գործունյա, ազդեցիկ հայ գործիչներից էր, շարունակ հալածվում էր խանի կողմից: Նրա և էջմիածնի դեմ նյութվում էին մեղադրանքներ, դավեր, որոնցից ազատվելու համար պետք էր լինում շահին ու նրա արքունիքին վճարել հսկայական գումարների կաշառքներ: Իսկ այդ կաշառքների ու «նվերների» ամբողջ ծանրությունն ընկնում էր ժողովրդի ուժասպառ ուսերին: Ուժեղանում էին ազգային ճնշումները, աճում հարկերը, շարունակվում էին բռնի կրոնափոխությունն ու հայահալած քաղաքականությունը, որ առանձնապես սաստկացել էր XVII դարի վերջին:

Ժողովրդի ծանր վիճակն օգտագործում էին կաթոլիկ պրոպագանդիստները: Հայերին դավանափոխելու և իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար նրանք խոստանում էին Հռոմի պապի և ֆրանսիական թագավորի օգնությունը:

Հայ գործիչներն իրենց հերթին չէին ուզում սրել հայ լուսավորչականների ու կաթոլիկների փոխհարաբերությունները, հույսեր կապելով Հռոմի և արևմտաեվրոպական պետությունների օգնության հետ, գիտենալով, որ վաղուց ի վեր Ռուսաստանի հետ կապված վրացական իշխանությունները և անգամ Ռուսաստանը մշտական դիմումներ էին հղում Արևմտյան Եվրոպայի թագավորներին, առաջարկելով ընդհանուր ճակատ կազմել թուրքական վտանգի դեմ:

Միջազգային ու ներքին բարդ իրադրության պայմաններում 1678 թ. էջմիածնում Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը հրավիրում է հայ ավագանու գաղտնի ժողով՝ քննելու հայ ժողովրդի ազատագրության հարցը: Այդ մասին մեզ հասած միակ տեղեկությունը պահպանվել է 1699 թ. Պետրոս Առաջինին ուղարկված մի գրության մեջ, որով հայ ավագանին հայտնում է. «1678 թ. մենք հավաքվեցինք միատեղ գաղտնի խորհրդի... Իմացանք Ձերդ մեծության և մյուս քրիստոնյա թագավորների կարողությունն ու հզորությունը, որոնք կօգնեն մեզ ազատվելու մեր դժբախտությունից:

Այդ գործի համար ընտրեցինք երեք հոգի, որպեսզի նրանք գան, ընկնեն Ձերդ մեծության ոտքերը և հայտնեն մեր ցանկությունն ու մտադրությունը»²⁰:

Ինչպես հայտնի է, Հակոբ Զուղայեցին 1678 թ. դեռևս Շուլավերում էր, հետո վրաստանում մնաց մինչև 1679 թ., բանակցություններ վաղից վրաց Գեորգի թագավորի և վրաստանում գտնվող Աղվանից կաթողիկոսի հետ։ Ամենայն հավանականությամբ, 1678 թ. գաղտնի ժողովը տեղի է ունեցել Շուլավերում կամ մի այլ վայրում, բայց կոչվել է էջմիածնի գաղտնի ժողով, քանի որ Ռուսաստան ու Կոստանդնուպոլիս ուղարկվող պատվիրակությունները լիազորված էին ինչ-որ չափով հայ պետականությունը ներկայացնող էջմիածնի կաթողիկոսական աթոռի կողմից։ Իսրայել Օրին և Անգեղակոթի գաղտնի ժողովի մասնակիցները, իրավամբ, 1678 թ. ժողովը անվանել են «էջմիածնի», շեշտելու նրա իրավականությունն ու հեղինակությունը։

Հակոբ կաթողիկոսի, էջմիածնի գաղտնի ժողովի և հայ պատվիրակությունների ջանքերը հաջողության չհասան։ Հիվանդ ու զառամյալ կաթողիկոսը Կ. Պոլսում 1680 թ. օգոստոսի 2-ին մահացավ։ Պատվիրակության մյուս անդամները, զրկվելով ճանաչված ու հեղինակավոր դեկավարից, հուսահատ վերադարձան հայրենիք, գիտենալով նաև Անդրկովկասում ստեղծված անբարենպաստ քաղաքական վիճակի և թուրքերի ու պարսիկների նոր հարձակումների մասին։ Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկո ներկայացուցչի հետ հանդիպումը խոստումնալի լինել չէր կարող, քանի որ Լեհաստանն ու Ռուսաստանը դեռևս շարունակում էին իրենց ջանքերը՝ Պարսկաստանը հակաթուրքական պարբերի մեջ ներգրավելու նպատակով և Անդրկովկասին ռազմական օգնություն հասցնել չէին կարող։

Հայ պատվիրակության անդամ, Իսրայել իշխանի որդի Իսրայել Օրին, սակայն, շուգեց վերադառնալ Հայաստան և անցավ Եվրոպա, ախելով մի ինքնատիպ կյանք ու գործունեություն, շուրջ քսան տարի դեզերելով Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում՝ ուղիներ որոնելով իր ժողովրդի փրկության համար։

1680 թ. վրաց Արշիլ 1-ին թագավորը դիմում է ռուսական արքունիք՝ Ֆեոդոր Ալեքսեևիչ ցարին, խնդրելով ընդունել վրացիների հպատակությունը և օգնել նրանց՝ պարսից լուծը թոթափելու։ Արշիլը ռուսական ցարին հայտնում էր, որ բոլոր վրացական իշխանություններն ուզում են լինել Մոսկվայի հովանու տակ²¹։ Արշիլը 1682 թ. գնում է Աստրախան, սպասելով հնարավոր ու հարմար ժամանակի՝ Ռուսաստանից ռազմական օգնություն խնդրելու։ 1683 թ. հունվարին Արշիլը նորից դիմում է «Իվան և Պետրոս թագավորներին» և հպատակություն ու օգնություն

խնդրում, շեշտելով, որ «բացի աստծուց և ձեզանից՝ մեծ թագավորներից, ոչ ոքի վրա որևէ հույս չունեմ»²²:

Վրաց թագավորի և հայ գործիչների հույսերն արգարանում էին ուշացումով. Ռուսաստանն սկսում էր ակտիվ արևելյան բաղադրականություն՝ թուրք-թաթարական վտանգը կանխելու և հարավում ռազմական հենակետ ստեղծելու համար: 1695 թ. գարնանը, վերջապես, ռուսական 120 հազարանոց զորքը շարժվում է դեպի Ազով, շրջապատում բերդը, բայց օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ձեռնարկած գորհները հաջողության չեն հասցնում: Միայն մի տարի հետո՝ 1696 թ. ապրիլին ռուսական զորքերը և Պետրոս Առաջինի ջանքերով ստեղծված ռազմական նավատորմը անսպասելի հարձակումով շրջապատում և վերցնում են Ազովի բերդը:

XVII դարի վերջերից սկսած Ռուսաստանը կանգնեց ծովային մեծ պետություն դառնալու ճանապարհին և, ի տես դաշնակիցների ու ողջ աշխարհի, Պետրոս Առաջինը ցուցադրեց իր երկրի աճող ռազմական պոտենցիալը: Բայց այս միայն սկիզբն էր:

Հակաթուրքական լիգայի գործողություններն ուժեղացնելու, «Սրբազան» լիգան ամրապնդելու և ընդլայնելու, նյութական ու ռազմական միջոցներ ձեռք բերելու նպատակով Պետրոս Առաջինը կազմակերպեց 250 հոգուց բաղկացած «մեծ դեսպանություն» և 1697 թ. ուղևորվեց Եվրոպա: Բայց ժամանակի ամենազարգացած ու հարուստ կապիտալիստական երկրները՝ Անգլիան ու Հոլանդիան բացարձակապես ոչնչով չուզեցին օգնել «Քրիստոսի խաչի թշնամիների» դեմ այդքան հետևողականորեն կռվող Ռուսաստանին: Անգամ Ավստրիան ու Վենետիկը այլևս այնպիսի եռանդ չէին ցուցաբերում հակաթուրքական պայքարում, քանի որ նրանց այլևս թուրքական վտանգը չէր սպառնում:

Անդրկովկասն ազատագրելու միակ իրական հույսը մնաց Ռուսաստանի օգնությունը: «Մեծ դեսպանություն» պլանները, դրանց ձախողումն ու հաջողությունները չէին կարող ինչ-որ չափով հայտնի չդառնալ Եվրոպայում լայն կապեր ունեցող հայ և վրացի գործիչներին: Առավել ևս այդ անցուղարձին ծանոթ պետք է լիներ շուրջ 20 տարի Եվրոպայում դեպերող, լեզուների մեջ հմտացած, բաղադրականության հարցերում ճիշտ կողմնորոշվող Իսրայել Օրին: Նա արդեն մոտ հարաբերությունների մեջ էր Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի հետ, մի ազդեցիկ կայսրընտիր իշխանի, որի կնոջ մի քույրը ավստրիական կայսր Լեոպոլդ 1-ինի կինն էր, մյուսը՝ իսպանական թագավոր Կառլոս 2-րդի, երրորդը՝ Պարտուգալիայի թագավորի: Պետրոս Առաջինը բարեկամական հարա-

բերությունների մեջ էր ոչ միայն կայսեր, այլև գերմանական իշխան-ներին՝ Վիլհելմ 3-րդին, Սաքսոնիայի իշխան և լեհական թագավոր Ավ-գուստ 2-րդի հետ, որոնք կարող էին մեծ դեր խաղալ Հայաստանի ազա-տագրության գործում։ Ահա թե ինչու հենց 1698 թ., երբ Պետրոս Առա-ջինը դեռ չէր հասցրել վերագաղնալ Ռուսաստան, Իսրայել Օրին դիմում է Հովհան Վիլհելմին և խնդրում նրան՝ օգնել իր ժողովրդի փրկության գործին, քանի որ այն հնարավոր էր Ավստրիայի ու Ռուսաստանի դա-շինքի և Թուրքիայի դեմ հնարավոր ռազմական հաջողությունների մի-ջոցով։

2. Վիլհելմը կարծես թե ոգևորված էր հակաթուրքական լիգայի հա-ջողություններով։ Ենթարկվելով Ի. Օրու ներշնչումներին՝ Հայաստանն ազատագրելու հնարավորության և գահի վրա բազմելու հրապուրիչ առաջարկներին, Վիլհելմը համաձայնում է միջնորդել Ավստրիայի կայսր Լեոպոլդի առջև, որպեսզի նա հայ ավագանուն գրի և հայտնի իր կողմից Հայաստանն ազատելու պատրաստակամության մասին։ Սակայն Լեո-պոլդը նման գրություն չտվեց, պատճառաբանելով, որ այդ կարող է հայտնի դառնալ Թուրքիային, որի հետ 1698 թ. խաղաղության բանակ-ցություններ էին սկսվել, և նման դեպքում հաշտություն կնքելու գործը կձախողվեր։ Բացի այդ, Լեոպոլդը հասկացնել տվեց, որ Օրին չունի հա-մապատասխան լիազորություններ և Հայաստանից պաշտոնապես իրեն չեն գիմել։

Ի. Օրու բանակցությունները Հովհան Վիլհելմի հետ, այնուամենայ-նիվ, շատ արդյունավետ էին թեկուզ այն տեսակետից, որ կուրֆյուրստը՝ կայսրընտիր իշխանը, միջնորդեց Լեոպոլդ կայսեր առաջ՝ օգնելու հայոց ու վրաց դատին և հատուկ նամակ գրեց ոչ միայն հայ ավագանուն, այլև վրացական իշխան Գեորգի XII-րդին, նրան առաջարկելով միավոր-ել հայերի ու վրացիների ուժերը։

Ի. Օրին դեռևս մինչև 1698 թ. այնքան խորն ու բազմակողմանի էր հասկացել հայ-վրացական դաշնակցության նշանակութունը և այդ գա-ղափարն այնքան համոզիչ ձևով էր ներկայացրել կուրֆյուրստին, որ նա անհրաժեշտ էր համարել անձամբ դիմել վրաց թագավորին՝ պարսից բռնակալության դեմ միասնական ճակատ ստեղծելու առաջարկով։ Օրին առանձնապես չգիտեր և նրան չէր մտահոգում այն, թե այդ օրերին ովքեր են էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները, կամ ինչպիսին էր Գեորգի XII-րդի դիրքը ազատագրական շարժման նկատմամբ տվյալ պահին։ Նրա համար կարևորն այն էր, որ կապ էր հաստատվելու հայ և վրաց ղեկավար շրջանների միջև²³։

Նման կարևոր հանձնարարություններով Ի. Օրին հասավ Հայաստան, եղավ էջմիածնում, ապա գնաց Սիսիան, որտեղ 1699 թ. ապրիլին նրա և մեկիք Սաֆրազի նախաձեռնությամբ հրավիրվեց Անգեղակոթի գաղտնի ժողովը: Իսրայել Օրին ժողովի մասնակիցներին հաղորդեց Հովհան Վիլհելմի հետ ունեցած զրույցների ու պայմանավորվածության մասին, նշեց, որ կայսրընտիր իշխանն ու Լեոպոլդ կայսրը պահանջելու են ավագանուց և հայերից, որպես օգնության նախապայման՝ ընդունել կաթոլիկական դավանանք:

Ուշագրավ է, որ Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին հայոց հղած նամակում և Ի. Օրոն՝ 36 կետից բաղկացած ընդարձակ և հանգամանալից խնդրագրում նշված են հայերի պարտավորությունները, այդ թվում Հովհան Վիլհելմին հայոց թագավոր ճանաչելը և կաթոլիկություն ընդունելը... բայց պայմանով, որ այդ արվելու էր Հայաստանն ազատագրելուց հետո: Օրին դիվանագետի հմտությամբ նշում էր, որ եթե այժմ հայերը դավանափոխ լինեն և այդ հայտնի դառնա պարսից իշխանություններին, ապա նրանք դաժանորեն կպատժեն հայերին ու կկանխեն ապստամբությունը: Հավանաբար, նման նկատառումներով էլ խընդրագրի տակ չէին ստորագրել էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսները, թեպետ նրանց անուններն ավելի ծանրակշիռ ու պաշտոնական տեսք կտալին փաստաթղթերին: Ուրեմն, Օրոն տարած խնդրագրերն ըստ էության ոչ մի պարտավորություն չէին դնում հայ ժողովրդի և եկեղեցու վրա, թեպետ Օրին լիահույս էր, որ դրանք մեծ դեր էին կատարելու գործի հետագա ընթացքում:

Այսպես, 1699 թ. ապրիլի 9-ից մինչև 29-ը Անգեղակոթում բանակցություններն ավարտելուց և համապատասխան խնդրագրեր (Հռոմի պապին, կայսրին, Հ. Վիլհելմին ու Պետրոս Առաքինին) կազմելուց հետո Իսրայել Օրին և Մինաս վարդապետը՝ իր ժամանակի այդ կրթված ու հայրենասեր հոգևորականը, վերցնելով համապատասխան երաշխավորագրեր, ճանապարհ ընկան դեպի Ավստրիայի՝ Գերմանական սրբազան կայսրության՝ մայրաքաղաք Վիեննա, որտեղից պետք է անցնեին Հռոմ, ապա և Մոսկվա:

Այն, որ դեռևս 1699 թ. Անգեղակոթում որոշված էր դիմել Ռուսաստանին և դրա համար միջնորդություն խնդրել Լեոպոլդ կայսրից, հաստատվում է հայ մեկիքների՝ 1703 թ. Պետրոս Առաքինին գրած մի նամակով ևս: «Մեք գրեր էաք Եփրատօրին և լէկտօր* Փալաթինին, որ

* Այսինքն՝ էլեկտոր:

աղաչեն առ քո թագաւորութեանդ, նոքա ևս մեր աղաչանացն լսած է և քո թագաւորութեանդ գրած է, եթէ նոցա և մեր աղաչանացն լսեր են և առերես յանձնող, որ ազատես զմեզ»²⁴:

Ի. Օրու և Մինաս Վարդապետի եվրոպական բանագնացութեան քաղաքական արդշունքները բավարար եղան, թեև նրանք որեւէ ռեալ ռազմական կամ նշույթական օգնութեան խոստում չստացան: Միայն Հովհան Վիլհելմը «պատրաստակամութիւն» հայտնեց Հայաստան ուղարկել 10 հազար զինվոր, եթե թույլատրվի այդ անել Ռուսաստանի վրայով: Սակայն էականն այն էր, որ Հովհան Վիլհելմը, ապա նաև Լեոպոլդ կայսրն ու Հոռմի պապ Ինոկենտիոս 12-րդը (1691—1700) հավանութիւն տվին Իսրայել Օրու ներկայացրած ազատագրական ծրագրին, նրան հանձնեցին երաշխավորագրեր և շատ կարևոր նամակներ՝ կայսր Լեոպոլդի կողմից Պետրոս Առաջինին և հայ ավագանուն²⁵: Օրին Գերմանիայից ու Լեհաստանից ստացել էր անցագրեր, որոնք և ներկայացրեց Ռուսաստան գալու ժամանակ: Օրու հետ 1701 թ. հուլիսի 7-ին Մոսկվա եկան Մինաս Վարդապետ Տիգրանյանը, լեհահայ նազար Օրեխովիչը (Օռուխենց Կուլնազարը՝ ինչպես ստորագրում էր նա) և Օրու անձնական քարտուղար Պետր Միմոնը՝ ղեկավարական ատյան ներկայացնելով անցագրերը և խնդրելով իրենց գալու մասին շտապ հաղորդել Վում հարկն է»²⁶:

Այսպես, շուրջ քսան տարի Արևմուտքում Հայաստանի ազատագրութեան ուղիներ որոնելուց հետո Իսրայել Օրին հանգեց այն վերջնական եզրակացութեան, որ Եվրոպայի պետութիւններն ի վիճակի չեն (իսկ զրանցից շատերը չեն էլ ուզում) օգնել հայ ժողովրդի ազատագրութեան գործին և լավագույն դեպքում միայն կարող են նպաստել Ռուսաստանի ձեռնարկումներին: Այդ է ապացուցում նրա հետագա գործունեութիւնը:

Ինչպես տեսանք, հայ և վրաց գործիչները XVII դարի 60-ական թթ. կողմնորոշվել էին դեպի Ռուսաստան, այնտեղից սպասելով Անդրկովկասի ազատագրութեան համար իրական օգնութիւնը: Միայն հարեան հզոր Ռուսաստանն էր կենսականորեն շահագրգռված պայքարելու Թուրքիայի, Պարսկաստանի ու դրանց կովկասյան վասալների թշնամակամ գործողութիւնների դեմ: Ռուսաստանի պաշտպանութեան տակ երկիրը կազմավեր միջֆեոդալական կոիւններից, ասպատակութիւններից, խաների ու փաշաների քմահաճութիւններից, ազգային ու կրոնական ճնշումներից, բռնի գաղթեցումներից ու դավանափոխութիւնից և, որ գլխավոր է՝ ֆիզիկական բնաջնջման վտանգից:

Ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը համազգային նշանակութիւն ունեւր և արտահայտում էր հայ ժողովրդի բոլոր խավերի

ու զանգվածներին՝ այդ թվում Անդրկովկասի ու Բալկանների գաղութահայություն շահերն ու ձգտումները, նրանց և՛ մասնավոր, և՛ ընդհանուր նպատակները:

Հայ վաճառականության և մանր առևտրականների շահերը պահանջում էին առևտրի ազատություն, մեծ շուկա և տրանզիտային առևտրի հարմար ու ապահով ճանապարհ ներկայացնող Ռուսաստանի հետ մերձեցում ու հովանավորություն, քանի որ «Թուրքական, ինչպես արևելյան ամեն տեսակի այլ տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով չի ապահովված սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից: Բացակայում է բուրժուական ձեռնարկատիրական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը»²⁷:

Հայ ազնվականության վերջին բեկորները՝ մեկիքները կարող էին հույսեր կապել Ռուսաստանի օգնության հետ՝ իրենց հողատիրական իրավունքների ամրացման և ընդլայնման համար:

Հայ եկեղեցին հակվում էր դեպի Ռուսաստան, հուսալով ցարի օգնությամբ իր դիրքերն ամրացնել հայ ժողովրդի մեջ, հաղթանակով դուրս գալ մահմեդականության ու կաթոլիկության դեմ մղվող ծանր պայքարում և հնարավորության դեպքում իր ղեկավարության տակ վերցնել հայության տարբեր զանգվածները և՛ Հայաստանում, և՛ գաղութներում:

Հայ աշխատավորները՝ գյուղացիները, արհեստավորները, մտավորականները, վարձու բանվորները, չունեին պաշտպանվելու նյութական միջոցներ: Իրավագուրկ և ընչազուրկ, նրանք փրկություն էին ակնկալում Ռուսաստանից, որտեղ հայերի դրությունն զգալիորեն ավելի լավ էր, քան Հայաստանում և հուսով էին, որ Մոսկվայի քրիստոնյա ցարի օգնությամբ կազատվեն «բաբելոնյան գերությունից»:

XVII դարում նոր թափառած ազատագրական շարժումը համազգային բնույթ էր ստանում, քանի որ հայ զանգվածները փրկության ուղիներ էին որոնում, գիտենալով, թե ով է իրենց թշնամին, ով՝ բարեկամը, և ո՞ր պետությունը կարող է լինել իրենց ազատագրման գործում շահագրգռված: Այս հանգամանքն էր որոշում ազատագրական շարժման ուղղվածությունը և համաժողովրդական բնույթը: Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը «Համաժողովրդական է այն շարժումը, որն արտահայտում է ամբողջ երկրի օբյեկտիվ կարիքները... Համաժողովրդական է այն շարժումը, որն օգտվում է բնակչության հսկայական մեծամասնությամբ»²⁸: Լենինը գրում էր, որ յուրաքանչյուր ազգային ճնշում հան-

դիպում է լայն ժողովրդական զանգվածների հակահարվածի, իսկ ամեն մի հակահարված ազգային ապստամբություն է: Յուրաքանչյուր ապստամբ ազգ իրեն պաշտպանում է ճշդ ազգությունից, պաշտպանելով ի՛ր լեզուն, ի՛ր երկիրը, ի՛ր հայրենիքը²⁹:

Հայերի ռուսական կողմնորոշումը պետականությունից զրկված, օտար բռնակալության ծանր լծի տակ հեծող հայ ժողովրդի ազատագրության իրական ստրատեգիական ծրագիրն էր՝ պայմանավորված երկրի ներքին ու միջազգային դրությամբ, սոցիալ-տնտեսական կյանքի արմատական պահանջներով ու խարսխված երկու ժողովուրդների բազմադարյան կապերի, փոխըմբռնման, համագործակցության և անխախտ բարեկամության ամուր հիմքի վրա: Այդ բխտորոշ կողմնորոշումը վերջնականորեն ձևավորվեց Ի. Օրու և ռուսական արքունիքի բանակցությունների շնորհիվ:

1701 թ. հուլիսի 10-ին Ի. Օրին Ռուսաստանի Դեսպանական ատյան ներկայացրեց կեդպոլդ կայսեր ու Հ. Վիլհելմ կուրֆյուրստի հավատարմագիրը (любителские грамоты) և ստացավ կանցլերին ներկայացնելու թույլտվություն: Հուլիսի 11-ին արտաքին գործոց ատյանի պետը («առաջին բոլարին») և կանցլեր Ֆ. Ա. Գոլովինը (1700—1706) Ի. Օրու հետ սկսեց բանակցություններ, որոնց նպատակն էր քննել հայ ավագանու և Ի. Օրու խնդրանքներն ու դրանց բավարարելու կոնկրետ միջոցները: Հայաստանի ազատագրության իր գաղտնի ծրագիրը համառոտակի հայտնելուց հետո, Օրին խոստացավ գրավոր պատասխանել Գոլովինի հարցերին. 1. ինչպես պետք է սկսվի «այդ գործը», 2. քանի տարում (2 թե 3) կարող է ավարտվել գործը, և 3. ով պետք է բանակն ապահովի պարենով: Երեք օրից հետո Ի. Օրին Պետրոս Առաջինին ներկայացրեց լատիներեն մի նամակ և մի ֆրանսերեն նամակապատասխան Ֆ. Ա. Գոլովինին³⁰:

Պետրոս Առաջինին և Ֆ. Գոլովինին հղած նամակներում Օրին հավաստիացնում էր, որ հայ իշխանները պատրաստ են ռուսների կողմնանցնելու և նրանց օգնելու, իսկ եթե 15—20 հազար ռուս զինվոր գնա Հայաստան, միլիոնավոր քրիստոնյաներ կազատվեն օտար լծից: «Ավելի քան 250 տարի է,— գրում էր Օրին Պետրոս Առաջինին,— քրիստոնեությունը տնջում է անհավատների լծի տակ և ինչպես Աբրահամի որդիները, հավատով սպասում էին Փրկչին, որ կազատեր նրանց հավերժական մահից, այնպես և այդ խեղճ ժողովուրդը միշտ ապրել և աշխատել ապրում է Ձերդ մեծություն օգնության հույսով»: Մարգարեները գուշակել են, կարդում ենք Օրու նամակում, որ «Մոսկովյան Օգոս-

տափառ տնից կգա մի մեծ իշխան՝ ավելի քաջ, քան Ալեքսանդր Մեծը (Ա. Մակեդոնացին — Վ. Ռ.), որը կնվաճի հայկական թագավորությունը և կազատագրի քրիստոնյաներին»³¹։ Ի. Օրին վստահեցնում էր, որ ռուսական բանակը լիովին կապահովվի պարենով ու հաղորդակցական միջոցներով։

Թե ինչքան հանգամանորեն էր նախապատրաստվել Օրին իր առաքելությունն սկսելու համար, երևում է նրա ներկայացրած փաստաթղթերից, ինչպես և Հայաստանի, Կովկասի ու Մերձավոր արևելքի ներքին ու միջազգային դրություն լավատեղյակությունից։ Ռուս պետական գործիչների հետ բանակցելիս նրա բացատրություններն ու առաջարկությունները հիմնավորված և համոզիչ էին։ Նա վառ գտնվելով ներկայացնում էր Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, պարսից պետականության ճգնաժամը և ռուսական արշավանքի դեպքում հայ-վրացական ապստամբություն՝ հաջողությամբ պսակվելու հնարավորությունը։

Օրին Պետրոս Առաջինին ներկայացրել էր իր և Միմոնների՝ 1701 թ. կազմած Հայաստանի, Վրաստանի և զրանց հարևան երկրների ձևական գոնավոր քարտեզը³², որպեսզի ռուսական գործիչները կոնկրետ աշխարհագրական պատկերացում ունենային Անդրկովկասի ռելիեֆի, ճանապարհների, քաղաքների ու բերդերի տեղաբաշխման մասին։

Ի. Օրու և Մինաս Վարդապետի բանակցությունները չավարտվեցին ու չէին կարող ավարտվել մի քանի հանդիպումներով ու ղեկույցներով, քանի որ ռուսական կառավարությունը նման բարդ և միջազգային նշանակություն ունեցող հարցի լուծման համար պետք է հանգամանորեն ուսումնասիրեր Անդրկովկասի, Պարսկաստանի և Թուրքիայի ներքին վիճակը, ուժերի փոխհարաբերությունը, հայ ֆեոդալական վերնախավի, եկեղեցու, վաճառականության ու գյուղացիության տրամադրությունները, պաշարի համար նրանց պատրաստակամության աստիճանը։ Ռուսական արքունիքը չէր կարող շտապողականություն ցուցաբերել՝ առավել ևս այն պատճառով, որ դեռևս 1700 թ. օգոստոսին սկսվել էր Հյուսիսային պատերազմը Շվեդիայի դեմ, երբ Պետրոս Առաջինը պարտություն էր կրել և, ժամանակավորապես նահանջելով, պատրաստություններ էր տեսնում նոր հարձակման համար՝ ստեղծելով նոր բանակ, հզոր հրետանի և նավատորմ։ Իսկ շվեդական թագավոր Կարլոս 12-րդը, գտնելով, որ Պետրոս Առաջինի բանակն իբրև թե ջախջախված է գլխովին, իր հարվածներն ուղղել էր Ռուսաստանի միակ դաշնակցի՝ Լեհաստանի դեմ։ Անգամ նման աննպաստ պայմաններում ռուսական կառա-

վարութիւնը ոչ միայն չէր մերժում հայերի ու վրացիների դիմումները, այլ շարունակում էր բանակցութիւնները:

1701—1703 թթ. ռուսական կառավարութիւնը պարբերաբար տեղեկութիւններ էր հաւաքում Հայաստանի ու Վրաստանի մասին Մոսկվա եկող վաճառականներից, նրանց գործակատարներից, հոգևորականներից, ինչպես և Օրուց, Արշիլից ու նրանց մարզկանցից:

Ռուսական կառավարութիւնը, լիակատար վստահությամբ վերաբերվելով Ի. Օրուն, Արշիլին, հայ և վրաց գործիչներին, նրանց տալիս էր պատասխանատու հանձնարարութիւններ, նրանցից պահանջում մշտական հաղորդումներ, ուղարկում Եվրոպա, Կովկաս, Պարսկաստան: Այսպես, 1702 թ. Պետրոսը Հայաստան ուղարկեց Միրոն Վասիլեին, որը պետք է պարզեր իրավիճակը, հավաստեր հայ ավագանու հավատարմութիւնը Ռուսաստանին և ստուգեր Օրու ծրագրերի ու դիմումների վավերականութիւնը: Նազար Օրեխովիչը «նորին մեծութիւն թագավորի» հրովարտակներով 1702 թ. ուղարկվում է կայսեր և Բավարիայի կուրֆյուրստի մոտ... Իսկ 1703 թ. Ռուսաստանի արտակարգ ղեկավար իշխան Դրիգորի Դոլգորուկովի նամակներով նա Լեհաստանից գալիս է Մոսկվա, ապրում է Ի. Օրու մոտ և պաշտոն ստանում Դեսպանական ատյանում:

Ուշագրավ է, որ 1703 թ. ռուսական կառավարութիւնը Արշիլից ու Ի. Օրուց պահանջում է Անդրկովկասի նոր քարտեզ-գծագրեր, թեպետ, դեռևս 1701 թ. Օրին ներկայացրել էր բավական հաջող «Դժագիրը»: Հավանաբար հարկ էր եղել Անդրկովկասը ներկայացնել ավելի հանգամանալի զեկուցումով և նոր քարտեզներով՝ երկու անվանի հեղինակների պատկերացմամբ, դրանք համադրելու, ճշտելու և նրանց տեղեկութիւնների վավերականութիւնն ստուգելու համար:

1703 թ. Ի. Օրին Պետրոս Առաջինին է ներկայացնում Հայաստանի ու Անդրկովկասի նոր քարտեզը³³ (Արշիլի գծած քարտեզը 1703 թ. վերջերին հանձնվել էր Դեսպանական ատյան): Նոյեմբերի 15-ին, Պետրոս Առաջինին հղած իր նամակում, նկարագրելով հայերի վիճակը թուրք ու պարսիկ հարստահարիչների իշխանության ներքո և շեշտելով ճնշումների ու հալածանքների ուժեղացումը, Ի. Օրին խնդրում է օգնել հայերին, վրացիներին, հուլիներին, ասորիներին, որոնք հեծում էին «անհավատների» լծի տակ: Օրին գիտակցում էր, որ Հայաստանի ազատագրության գործը անմիջականորեն առնչվում է ոչ միայն ռուս-պարսկական ու ռուս-թուրքական, այլև ռուս-եվրոպական փոխհարաբերութիւնների հետ: Դրա համար պետք էր միավորել Անդրկովկասի ու բալկանյան ժո-

դովուրդների ուժերը, պետք էր այդ գործի շուրջն ստեղծել միջազգային բարենպաստ հասարակական կարծիք:

Հայաստանից ուղարկվող խնդրագրերը Պետրոս Առաջինին և Գլովինին, Ի. Օրու բուռն ու արգասավոր գործունեությունը Մոսկվայում 1701—1704 թթ. նշանակալի եղան հայ ազատագրական շարժման ուսական կողմնորոշման և հայ-վրաց-ռուսական ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման համար:

Ի. Օրու և մյուս հայ գործիչների նամակներում ու դիմումներում հստակորեն արտահայտված է նրանց ձգտումը՝ ստեղծել ընդհանուր ռուս-վրաց-հայկական ճակատ, նպաստել երեք երկրների քաղաքական և ապա ռազմական համագործակցությանը, առանց որի անհնար էր Անդրկովկասի ազատագրումը: Ե՛վ Սրչիլի, և՛ ռուս արքունիքի հետ իր բանակցությունների ընթացքում Օրին հետևողականորեն պնդում էր ռուս-հայ-վրացական դաշնակցությունն ստեղծելու անհրաժեշտությունը:

Նշանավոր դիվանագետ և ազատագրական շարժման գործիչ մոլդավացի Ն. Միլեսկու Սփաթարիոսի* հետ Ի. Օրու 1701 թ. հուլիսի բանակցությունների արձանագրությունից պարզվում է, որ Օրին շեշտել է նաև հույների, հայերի ու վրացիների (և՛ հունադավանների, և՛ կաթոլիկների) վրա կախված մտանգի լրջությունը, նրանց միասնության անհրաժեշտությունը: Ի. Օրին հավատացնում էր, որ եթե ռուսական զորքերը մտնեն վրացական երկիր, ապա այնտեղի խանը՝ Վախթանգ VI-ը, որը հարկադրաբար մահմեդականություն ընդունած քրիստոնյա վրացի է, անմիջապես կվերադառնա քրիստոնեական դավանանքին և կապստամբի շահի դեմ, «իսկ նրա զորքերը բոլորը վրացիներ են ու քրիստոնյաներ»: Բացի վրացական զորքից, որ Օրու կարծիքով 30.000-ի էր հասնում, անմիջապես կհավաքվի էլի 80.000, իսկ Հայաստանը կարող է դուրս բերել 100.000-ից ավելի կովոդ: Եթե շահի զորքերից դուրս գան վրացիներն ու հայերը, ապա նրա բանակում կմնա 20.000 մարդ և ոչ ավելի:

Օրին հույս էր հայտնում, որ 25.000 ռուսների Անդրկովկաս մտնելը միանգամայն բավական կլինի երկիրն ազատելու համար, քանի որ կապստամբեն մի կողմից հայկական և մյուս կողմից վրացական զինված ուժերը:

Կարելի է վստահորեն ասել, որ արդեն 1703 թ. վերջերին ձևավորվում էր ռուս-վրաց-հայկական քաղաքական ու ռազմական դաշինքը, և

* Պատմական գրականության մեջ թույլ է տրվել սխալ՝ մոլդավացի բոյարին Սպաթարիոսին համարել են հույն, մինչդեռ հայտնի է, որ նա՝ Միլեսկուն նշանավոր մոլդավական գործիչ էր:

ակալել էին գործնական քայլեր՝ դաշինքի ամրապնդման ու ապագա գործողությունների նախապատրաստման համար: Սակայն Ռուսաստանը վարում էր ծանր ու բախտորոշ պատերազմ՝ դեպի Բալթիկ ծով ելք ունենալու համար: Ինչպես գրել է Կ. Մարքսը, «Ոչ մի ազգ գոյություն չի ունեցել և չէր կարող գոյություն ունենալ բոլոր ծովերից այգպիսի հեռավորության վրա, ինչպես սկզբում Պետրոս Մեծի կայսրությունն էր... Ոչ ոք չի կարող պատկերացնել Մեծ ազգ՝ կտրված ծովերից: Ռուսաստանը չէր կարող շվեդների ձեռքին թողնել Նեայի գետաբերանը, որը հանգիստանում էր արտագրանքի սպառման համար բնական ելք, ինչպես և Դոնի, Դնեպրի, Բուգի գետաբերանները և Կերչի նեղուցը քոչող ու ավազակող թաթարների ձեռքին»: «Ընդհանրացնելով Պետրոս Մեծի արտաքին քաղաքականության մասին արտահայտած մտքերը, Կ. Մարքսը գրում է, որ Պետրոս Մեծը նվաճեց «այն բոլորը, ինչ որ բացարձակապես անհրաժեշտ էր իր երկրի բնականոն զարգացման համար»:

Իսկ այդ նվաճումները ոչ միայն հզորացնում էին Ռուսաստանը, այլև նպաստում նրա տերիտորիալ, քաղաքական ու ռազմական մերձեցմանը Անդրկովկասին: Եվ Ի. Օրին պարբերաբար ողջունում էր Պետրոս Առաջինի ամեն մի նվաճում ու հաղթանակ, անգամ խնդրում իրեն ուղարկել պատերազմի ճակատ:

1703 թ. Օրին խնդրում է իրեն տալ գնդապետի աստիճան և ուղարկել կայսեր, պապի և կուրֆյուրստի մոտ՝ իր նոր առաքելությունը նախապատրաստելու՝ Անդրկովկաս ու Պարսկաստան մեկնելու համար:

Օրու մտահղացմամբ պետք էր Հռոմի պապի կողմից մի դեսպանություն ուղարկել պարսից շահի մոտ՝ քրիստոնյաների, այդ թվում հայերի վիճակը բարելավելու հարցը բարձրացնելու համար: Սակայն այդ պատրվակի տակ Օրին ուղում էր ազգարարել և՛ Հռոմի, և՛ կայսեր, և՛ նրա դաշնակից պետությունների կողմից հայերին հովանավորելու ցանկությունն ու պատրաստակամությունը, դրանով իսկ համախմբելով Անդրկովկասի ժողովուրդների ուժերը՝ ապագա պայքարի և ռուսական զորքերին ընդառաջ գնալուն պատրաստ լինելու համար: Օրու խնդրերը բավարարվում է, և 1704 թ. փետրվարին գնդապետ Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա՝ իր հետ տանելով Պետրոս Առաջինի հանձնարարականներն ու նամակները՝ կայսր Լեոպոլդին, Հովհան Վիլհելմին, ինչպես և Արչիլի նամակները՝ վերջիններին:

Ի. Օրին կարողացավ հասնել այն բանին, որ 1705 թ. հուլիսի 15-ին ստացավ Հռոմի Կղեմոս 11-րդ պապի (1700—1721) ստորագրությամբ

հավատարմագիր՝ պարսից շահին ներկայանալու՝ որպես Հոռմի պապի ղեսպանորդ:

Ի. Օրին ղեսպանության ուղևորութիւնը նախապատրաստվում էր անօրինակ եռանդով՝ կանխատեսելով բոլոր դժվարութիւններն ու դրանց հաղթահարման միջոցները: Ռուսական իշխանութիւններին նա ժանոթացնում էր իր՝ եվրոպական բանագնացութեան արդյունքներին և խորհրդակցում Պարսկաստանում անելիքների մասին:

Ի. Օրին իր դիվանագիտական գործը կատարելուն զուգահեռ ուղիներ էր որոնում միավորելու Անդրկովկասի ժողովուրդների ուժերը, ամրապնդելու ռազմաքաղաքական դաշինքը: Այս հասկանում էին պարսից կառավարող շրջանները և շտապեցին կազմակերպել շահի մոտ Օրու ընդունելութիւնը, նրանից շուտ ազատվելու և երկրից վանելու նպատակով:

1709 թ. հուլիսին Օրին արդեն Սպահանում էր և մեծ հանդիսավորությամբ ընդունվեց շահի պալատում, ներկայացնելով Հոռմի պապի, կայսեր և Պետրոսի հանձնարարականները: Շահը և նրա արքունիքը որոշակիորեն մերժեցին Պետրոս Առաջինի պահանջը՝ քրիստոնյաների հետ բարյացակամորեն վերաբերվելու մասին, պնդելով, որ հայերը Պարսկաստանի հպատակներն են և շահի դեմ ըմբոստացման դեպքում պետք է պատժվեն: Այս նշանակում էր, որ երկու պետութիւնների միջև եղած խաղաղութեան կամուրջներն այրված էին, Անդրկովկասի ժողովուրդների դրութիւնը բարելավելու, առավել ևս խաղաղ ճանապարհով Ռուսաստանի իրավունքները ճանաչելու հնարավորութիւնները՝ բացառված:

Այդ լավ գիտեին ինչպես շահի արքունիքն ու դիվանագետները, այնպես էլ ազատագրական շարժման գործիչները, որոնք պետք է ջանքեր դնեին ռուսական օգնութիւն խնդրելու և տեղական ուժերը հավաքելու, նրանց մարտական ոգին ամրապնդելու համար, ռազմաքաղաքական դաշինքի գործնական նախապատրաստութիւններին համար:

Օրին շուրջ մեկ տարի էլ մնաց Անդրկովկասում: Շամախիում նա անմիջական կապեր հաստատեց Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ, որը դարձավ նրա զինակիցներից մեկը և հետագայում մեծ դեր կատարեց ազատագրական շարժման, զինված ապստամբութեան ու դիմադրական կռիւների ժամանակաշրջանում:

1711 թ. Ի. Օրին Եսայի կաթողիկոսի հետ մեկնում է Աստրախան՝ այնտեղից մայրաքաղաք գնալու և իր ղեսպանութեան արդյունքների մասին զեկուցելու: Սակայն օգոստոսին, մինչև այժմ անհայտ պատճառով,

Օրին Աստրախանում մահանում է՝ թողնելով բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ, որոնք հասնում են ռուսական արքունիք, օգնում Արևելքում ստեղծված վիճակի հստակ պատկերացմանը:

Մեծ ու անգնահատելի է Իսրայել Օրու ծառայությունը Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ, նրանց ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման խորացման ու ընդլայնման, համատեղ պայքարի նախապատրաստման ջանքերում: Նրա ազատագրական գաղափարներն ի մի էին բերել ինչպես ժամանակի, այնպես էլ անցյալի լավագույն ավանդույթները, դարձել մի կենսահաստատ ծրագիր, որն ուժի մեջ մնաց XVII—XIX դարերում՝ մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին:

Ի. Օրու գործունեությունը, նրա դերը հայ ժողովրդի ազատագրական շարժման մեջ պայմանավորված էր ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր կյանքի զարգացման ընթացքով: XVII—XVIII դարերում ծավալված ազատագրական շարժումը, Ռուսաստանի հետ ստեղծվող ու տարեցտարի ամրապնդվող տնտեսական ու քաղաքական կապերն Օրու, ինչպես և Անդրկովկասի գործիչներին բերին այն համոզման, որ միայն Ռուսաստանն էր շահագրգռված երկրամասի ժողովուրդներին պարսկական, ապա և թուրքական տիրապետությունից ազատելու գործում: Ռուսական կողմնորոշումը, որ խոր արմատներ ուներ բալկանյան երկրներում, ուժեղանում էր նաև այնտեղի բազմամարդ հայկական գաղթավայրերում, որտեղ ծավալվող ազատագրական շարժումները հստակորեն արտահայտում էին ժողովուրդների օբյեկտիվ շահերն ու ձգտումները: Այդ լավ էին հասկանում հեռատես գործիչները և մասնավորապես Իսրայել Օրին, «Ավելի քան 250 տարի է, — գրում էր Օրին Պետրոս Առաջինին, — որ քրիստոնեությունը տնքում է անհավատների լծի տակ... ժողովուրդը միշտ ապրել և այժմ էլ ապրում է Ձերդ Մեծության օգնության հույսով»³⁴:

Օրին հասկանում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության ազդվածությունը, նրա ուժն ու պոտենցիալ հնարավորությունները և, որ շատ կարևոր է, Պետրոս Առաջինի մեծությունը՝ որպես պետական գործիչ ու զորավար, մեծ բարենորոգող ու դիվանագետ: Նա գիտեր Ազովի նվաճման ու Եվրոպա գնացած ռուսական Մեծ դեսպանության պատմությունը, ականատես էր դեպի Բալթիկ ծով «լուսամուտ բանալու» և Շվեդիայի հզորությունը կոտրելու փաստին: Օրին տեսնում էր, թե ինչպիսի թափով է Պետրոսը խթանում երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացումը և ինչպիսի անձնական ավանդ է ներդրում

ամբողջ Ռուսաստանի առաջադիմության գործում: Ինչպես գրել է Վ. Ի. Լենինը «Պետրոսն սրագացրեց արևմտականության ընդօրինակումը բարբարոսական Ռուսիայի կողմից, կանգ չառնելով բարբարոսության դեմ պայքարի բարբարոսական միջոցների առաջ»³⁵:

Պետերբուրգի բոլշևիկյան կոմիտեն, մայրաքաղաքի հիմնադրման 200-ամյակի կապակցությամբ 1903 թ. հրատարակած թոուցիկում գրել է. «Խելացի և ուժեղ մարդ էր Պետրոս Մեծը և շատ օգուտ բերեց իր ժամանակի համար», «նա կարողացավ լուսամուտ բանալ դեպի եվրոպա»³⁶:

«Մենք ինչպես կարող ենք տոնել Պետերբուրգի 200-ամյակը: Միայն ավարտելով մեծ քաղաքական հեղափոխությունը և լիակատար տապալելով ինքնակալությունը, այն, ինչ սկսեց Պետերբուրգի հիմնադրումով մեծ, այդ կիսավայրենի բռնակալը»³⁷:

Պետրոս Մեծին տրված գնահատականը, իհարկե, այնժամ պայմանավորված էր Ռուսաստանի պատմական վիճակով, երբ բանվոր դասակարգը կովի էր ելնում ցարական ինքնակալության դեմ: Բացի այդ, մենք Պետրոս Մեծի գործունեությունը պետք է գնահատենք որոշակի պատմականությամբ՝ այս դեպքում հարցը քննելով հայ ժողովրդի շահերի և նպատակների տեսակետից, քանի որ Պետրոսը և Ռուսաստանը XVIII դարում հանդես էին գալիս որպես Անդրկովկասի ազատագրական պայքարի զորավիգ, որպես բարեկամ և ազատարար:

Հայ-ռուսական քաղաքական փոխհարաբերությունների զարգացման նոր շրջան է սկսվում XVIII դարում, երբ հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորումը որոշակի արտահայտություն է ստանում հայոց դիվանագիտության պատմության մեջ, մասնավորապես Իսրայել Օրու՝ Պետրոս Առաջինին ներկայացրած և լիակատար հավանություն գտած ծրագրում: Այն ուժի մեջ մնաց ողջ XVIII դ. ընթացքում և իրականացվեց XIX դարի առաջին երեսունամյա ժամանակաշրջանում, երբ Վրաստանի, ապա և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալը դարձավ պատմական մեծ, բախտորոշ և առաջադիմական իրողություն, որի հսկայական նշանակությունը ավելի տեսանելի է դարձել այժմ՝ 160 տարի հետո:

Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության պատմության մանրակրկիտ, փաստական ու խորազնին ուսումնասիրությունն ու պրոպագանդումը մեծ նշանակություն ունեն, ինչպես ժողովուրդների ինքնաճանաչման, նրանց փոխադարձ կապերի ու բարեկամության ամրապնդման, նույնպես և ապագան կերտելու համար:

Վ. Ի. Լենինը օրինական և պատմականորեն լանհրաժեշտ էր համարում ազատագրական շարժումներում ժողովրդի բոլոր շերտերի՝ դասերի ու դասակարգերի միավորումն ու համագործակցությունը, քանի որ ազգային-ազատագրական շարժումը այսպես թե այնպես քաղաքական ասպարեզ է ներգրավում բնակչության բոլոր դասակարգերը»³⁸:

Մարքսիզմ-լենինիզմի դասականները բազմիցս նշել են, որ հպատակ ժողովրդի համար օտար տիրապետությունից դուրս գալու ձգտումը ոչ միայն նրա անկապտելի իրավունքն է, այլև ամենանվիրական ու քրքրազան պարտականությունը, եթե անգամ նա ազգայնական բնույթ ունենա: Վ. Ի. Լենինն այդ միտքը զարգացնում և տարածում է անգամ XX դարի պատմության վրա, շեշտում, որ ճնշված ամեն մի ազգի բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն՝ ընդդեմ ճնշման և հենց այդ բովանդակությունն է, որ մենք պաշտպանում ենք անպայման:

«Մենք իրավունք ունենք և պարտավոր ենք քամահրել ճնշող ազգի ամեն մի սոցիալ-դեմոկրատի՝ որպես իմպերիալիստի և որպես սրիկայի, եթե նա այդպիսի պրոպագանդա չի մղում»³⁹: Դեռևս XIX դարի կեսերին մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը նշել է. «Այսօր ճնշված մարդերի համար ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվել բռնակալության դեմ»⁴⁰: Այդ ճիշտ էր ինչպես Նալբանդյանի օրոք, այնպես և XVII—XVIII դարերում, երբ Հայաստանի փրկության միակ ու ճիշտ ուղին տանում էր Ռուսաստան:

Այդպես էլ շարունակվել է մեր պատմությունը XIX—XX դարերում, և ինչպես գրել են հայ ժողովրդի բոլոր մեծ ու առաջադեմ գործիչները և մտավորականության ներկայացուցիչները, Ռուսաստանն է եղել փրկության ու ազգային վերընթաց զարգացման ուղին: Մեծագույն գրող ու հայրենասեր Հովհաննես Թումանյանը հակիրճ ու ճշմարտացի գրել է. «Եթե մեր բազմադարյան պատմության մեջ մի օգուտ ու օգնություն ենք տեսել՝ էդ եղել է Ռուսաստանից»: Հայաստանի ամենաժանր օրերին անգամ, երբ Ռուսաստանն ի վիճակի չի եղել պաշտպանելու հայերին, երբեք չի թուլացել ռուսական կողմնորոշումը: Թումանյանը հիմնավոր կերպով ցույց է տալիս, որ Պարսկաստանում և Թուրքիայում միշտ եղել է «Հայոց հարցը», որտեղ «վտանգվել է հայ ժողովրդի կյանքը, գույքը, պատիվն ու կուլտուրական զարգացումը: Եվ գոյություն է ունեցել և ունի Պարսկաստանում, գոյություն է ունեցել և ունի Տաճկաստանում: Գոյություն չունի և չի ունեցել Ռուսաստանում, թեկուզ իշխան Գոլիցինի օրերում: Ընդհակառակը, հայ ժողովուրդը միշտ նայել է Ռուսաստանի

վրա՝ որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա: Դեռ XVIII դարի սկզբում Օրին, հայոց բարձր հոգևորականությունն ու մեղիքները բանակցությունների մեջ էին Պֆալցի գերմանական կուրֆյուրստ Վիլհելմի հետ: ...Շատ շուտով փորձն ու գործն էլ ցույց տվին, որ միայն Ռուսաստանը կարող էր վճռել խնդիրը: Եվ թե Օրին ...թե հայ ժողովուրդը էն օրվանից հրեաներն արին դեպի Ռուսաստան: Եվ ընդմիջտ դեպի Ռուսաստան: Մինչև էս օրվան օրը»⁴¹:

Հ. Թումանյանը ցույց է տալիս Ռուսաստանի պատմական դիրքի տնտեսական ու քաղաքական հիմքերը, շահագրգռությունները, ինչպես և ավանդական բարեկամության դերը: «Կովկասը, — գրել է Թումանյանը, — իր բարեկամ ժողովուրդներով Ռուսաստանի համար թե՛ ռազմական, թե՛ տնտեսական տեսակետից հանդիսանում էր միակ ու հաստատուն կովանը Արևելքում: Էսպիսով էլ երկուստեք դաշն ու հավատարմությունը ապահովված էր»⁴²:

Այսպես հստակ ու անվիճելի են Հ. Թումանյանի պատմագիտական դրույթները, որոնք հիմնավորված են մեր ժողովրդի դարավոր փորձով:

Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման, դրա համաժողովրդական էության մեկնաբանողներ ու պաշտպաններ են եղել նշանավոր հայոց մեծերը՝ Խ. Աբովյանն ու Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանն ու Բաֆֆին, Ա. Իսահակյանն ու Մ. Սարյանը, Ս. Շահումյանն ու Ա. Մյասնիկյանը, Վ. Տերյանն ու Եղիշե Չարենցը: Ամբողջ հայ ժողովուրդը և նրա մտավորականությունը, հպարտ են ռուս «Մեծ ու բարձրատաղանդ» ժողովրդի հետ դարավոր անկաշառ բարեկամությամբ, կենսական ու արգասավոր պատմական փորձով:

Մեր եղբայրական ժողովուրդները միշտ, ինչպես նշեց Մ. Ս. Գորբաչովը, «նաև զարգացման այս էտապում մեզ հարստացնում են փորձի հիման վրա, պատմության դասերով»⁴³:

Հարկ է նշել, որ հայ-ռուսական հազարամյա կապերը նպաստեցին ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորմանը և իրական մայրուղու վրա հաստատվելուն: Դրան նպաստեց Մոսկովյան պետության հզորացումը և Պետրոս Առաջինի խելամիտ ու հեռատես քաղաքականությունը XVIII դարի առաջին քառորդի ընթացքում, երբ ռուսական մերձավորարևելյան քաղաքականությունը տվեց իր առաջին պտուղները և, եթե կարելի է այսպես արտահայտվել, ձևավորվեց նաև «հայկական օրինետացիան» ռուսական պետության պլաններում, հատկապես Պետրոս Մեծի ժրագրերում ու գործնական քայլերում, որոնք ամբողջացվեցին ցարական, ապա և կայսերական հրամանագրերում ու

հրովարտակներում: Հիշենք այն փաստը, որ 1711 թվականի Պրուտյան արշավանքի նախօրյակին, երբ թաթարական Դելեթ-Գիրեյ խանի բարբարոս 30-հազարանոց ալյուձին ասպատակում էր երկիրը և հասել էր մինչև Խարկով, երբ թուրքական 120.000 զորքը ճակատամարտի էր սպասում ռուսների դեմ... անգամ այդ օրհասական պահին չէր մոռացել հալոց մասին և իր հրովարտակում Սենատին հրամայել է «Պարսկական առևտուրը բազմացնել և ինչքան հնարավոր է հայերին փայփայել և թեթևացնել նրանց վիճակը, որպեսզի դրանով հրապուրենք նրանց ավելի շատ [Ռուսաստան] գալու համար»⁴⁴: «Персидский торг умножить, и армян как возможно приласкать и облегчить в чем пристойно, дабы тем подать охоту для большого их приезда».

Մեծ է եղել այս հրովարտակի նշանակությունը հայկական առևտրի զարգացման, Ռուսաստանում հայկական տարրի աճեցման, գաղթավայրերի և նորաբնակների համար բարենպաստ պայմանների ստեղծման համար, ուրեմն նաև երկուստեք շահերի պաշտպանության համար:

Պետրոս Մեծի այս քաղաքական կուրսը դրական ազդեցություն ունեցավ XVIII դարի երկրորդ տասնամյակում հայ-ռուս կապերի հետագա ամրապնդման, ապա և 1722 թ. Պարսկական (կամ Կասպյան) արշավանքի նախապատրաստման համար, երբ շուրջ 100 000-անոց ռուսական զորքն ու նավատորմը հաջողությամբ առաջ շարժվեց, հասնելով Դերբենդ, Բաքու, Գիլան, Մազանդարան, երբ Անդրկովկասի ժողովուրդների ապստամբների տասնյակ հազարավոր մարտիկներ կռվի էլան պարսիկ ու թուրք բանակների դեմ և շուրջ տասնամյա հերոսամարտերում ցուցաբերեցին իրենց ազատասեր ոգին, ռուսական օրինետացիան, մարտական դաշինքը ռուս ժողովրդի հետ: Ռուսների հաղթարշավը մինչև Իրանական Ադրբեջանի հողերը ցույց տվին Ռուսաստանի հզորությունն ու Անդրկովկասն ազատագրելու իրական հնարավորությունը, սակայն սուլթանական Թուրքիան և նրա թիկունքում կանգնած նախանձախնդիր տերությունները խանգարեցին Պետրոս Մեծի և Անդրկովկասի ժողովուրդների կենսական ծրագրերի կատարմանը: Ռուսական արքունիքն ստիպված էր հաշտության պայմանագրեր կնքել Պարսկաստանի և Թուրքիայի հետ՝ կանխելու կործանարար պատերազմները շարունակելու վտանգը, պահպանելով Ռուսաստանի իշխանության տակ Մերձկասպյան մարզերը, որոնք կարող էին վճռական դեր խաղալ մոտակա ժամանակներում Անդրկովկասը Ռուսաստանի հետ միավորելիս:

Պետրոս Մեծը լիակատար հիմք և իրավունք ունեն հայերին խոստանալու այն, ինչ նրանք խնդրում էին տարիներ շարունակ: Այդ է վկայում 1724 թ. նոյեմբերի 10(21)-ի հրովարտակը, որով Պետրոս Մեծը ի լուր աշխարհի հայտարարեց.

«Մենք հայ ժողովրդին վերցրինք մեր առանձնահատուկ կայսերական ողորմածության և պաշտպանության տակ» (1 «Мы оный Армянский народ в особливую Нашу Императорскую милость и протекцию приняли»

Петр
Ноября 10 день, 1724 г.

Պետրոս Մեծի այս խոսքերն արտահայտում էին Ռուսաստանի քաղաքականության էությունը, դրա անդառնալի ստրատեգիական նշանակությունը, թեպետ Անդրկովկասի աղատագրման ծրագրի կենսագործման անմիջական պայմաններ այնժամ չկային: Բայց, այնուամենայնիվ, Պետրոս Մեծը ի վան Կարապետի միջոցով հայերին ուղղված իր 1720 թ. Հրովարտակում գրել է.

«Մեր կայսերական ողորմածությունն ու ողջունները Պարսկաստանում ապրող ազնիվ հայ ժողովրդին:

Զեզ հայտնի է, որ վաղնջական ժամանակներից մեր կայսրության մեջ պահպանվում էին լավ փոխհարաբերություններ՝ ի շահ և հօգուտ կողմերի կատարվում էր ազատ առևտուր, որը հետագայում դադարեց՝ Պարսկաստանում սկսված խռոնաշփոթությունների հետևանքով... Եվ ասածո կամֆով այնպես եղավ, որ Կասպից ծովափին գտնվող այն քաղաքները, որոնց միջոցով այդ առևտուրը միշտ կապվում էր մեր կայսրության հետ, անցան մեր պաշտպանության տակ: Եվ որովհետև այդ առևտուրը մեծ մասամբ կատարվում էր Զեր ժողովրդի միջոցով, ուստի հայերը՝ ինչպես նրանք, ովքեր ապրում են Պարսկաստանում, այնպես էլ հատկապես նրանք, ովքեր մեծ բազմությամբ ապրում են մեր կայսրության զանազան քաղաքներում, ամենայն խոնարհությամբ խնդրեցին, որ ձեզ, Պարսկաստանում ապրող հայերիդ հետ առևտուրը վերսկսվի ու շարունակվի:

Եվ մենք, այդ ժողովրդի նկատմամբ ունեցած հատուկ կայսերական ողորմածությամբ, սրանով հայտարարում ենք, որ... նրանք, առանց որևէ երկյուղածության այցելեն և եթե կուզեն բնակվեն ու ապրեն այն քաղաքներում ու գավառներում, որտեղ մինչ այդ ունեին իրենց տները, անարգել կատարելով իրենց առևտուրը, հուսադրված, որ մենք կկարգադրենք ոչ միայն պաշտպանել նրանց, ցույց տալ ամեն կարգի անհրա-

ժեշտ օգնություն՝ ազատորեն կատարելու առևտուր, այլև մեծագույն շահույթի և օգտակարության համար ամենայն ողորմածությամբ կշեռ-
ենեմ մի շարժ հատուկ արտոնություններ...»: Հատուկ հուշագրով Պետրոս
Մեծը խոստանում է «հզոր» միջոցներով օգնել հայերին:

Այս և այլ փաստաթղթերով Պետրոս Մեծը կարգավորում ու օրի-
նականացնում է հայերին տրվող արտոնությունները՝ ազատ առևտրի,
Ռուսաստանում բնակություն հաստատելու և հովանավորություն մթ-
առվելու մասին: Բայց անգամ այս նշանակալի քայլերով չի սահմանա-
փակվում մեծ բարենորոգչի հայասիրական քաղաքականության կոնկ-
րետ գործունեությունը: 1723 թ. Պետրոս Մեծը սեփական ձեռքով գրում
է խիստ կարևոր մի փաստաթուղթ՝ «Հայտարարություն գործողություննե-
րի և արշավանքի մասին», փաստաթուղթ, որը ոչ միայն բացատրում է
ռուսական զորքերի Անգրկովկաս—Վրաստան ու Հայաստան շտնելու
պատճառները, այլև հերքում այն թյուր կարծիքը, որ իբր թե Ռուսաս-
տանը 1723 թ. հրաժարվել էր Անգրկովկասն ազատելու և իր պրոտեկ-
տորատի տակ վերցնելու ծրագրից: Վավերագրում նշվում է, որ Կասպյան
արշավանքի ժամանակ, 1722 թ. օգոստոսի 27-ին ուժեղ ալեկոծության
հետևանքով ռուսական նավատորմը կորցրել է 12 նավ, իսկ 17 նավ,
որ մթերք ու զենք էին տանում, նույնպես խորտակվել և ջարդ ու փշուր
էին եղել, միայն մի գիշերում սատկել է 1700 ձի, և պետք է եղել ար-
շավանքը հետաձգել... Սակայն անգամ այդ պայմաններում Պետրոս
Մեծը շարունակեց դժվարագույն արշավանքը՝ «Պարսկական սահման-
ների վրա գոնե մի ոտնաչափ տեղ ստանալ, որը և աստծո կամքով կա-
տարված է և մեր ձեռքին է Դերբենդ փառավոր քաղաքը, ընդ որում,
նրա երկու կողմերում կառուցել ենք 2 բերդ... և այսպես, մեկը մյուսի
հետևից պիտի կառուցվեն, քանի որ սկսածը չենք լքի, ինչում ինքներդ
կարող եք համոզվել... 21 տարի ինչպիսի՞ ծանր արյունալի պատերազմի
մեջ էինք Շվեդիայի հետ, բայց չլքեցինք՝ մինչև բարեհաջող ավարտը:
Իսկ այստեղ, այդքան հեշտն ու շահեկանը ինչո՞ւ լքել: Եվ ինչպիսի ան-
պատվություն կլինի ամբողջ աշխարհի առջև, ընդ որում, բոլոր մուսուլ-
մաններին մեր դեմ կքաջալերենք...»⁴⁵:

Պետրոս Մեծի այս բաղմանշանակ ու կարևոր փաստաթուղթը, էլի
ու էլի ուղղված «Պատվական հայոց ասկին»*, թարգմանվել է ռուսերե-
նից հայերեն, բաղմացվել ու տրվել Իվան Կարապետին՝ տանելու և
բաժանելու հայերին և վրացիներին: Եվ այդ այն ժամանակ, երբ ռու-
սական զորքերը շարունակում էին Կասպյան արշավանքը, նվաճելով

* Ասկին՝ այսինքն՝ ազգին:

ծովափը Դերբենդից մինչև Բաքու... և այժմյան Իրանական Ադրբեջանի հողերը:

Պետրոս Մեծը կենսագործում էր իր արևելյան համարձակ քաղաքականության կոնկրետ պլանները և ընդառաջում հայ և վրաց ժողովուրդների համառ խնդրանքներին: Պետրոս Մեծի քաղաքական ծրագրերը մնաց ուսական պետության անձեռնմխելի ֆոնդում և իրականացվում էր XVIII դ. ընթացքում, ապա և Վրաստանի, Ադրբեջանի և Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորվելու ժամանակաշրջանում, XIX դարի առաջին երեսնամյակում, երբ Անդրկովկասի բոլոր ժողովուրդները իրենց բախտն անդարձ կապեցին Ռուսաստանի հետ:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, с. 450.

2 К. Атаюрк, Избранные произведения и речи, М., 1966, с. 260.

3 К. Маркс, Секретная дипломатия XVIII века.

4 Ալեքսանդր Իվան 3-րդին գրում է՝ «Մթաղանձների համար լույս եղիր, կապույտ երկնքում՝ աստղ, բոլոր իշխաններին՝ վերին իշխան, երկրում՝ խաղաղություն», տե՛ս А. Цагарели, Сношения России с Кавказом в XVI—XVII вв., СПб., 1891, с. 8.

5 Տե՛ս Чаев Н. С., «Москва третий Рим» в политической практике, «Исторические записки», т. XVII, М., 1945.

6 Տե՛ս Ա. Գ. Արաբաձյան, Ռուս ժողովուրդը և Մոսկվան հայ մատենագրության մեջ, Համալսարանի գիտական աշխատություններ, հ. 27, Ե., 1948, էջ 209—235: Տե՛ս նաև Աս. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոռնում, Տեղեկագիր, 1948, № 3, էջ 50:

7 Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956, էջ 272, 565:

8 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, с. 9.

9 Նույն տեղում, հ. 22, էջ 17:

10 Цагарели А., նշվ. աշխ., էջ 9:

11 Նույն տեղում:

12 С. А. Белокуров, Сношения России с Кавказом в XVII—XVIII вв., СПб., с. 564.

13 Центральный государственный архив древних актов СССР (кратко—ЦГАДА), ф. 100, дело 1626 б/н.

14 Նույն տեղում, Բ. 100, գ. 1932, 6/н.

15 Տե՛ս Լ. Մելիսեթ-Բեկ, Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 2, Երևան, 1936, էջ 112—113:

16 Տե՛ս Адам Олеарий, Путешествие в Московии..., СПб., 1906, с. 82—83.

17 «Սովետական Հայաստան» թերթ, 14 հոկտեմբերի, 1984:

18 Տե՛ս Վ. Ոսկանյան, Արևելահայերի 1667 թ. նամակը պոլսահայերին: «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 10:

19 Տե՛ս «Զարարիայ Սարկաւագի պատմութիւն», հ. 2: Վաղարշապատ, գլուխ 47:

20 **Յօժ** Գ., «Сношения Петра Великого с армянским народом», СПб., 1898, с. 17 (**այսուհետև կարճ՝ Յօժ**).

21 **Մանրամասնությունները տե՛ս Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959:**

22 Материалы по истории русско-грузинских отношений (80—90 годы, XVII в.), ч. I, Тбилиси, 1974 г., с. 36.

23 **Գույն** և դիտմամբ Գանձասարի կաթողիկոսի անունով գրված Հ. Վիլհելմի թղթում Օրին փրկիպոս է անվանել Նրան, մինչդեռ Գանձասարում նման անունով կաթողիկոս չի եղել: 1661 թ. մինչև 1701 թ. Գանձասարի կաթողիկոսներ են եղել Սիմոնը և Երեմիան: Անունները գիտակցաբար խառնված են տրվել՝ կաթողիկոսներին հնարավոր վտանգից զերծ պահելու համար:

24 Պատմական գրականության մեջ արտահայտվել է այն անհիմն կարծիքը, որ իբր թե Անգեղակոթի ժողովը Ռուսաստանին դիմելու որոշում չի ընդունել, Պետրոս Առաջինին խնդրագիր չի ուղարկել, և որ Ի. Օրին այդ թուղթը կազմել է հետագայում, երբ հիասթափվել է Եվրոպայից ու «մեկից» դիմադրած եղել դեպի Ռուսաստան՝ «ծնունդ տալով» ռուսական կողմնորոշմանը: Սակայն այդ հերքվում է թեկուզև հայ կաթողիկ Ստեփան Թոշրայի վկայությամբ, որը Հռոմում հանդիպել էր Ի. Օրին և 1700 թ. գրել հետևյալը. «Ի. Օրին, Պողո իշխանի որդին... եկն ի Հռոմ և մատույց Ինոկենտիոս ԺԲ-ին (Հռոմի պապ Ինոկենտիոսին) զթուղթն ի տաան մեկիբաց... խնդրեին օգնություն ազատելոյ ի լծոյն անհավատից: Ուներ և զայլ թուղթս առ կայսր Լեօրդտոս, առ էլեկթորն և առ ձարն Մոսկովայ»: Տե՛ս **Յօժ**, էջ 155—156:

25 **Տե՛ս Գ. Յօժ**, էջ 155—156:

26 **Տե՛ս Գ. Յօժ**, Վավերագրեր 14, 17, 21, 23, 31:

27 К. Маркс и Ф. Энгельс, Соч., II, изд., т. 22, с. 33.

28 Վ. Ի. Լենին, **ԵԺԺ**, հ. 22, էջ 283:

29 **Նույն տեղում**,

30 **Գ. Յօժ**, Վավերագրեր 36 և 37:

31 **Նույն տեղում**, Վավերագիր 99:

32 Վ. Ոսկանյան, Ի. Օրոս՝ Պետրոս Մեծին ներկայացրած նորահայտ բարեփոխումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, էջ 297—306, տե՛ս նաև Գ. Յօժ:

33 **Նույն տեղում**:

34 **Գ. Յօժ**, **Նույն տեղում**:

35 Վ. Ի. Լենին, **ԵԺԺ**, հ. 16, էջ 86 և 369:

36 Листовки петербургских большевиков (1902—1917 гг.), т. I, ОГИЗ. 1939, с. 88—89.

37 **Նույն տեղում**:

38 Վ. Ի. Լենին, **ԵԺԺ**, հ. 20, էջ 729:

39 **Նույն տեղում**, էջ 53:

40 Մ. Նալբանդյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 3, Երևան, էջ 90:

41 Հ. Թումանյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 2, Եր., 1940, էջ 226:

42 **Նույն տեղում**, էջ 227:

43 Մ. Ս. Գորրաշովի պատասխանները ինդոնեզական «Մեոդեկ» թերթի հարցերին: «Պատմա-բանասիրական հանդես», 1987:

44 Полное собрание законов Российской империи, т. 4, № 2330, с. 635.

45 Վ. Ոսկանյան, Վ. Մառտիրոսյան, Նոր վավերագրեր 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4:

**ՀԱՅԱՋԳԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՄՈՒԴՈՎԱՅԻ ԵՎ ՎԱԼԱԽԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ
ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ (XV—XVIII ԴԴ.)**

Ռումինիան մինչև 1859 թ. իր միավորումը հայտնի էր Մոլդովա և Վալախիա երկու առանձին իշխանությունների անուններով: Միջնադարում իր հզորության գագաթնակետին հասած Օսմանյան կայսրությունը, հատկապես 1521 թ. Բելգրադի, 1541 թ. Մոխաչի հաղթանակների և Բուդան էլ փաշայության վերածելուց հետո, Մոլդովայի և Վալախիայի իշխանապետությունները փաստորեն շրջապատում էր արևելքից, արևմուտքից և հարավից: Իրենց ներքին ինքնուրույնությունը պահպանելով հանգերձ, հիշյալ երկրներում օսմանյան լուծը և նրա կեղեքման աստիճանը օր օրի աճում էր: Թուրքական հրոսակները հաճախ ամայացնում էին երկիրը և ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ կանգնեցնում աշխատավոր ժողովրդին: Այսպիսով, հիշյալ իշխանությունների տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքը կաշկանդվում էր Օսմանյան կայսրությունից ունեցած կախման հետևանքով: Սակայն, օգտվելով ներքին մասնակի ինքնավարությունից, մի քանի նշանավոր իշխաններ, ինչպես Միրչա Ալեքոբը, Վլադ Յեպեղը Վալախիայում և հատկապես Շտեֆան Մեծը և ուրիշներ Մոլդովայում, ընդդիմանալով սուլթանական բիրտ կեղեքումներին և աճող հարկերին, մահու և կենաց պայքար էին մղում թշնամու բանակների դեմ և փորձում թոթափել դարավոր ստորկության լուծը:

Իրենց հայրենիքից բարբարոսական արշավանքների հետևանքով հալածական եղած և ռումինական ասպնջական հողում հանգրվանած հայ ժողովրդի բեկորները հաճախ այստեղ ևս ենթարկվել են նույն թուրքական թալանին և խոշտանգմանը: Այսպես, 1484 թ. սուլթան Բայազիդ II-ը, երբ գրավում է Աքքերմանն ու Քիլիան, տեղի հայերին, ինչպես նաև այլ ազգությունների պատկանողներին իրենց ընտանիքներով տարագրում

է Կ. Պոլիս²: Վերջիններս աքքերմանցի Պողոս քահանայի ջանքերի շնորհիվ 1507 թ. բնակվում են Կ. Պոլսի Սուլու Մանասթըր թաղամասում³: XVII դարի սկզբում նրանց մասին հիշատակում է Սիմեոն Լեհացին⁴, դեռևս 1634 թ. Գրիգոր Դարանաղցին⁵ դատական մի վեճի առիթով⁶: 1593 թ. նույնների 13-ին Բուխարեստում թուրքական ջարդի ժամանակ, Վալախիայի իշխան Միհայ Վիտեազուի օրոք, զոհերի թվում հիշվում են նաև հրեաներ և հայեր⁷: Պրոֆ. Հ. Ճ. Սիրունու կողմից հայտնաբերված թուրքական ակտերից երևում է, որ թուրքական հրոսակները 1769 թ. արշավում են Մոլդովայի և Վալախիայի վրա և մեծ վնասներ պատճառում խաղաղ բնակչությանը: Վնասներ են կրում նաև հայերը. թալանվում է Բուխարեստի հայոց եկեղեցին⁸: Թուրքական ասպատակություններից հայերը շատ ավելի մեծ կորուստներ կրեցին 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ. ծանր վիճակում էին մանավանդ Քիլիայի, Իզմայիլի, Աքքերմանի, Բենդերի (Տիգինա) և Կրուշանի հայերը:

Հովսեփ Արղուսյանը իր օրագրության մեջ և նամակներում նկարագրել է, որ Քիլիայում 40 հայ բնակիչ և 3 հայ քահանա է սպանվել ու 35 հայ գերվել թուրքերից: Իզմայիլում թուրքերը սպանել են 60 հայ ու 30 հայ աղջիկների և տղաների գերի տարել⁹: Արղուսյանը Իզմայիլից 30 որբերի ուղարկում է նոր նախիջևանի Ս. Խաչ վանքը՝ սովորելու և նոր բացվելիք դպրոցին հիմք դառնալու համար, իսկ 1792 թ. իր հիմնադրած Գրիգորիոսյոլ հայաքաղաքն է տանում 700 տուն կամ 4 հազար հայ աղետյալների:

Այդ մեծ գաղթից հետո Քիլիայում, Բենդերում և Կրուշանում հայկական գաղութները դադարեցին գոյություն ունենալ: Մոլդովահայերը, ի հատուցումն իրենց տրված բացառիկ առանձնաշնորհումների, այդ երկիրը համարել են իրենց երկրորդ հայրենիքը, նույնացրել իրենց սիրտն ու հոգին ռումին ժողովրդի ճակատագրի հետ և անհրաժեշտության դեպքում բնիկ ժողովրդի և այլ ժողովուրդների հետ միասին, զեն ի ձեռին մարտնչել օտար հորդանների արշավանքների դեմ, հանուն երկրի անկախության: Այդ է պատճառը, որ մեծանուն գիտնական և հայագետ Ն. Յորգան հայերին կոչել է «Ուրախությունների և դժբախտությունների մեր հին ընկերը», իսկ ռումին պատմաբան պրոֆեսոր Ռոդիկա Չոկան-Իվլինեսկուն՝ նկատի ունենալով հայերի և ռումինների ճակատագրի նույնությունը, իրավացիորեն գրել է հետևյալը. «Թե՛ ռումինացիները և թե՛ հայերը ճանաչեցին նմանապես աշխարհակալ իսլամի շահագործումը տնտեսական գետնի վրա և նրա բռնակալական տիրապետությունը և

իբր այդ համատեղ գործունեության մը ուղեգիծ ունեցան 16 և 17 դարերու կոիվներուն ընթացքին, երբ հարավարևելյան ամբողջ Եվրոպան իր ճիգերը կը միացնէր ընդդէմ թուրքերուն»⁹:

Շնորհիվ իտալացի Զիովաննի Մարիա Անշիոլելոյի (1450—1525), որ իբրև գերի մասնակցել է սուլթան Մահմեդ II-ի կողմից Մոլդովայի իշխան Շտեֆան Մեծի (1457—1504) դէմ ձեռնարկված արշավանքին, մեզ հայտնի է դառնում, որ մոլդովացի իշխանի զորքը բաղկացած է եղել 20 հազար մոլդովացի և հայ զինվորներից: Նույն ականատեսն ավելացնում է նաև, որ հայ զինվորները հիմնականում Աքքերմանի և Քիլիայի հայաշատ քաղաքներից էին¹⁰: Ռումինացի պատմաբան Ն. Գրիգորաշը, ելնելով այդ կարևոր փաստից, հետևեցնում է. «Անվիճելի է, որ հայերի թիվը հիշյալ զորամիավորումներում պետք է, որ պատկառելի լինեն, քանի որ մոլդովական քաղաքներն այդ ժամանակ բնակեցված էին մեծ թվով հայերով»¹¹: Ինչպես նկատել է Ն. Յորգան, մինչև 1484 թ. իր անկումը, Աքքերմանը (որտեղից էին Շտեֆան Մեծի հայ զինվորների մի մասը) ավելի շատ հայեր ուներ, քան Սուլավան, Սիրետը, Խոտինը, Յաշը, Ռոմանը, Վասուլը և ավելի ուշ Բոտոշանը միասին վերցրած¹²: Անշուշտ, բացառված չէր, որ հայ զինվորներ լինեին Մոլդովայի մյուս հայկական կենտրոններից ևս, և, առաջին հերթին, Սուլավայից, որը, իբրև երկրի մայրաքաղաք, հայկական թեմի առաջնորդի նստատեղին էր, ուր հայերը բավական թիվ էին կազմում և ունեին իրենց հուշարձանները¹³:

Պրոֆեսոր Պ. Պ. Պանայիտեսկուն նկատում է, որ քաղաքային զոբամասերը՝ գվարդիաները, կազմվում էին քաղաքների բնակիչներից, իսկ պատերազմի ժամանակ միացվում գործող զորաբանակին¹⁴: Նա միաժամանակ նշում է. «Քանի որ Շտեֆան Մեծի բանակի մի մասը կազմված էր հայերից, այդ նշանակում էր, որ մոլդովական զորքում կային քաղաքային բնակչության զորքեր, քանի որ միայն այդ վայրերում կարող էին գտնվել հայերը»¹⁵: Գրիգորաշը եզրակացնում է, որ քաղաքների բնակչության՝ զինված զորամիավորումներ տալու վերաբերյալ պարտավորությունը պահպանվեց այնքան ժամանակ, քանի դեռ Մոլդովան ստիպված էր պայքարել օսմանյան զավթիչների և արտաքին այլ թշնամիների դեմ¹⁶: Այս բոլորից պետք է եզրակացնել, որ ինչպես Լեհաստանում, այնպես էլ Մոլդովայում ապրող հայերը, բացի իրենց ղենեցած քաղաքային ռազմական ջոկատներից, շարունակ մասնակցել են երկիրը օտար զավթիչներից պաշտպանելու գործին, ուստի և հայ զինվորների առկայությունը Շտեֆան Մեծի բանակում բացառություն

չպետք է համարել, այլ բնորոշ իրողություն, որ պետք է գոյատևած լինելի, ինչպես և լեհահայերի մոտ, սերնդից սերունդ:

Անհրաժեշտ է նկատել, որ Մոլդովայում Ալեքսանդրու Բարիի, Շտեֆան Մեծի, Պետրու Ռարեշի և մյուս իշխանների կողմից հայերին ցուցաբերած ընդունելությունը և տրված առանձնաշնորհումներն արգասիք էին երկրին հայերի մատուցած ծառայությունների և վայելած մեծ վրաստահություն: Ինչպես ճիշտ նշել է հայագետ պրոֆեսոր Վլադ Բընըցեանուն, XV դարի սկզբին հայերի մի մասին հրավիրել էր Ալեքսանդրու Բարին, իսկ մյուս մասին իր զորքի մեջ էր ընդունել Շտեֆան Մեծը: Վերջինս առաջ քաշեց մեծ թվով հայ գործիչների, որոնք կարևոր դեր ստանձնեցին իշխանի արտաքին և ներքին հարաբերություններում, իբրև թարգմանիչներ, դիվանագետներ, ռազմական երևելի գործիչներ, վաճառականներ, մաքսապետներ և այլն¹⁷: Այսպես, 1493 թ. հիշվում է Ղրիմում Շտեֆան Մեծի անունից բանակցություններ վարող Մոլդովայի իշխանական դիվանատան թարգմանը հանդիսացող մի հայ¹⁸: Շտեֆան Մեծը անգամ իր որդի Բոգդան III-ին իբր խորհրդական էր թողնելու մի աղնվականի, որը սերում էր Սուլավայի հայ գաղութից և կոչվում էր Մուրադը¹⁹:

Այստեղ ուզում ենք հատկապես կանգ առնել հայազգի մեծ գործիչ Պետրու Վարդիկի և նրա ընտանիքի անդամների կյանքին և գործունեությանը: Նրանք կարևոր դեր են խաղացել Մոլդովայի միջնադարյան դիվանագիտական և ռազմական կյանքում: Մոլդովայի իշխան Պետրու Ռարեշը (1527—1538, 1541—1546) մեծ խորհրդականի, զորահրամանատարի, Մուլավա մայրաքաղաքի մեծ հետմանի և ավագի կարևոր պաշտոնների է նշանակել հայազգի Պետրու Վարդիկին*, որը փաստաթղթերում հիշվում է նաև Պետրու Վարդիկովիչ, պան Վարդիկովիչ, Վարդիկ՝ Մոլդովայի հետման անուններով: Նա 1533—1541 թթ. իշխանի դեսպանն էր լեհաստանում, 1541 թ. մարտի 11-ից մինչև 1548 թ. ապրիլի 5-ը վարում էր հետմանի պաշտոնը:

* Վարդիկ ազգանունը ծագել է հայկական վարդ քառից և, ըստ մեզ հասած տվյալների, առաջին անգամ Հայաստանում օգտագործվել է դեռևս 640 թ. (Սիրեոս պատմիչ) և անրեզատ շարունակվել մինչև 1708 թ. (Հր. Աճառյան, Անձնանունների բառարան, և., 1962, էջ 112—113): Վարդիկ ազգանունը հատկապես տարածված է եղել լեհաստանում և Մոլդովայում: Այն առաջին անգամ Մոլդովայի հայերի մոտ հիշվում է 1504 թ. Սիրևում (Հ. Տաշյան, Յուդակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ք Վիեննա, Վիեննա, 1895, էջ 55ա): Վերոհիշյալ վարդիկների հայ ծագումը հավաստել է ակադեմիկոս Նիկոլայ Յորգան՝ N. Iorga, Armenii si Români; O paralelă istorică (Gr. M. Buiuciu 1840—1912). București, 1914, p. 64).

Վարդիկը քաղաքական կարեւոր դեր է խաղացել 1538—1541 թթ.²⁰։ Հատկապես մեծ եղավ նրա դերը Պետրու Ռարեշի վարած հակաօսման-
յան քաղաքականութեան մեջ։ Վարդիկը մեծ նշանակութիւն էր տալիս
հետզհետեւ հզորացող Օսմանյան կայսրութեան առաջխաղացմանը դիմա-
կայելու խնդրում եվրոպական պետութիւնների միջև համադաշնակցու-
թիւն կազմակերպելուն։ Վարդիկը, նկատի ունենալով, որ թուրքերը
1541 թ. գրավել էին Հունգարիայի մայրաքաղաք Բուդան և նրա բերդը
ու դեռևս չէին հասցրել ամրացնել, այն անհապաղ ագատագրելու կոչ
էր անում։ Վարդիկը որոշակիորեն կողմնակից էր, որ քրիստոնյա իշ-
խանները միասնաբար այժմ պիտի ոտքի ելնեն Բուդան գրավելու հա-
մար և, քանդելով նրա ավերակները, լցնեն Դանուբը, քանի որ, եթե
թուրքերը ամրացնելու լինեն, այն ժամանակ քրիստոնյաները երբեք չպի-
տի կարողանան վտարել նրանց²¹։

Վարդիկը տեղ էր հսկա կալվածների և մեծ եկամուտներ էր ստա-
նում Սուլալայում գտնվող գլխավոր մաքսատնից։ Նա ի պաշտոնե իրա-
վունք ուներ ստանալու նաև պատերազմական ավարի մեծ մասը։

Սակայն Պետրու Վարդիկի հակաօսմանյան գործունեութիւնը թանկ
չստեց նրան, քանի որ Մուղղովայի նոր իշխան Պետրու Ռարեշի որդի
Իլյաշը 1548 թ. ապրիլի 7-ին գլխատել տվեց նրան։ Թեև սպանութեան
պատճառներն անհայտ են մնացել պատմագրութեանը, սակայն, ըստ
Ի. Մինեայի կարծիքի, Վարդիկը մուղղովական գահի հավակնորդն է եղել,
մինչև Իլյաշի իշխան դառնալը²²։ Ենթադրվում է նաև, որ Վարդիկը,
հավատարիմ մնալով իր ընտանիքին, մերժել է թագուհու սերը, և վեր-
ջինիս զրպարտութեամբ էլ մահապատժի ենթարկվել։ Սակայն, անհրա-
ժեշտ է նկատել, որ սպանութեան հիմնական պատճառը Իլյաշի վարած
թուրքասիրական քաղաքականութիւնն էր։ Իլյաշի մայրը սերբական
Բրանկովիչ տոհմից էր, որը հայտնի էր իր թուրքամետ կողմնորոշմամբ։
2. Բրանկովիչի դուստր Մարան սուլթան Մուրադ II-ի կինն էր։ Այնինչ,
Պետրու Վարդիկը դեռ Իլյաշի իշխանութեան օրոք 1547 թ. տրանսիլվա-
նացիներին դադարի տվյալներ էր հաղորդում թուրքերի մասին։ Լինելով
բանակի ընդհանուր հրամանատարը, ստույգ տեղեկութիւններ ուներ
թուրքերի ուժերի և մտադրութիւնների մասին։ Սակայն Իլյաշը, միա-
նալով թուրքերին, հարձակվել էր Տրանսիլվանիայի իշխանութեան վրա։
Ավելի ուշ, հրաժարվելով գահից հօգուտ իր եղբոր՝ Շտեֆան Ռարեշի
(1551—1552), անցել էր Կ. Պոլիս, ուր թուրքացել էր և վերանվանվել
Ահմետ ու դարձել Սիլիստրայի փաշա, ապա ձերբակալվելով տարվել
Բրուսա և 1553 թ. մահացել բանտում։

Պետրու Վարդիկի և նրա ընտանիքի կերպարներն անմահացել են ժողովրդական ստեղծագործությունների մեջ*:

Իբրև Մոլդովայում հակաօսմանյան պայքարի գլխավորողներից մեկը, Վարդիկը դարձել էր ժողովրդի սիրելի հերոսներից: Նա հարավարևելյան Եվրոպայում գործող այն հայազգի գործիչներից էր, որ Օսմանյան կայսրության թուլացման մեջ էր տեսնում ոչ միայն Եվրոպայի և դրա հետ նաև Մոլդովայի, այլև, անշուշտ, Հայաստանի ազատագրությանը և դրա համար էլ, առանց կյանքը խնայելու, հակաօսմանյան համադաշնակցության ստեղծման կոչ էր ուղղում բոլոր քրիստոնյա պետություններին:

Սակայն Պետրու Վարդիկի՝ նշանավոր հայազգի գործչի եղբերական մահով Վարդիկները շեն դադարում գոյություն ունենալուց: Այդ նկատի ունենալով է, որ հայագետ պրոֆեսոր Վլադ Բընըցեանուն դիտել է տալիս, որ ամբողջ XVI դարի ընթացքում Մոլդովայի պատմությունը միահյուսված է Վարդիկների գործունեության հետ²³: Պետրու Վարդիկի որդի Յուրաշկոն արժանացել է մի շարք ազնվականական տիտղոսների և պետական բարձր պաշտոնների: Անվանվել է մեծ պահարնիկ, յախինքն՝ իշխանի գլխավոր մատուցակ (1575—1576), մեծ պոստելնիկ՝ իշխանական պալատի մարշալ (1576—1577), որը իշխանական պալատի 6 մեծ բոյարներից մեկն էր, Խոտինի պրեկլյաբ՝ բերդի և շրջանի կառավարիչ ու զորքերի հրամանատար (1578—1579, 1584—1585) և պոստելնիկ՝

* Մոլդովայում ու նրանից հեռու Արձեշում, Բանատում և Ռումինիայի տարրեր մասերում գրի են առնվել ժողովրդական երգեր: Ըստ ռումինական ժողովրդական մի բալլադի, երբ գլխատում են Պետրու Վարդիկին, վերջինիս գլխի մոտ անձնասպան է լինում նաև նրա կինը, և նրանց գերեզմանի վրա միահյուսված վարդենիներ են ծաղկում, որը եղակի երեույթ է ռումինական ֆոլկլորի պատմության մեջ, և, ըստ ռումին բանագետ Անտոն Բալոտի, բացատրվում է Վարդիկի հայ ծագմամբ և վարդ բառի հայերեն իմաստով՝ A. Balotă, Funcțiunea socială a cântecului bătrânesc (Balada lui Vartic), „Revista de folclor“, 1958, № 2, p. 101—102.

Համտ. Դ. Դմիտրյև, Վարդիկները միջնադարյան ռումանական ժողովրդական երգերում, «Պատմա-բանասիրական հանդես», Նրեան, 1962, № 4: Մի այլ բալլադում ակնարկվում է Վարդիկի օտար ծագման և իշխանական խորհրդական լինելու մասին: Եթե ժողովրդական բալլադում Իլյաշի փոխարեն Վարդիկին իբրև գլխատել տվող հանդես է գալիս իշխանի եղբայրը՝ Նույնքան դաժան Շտեֆան Ռարեշը, դրա պատճառը ոչ միայն այն էր, որ երկու եղբայրներն էլ իրենց վատ արարքներով ատելի էին դարձել ժողովրդին, այլև մասնավորապես այն, որ Շտեֆան Ռարեշը 1551 թ. բուռն հայածանքի էր ենթարկել Մոլդովայի հայերին, որի համար ինչպես միջնադարի մոլդովական ժամանակագիրների, այնպես էլ նորագույն պատմաբանների կողմից միաձայնաբար խստորեն դատապարտվել է նրա շարագործությունը:

պալատական կամ իշխանական խորհրդի անդամ (1581, 1585—1586): Ծնթադրվում է, որ մահացել է 1586 թ. առաջ: Պետրու Վարդիկի մյուս որդին, որ հիշվում է միայն Վարդիկ ձևով, դարձել էր իշխանական պաշտոնյա (1561—1569), հասել Վերին երկրի մեծ վորնիկի (1583) պաշտոնին, որ, փաստորեն, Մուղղվայի հյուսիսային կեսի տիրակալն էր, ապա դարձել Ստորին երկրի մեծ վորնիկ (1583—1587): 1591 թ. մեկնել է Պետրու Կաղ իշխանի հետ, վերադառնալով վերստին նշանակվել Ստորին երկրի մեծ վորնիկ (1593): Սպանվել է Արոն Տիրանուլի (Բոնակալ) կողմից, 1594 թ. առաջ: Վերջինիս որդի Ուրսու Վարդիկը Մուղղվայի պալատի վորնիկ էր: Նրա ընտանիքից էր Կալիստորատ Վարդիկը, որ Հուշ քաղաքի եպիսկոպոս և խնամակալ էր նշանակվել Դոսոֆատեյ գիտուն մետրոպոլիտի կողմից (1676 թ.): Այս Վարդիկը գիտնական էր և դարձավ նաև Մուղղվայի ուղղափառ եկեղեցու մետրոպոլիտի տեղակալ:

Յուրաշկո Վարդիկի զավակներից Լուպուն մեծ արմաշ էր, այսինքն՝ հրետանու պետ (1598), իսկ նրա թոռ, Վասիլի Վարդիկի աղջիկներից Անտեմիան ամուսնացել էր Մուղղվայի իշխան Միքոն Բարնովսկու (1626—1629 և 1630) հետ: Վարդիկների սերնդից էր Թեոդորաշկո Վարդիկովիչը, որը հիշվում է իբրև Սորոկայի պրկլուաբ (1600): Վարդիկ գերդաստանի անդամները հիշվում են նաև XVII դարի ընթացքում և դրանից հետո էլ, մինչև այսօր²⁴:

Մուղղվայի հայերից ումանք փայլեցին նաև երկրի քաղաքական կյանքում, հասնելով մինչև երկրի իշխանական գահին: XVI դարի երկրորդ հիսնամյակում Մուղղվայի իշխանությունն անցավ Սերպեգա կոչվող հայկական գերդաստանին, որը, ամենայն հավանականությամբ, սերվում էր լեհաստանից և կապված էր Սերբեկովիչների հայտնի լեհահայ գերդաստանի հետ: Հանուն երկրի անկախության՝ օսմանյան հսկա բանակների դեմ մղած անհավասար կռիվում իրենց կյանքը զոհած հայազգի այդ գերդաստանի անդամների գործունեությանն ենք նվիրում մեր ուսումնասիրության մի մասը, մանավանդ, որ Սերպեգա գերդաստանի հերոսական պայքարը դեռևս լուսաբանված չէ հայագիտության կողմից:

Այդ գերդաստանի ամենաառաջին և ամենամեծ ներկայացուցիչը Յոան կամ Յոն Քաչն է, որ թոռնորդին էր Շտեֆան Մեծի, որդին Շտեֆանիկ կամ Շտեֆան Դեռատի (1517—1527) իշխանի և Սերպեգա հայկական ընտանիքին պատկանող մի կնոջ: Մուղղվական և օտար աղբյուրներում նա անվանվել է «Արմեանուլ», այսինքն՝ «Հայ»: Ռումին ակադե-

միկոս Բ. Պ. Հաշդեուն իր մենագրության մեջ Յոան Քաջին համարում է «Ռումինիայի մեծ մարդկանցից» և նշում, որ նա հորից ժառանգել էր քաջություն, մտքի խորաթափանցություն, մորից՝ հայկական դիմագիծ²⁵։ Երկրի կենտրոնախույս ազնվականության կողմից ստացել էր Անգուլ կամ Ահարկու անունները, քանի որ ասում էր նրանց։ Այնինչ իր վարած ժողովրդասեր քաղաքականության համար ժողովուրդը նրան արժանացրեց «Մոլդովայի հայր» պատվանվանը։ Անգամ նրա հակառակորդներից ժամանակագիր Գրիգորե Ուրեքեն ստիպված էր ընդունել, որ նա «Սրամիտ էր, պատրաստախոս և երևում էր, որ կարող էր մեծ գլուխ դառնալ ոչ միայն այս երկրի, այլև ուրիշ երկրների էլ»²⁶։ Նրա մասին օտար մի կենսագիր գրել է. «Հսկա հասակ ուներ, ջլապինդ, առնական, նրա մեջ եռում էր ուժը»²⁷։ Նա տաղանդավոր զորավար էր, վարչական և քաղաքական գործիչ, բացի մոլդավերենից տիրապետում էր նաև լեհերենին և թուրքերենին։ Ըստ Դիմիտրիե Կանտեմիր գիտնական իշխանի, Յոան Քաջը իմացել է նաև հունարեն և լատիներեն²⁸։ XVI դարի ժամանակագիր Աղարիան Յոանի մտավոր կարողությունների մասին գրել է, որ նա խոր մտքի տեր, պերճախոս և գիտուն մարդ էր²⁸։

Յոան Քաջը երկար ժամանակ եղել էր Լեհաստանում, շրջել Գալիցիայով և Պոդոլիեով։ Մոլդովայի իշխանական դահլին տիրանալու նրա առաջին փորձը անհաջողությամբ է ավարտվել, երբ Շտեֆան Ռարեշի ուժերը հետ են մղել նրան 1551 թ. հունիսի 15-ից առաջ²⁹։ Անշուշտ, այդ փորձի հաջողության դեպքում ռումինական պատմագրության կողմից դատապարտված խելագար Շտեֆան Ռարեշի՝ նույն 1551 թ. օգոստոսին Մոլդովայի հայերի դեմ կազմակերպած բուռն հալածանքը տեղի չէր ունենա։ Յոանն անցել է Մոսկվա և լավ ընդունելության արժանացել Իվան Ահեզի կողմից և խնամիական կապ հաստատել նրա հետ, ամուսնանալով Ռոստովի իշխան Սեմյոնի դստեր Մարիայի հետ, ունեցել Պետրու անունով մի տղա։ Սակայն 1557 թ., երբ մեկնում է արտասահման, կինն ու տղան մահանում են ժանտախտի համաճարակից*։ 1561 թ. Յոանը գնացել է Սիրիա, եղել է Վիեննայում, իսկ 1563 թ. անցել Ղրիմի թաթարների խանի պալատը և ապա մեկնել Թուրքիա, երկար ժամանակ ապրել Հոգոս կղզում, ուր, զբաղվելով թանկագին քարերի առևտրով, կուտակում է հարստություն, որը և օգնեց նրան զրավելու իշխանական

* Իվան Ահեզը 1574 թ. մայիսին Յոան Քաջին գրած նամակում հայտնում էր դեպի նրա անձն ունեցած իր համակրանքի մասին և ցանկանում պահպանել իրենց խնամիական կապերը, առաջարկելով զավ և ամուսնանալ իր ազգականի աղջկա հետ, սակայն դեռ նամակը չհասած՝ Յոան Քաջը զոհվել էր («Revista Istorică», București, 1929, № 7—9).

գահը: Ի վերջո, սուլթան Սելիմը, դժգոհ լինելով Մուղղլայի իշխան Բոգդան Լըպուշնեանուի լեհական կողմնորոշումից, Յոան Քաջին է հանձնում իշխանություն գահը:

Նորահայտ վալերագրերից երևում է, որ Յոան Քաջը հեշտորեն է մուտք գործել Մուղղլա, և երկրի երեկերները հպատակվել են նրան: 1572 թ. մարտի 7-ի իր հրամանագրով սուլթանը կաբուլի բաշիի հաղորդման և իշխան Յոանի խնդրանքի համաձայն կարգադրում է իշխանին ընկերակցող թուրքական զորքի և ենիչերիների վերադարձը և նոր իշխանի կողմից Սիլիստրեի սանջակի բեյ Համզայի մոտ թողած 30 հազար արծաթ դրամը, ըստ սովորության, ենիչերիներին հատկացնելու մասին: Սակայն սուլթանը, նախազգուշության համար, 1572 թ. օգոստոսի հրամանագրով ցանկացել է Ռուսաստանից բերել տալ Յոան Քաջի որդուն՝ ուղարկել Բարձր դուռ, անշուշտ, իբրև պատանդ պահելու համար, սակայն, ինչպես տեսանք, լուր է ստացվում, որ Յոանի կինն ու երեխան ժանտախտից մահացել են: Սուլթանը օգոստոսի 14-ի իր հրամանագրով կարգադրում է Սիլիստրեի սանջակի Համզա բեյին Յոանի հետ համագործակցել, որեիցե արտաքին հարձակման ժամանակ³⁰:

Յոան Քաջը իր իշխանության սկզբնական շրջանում նախ ճնշեց նախկին իշխանի համախոհ և իր դեմ պայքարող խոշոր ազնվականություն խռովությունները: Մուղղլային միացրեց խոտինի ամրոցը, պաշտպանական նպատակներով երկրի մայրաքաղաքը Մուշավայից տեղափոխեց Յալ, ստեղծեց իշխանական խորհուրդ՝ ներգրավելով նաև մանր ազնվականությունը, սահմանափակեց բարձր հոգևորականության և խոշոր ազնվականության իրավունքները, եկեղեցին ենթարկեց իր իշխանությանը, բռնագրավեց վանքապատկան կալվածները: Նոր իշխանը արժանացավ ժողովրդի համակրանքին, միաժամանակ աստելի դառնալով ազնվականությանը: Նա հիմնականում մանր հողատեր գյուղացիներից հավաքագրեց ուժեղ բանակ, 1573 թ. իր պատկերով կտրեց պղնձյա դրամ, որը կարևոր նշանակություն ունեցավ գյուղացիությանը առևտրի մեջ ներգրավելու խնդրում, իշխանական դիվանատնից տրված հրամանագրերը ենթարկեց իր անձնական խիստ հսկողությանը, վերջ տալով մինչ այդ զեղծումների եղած հնարավորությանը, հովանավորեց առևտուրը Մուղղլայի, Լեհաստանի և Տրանսիլվանիայի միջև, զարկ տվեց տոնավաճառներին:

Այսպիսով, Յոան Քաջը երկու տարվա իշխանության (1572—1574) ընթացքում կատարած տնտեսական, վարչական, քաղաքական և ռազմական միջոցառումների շնորհիվ ամրապնդեց երկրի տնտեսական կյանքը:

քը, մեծ ձիգեր գործադրեց իշխանության կենտրոնացման համար: Յոան Քաջի գերադույն նպատակը, սակայն, երկիրն ազատագրված տեսնելն էր օսմանյան դարավոր լծից. դրան հասնելու նպատակով փորձեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Լեհաստանի, Մոլդովայի և Վալախիայի միասնական ուժերով համադաշնակցություն ստեղծել և ամուր պատենշ կանգնեցնել Եվրոպայի սիրտը միւրճվող օսմանյան բանակների դեմ: Սակայն միջազգային հարաբերությունները խիստ աննպաստ էին, և Օսմանյան կայսրությունը ամենից առաջ օգտվում էր եվրոպական պետությունների անմիաբանությունից:

Յոան Քաջի կամ Հայի իշխանության դեմ նյութվեցին բազմաթիվ սադրանքներ*:

Սուլթանը շատ շուտով Յաշ ուղարկած իր սուրհանգակի միջոցով Յոան Քաջից պահանջեց կամ հեռանալ իշխանությունից, կամ Մոլդովական իշխանություն՝ մինչ այդ վճարած 40 հազար ռսկու հարկը կրկնապատկել: Ոչ մի ժամանակ իշխանության հարկը նման չափի չէր հասել, իսկ Մոլդովան ի վիճակի չէր այն վճարել: Սակայն Յոան Քաջ իշխանը այլ ճանապարհ է ընտրում: Նա այդ վճռական պահին բոլոր խավերի ներկայացուցիչներին հրավիրում է ժողովի և հավաքվածներին սուլթան Սելիմ II-ի որոշումը հայտնելուց հետո ասում. «Դուք գիտեք, որ հարկը ես չեմ վճարում, այլ դուք և ձերոնք: Այդ քիչ կհետաքրքրեր ինձ, եթե իմ սիրտը չցավեր երկրի համար: Ես ցավում եմ ձեր վրա և ձեզ համար իմ գլուխը դնելու եմ, իմ սիրելի ընկերներ: Ապրենք ազատ կամ թող մեր հետքն իսկ կորչի: Եղեք ինձ հետ և մեզ հետ է լինելու հաղթանակը»³¹: Բոլորը երգվեցին բոլորվել իրենց իշխանի շուրջը և ի հարկին միասին զոհվել: Սուլթանի սուրհանգակին Յոան Քաջը հետ ուղարկեց, ասելով, որ իրենք ոչ միայն պահանջվող կրկնապատիկ հարկը չեն տալու, այլ հրաժարվում են մինչ այդ իրենց իսկ վճարածից: «Այդ հարկի փողով զորքն եմ կազմակերպելու և հետո... հետո կխոսենք: Գնա», — ասաց իշխանը:

Յոան Քաջը ռազմական արվեստը սովորել էր լեհերի, թաթարների, գերմանացիների, թուրքերի և, անշուշտ, նաև ռուսների մոտ: Հաշդեռուն նկատում է, որ իշխանը իր հսկա իմացականությամբ, համադրելով ժամանակի բոլոր առաջագիմական նվաճումները, է՛լ ավելի առաջ էր ան-

* Դրանցից անհրաժեշտ է հատկապես նշել, որ Վալախիայի իշխան Ալեքսանդրու II-ի և Մոլդովայի գահի հավակնորդ Պետրու Կադի՝ Ստամբուլում հաստատված մայրը՝ Տիկին Քիաժմայի նկրտումները, մեծամեծ նվերներով և կայսրությանը տրվելիք հարկերի մեծացման գնով, ուզում էր սիրաշահել սուլթանին, Մոլդովայի գահը իր որդուն հանձնելու համար:

ցել*։ Նա որոշել էր օսմանյան բանակները ջախջախել առանձին-առանձին՝ իրենց բերդերում և երբեք ռազմական թատերաբեմի չվերածել մուղղովական իշխանություն տարածքը։ Նպատակ ունեւ թուրքերից ազատագրել ծով գուրս գալու ուղիները, որոնք դեռևս 1484 թ. Մուղղովան կորցրել էր։ Նա մոտալուտ ահեղ կովի համար դաշնակիցներ որոնեց։ Յոան Քաջը նախապես առաջ էր քաշել Իվան Ահեղի թեկնածությունը Լեհաստանի գահի համար, որը բախտորոշ կլինեւ օսմանյան լծից ազատագրվել ցանկացող ժողովուրդների համար, սակայն թուրքերի սադրանքների հետևանքով թագավոր էր դարձել Ֆրանսիայի թագավորի եղբայր Հենրի դը Վալուան, որը և կտրուկ մերժեց Մուղղովային օգնության ձեռք մեկնելու դիմումը։ Մուղղովայի իշխանի սուրհանդակներին ջերմությամբ ընդունեցին միայն Դնեպրի կազակները, որոնք մուղղուացիներին տրամադրեցին 1200 հոգուց բաղկացած կազակական հեծելազորը՝ բաժանված 12 ջոկատների, հետման Սվիրլսկու գլխավորությամբ։ Կազակներին սահմանին ընդառաջ է ելնում Յոան Քաջը երկրի մեծամեծերի հետ, նրանց պատվին տրվում են հրետանու համազարկեր, հրնշում է երաժշտությունը, տեղի է ունենում ջերմ ընդունելություն։ Թե՛ Յոան Քաջը և թե՛ հետմանը իրենց փոխադարձ նվիրումն արտահայտող ջերմ ելույթներ են ունենում (1574 թ. մարտի 20—22)³²։

Թշնամու հետ բախումը հետզհետե անխուսափելի էր դառնում։ Վալախիայի իշխան Ալեքսանդրու II-ը հանդիպելով եղբորը՝ Մուղղուական գահի հավակնորդ Պետրու Կազին, թուրքական զորքով բարձրացավ մինչև սահմանամերձ Ռումնա գետակը և կանգ առավ Ժիլիշտե գյուղի մոտ։ Սուլթանի հրամանով հավաքվել էին Նիկոպոլի սանջակի փաշայի, Վալախիայի և Տրանսիլվանիայի իշխանությունների զորքերը՝ մոտ 50—60 հազար հոգի։ Թշնամին ծրագրել էր հարձակվել հարավից, հարավարևելքից և արևմուտքից, սակայն նրանք շարաշար սխալվել էին, քանի որ բանակատեղին Մուղղուային շատ մոտ էր գտնվում։ Ժիլիշտեի ճա-

* Հրետանին և հետևակը իրրե հիմք, իսկ հեծելազորը իրրե օժանդակ, այդպիսին էր Յոան Քաջի կարծիքը։ Հեծելազորը իրրե հիմք, իսկ հրետանին և հետևակը օժանդակ, այդպես էին կարծում նրա բոլոր նախորդները. Շտեֆան Մեծը, Վլադ Ցեպեշը, Պետրու Ռարեշը, Ալեքսանդրու Լըպուշենանուն, նույն ձևով էին պատկերացնում 1574 թ. բոլոր խտալացի, ֆրանսիացի և գերմանացի զորապետները։ Երբ Ֆրանսիայում քիչ էր զնահատված հրետանին, և միայն 30 տարի անց Հենրի IV-ը Փարիզում 100 հրետանի է ունենում, իսկ Յոան Քաջը միայն երկու տարվա իշխանության օրոք իր բանակն օժտում է կրկնակի թվով թնդանոթներով։ Երբ ամբողջ Եվրոպայում չէր զգացվում հետևակի նշանակությունը հեծելազորի համեմատությամբ, Յոան Քաջը այն հերակացություն է գալիս, որ հեծելազորը պետք է կազմի բանակի ընդհանուր թվի փոքր մասը՝ B. P. Hașdeu, Ioan Vodă cel Cumplit, București, 1978, p. 86.

կատամարտը տեղի ունեցավ 1574 թ. ապրիլի 24-ին: Յոսան Քաջը իր շեշտակի հարձակումը սկսեց վաղ արշալույսին՝ հանկարծակիի բերելով թշնամուն, կարողացավ իր զորքով շրջապատման մեջ վերցնել նրան ու ունշացնել: Իշխան Ալեքսանդրու II և Պետրու Կաղ եղբայրները հագիվ կարողացան փախչել: Ժիլիշտեի ճակատամարտը համարվում է ռազմական արվեստի ամենահատկանշական օրինակներից, երբ շրջապատման զորաշարժը պսակվեց մեծ հաջողությամբ: Շարունակելով հաղթարշավը, Յոսան Քաջը թշնամուն հետապնդեց մինչև Տրանսիլվանիայի սահմանը, իսկ մյուս կողմից սրընթաց մխրճվեց Վալախիայի իշխանության սիրտը և, գրավելով Բուխարեստը, իշխան նշանակեց իր մերձավորներից Պրա-րաշկու իշխանի որդի Վինտիլըին: Վալախիայից բազմաթիվ զինվորներ եկան՝ ստվարացնելու Յոսան Քաջի բանակը: Յոսան Քաջն իր ծրագրի համաձայն հարձակում է գործում Բրըլիլայի ամրոցի վրա և ապա ջախ-ջախում օգնության հասած թուրք-թաթարական երեք զորամասերին, իրավունչալում, Բենդերում (Տիգինա) և Աբբերմանի դիմաց:

Միայն երկու ամիս էր անցել պատերազմի սկզբից, և այդ կարճ ժամանակաշրջանում Յոսան Քաջը հաղթել էր Ժիլիշտեի մեծ ճակատա-մարտում, գրավել ամբողջ Յարա Ռումընեսկըն (Վալախիան և Օլտե-նիան), վերցրել Բրըլիան, Բենդերը և Աբբերմանը, թշնամու մեծ ուժե-րին մեկ անգամ ջախջախել իրավունչալում և երկու անգամ՝ Բենդերում: Թշնամին հսկայական կորուստներ էր կրել:

Պարտություններից գաղազած սուլթան Սելիմը, վախենալով, որ Յոսան Քաջի հաղթանակները օրինակ կարող էին դառնալ Օսմանյան կայսրության լծի տակ հեծող մյուս ժողովուրդների համար, հրամայում է Ռումելիայի բեկլերբեկ Ահմեդ փաշային և Ղրիմի խանի եղբայր Ադիլ Գիրեյին 200 հազար զորքով ներխուժել Մոլդովա և կենդանի կամ մեռած բերել Յոսան Քաջին և վերջինիս փոխարեն գահ բարձրացնել Պետրու Կա-ղին: Օսմանյան բանակը Դանուբից հարավ, Դոբրուշայով էր շարժվում, իսկ թաթարները՝ Դնեստրի արևելքից: Այս անհավասար կովում, երբ մոլդովացիները թշնամու դեմ մեկը տասի հարաբերությամբ էին կովե-լու, միայն հրետանին, լինելով մեկը մեկի հարաբերությամբ, հավասար էր թուրքերի ուժերին: Յոսան Քաջը ծրագրել էր առանձին-առանձին ուղը-նացնել թշնամուն՝ զորքերին միավորվելու հնարավորություն չտալով: Լի-նելով շրջահայաց Յոսան Քաջը ձեռնարկեց արտակարգ միջոցառումներ: Նա Պոկիտիլոյին 600 կազակներով ուղարկեց հսկելու Դանուբի վերին հոսանքները, հետման Սվիդուկուն իր մնացյալ կազակներով՝ Բուչակի կողմերը՝ թշնամուն հետապնդելու, իսկ հետման Նրեմիա Գոլիային թո-

դեց 13 հազար հեծելազորով Դանուբից թուրքերի անցման փորձերը խանգարելու համար։ Սակայն Գոլխան Պետրու Կադից ստացած 30 հազար ոսկու համար դավաճանեց իր իշխանին ու ժողովրդին և թուրքերին թույլ տվեց անցնելու Դանուբը, ու թուրքերի զորքի թվի մասին հազորդեց սխալ տվյալներ։ Երբ Յոան Քաջին հարցնում են թշնամու զորքի թվի մասին, նա պատասխանում է. «Նրանց կհաշվենք կովում», պատասխան, որը վկայում է նրա անվեհերության մասին։ Այն համարվում է աշխարհի մեծ զորապետների գեղեցկագույն ասույթներից մեկը։

Սակայն, հակառակ պատահած մեծ դժբախտությանը, Յոան Քաջը թույլ չէր տվել օսմանցիներին միանալու թաթարական զորքին։ Բենդեր բերդի մոտ իշխանը լսում է թուրքերի՝ Դանուբն անցնելու մասին։ Սակայն տեղում մնալը վտանգավոր համարելով, որոշում է բանակատեղին տեղափոխել ավելի արևմուտք՝ Կահուլ լճի մոտ։ Միայն 4 օրում մրցանիշային (ռեկորդային) անցում կատարելով և յուրաքանչյուր օր 62 կմ առաջ գնալով Յոան Քաջը իր զորքով հասնում է Կահուլ, ուր և հունիսի 10-ին տեղի է ունենում վճռական ճակատամարտը։ Թուրքերն այստեղ կենտրոնացրել էին շուրջ 100 հազար զորք և 120 թնդանոթ՝ մոլգովացիների 30 հազար զորքի դիմաց, որից 12 հազարը լավ զինված հեծելազորն էր, իսկ հետևակը բաղկացած էր աշխարհազորայիններից։ Սակայն մոլգովական հրետանին գտնվում էր այն ժամանակվա համար բարձր մակարդակի վրա։ Ավելի ճկուն գործելու համար, Յոան Քաջը զորքը բաժանել էր 30 ջոկատների, յուրաքանչյուրը բաղկացած 1000-ական հոգուց և իրենց հրետանիով։ Կովի աջ թևում կազակներն էին, կենտրոնում հետևակն էր՝ երկու մասի բաժանված, իսկ ձախ թևում՝ հեծելազորը։

Կովի սկզբից իսկ Յոան Քաջը հասկանում էր, որ թուրքերի զորքի թվի մասին իր ստացած տեղեկությունները ճիշտ չեն։ Սակայն ճակատամարտի սկզբից կատարվում է ամենից ավելի ահալորը, փոխանակ հեծելազորը մխրճելու թշնամու դիրքերը, նրանց ղեկավար Երեմիա Գոլիայի հրամանով այն անցնում է թշնամու կողմը և տեղակայվում նրա զորքի մեջ։ Զայրացած Յոան Քաջը տեսնելով այդ, իր հերոս քաջերով խոչնդանում է և կրակ բացում դավաճանների վրա՝ անխտիր ոչնչացնելով բոլորին։ Այդտեղ պետք է, որ իր արդար պատիժը ստացած լինի նաև դավաճանը, քանի որ սրանից հետո նրա անունը պատմության մեջ չի հիշվում։

Այս անհավասար կովում թուրքերը մերթ նահանջում են, մերթ հարձակվում, սակայն տեղացող հորդառատ անձրևը փչացնում է մոլգովացիների վառողի պաշարները։ Այսպիսով, այդ վճռական պահին

հրետանին լռության է մատնվում: Թուրքական 20 հազարանոց թարմ զորք է մտնում մարտի մեջ, իսկ ձախ թեևում թաքնված թաթարները անցնում են հարձակման: Մոլդովական զորքը թշնամու գերակշռության պատճառով հարկադրված է լինում նահանջել: Սակայն, անգամ այս ողբերգական իրադրության մեջ, կրկին փայլում է Յոան Քաջի ռազմական տաղանդը: Նա, վերախմբավորելով իր ուժերը, անսպասելի անցնում է կայծակնային հակահարձակման և թշնամուց դրավում 60 թնդանոթ, որոնցից ամենամեծը ինքն է տանում: Այսպիսով, Նրան հաջողվում է իր զորքը 1000 քայլ հեռու տանել և ամրանալ Ռոշկան գյուղի մոտ գտնվող բլրի վրա: Սակայն վառոդի և ջրի պակասը անհաջողության է մատնում նրանց գերմարդկային ճիգերը, և նրանք ընկնում են շրջապատման մեջ՝ երեք օր ու գիշեր շարունակելով հերոսական պայքարը:

Թուրքերը 28 հազար զորք էին կորցրել, իսկ մոլդովացիներից մնացել էին միայն 7000 հոգի և 250 կազակներ: Բոլորը շրջապատել էին հեռու իշխանին և որոշել էին միասին ղեկավարել: Սակայն թուրքերը, հուսա-հատված ահեղ ու անվերջանալի մարտերից և իրենց կրած մեծ կորուստներից, դիմում են խարդախ միջոցների, առաջարկելով դադարեցնել պատերազմը: Թուրքերը Ղուրանի, իսկ Պետրու Կադն էլ Ավետարանի վրա երդում են տալիս ձեռք չտալ Յոան Քաջին և նրա զորքին: Իրականում Յոան Քաջը չէր պարտվել, այլ դավաճանության, թուրքական զորքի թվի գերակշռության և ստեղծված ծանր իրադրության հետևանքով հարկադրվել էր ժամանակավորապես դադարեցնել կռիվը՝ հետագայում այն վերստին սկսելու համար: Անշուշտ, դավաճանություն չլինելու, ինչպես նաև վառոդ և ջուր լինելու դեպքում, այլ կարող էր լինել պատերազմի ելքը և գուցե, ինչպես պատահել էր նախորդ իշխանների օրոք, թուրքերը ստիպված լինեին զիջումի (կոմպրոմիսի) գնալ և հանդուրժել Յոան Քաջի իշխանությունը:

Մոլդովացիները հավաքվելով խորհրդի, առաջարկում են չհավատալ թուրքերի խոստումներին, սակայն, նկատի առնելով անեկանելի իրադրությունը, Յոան Քաջն ստիպված էր զիջել՝ պայմանով, որ հետևակը և կազակները պահպանեն ղեկքերը և վերադառնան իրենց տները, իսկ ինքը պետք է գնար սուլթանի մոտ՝ կատարվածի մասին բացատրություն տալու: Թուրքերը և Պետրու Կադը շարունակում են կրկնել իրենց սուտ ու պատիռ երդումները: Յոան քաջը հրաժեշտ է տալիս զորքին, շնորհակալություն հայտնում բոլորին, նվերներ բաժանում: ...Հունիսի 14-ին Յոան Քաջը իր զինվորներից մեկի հետ գնում է օսմանյան դորաբանակի հրամանատարի վրանը, ուր 4 ժամ իշխանավայել արժանապատվությամբ

պատասխանում է իր դեմ արված ամբաստանություններին և ընկնում է թուրքացած մի իտալացու՝ Չիկալա զադե Յուսուֆի դաշունի հարվածից^{33*}։

Թուրքերը դրժում են իրենց խոստումը՝ կոտորելով մուղղվացի և կազակ մարտիկների մեծ մասին, իսկ թաթարները հրո ճարակ են դարձնում գյուղերը։ Այնուամենայնիվ սուլթանը չհամարձակվեց բարձրացնել մուղղվական իշխանության կողմից վճարելիք հարկի չափը։

Մասնագետները շատ բարձր են գնահատել Յոան Քաջի ռազմական արվեստը, ստրատեգիան ու տակտիկան։ Թշնամու ուժերը հիմնավորապես ճանաչելով, նա միշտ էլ ճիշտ էր ընտրում հարվածի ուղղությունը, զորքի դասավորում էր կատարում՝ ելնելով տիրող իրադրությունից³⁴։

Յոան Քաջը անմահացել է ռումինական և միջազգային պատմագրության մեջ³⁵։

Մեծ դուռցազնը իսկական գնահատանքի արժանացավ նոր Ռումինիայում։ Անցյալում նրան տրված Անգուլ կամ Ահարկու անունների տեղ ընդունվեց Քաջ մակդիրը³⁶։

* Պատմում են, որ լենիշիները դուրս են բերում Յոան Քաջի կամ Հայի մարմինը, կտրում գլուխը, անցկացնում նիզակի վրա, իսկ նրա հուժկու մարմինը կապում երկու ուղտերի և, նրանց տարբեր կողմեր ուղղելով, կտորների վերածում։ Օսմանցի զինվորները իրենց սրերը թափախում են նրա արյան մեջ և ամեն մեկը աշխատում է ունենալ նրա ոսկորներից մի փշուր, իբր թախուման՝ նրա ուժն ու քաջությունը ստանալու համար (B. P. Haşdeu, 127)։

** Սկսած դեռևս 1575 թ. լատիներեն, լեհերեն, գերմաներեն, իտալերեն, անգլերեն, ռուսերեն գրքեր և ուսումնասիրություններ լույս տեսան։ 34 օտար հեղինակներ մեծ դրվատանքով են խոսում նրա գործունեության մասին, իսկ 400-ից ավելի ռազմալեզու փաստաթղթեր անդրադառնում են նրա կյանքին և գործին։ Բոլոր հեղինակներն էլ Յոան Քաջին համարում են ժամանակաշրջանի քաջերից, դարի ռազմական մեծ ղեկավարներից մեկը, իսկ 1574 թ. մուղղվացիների պայքարը՝ Եվրոպայի կարևոր իրադարձություններից (D. C. Giurescu, Ioan Voică cel Viteaz, Bucureşti, 1974, p. 92-111)։

1565 թ., երբ Ռումինիան շարունակում էր կախման մեջ մնալ թուրքերից, ռումին մեծանուն գիտնական և հայագետ, ակադեմիկոս Բ. Պ. Հաջդեուն հատուկ մենագրություն նվիրեց Յոան Քաջին և նրա անձի օրինակով սուլթանական Թուրքիայից վերջնականապես անկախացման կոչ ուղղեց ռումին ժողովրդին։ Այդ գիրքը մինչև օրս էլ չի կորցրել իր թարմությունը և արժանացել է ավելի քան 10 հրատարակությունների։ Յոան Քաջի մասին գրել են նաև ռումինացի ակադմիկոս ակադեմիկոսներ Ն. Յորգան, Ա. Գ. Բսենոփուլ, Կ. Կ. Զուրեսկուն, Թ. Հուրանը և ուրիշներ (D. C. Giurescu, նույն տեղում)։

*** Ռումինական կոմկուտի ընդհանուր քարտուղար և Հանրապետության նախագահ Նիկոլայի Զառնակուն Յոան Քաջին համարում է Ռումինիայի ամենամեծ զորահրամանատարների՝ Միրլա Ալեքսի, Շտեֆան Մեծի, Վլադ Ցեպկելի շարքում, որոնք հերոսաբար պայքարեցին օտար և հատկապես Օսմանյան կայսրության հարձակումների դեմ,

Նրա անմահ կերպարը ոգեշնչման աղբյուր է եղել ռումինական գրականության և արվեստի մեջ*:

Ինչպես եզրակացնում է պատմաբան Դ. Զուրեակուն. «Դավաճանները հավիտյան մնում են դատապարտված, ինչքան որ գոյատևի ռումին ժողովուրդը, իսկ Յոան իշխանը և իր քաջերն այսօր էլ, 400 տարի անց, մնում են և մնալու են միշտ վկա այն բանի, որ մի ժողովուրդ, որ ուղում է ապրել, գիտի կանգնել մահից վեր, գոյատևել՝ ճախրելով բարձունքից վեր, հանուն ավելի լավ և առանց ճնշման մի կյանքի»³⁵:

Ինչպես Շտեֆան Մեծի, այնպես էլ Յոան Քաջի ժամանակ օսմանյան լծի դեմ պայքարող նրա բանակում պետք է, որ լինեի նաև հայերից բաղկացած զորամաս: Կամենիցի հայ տարեգրողը, անշուշտ, իր աշխատակիցներն ունենալով Մոլդովայի Սուլավա և Յաշ հայաշատ կենտրոններում, ընդարձակորեն կանգ է առել Յոան Քաջի և նրա եղբայրների կյանքի և գործունեության վրա³⁶: Ինչպես ցույց են տալիս նորահայտ փաստերը, Մոլդովայում այս շրջանում ևս հայ կյանքը ծաղկում է ապրել: Հայ վաճառականները աշխույժ առևտուր էին անում՝ Մոլդովյան կապելով արևմուտքի և արևելքի հետ: Յոան Քաջի կարգադրությամբ թուլյատրված ազատ առևտուրն ու տոնավաճառների թվի ավելացումը, անկասկած, նպաստած պետք է լինեին նաև հայ վաճառականների գործունեությանը: Ինչպես վկայում է Բ. Պ. Հաշդեուն, «հայերի առևտուրը ռումինական երկրներում տիրապետող է եղել մինչև 1600 թ., այսինքն՝ ռումինների փառքի շրջանը»³⁷, այս նշանակում է, որ այն ընդգրկում է նաև Յոան Քաջի իշխանության ժամանակը: Հայտնի է, որ 1574 թ. Յոան Քաջը միջամտել է Յաշի հայոց դատարանի վոյթ Պապին՝ սուլավացի

փառքի էջեր գրելով հայրենիքի ազատագրության տարեգրության մեջ, իսկ նրանց անունը անմահացավ երկրի ոսկեմատյանում («România Liberă», București, 1983, 2 dec, № 12, 157, p. 2. 7).

* Այն մարմնավորվել է գեղանկարչության մեջ (Գ. Լաբին՝ Ժիլիշտեի և Կահուլի ճակատամարտերը կտավներով), քանդակագործության մեջ (Մ. Բուտուշոյու, Զ. Մեդրեա, Բ. Լեոնովիչ, Հովակիմ (Զոն) Թորոսյան), օպերայում (երաժշտական ողբերգություն՝ Դ. Դոմիտրեսկուի, լիբրետո՝ Գ. Թեոդորեսկուի՝ գրող Լ. Ֆուլգայի թատերախաղի հիման վրա, «Յոան Ահարկու» օպերան, ուր իշխանի դերում հանդես է գալիս Ռումինիայի ժողովրդական դերասան և պետական մրցանակների դափնեկիր՝ ռումինահայ բարիտոն Դավիթ Հովհաննեսյանը, իսկ բանակայինները երգում են, որ իրենք «Հայի բանակից են») թատրոնում (Լ. Ֆուլգայի «Յոան Ահարկու» թատերախաղը՝ 3 գործողությամբ և 10 պատկերով), գրական գործերում (է. Կամիլարի, Կ. Իգնատեսկուի, Մ. Սադովանուի, Մ. Ժոլդեայի վեպերում): 1958 թ. Ժիլիշտեում, ճակատամարտի 384-ամյակի առթիվ, բացվեց հուշարձան (D. C. Giurescu, p. 103—104):

մի հայ կնոջ վճարվելիք գումարը հատուցելու համար³⁸։ Ուրեմն, Յոանն Քաջի ժամանակ Յաշում գործում էր հայկական դատարան, և որի գոյության մասին ոչ առաջ և ոչ էլ հետո մեզ ոչինչ հայտնի չէ։

Յոանն Քաջի հակառակորդ և օսմանցիների կամակատար Պետրոս Կաղի օրոք հատկապես մոլորովական ժողովրդի ցածր խավերը շատ ծանր պայմանների մեջ ընկան։ Մոլորովայում ենիչերիներն էին տիրություն անում, իսկ սուլթանին խոստացած հարկն ու բազմատեսակ նվեները տալու համար իշխանն անխնա կեղեքում էր ժողովրդին։ Սակայն երկրի վերնախավը տոնում էր իր հաղթանակը և Պետրոս Կաղին համարում իր հարազատ հայրը։ Ակադեմիկոս Ա. Դ. Քսենոփոլը նշել է, որ գյուղացիությունը արցունքներով ընդունեց նոր իշխանի գալուստը, և նրանցից մի մասը փորձեց հակադրվել նրան, դիմելով ուժի։ Այս իրադրությունը լավագույն կերպով օգտագործեցին Յոանն Քաջի հարազատները։ Վերջինիս հմայքն ու ժողովրդականությունը այնքան մեծ էր, որ նրա եղբայրները և հարազատները ևս շուտով արժանացան մոլորովական և ուկրաինական ժողովուրդների ստվար մասի համակրանքին և աջակցությանը։

1577 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից առաջ մոլորովական գահին տիրանալու առաջին փորձն է կատարում կազակների միջից բարձրացած, մոր կողմից Յոանն Քաջի եղբայր Կրեցուլը (իմա՝ Գանգուր), որը սակայն անհաջողության է մատնվում³⁹։ Վերջապես, նույն 1577 թ. նոյեմբերի 24—28-ի միջև մի այլ հավակնորդ դարձյալ կազակական ուժերով գալիս է Սորոկայից, ուր և տեղի է ունենում առաջին բախումը։ Երկու օր տևող կռվից հետո, հողմացրիվ անելով օսմանյան մի ջոկատ և Պետրոս Կաղ իշխանի մի զորամաս, գրավում է մայրաքաղաք Յաշում ևս մոր կողմից եղբայր էր Յոանն Քաջին և Գանգուրին։ Յոանն Քաջի վախճանից հետո անցել էր Դնեստրից այն կողմ, իր ընտանիքի և ծանոթ կազակների մոտ, դարձել նույնիսկ հետման (1577)՝ ուժեղ կարգապահություն սահմանելով Զապորոժյան Սեչում, և իր քաջությունը մեծ համբավի արժանացել։ Կազակներից ստացել էր Իվան Պոտկովա անունը, քանի որ մատներով կարող էր ճզմել ձիու պայտը։ Ըստ Ղևոնդ Ալիշանի, Սերպեգա ազգանունը ծագել է հայկական սարը՝ պայտ բառից⁴⁰։ Մոլորովացիները նրան կոչեցին Յոանն Պոտկոավը կամ Նիկոարը Պոտկոավը, այսինքն՝ դարձյալ Պայտ մականունով։ Ըստ ակադեմիկոս Բ. Պ. Հաղդեուի, նրա հայկական անունը եղել է Կարապետ Սերպեգա⁴¹։ Իր գործած քաջագործություններով նա սարսափ էր ազդում

* Բացի Յոանն Քաջից, որ միայն մոր կողմից էր հայ, նրա բոլոր եղբայրներն էլ հայ էին թե մոր և թե հոր կողմից, սերելով Սերպեգա ընտանիքից։ Ինչպես նշում է

Քուջակի և Ղրիմի թաթարներին: Նրա անունը տարածվել էր մինչև Մոսկվա և Ստամբուլ: Ռուս մեծ պատմաբան Ն. Մ. Կարամզինը նշում է, որ, ըստ մոսկովյան դեսպանների, Ստեֆան Բատորին լեհական թագավորության մեջ ոչ մի ժամանակ Պոտկոավրի նման բաշ մարդ չի ունեցել⁴²: Նա 1577 թ. նոյեմբերին իրեն համախոհ 3000 կազակներով, որոնք Մանրոմանից (Կիև), Չերկասկից, Կանևից և Բրասլավից էին, անցավ Սորոկա, ուր բնակչությունը ջերմորեն դիմավորեց նրան, իբրև փրկչի, իսկ կազակներին էլ իբրև ջերմ բարեկամների, և շատերը միացան նրա զորքին: Սակայն Յաշի մոտ նրա զորքը կանգնեցվեց թուրքերի կողմից, որոնք նախ հրետանիով պիտի կրակեին և ապա անցնելու էին հարձակման: Յոան Պոտկոավրն դիմեց հնարամտության, հրամայեց իր զորքին պառկել գետին, և երբ ռումբերը անցան նրանց գլուխների վրայով, հարձակվեցին թուրքերի վրա՝ առաջին շարքից ջարդելով 300 հոգու, իսկ իշխանն ու մնացյալ թուրքերը դիմեցին փախուստի: Կարապետ Յոան Պոտկոավրն, գրավելով Յաշում Մուղովայի իշխանական գահը, շարունակեց եղբոր սկսած բարենորոգումների ծրագրի իրագործումը: Բանտերից նախ ազատագրեց Պետրու Կաղից և թուրքերից դատապարտվածներին, ապա իր համախոհներին վստահեց երկրի կառավարումը, պատժեց դավաճաններին և հենվելով ժողովրդի վրա, բարեկամական սերտ կապեր հաստատեց Մոսկովյան պետության հետ: Սակայն լեհաստանին սիրաշահելու և սուլթանին իր իշխանությունը ճանաչել տալու նրա փորձերը անհաջողության մատնվեցին:

Շուտով Պետրու Կաղը ինչպես վալախական, այնպես էլ Բուջակի թաթարներից և Դեբրուչայի թուրքերից բաղկացած զորքով, որի հավաքագրումը հրամայել էր սուլթանը, մոտեցավ Յաշին: Այս անգամ ևս Յոան Պոտկոավրի բոյարներից ոմանք անցել էին թշնամու կողմը: Վրճառական ճակատամարտը տեղի ունեցավ Դոկոլինայի դաշտում (1578): Այստեղ, ինչպես նշում է մեծ պատմաբան և հեղափոխական գործիչ Նիկոլայե Բրլչեակուն, Պետրու Կաղը փորձեց հետևել Հաննիբալի օրինակին, միայն այն առբերությունամբ, որ փղերին փոխարինել էր եզներով և ձիերի հրամակներով, որոնք լինելով առաջին գծի վրա, պետք է ճզմեին Յոան Պոտկոավրի զորամասերին: Սակայն ստացվեց ճիշտ հակառակը, կազակները կանգնելով իրենց տեղում և թողնելով, որ թշնամին մոտեն-

ակադեմիկոս Բ. Պ. Հաշոկուն, Սերպեգան ոչ սլավոնական, ոչ թաթարական և ոչ էլ ռուսական անուն է, այլ զուտ հայկական: Նա բերում է եզ կամ ագ վերջավորությամբ հայկական անուններ: Նա վկայակոչում է նաև Սեբեոս պատմիչին, ուր նրա ասելով ամեն քայլիդ կարող ևս հանդիպել նման անունների (B. P. Hasdeu, էջ 320):

նա, կրակ բացեցին թշնամու վրա, այդ ժամանակ անասունների բազմությունը վախեցած հետ դարձավ և մեծ վնաս հասցրեց Պետրու Կաղի ուժերին և, ի վերջո, գրոհող զորքը ջարդվեց Պոտկոավրի ուժերի կողմից:

Գազազած սուլթանը հրամայեց Վալախիայի և Տրանսիլվանիայի իշխաններին, թաթարներին, Ռումելիի բեկլերբեկին՝ միասնական ուժերով արշավել Մուղդուլայի վրա և կրկին գահ բարձրացնել Պետրու Կաղին: Յոան Պոտկոավրն տեսնելով, որ Օսմանյան կայսրությունը դեմ է իր իշխանությունը, որ Տրանսիլվանիայի և Վալախիայի զորքերը ևս իր դեմ են կանգնած, իսկ մյուս կողմից էլ Լեհաստանի թագավորը թշնամաբար է տրամադրված, ընդհանուր ժողովում հրաժարվեց իշխանությունից և, անցնելով Դնեստրը, հասավ Պոդուլի: 1578 թ. հունվարի 1-ին Պետրու Կաղը կրկին մտնելով Յաշ գրավում է իշխանական աթոռը: Իսկ Պոտկոավրին դավաճանություն բանտարկում են, շղթայելով նրա ոտքն ու ձեռքը: Կամենիցի հայ ժամանակագիրը, արձագանքելով Պոտկոավրի գործունեությանը, նրա դեմ գործադրված դավաճանության մասին գրում է. «Նւ զայս Բոտրոման հրամանաւ թագաւորին մերոյ Ստեփաննոսին կամեցաւ վոյվոտան որ թոյլ տայ նմա, զի ինքն իւր կամաւ երթայցէ առ թագաւորն, և նա եթող զնա զի երթիցի: Նւ իբրև զնաց առ թագաւորն, նոյն ժամն զինքն կապել էտ երկաթէ կապանօք, և առ իւր պահել...»⁴³:

Անսալով սուլթան Մուրադի սպանալիքներին և Պետրու Կաղի մեծամեծ կաշառքներին Լեհաստանի արքա Ստեֆան Բատորին հաստատում է Պոտկոավրին մահապատժի ենթարկելու որոշումը⁴⁴: Կարապետ Յոան Պոտկոավրին մահապատժի ենթարկեցին 1578 թ. հունիսի 16-ին, Լվովի մեծ հրապարակում, խուռն բազմության ներկայությամբ, երբ արքան, որսորդության գնալու պատրվակով, բացակայում էր քաղաքից: Նա իր վերջին խոսքում ասաց, որ ինքը մահապատժի է գնում՝ առանց որևէ հանցանք գործած լինելու, որ քաջությամբ է ծառայել թագավորությանը, ընդդեմ քրիստոնեության թշնամիների, մտածել է Մուղդուլան դարձնել ամուր պատնեշ օսմանցիների դեմ, որ իրեն խաբել է պալատական Սենյավսկին, այնինչ նախապես աղատություն էր խոստացել, որ թագավորը Բարձր դռան միջամտությամբ իրեն մահվան է դատապարտել: Վերջում նա ուզում է, որ իր զենքի ընկերներին լավ վերաբերվեն: Նրա կամքով ձեռքերը ազատ էին: Մահապատժի ժամանակ ներկա ժողովուրդը լաց եղավ, հատկապես լալիս էին նրա զինվորները, որոնք հատուկ եկել էին իրենց տիրոջն ազատելու, սակայն իշխանությունների

միջոցառումները հնարավորութիւն չստեղծեցին այդ քայլին դիմելու: Մահապատժին ներկա ժողովրդի ցասումն այնքան մեծ էր, որ թագավորական պահակազորը, վախենալով ապստամբութիւնից, հրացանների փողերն ուղղել էր ժողովրդի վրա⁴⁵: Հաջորդ օրը, 1578 թ. հունիսի 17-ին նրա մարմինն ամփոփվեց կվովի մոլորովական եկեղեցում*:

Օսմանյան կայսրութեան օգնութեամբ Պետրու Կաղը վերստին գրավել էր Մոլդովայի իշխանական գահը, երբ Կարապետ Յոան Պոտկոավըի կրտսեր եղբայր Ալեքսանդրու Սերպեգան, կազակային ուժերով և մոլդովացի գյուղացիութեան օժանդակութեամբ անցնելով Դնեստրը, 1578 թ. փետրվարի 9-ին մտավ Յաշ մայրաքաղաքը՝ առանց կրակոցի: Սակայն նրա իշխանութիւնն էլ շատ կարճատեւ եղավ, 1578 թ. հունվար-փետրվար, հազիվ մեկ ամիս: Սովթանը կատաղած սպառնում է Լեհաստանին պատերազմով, իսկ Մոլդովան և Վալախիան սանջակութեան վերածումով: Ալեքսանդրու Սերպեգային օգնել էին Ուկրաինայի ժողովրդական զանգվածները⁴⁶: Նա դեռևս չէր հասցրել ուժերը համախմբել, երբ հսկայական մի բանակ՝ կազմված օսմանցիներից, տրանսիլվանացիներից և վալախներից հասավ Յաշ: Ալեքսանդրու Սերպեգան իր կազակային և մոլդովական ուժերով փակվեց իշխանական դղյակում: Կամենիցի հայ ժամանակագիրն արձանագրել է, որ նա շուրջ երկու ամիս դիմադրել է և հուսահատութեան մատնել Պետրու Կաղին ու ծանր կորուստներ պատճառել իր թշնամիներին: Հայ տարեգրողը նշել է նաև, որ մեծ վնասներ են կրել նաև Յաշի հայերն ու մոլդովացիները: Նա բառացի արձանագրել

* Նրա մասին երգեր են հյուսվել: Արեւելյան սլավոնների բանաստեղծութեան մեջ նա մի նոր Ռուսնո է համարվել, իսկ ուկրաինական երգերում կա մի երգ՝ նվիրված հետման Սերպեգային: Ուկրաինական տարեգրութեան մեջ նույնպես փառաբանվել է նրա անունը: Նրան բանաստեղծութիւն է ձոնել Տարաս Շևչենկոն: Մի այլ երգում նշվում է, որ բովանդակ Ուկրաինան հարգել է նրա հիշատակը: Պահպանվել է նրա թաղմանը ասված դամբանականը, որը Կիև-Մոգիլեյան կղերիայի մանկավարժներին Բոգդան Խմենիցկու մասին դամբանականի հետ իրենց սաների մեջ դեպի հարազատ հերոսները սեր արթնացնելու միջոց էր հանդիսացել (Перец, Чтение в историческом обществе Нестора летописца, Киев, 1900, отд. III, стр. 23--25):

Գամբանականի խորագիրն է. „Praxis in Funere Herois dicti nomine Podcowa“. Մոլդովացի գրող Ալեքսանդրու Հաժդեուն նրան է նվիրել մի հնչյակ, ուր փառաբանում է նրա պայքարը Մոլդովայի ազատագրութեան համար: Գդանսկում (Լեհաստան) կա նրա արձանը (Չ. Գալլազյան, Ռուսաճաշ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 233): Իսկ կվովի պատմութեան լատգարանում զետեղված է նրա նկարը: Ռումին ակնապետը գրող Միհայիլ Սադովանուն մի ամբողջ պատմավեպ է նվիրել նրան «Նիկոլարը Պոտկոավը» վերնագրով (1952), որն արժանացել է մի շարք հրատարակութիւնների, թարգմանվել է նաև ռուսերեն (Մոսկվա, 1955):

է հետևյալը. «...Այլ ոմն ուրիշ պարոն (իմա՝ Ալեքսանդրու Սերպեգան) մտաւ ի յերկիրն խաղախնեւորով, զոր ոմանք ասացին, եթէ այդ Բոտքովային եղբայրն է և դարձեալ եկն ի պարոնանիստ քաղաքն ու զհին պարոն զԲեդրա եհան ի ապարանիցն՝ որ է ամրոցն և ինքն եմուտ և նստաւ ի տեղի նորա, և փակուեցաւ ի ամրոցին: Եւ ուներ ընդ իւր 1000 խաղախ զըֆանքչիք և թօփեր այլ ունէր ի հետ իւր: Եւ այս պարոն Բեդրն շիւսեցաւ տարակուսեցաւ, թե զինչ առնիցէ, և զատեցաւ ի Եասէն՝ ուր դախն էր. և հեծելովն իւրով հեռագոյն շրջէր. մինչ դարձեալ ետ բերել զթուրքերն, և ընդ նոսա սկսաւ կռիւ առնել ի յետ այս նոր պարոնին. և որչափ մարտնչէին և կռուէին՝ այդչափ կոտորէր զնոսա այդ նոր պարոնն. և բազում թուրքն կոտորեց և զօլախցիքն այլ ընդ նոսա: Եւ այս ընդերկարեցաւ մինչև երկու ամիս և հանապազ պատերազմէին և միշտ յաղթուէին և կոտորուէին այս հին պարոնին մարդիքն: Բայց վասն այս պատճառի մեծ նեղութիւն և հալածումն եհաս այդ երկրի բնակչաց ամենայն ազգի, եթէ հայոց և եթէ օլախի. զոր զքաղաքս նոցա այրեց զԱսն, և զամենայն ինչսն զոր ունէին՝ թալանեցին և աւարեցին, և զինքեանսն լաւ ի պատուաւոր մարդկանէ սպանանէին»⁴⁷: Ժամանակագրի վերջին տողերից երևում է, որ Ալեքսանդրու Սերպեգայի մղած պայքարը իր մի փուլում, հավանաբար, վեր էր ածվել նաև սոցիալական շարժման: Զբաւոր գյուղացիութիւնը, որը մեծ օժանդակութիւն էր ցույց տվել նոր իշխանին, ոտքի էր կանգնել իրեն հարստահարողների՝ Պետրու Կաղի և նրան համախոհ բոյարներին դեմ՝ դատաստան տեսնելու: Մեր ասածի օգտին է խոսում նաև այն, որ ապրիլի 5-ին Գերլախը Յաշի փողոցներում տեսնում էր շղթայակապ խեղճ գյուղացիների, որոնք նոր իշխանին էին պաշտպանել: Բայց 1578 թ. մայիսի 12-ի գրչերը Ալեքսանդրու Սերպեգան, զրկված պաշարից և ռազմամթերքից, փորձեց դուրս գալ դեպի քաղաքի այլ կողմը, բայց նրան բռնեցին, և քանի որ գլխից վիրավոր էր, Կ. Պոլիս տարվելու ճանապարհին մահացավ: Ըստ գերմանական մի աղբյուրի, Ալեքսանդրու Սերպեգային ևս խաբեութեամբ էին բռնել, դրոժելով նախապես կնքված պայմանագիրը և ուխտադրժորեն հարձակվելով նրա վրա⁴⁸:

1578 թ. սեպտեմբերին կազակական մի այլ զորամաս Կոստանդինի ղեկավարութեամբ, որը, ըստ պատմաբան Ա. Դ. Քսենոփոլի, եղբայրն էր վերոհիշյալ Սերպեգանների կամ⁴⁹, ըստ Դ. Զուրեկուչի վերջերս հայտնած կարծիքի, Յոան Պոտկոմալի որդին⁵⁰ էր, մոտենում է Դնեստրին: Սարսափած Պետրու Կաղը Ստեֆան Բաւորիին հաղորդում է, որ ինքը որոշել է հեռանալ Մոլդովայից, որտեղ սուլթանը սպանում է բեկլեր-

քեկ դնել: Սակայն հոկտեմբերի 12-ի կովում Կոստանդինը հաջողութեան չի հասնում: Տիգինայի բեյը Կոստանդինին խոստացաւ սուլթանին բարեխոսել Մուղովայի իշխանութիւնը ապահովելու համար: Սակայն Կոստանդինին պահեցին և ուղարկեցին Ստամբուլ, ուր նա իր կյանքը անցկացրեց բանտում⁵¹: Այնինչ, այլ աղբյուրի համաձայն, նա անցել էր Կանե ու այնտեղից էլ Չերկասկի մոտերքը: 1579 թ. մարտի 6-ին Պետրու Կազը լեհական թագավորութեան կանցլեր Յան Զամոխսկուց պահանջում էր ձերբակալել և պատժել Կոստանդինին: Ըստ պատմաբան Ա. Դ. Քսենոփոլի, 1591 թ. Կոստանդինը դարձաւ նաև Մուղովայի իշխան⁵², բայց այս մասին այլ տվյալներ մեզ հայտնի չեն:

Սլեքսանդրու Սերպեգայի զավակներից էր Պետրուն, որը, երկար ժամանակ կազակների մոտ ապրելով, հայտնի էր նաև Պետրու Սլեքսանդրովիչ Կազակու անվամբ: Արոն Տիրան կոչված իշխանի հեռացվելուց հետո, սուլթանը Յաշ էր ուղարկել իր մի ներկայացուցչին թուրքական զորքով հանդերձ, որպեսզի մինչև նոր իշխանի նշանակվելը տնօրինի երկրի գործերը: Ահա ճիշտ այդ ժամանակ է հայտնվում Պետրու Կազակը, որին լեհական և կազակային զորքով հաջողվում է գրավել Յաշը, վտարել թուրք ներկայացուցչին և իշխել երկու ամիս իբրև Պետրու VI (1592 օգոստոս—հոկտ. 24)⁵³: Պետրու Կազակ իշխանի մտերիմն ու գործակից ընկերն էր հայազգի Օվակ (իմա՝ Ավագ) Մաթիսովիչը, որը բռնվեց 1594 թ. և տարվեց Կ. Պոլիս իր այս իշխանի հետ: Իշխանի և այս հայ գործակցի մասին հիշում և այլ մանրամասներ է տալիս Կամենիցի տարեգիրը, նշելով, որ հային հաջողվել է փախչել բանտից, սակայն նրա փոխարեն ձերբակալել են երկու այլ հայ երիտասարդների: Տարեգիրը, նկարագրելով Արոն Տիրան կոչված իշխանի կատարած բռնությունները, գրում է, որ մուղովայի մեծամեծները իշխան հրավիրեցին Պետրուին. «և նստուցին ի պարոնութիւն և հնազանդեցան նմա, ընդ որս էր և Աւագն ընդ նմա»: Ապա նշելով, թե ինչպես Արոնը սուլթանից դարձաւ ուղարկվել էր որպես իշխան, իր հետ ունենալով զթուրքի պարոնն, որ կոչի աղայ. զօրովը իւրովը. և եկեալ ի Ասն (իմա՝ Յաշ), կենդանի ձերբակալ արար զԲէթր պարոնն, և զԱւագն՝ որ էր հայ, Մաթեյի. որդի, և իսկոյն հատին զքիթն և տարաւ ի խոնտիբարն. և զԱւագն եղին ի բանտն երկաթի կապանօք. և նա փախեաւ ի բանտէն և եկաւ. և փոխանակ նորա կալան զերկու հայ կտրիճ, զԳրիգորն Մարբոյին և զՍիմոն Զոխնային, և եղին ի խաւարային բանտն»⁵⁵:

Յոան Քաջի ապօրինի որդի է հիշվում Շտեֆան Խուլը, որ 1591 թ. մայիսի վերջից մինչև 1592 թ. հուլիսը դառնում է իշխան Վալախիայի

կամ Յարա Ռոմընեակերի: 1595 թ. նա փորձում է գրավել Մոլդովայի իշխանական աթոռը, սակայն հաջողություն չի ունենում:

Սերպեգա հայկական ընտանիքից էր սերվում նաև Լազրը (Ղազար) Սերպեգան, որն իբրև Մոլդովական իշխանական գահի հավակնորդ կրկին հենվելով կազակային ուժերի վրա, պայքարեց Պետրու Կադի և նրա թուրք պաշտպանների դեմ, սակայն նա ևս հաջողություն չունեցավ: Հավանաբար նույն Լազրն է, որ հիշվում է այլ աղբյուրներում Շտեֆան անունով: Նա 1583 թ. սեպտեմբերին 20 հազար կազակ է հավաքում իր շուրջը՝ Մոլդովա արշավելու նպատակով: Ըստ մի այլ տեղեկության, նույն Լազրի կազակական և ռուսական զորքերը 1591 թ. թշնամու կողմից հողմացրիվ են արվում⁵⁵:

Նրկար տարիներ հերոս Յոան Քաջի անունը շարունակում է ազատագրության խորհրդանիշ մնալ մոլդովացի ժողովրդի համար: Այսպես, 1581 թ. Յանկու Սասու իշխանի դեմ ծագած ապստամբությունը իշխան է առաջադրում Լուեգուին, որն անվանվում է Յոան իշխան, սակայն նրա փորձը անհաջողության է մատնվում: 1587 թ. կազակները ներկայացրին մի ազնվականի որդի, որին անվանում էին Յոան (Իվան): Սակայն Յուցոբայի մոտ տեղի ունեցած ճակատամարտը անարդյունք է մնում հավակնորդի համար: 1592 թ. Մոլդովայի գահի մի այլ հավակնորդ, իրեն ներկայացնելով Յոան Քաջի որդի, անհաջողության է մատնվում: 1598—99 թթ. Յոան Բոգդան անունով մի պանդուխտ, անցնելով Սաքսոնիա, օգնություն է խնդրում՝ Մոլդովայի գահին տիրանալու համար: Վերջինս իրեն համարում էր Յոան Քաջի եղբայր: Դեռևս 1616 թ. Օրհնյի քաղաքացիներն ապստամբում են իշխան Ալեքսանդրու Մովիլի դեմ. շարժման ղեկավարը մի այլ հավակնորդ էր, որն իրեն համարում էր Յոան Քաջի որդի:

Նվ այսպես, Յոան Քաջի հերոսական մահից հետո, չորս տասնամյակ շարունակ Սերպեգա հայկական ընտանիքից սերված վերոհիշյալ իշխաններն ու իշխանական գահի հավակնորդները անմոռանալի անուն թողեցին: Նրանք օսմանյան լուծը թոթափելու ճանապարհին, հերոսաբար ընկնելով անհավասար մարտերում, անջնջելի էջեր արձանագրեցին հայ-մոլդովական և հայ-ուկրաինական ժողովուրդների դարավոր բարեկամության ոսկեմատյանում:

Վերջերս երևան եկած նյութերը վկայում են, որ Վալախիան ևս XIV դարից կամ նրանից էլ առաջ բնակեցված է եղել հայերով: Հայերի հնագույն կենտրոններն են եղել Սլատինան, Արճեշը, Ռեմնիկը, Բուխարեստը, Արեֆուն, ինչպես նաև հայ և հայկական անուններից

կազմված մի շարք տեղանուններ: Այստեղ ևս հայերը դարավոր համակեցության ընթացքում ուսմի՜նացիւններից վայելել են առանձնաշնորհումներ: XVII դարի թուրք ուղևոր էվլիա Չելեբին, անցնելով Բուխարեստից, նկատում է, որ տեղի բնակչութիւնը շատ սիրալիր կապերի մեջ է հայերի հետ⁵⁶: Վալախիայում ևս փայլել են մի շարք հայ երեւելի գործիչներ, որոնց մեջ հատկապէս, իբրեւ դիվանագետ և զորավար, աչքի ընկավ հայազգի Պետրոս Գրիգորովիչի կամ Արմին Պետերի տաղանդը, որը նա ի սպաս դրեց փառաբանված իշխան, ուսմի՜նական երկրների առաջին միավորող Միհայ Քաջի մղած հակաօսմանյան պայքարին: Ռումին պատմաբան պրոֆեսոր Ռոդիկա Չոկան-Իվընեսկուն, նշելով հայ և ուսմին ժողովուրդների պատմական ճակատագրի նմանութիւնը և նրանց համատեղ պայքարը օսմանյան լուծը թոթափելու ուղղությամբ, նկատում է, որ «Զուգադիպութիւն չէ այն իրողութիւնը, որ Միհայ Վիտեազուի (Քաջ) ամենաարժեքավոր աջակիցներից մեկը այս մարզում եղավ իր դիվանագիտական գործակալը՝ Պետրոս Գրիգորովիչ Արմեանուլը»⁵⁷:

Ռումին հետազոտող Թեոդոր Հոլբանը, խոսելով հայ գործչի մասին, գրել է, որ Միհայ Վիտեազուն իր դիվանագիտութիւն մեջ օգտագործել է Պետրոսի հետտորական տաղանդը, որը դարձել է նրա հմուտ դիվանագետը, ղորքերի հրամանատարը և մասնակցել իշխանի բոլոր ճակատամարտերին⁵⁸: Վերջինս Վալախիա էր դնացել իբրեւ սրբապատկերների նկարիչ: Նա գիտակ էր մի քանի լեզուների (լատիներեն, լեհերեն, գերմաներեն, թուրքերեն, ուսմիներեն և հայերեն), զբաղվել է նաև ֆինանսական գործերով: Իր իշխանի կողմից Գրիգորովիչը կայսրին ներկայացվել է իբրեւ մասնագետ ոչ միայն կայսերական սրբոնիքի հետ կապված հարաբերութիւններում, այլ նաև լեհական, մոլդովական, թաթարական և թուրքական խնդիրների: Նա սերտ կապեր է ունեցել թե՛ Արեւելքում և թե՛ Արեւմուտքում: Գրիգորովիչը հայտնի դեմք էր Ստամբուլի և Վարշավայի արքունիքներում: Սիգիզմունդ III-ը նրան անվանել է իր «ծառան», իսկ Ռուդոլֆ II կայսրը՝ «սենեկապետը»:

Միհայ Քաջը ևս հարեց նվրոպայում ստեղծված հակաթուրքական կամ քրիստոնեական լիգային: Նա Կըլուզըրենում չարաչար պարտութիւն մատնեց թուրքերին (1595 թ. օգոստոսի 13(23) սակայն, տեսնելով Լեհաստանի օգնութիւնն անհուսալիութիւնը, ցանկացավ բանակցել այդ երկրի հետ և գաղտնի այնտեղ ուղարկեց Պետրոս Գրիգորովիչին, սակայն Սիգիզմունդ Բատորին, ի վերջո, օգնութիւն

ուղարկեց: 1597 թ. Միհայ Քաջը թուրքերի դեմ գործում էր Տրանսիլվանիայի իշխան Սիգիզմունդ Բատորիի և Ավստրիայի կայսր Ռուդոլֆ II-ի հետ համատեղ: 1598 թ. Միհայ Քաջը Պետրոս Գրիգորովիչին ուղարկում է Ալբա-Յուլիա, որպեսզի կայսրի պատվիրակներին իրա-
զեկ դարձնի Միհայի և թաթարների հետ իրենց կնքած պայմանագրի բովանդակությանը, միաժամանակ վերադարձին մասնակցի թուրքերի դեմ մղվող կռիվներին: Գրիգորովիչը դարձյալ իբրև զորահրամանա-
տար մասնակցում է Բուլղարիայում օսմանյան զորքերի դեմ մղված
կռիվներին:

Սիգիզմունդը, Տրանսիլվանիայի իշխան մնալու նպատակով, ցանկանում է դաշնակցել թուրքերի հետ: 1598 թ. Գրիգորովիչին Միհայ Քաջը Պրագա է ուղարկում տեսակցելու Մաքսիմիլիան արհիդուքսի հետ: Գրիգորովիչը, աշխատելով քողարկել իր ուղևորությանը, անցնում է Լեհաստանով, սակայն Սիգիզմունդը նրան ձերբակալում է: Միհայ Քաջը անմիջապես միջամտում է իր դիվանագետին ազատելու նպատակով: Գրիգորովիչը Սիգիզմունդի հարկադրմամբ նամակ է գրում Միհային և նշում, որ Սիգիզմունդը ռումին իշխանի նկատմամբ բարյացակամ է: Սակայն հայազգի դիվանագետը ոչ միայն հայերենով էր ստորագրում իր նամակները, այլև հաճախ հայերենը օգտագործում էր իբրև գաղտնագրության միջոց: Այս նամակի վերջում նա հայերենով հասկացնում էր, որ այն գրել է Սիգիզմունդի ճնշմամբ: Այս նշանակում է, որ Միհայի արքունիքում եղել են նաև այլ հայ գործիչներ, որոնք զբաղվում էին Պետրոս Գրիգորովիչի հայերենով գաղտնագրած նամակների վերծանությանը և թարգմանությանը: Հետագոտող Դ. Ղըժ-րիկյանը, որ առանձին կանգ է առել հայ դիվանագետի գործունեության վրա⁵⁹, իր մի այլ հոդվածում, անշուշտ, վերցնելով Ն. Յորգայի հրապարակումներից, գետնդել է Պետրոս Գրիգորովիչի հայերեն ստորագրության լուսանկարը, ուր գրված է. «Տէր Գրիգոր օղլու Պետրոս»⁶⁰:

Միհայ Քաջը Տրանսիլվանիա ներխուժելու հարցով Գրիգորովիչին ուղարկում է Ավստրիայի կայսրի մոտ և համաձայնությունից հետո 1599 թ. հոկտեմբերի 18-ին, պարտության մատնելով Անդրեյ Բատորիի զորքերին Շելիմբերի գյուղի մոտ, Միհայը հաղթական մտնում է Ալբա-Յուլիա: 1599 թ. Գրիգորովիչը դարձյալ կայսրի մոտ է ուղարկվում: Պետք է նշել, որ Միհայը միշտ խորհրդակցում էր փորձառու հայազգի դիվանագետի հետ: Սակայն Պետրոս Գրիգորովիչը միշտ չէ, որ դիվանագիտական ասպարեզում հանձնարարություններ էր գործում, հաճախ ինքն էր նախաձեռնում այդ կապերը: Օրինակ, 1599 թ. նո-

լեմբերի 20-ին Գրիգորովիչը կապ հաստատեց Պիլզընում գտնվող Ռուսաստանի ցար Բորիս Գոդունովի պատվիրակ Աֆանասի Վլասևի հետ, թեև ոչ մի հանձնարարություն չէր ստացել ռուս պատվիրակի հետ տեսակցելու, այնուամենայնիվ, հայազգի դիվանագետը ճիշտ էր բմբռնում Ռուսաստանի հետ բարեկամության իմաստը: Միհայի հանձնարարությամբ Գրիգորովիչը հասավ մինչև իսկ Կիև և Կոստանդին իշխանի հետ տեսակցեց: Իշխանը խոստացավ անհրաժեշտության դեպքում օգնել նրան: Միհայ իշխանի ողբերգական սպանությունից հետո հայազգի դիվանագետը ծառայություններ է մատուցել մերթ Ավստրիայի կայսրությանը և մերթ Վալախիայի իշխաններին: Պետրոս Գրիգորովիչի գերագույն նպատակն է եղել Օսմանյան կայսրության առաջխաղացման դեմ Հարավային և Արևելյան Եվրոպայի պետությունների և Պարսկաստանի միասնական դաշինքի ստեղծումը: Անշուշտ, հայազգի գործիչը, բացի եվրոպական երկրներից, մեծ ցանկություն պետք է ունենար նաև Հայաստանի ազատագրության գործով զբաղվելու: Ռումինացի գիտնականներ Ն. Յորգան և Յոն Անջելեսկուն նկատի ունենալով Հայաստանում այդ ժամանակ բռնկված ապստամբությունները, հավանական են գտնում, որ Պետրոս Գրիգորովիչը կապ ունեցած լինի այդ շարժումների ղեկավարների հետ և ինքը կա քաջալերած լինի իր հայրենակիցներին: Նրանք նշել են, որ նա, աջակցելով ռումին իշխանին, հավանաբար մտածած պետք է լիներ նաև Հայաստանի մասին, որ դրդողության մեջ էր այդ պահին Դանուբի մոտ թուրքերի կրած պարտությունների հետևանքով⁶¹: Ռոդիկա Չոկան-Իվրեսսկուն կա նշում է, որ «ռումին ժողովրդի ձեռք բերած ռազմական հաղթանակները Դանուբի մոտ բնորոշում թուրքերու, առաջ բերեցին մեծ շահագրգռություն մը Հայաստանի մեջ»⁶²:

Յորգան նկատում է նաև, որ այս նույն ժամանակ Լեհաստանի արքա Միգիզմունդ III-ը Պարսկաստան է ուղարկում հայ Սեֆիր Մուրադովիչին, որն անցնում է ռումինական իշխանություններից, Մանգաչիայում նավ նստում՝ Տրապիզոն գնալու համար և վերադառնում 1602 թ.: Վերջինս ասել է շահին նաև «Վալախիայի իշխանի» (իմա՝ Միհայ Քաջ— Ս. Ք.) մասին իբրև սուլթանի, «մեծ և զորավոր թշնամու, որը «բազմիցս հաղթեց փաշաների և բեկլերբեկների» և ստիպեց վեզիր Սինանին «իր առաջից փախչելու և զորքը ցիրուցան անելու», վերցրել է Տրանսիլվանիայի իշխանի երկիրը, «և հաղթել է զորքերին», վերջապես նա վանեց նաև Մոլդովայի իշխանին և գտավ միայն այն ժամանակ իրենից ավելի ուժեղին, երբ Զամոյխսքին առաջացավ իր

փառասիրության դեմ: Ավելի քան 7 տարի շարունակ գնում-գալիս էր չափի մոտ կայսրի համար Պետրոս Գրիգորովիչ Հայի եղբայր Հովսեփը գեսպանությունը փոխելու և խորհուրդ տալու պարսիկներին ափ հանումը Դորբուշյում, գալիս է Պրագա, կայսրի մոտ մի «արքեպիսկոպոս Հայաստանի կաթողիկոսի եղբայր Դավիթ կոչվածը»⁶³: Սակայն 1615 թ.* իր վերջին գեսպանության ժամանակ հայ ականավոր գործչի կյանքի թելը կտրվում է եղբերական ձեռով, Մուղղավայում: Թուրքերի կողմից Մուղղավայի իշխան նշանակված Շտեֆան Տոմշան (1611—1615) լեհական կողմնորոշման հակամետ մուղղավացի ազնվականների դեմ սկսած իր հալածանքի ժամանակ, երբ մահապատժի ենթարկվեցին երեկի դեմքեր, ինչպես գրում է Կամենիցի տարեգիրքը, Պետրոս Գրիգորովիչին, որը Յաշում էր իբրև կայսրի և թագավորի գեսպանորդ, ձերբակալում և ջրամույն են անում, անշուշտ, նկատի ունենալով նրա հակասոմանյան դիրքորոշումը: Ուշագրավ է այն, որ ինչպես Պետրոս Գրիգորովիչի վերոնշյալ ստորագրությունը, այնպես էլ Կամենիցի տարեգրության տվյալը նրա մասին, անվան առումով, համընկնում են: Նա ստորագրել էր՝ «Տէր Գրիգոր օղլու Պետրոս», իսկ տարեգիրքը, նշելով նրա վախճանի մասին, գրել է. «Պետրոս Տէր Գրիգոր օղլու»^{64**}:

Չպետք է մոռացության տալ նաև Մուղղավայի հայերի ցուցաբերած կարևոր մասնակցությունը երկրի իշխան Գեորգե Դուկայի (1665—1666, 1668—1672 և 1678—1683) վարած հարկային ծանր քաղաքականության և վերջինիս օգնության հասած թուրք-թաթարական հորդանների ասպատակությունների դեմ ծավալված ազգային-ազատագրական հա-

* Թեև Ղ. Ալիշանը իր «Կամենիցում» այդ դեպքը նշել է 1616 թ., սակայն վերջինիս կողքին նա բերել է նաև ՌԿԳ, այսինքն 1615 թ. սեպտեմբեր: Սակայն հաճախ Ղ. Ալիշանը 551-ի տեղ ավելացրել է 552 տարի, այստեղից էլ նա նշել է 1616 թվականը, որը, սակայն, չի համապատասխանում Մուղղավայի իշխան Շտեֆան Տոմշայի զահակալության առաջին շրջանին, որը տևեց մինչև 1615 թ. նոյեմբերի 20-ը: Հայագետ Հ. Ճ. Սիրունին գեղես 1936 թ. ճիշտ կերպով բնութհել էր 1615 թ. (H. Dj. Siruni, Mărturi armenesti despre români, Extrase din Cronica armenilor din Camenița, p. I-a (1430—1611), București, 1936, p. 18.

** Պետրոս Գրիգորովիչը հեղինակել է նաև իր իշխանի՝ Միհայ Քաջի օրագրությունը, որը մեզ չի հասել, բայց այն իր ժամանակին օգտագործել է հունգար մատենագիր Ի. Սամուկչոգին: Գրիգորովիչի գործը գրված է ականատեսի, ինչպես նաև հավաստի աղբյուրների հիման վրա: Ուումին պատմաբանները բարձր են գնահատում հայ մատենագրի այս գործի փաստական ճշգրտությունը: Պրոֆ. Պ. Պ. Պանախտեսկուն կարծում է, որ ավստրիական շրջանակների համար ևս Գրիգորովիչը պետք է, որ գրած լինեի նաև Միհայ Քաջի մի ժամանակագրությունը:

մաժողովրդական շարժմանը, որը գլխավորում էր բոյար Հընկուլը: Սակայն շարժման պարտության պատճառով, ապստամբների դեմ կիրառված բուռն հալածանքների հետևանքով, նաև մեծ թվով հայեր 1672 թ. ստիպված կրկին դիմեցին գաղթի և ապաստան գտան նախ Կարպատյան լեռներում և ապա հրավիրվեցին Տրանսիլվանիա, ուր հետագայում հիմնադրեցին ծաղկյալ հայաքաղաքներ և այլ բնակավայրեր: Հայերի կողմից հիշյալ շարժմանը մասնակցելու մասին ակադեմիկոս Պ. Հաշ-դեուն գրել է. «Ամեն պարագայի հայերը կարող են իրենց հպարտ զգալ այն բանի համար, որ ինչպես անցյալում, նաև այս անգամ մեր պապերի հետ միասին զոհեցին իրենց կյանքը մեր հրկրի հաղթանակի համար»^{65*}:

Հայերը մոլդովական իշխանության հակաօսմանյան պայքարին, բացի անձնագոհ ականաւոր իշխաններ և զորավարներ տալուց, իրենց նպաստն են բերել նաև հրկրի պաշտպանության ամրապնդմանը՝ կառուցելով բերդեր: Յարգ շատ է գրվել ուումին նշանավոր արվեստաբանների կողմից հայ ճարտարապետության և քանդակագործության թողած ազդեցության մասին ուումինական պաշտամունքային հուշարձանների վրա. այդ բաժինն են վկայում ակադեմիկոսներ Դեորգե Բալշի, Ալ. Գիկա-Բուդեշտի, Պետրե Կոնստանդինեսկու-Յաշի, ինչպես նաև հետազոտողներ՝ Գրիգորե Յոնեսկուի, Կորինա Նիկոլեսկուի, Գլիա Բընըցեանուի, Յոն Սալա Նանուի և այլոց երկերը, սակայն ցարդ համարյա չի գրվել հրկրի պաշտպանության կետերի և ամրոցների կառուցման գործում հայերի բերած նպաստի մասին: Դեռևս մեր դարասկզբին ուումինահայ հայտնի հետազոտող Գրիգոր Կոչլավը հատկանշական է համարել, որ պատմական Մոլդովայի մայրաքաղաք Սուշավայում գտնվել են Մոլդովայի իշխանական բերդի հիմքերի քարերի վրա հայատառ ղփչաղերենով գրված արձանագրություններ, որոնք պահվում են նույն քաղաքի թանգարանում⁶⁶: Ինչպես հայտնի է, ղփչաղերենով է գրված նաև Կամենիցյան տարեգրության վերջին մասը, մի լեզու, որ գրվում էր հայերեն տառերով նաև Լեհաստանի հայերի կողմից, իրենց լեզուն մոռանալուց հետո:

Ռումին հայտնի արվեստաբան ակադեմիկոս Պետրե Կոնստանդինեսկու-Յաշը Մոլդովական պետության սկզբնավորման ժամանակ կառուցված Նեամցի բերդը համեմատում է Հայաստանի Ամբերդ հնագույն

* Մոլդովացի ականավոր գրող Ալեքսանդրու Հաթեուն իր «Ալբանացու տիրապետությունը» վիպակը նվիրել է այդ շարժմանը, լուսաբանել հայ առաջավոր գործիչների մասնակցությունը:

ամրոցի հետ⁶⁷։ Եվ վերջապես, ուումին ականավոր ճարտարապետ-պատմաբան, կադեմիայի թղթակից անդամ Վիրջիլ Վրտըշանուն նշում է, որ 1440 թ. կառուցված Աքքերմանի բերդի մի սալի եզրաքանդակները հայարվեստի ազդեցությունն ունեն⁶⁸։ Անշուշտ, վերոհիշյալներից բացի պետք է լինեն այլ ամրոցներ ևս, որոնք կրել են հայ արվեստի ազդեցությունը։ Սակայն այսօրան էլ բավական է ցույց տալու համար, որ երկրի պաշտպանողական կառույցների մեջ ևս հայ ճարտարապետներն ու քարագործ վարպետները իրենց լուծան են մուծել։

Ռումինահայերը դարերի ընթացքում բազմաթիվ հուշարձաններ են կառուցել իրենց համար։ Դրանց մեջ, սակայն, իր բերդանման կառուցվածքով աչքի է ընկնում Սուլավայի հայերի նշանավոր առաջնորդանիստ Ս. Օքսենտի կամ Զամբայի վանքը՝ կառուցված, հավանաբար, XVI դարի վերջին կամ XVII դարի սկզբին։ Այդ կառույցից դեպի արևմուտք, ինչպես մեզ պատմեց բնիկ սուլավացի հայազգի հնագետ պրոֆեսոր Գրիգոր Ֆոյթը, իր կատարած պեղումների ընթացքում երևան է հանել Սուլավայի հայոց երբեմնի հնագույն վանք-առաջնորդարանի բեկորները, որը և առաջնորդանիստ է եղել XIV դարի վերջից սկսած, իսկ 1401 թ. Սուլդովայի իշխան Ալեքսանդրու Բարիի հրովարտակով այնտեղ է եղել Սուլդովայի թեմական հոգևոր առաջնորդարանը։ Այդ հին կառույցը քանդվել է 1551 թ. իշխան Շտեֆան Ռարեշի՝ հայերի դեմ գործադրած հալածանքի ընթացքում, քանի որ ականատես Մինաս Թոխաթեցին Սուլավայում քանդված է հիշում նաև հայոց վանքերը⁶⁹, որոնք և առաջնորդանիստն ու Հաճկատարի (կառուցված 1512 թ.) վանքերը պետք է լինեին։ Ներկա կառույցը բաղկացած է երեք շենքերից՝ Զանգակատուն-աշտարակ, եկեղեցի և վանատուն։ Վանքը շրջապատված է ամրակուռ պարսպով, որը կառուցել է, ըստ Գրիգոր Դարանաղցու վկայությամբ, մուղղովահայ թեմի հոգևոր առաջնորդ, հայտնի գրիչ, մանրանկարիչ և բանաստեղծ Ղազար վարդապետ Բաբերդացին, XVII դարի քսանական թվականներին⁷⁰։ Զանգակատուն-աշտարակի երկրորդ հարկում է գտնվում ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված մատուռը, իսկ վանատուն-առաջնորդարանի երկրորդ հարկում՝ ս. Աստվածածին մատուռը՝ 4×6 մ մեծությամբ և որմնանկարներով զարդարված։

Բացի մուղղովահայերի առաջնորդանիստ կենտրոն լինելուց, Զամբան դարեր շարունակ եղել է վանական դպրոց, հայ գրչության և մանրանկարչության կենտրոն և ունեցել է մատենադարան։ Իր ամրակուռ կառուցվածքով Զամբայի վանքը միջնադարում իբրև ապաստարան է ծառայել հայերի և թաքստարան նրանց ունեցվածքի համար։

Օտարազգի ուղևոր Պոլ դ'Ալեպը վկայում է, որ 1653 թ. Մոլդովայում, ասպատակությունների ժամանակ ավերվում և թալանվում է նաև Սուլավայի հայոց Զամբայի վանքը: Սպանում են Մոլդովայի հայոց հոգևոր առաջնորդ Մինաս վարդապետին, ինչպես նաև վանքում ապաստանած հայ քահանաներին, վանականներին և այնտեղ գտնված հայերին: Ինչպես նշում է նույն ուղևորը, ասպատակողները թալանում են նաև հայերի ոսկին, մարգարիտները, անթիվ նուրբ գոհարեղենները և երկու տակառ ոսկեդրամները⁷¹: Այդ ժամանակ թալանվել են նաև վանքի մատենադարանն ու քաղաքի հայկական մյուս եկեղեցիների ձեռագրերը⁷²: 1672—1676 թթ. Մոլդովայից Տրանսիլվանիա գաղթի ժամանակ Զամբայի վանքում է ապաստանել Մոլդովայի հայոց թեմի հոգևոր առաջնորդ Մինաս Զիլիֆտար օղլու եպիսկոպոսը, որը Վենետիկում պահվող մի գրչագրի՝ 1676 թ. իր թողած հիշատակագրությունում նշել է Մոլդովայում տեղի ունեցած ավերածությունների մասին և որ ինքը Զամբայի վանքից չի հրաժարվել, մինչև իրեն երկիցս կողոպտել են և ապա մերկ վիճակով ստիպել գաղթողների հետևից գնալ Տրանսիլվանիայի Զուրջով (այժմ՝ Գեորգեն) քաղաքը⁷³: Որ հայերը մեծ գաղթից առաջ դարձյալ Զամբայում են պահել իրենց հարստությունները, վկայում է 1692 թ. օգոստոսի 5-ին Բիստրիցա քաղաքում, Տրանսիլվանիայի հայոց հոգևոր առաջնորդ Օքսենտ Վրզարյան եպիսկոպոսի կազմած «Գիւտարան գոյից» գույքացուցակը: Պրոֆ. Հ. Ճ. Սիրունո՛ւ Կլուժ-Նապոկայի դիվանում հայտնաբերած այդ մեծարժեք փաստաթղթում հիշվում է, որ ոսկեթել և արծաթաթել եկեղեցական թանկարժեք հանդերձանքներ, մարգարտաշար վարդերով զարդարված թագեր, արծաթյա խաչեր և ձեռագրեր պահված են եղել նույն Զամբայի վանքում⁷⁴:

Ակադեմիկոս Կ. Կ. Զուրեակուն ևս նշում է, որ Զամբան հայերի բերդանման առաջնորդանիստ վանքն էր⁷⁵: Զամբայի շրջապատը պեղող և վանքի ճարտարապետությունը առանձին ուսումնասիրություն նվիրած ճարտարապետ-պատմաբան Լ. Շիմանսքին գրում է. «Զամբան՝ անկասկած հանդիսանում է Սուլավայի հայերի կառուցած ամենակարևոր հոգևոր հուշարձանը, գերազանցելով մնացյալ բոլորին, ինչպես իր մեծությամբ, այնպես էլ արվեստով: Գտնվելով Սուլավայի արևմտյան ծայրամասում՝ Արենի կոչված բարձրավանդակում, նա ստացավ լեհական Զամբե կամ հոգնակի՝ Զամբի անունը, որը նշանակում է բերդ, ամրություն կամ ամրոց»⁷⁶: Անշուշտ, ավելի ճիշտ կլինի, եթե ասենք, որ ս. Օքսենտի կամ Զամբայի վանքը ոչ միայն Սուլավայի հայերի, այլև ընդհանրապես ռումինահայությունն ստեղծած բոլոր հուշարձաններից

ամենամեծ ճարտարապետական համալիրն է: Այն իր արտաքին պարսպով, բերդանման կառուցվածքով և դիրքով վաղուց է գրավել ռազմագետների, ճարտարապետների և պատմաբանների ուշադրությունը: Դեռևս անցյալ դարի վերջին ռումին ակադեմիկոս Դումիտրու Դանը նշում էր. «Զամբան՝ ցայսօր բարձրաբերձ, ստվար և թնդանոթ արձակելու ծակերով որմ մը կըրջապատե, և այս պատճառով հին ատենները իբրև բերդ կնկատվեր:

Կա նաև երկու խցիկ, ուր հրացան և թնդանոթ արձակելու և դիտելու որմածակեր կան: Դստիկոնին (վերնահարկ) մեջ, ինչպես գավթին կողմը պատերուն վրա հեցած քարեղեն նեցուկներեն կերևա, այս շենքին ներքին երեք կողմերն անցք մը կար, ուր կարելի էր մտնել նույն տեղն եղող խցիկներեն՝ անցնելով փոքրիկ տնակի մը և դրան մը մեջեն, որ այսօր պատով հյուսված է: Աշտարակ-զանգակատան մատրան վրա կա դիտանոց մը, որ ամենագեղեցիկ տեսք ունի քաղաքին վրա: Երկու դռնամարդակներու (իմա՝ դռների գերաններ) անջրպետն ամուր պատով փակված է, և ամբողջն այնպես ծեփված, որ մարդ հազիվ կը նշմարե պատի վրայի այդ դռնամարդակներ: Այս որմով փակյալ դռան ինչ բանի ծառայելն անմեկնելի է, վասն զի այս փակ դռուն մատուռը չի տանիր, մատրան մեջ նույն տեղն դրան հետք մը չկա: Կարելի է, որ այն դռան ետեն, որ աշտարակին եկեղեցվո կողման անկյան վրա կերևա, գաղտնի սենյակ մը ըլլա, ուր թանկագին իրեր պահված ըլլան և այս սենեկի դռնն ամուր պատով փակած ըլլան նշմարելու չափ ծեփված, և նաև այս դռան առջև գտնվող անցքը բարձող քարեղեն նեցուկներն կոտրած ըլլան այն սենեկին գոյության ամեն հետքը ջնջելու համար»⁷⁷: Ինչպես դարձյալ Դանն է հիշատակում, շրջապատող բովանդակ պարսպի ներքին կողմում մինչև այսօր երևում են բերդապահ զինվորների բնակության տեղի մնացորդներ⁷⁸:

Լեհաստանի արքա Յան Սոբեսկին ղեռ 1686 թ. հոկտեմբերին իր արշավանքից դարձին 14 օր մնաց Մուշավայում, մինչև կայսերական օգնական գնդի հասնելը: Ինչպես դարձյալ Դանն է նշում, այս ընթացքում միակ ամրությունը՝ Զամբան, հողաբլրով ամրացրեց, որը մինչև այսօր երևում է: Սկսած 1675 թ. և ավելի ուշ Մուղղովայի իշխաններ Դումիտրաշկու Կանտակուզինոն (1673, 1674—1675, 1684—1685) և ապա Կոնստանդին Կանտեմիրը (1685—1693), ինչպես նշում են Դանը և Վիքենհաուզերը, հարձակումներ գործելով Զամբայի վրա, վնասներ պատճառեցին⁷⁹: Սակայն 1691 թ. դարձյալ Սոբեսկին իր հակաօսմանյան արշավանքի ժամանակ ռազմական ճամբար էր դարձրել Զամբան: Այս

առիթով բարձրացրեց հյուսիսից, արևելքից և հարավից վանքը շրջապատող հողի ամրութունները՝ ճակատին խրամ և անկյուններին՝ ամբողջային բուրդեր, ու Զամբալում պաշտպան զորք թողեց: Միայն Կարլովիցի պալմանագրից (1699) հետո է, որ պաշտպան զինվորները Զամբալից և այլ վայրերից մեկնեցին: Զամբալի առաջնորդարանի կամ վանատան եռահարկ շենքը հատակին ուղղաձիգ բացվածք ուներ, որտեղից կարելի էր թշնամիների վրա եռացրած հեղուկներ թափել. այն ծառայում էր նաև որպես դիտակետ: Երկրորդ հարկում, բոլոր կողմերից պատահանների համար արտաքին ուղղանկյուն բացվածքներ կան, որոնցից մի քանիսը, կարծես, ավելի շուտ կրակակետեր են: Արտաքին պարսպի կողերը ամրացված են, ամրության եզրերը ունեն ոչ հավասար հեռավորություններ՝ 59 և 66 մետր, իսկ թեքումը՝ 70 և 74 մետր, պատերի հաստությունը 1 մետր է, իսկ այժմյան բարձրությունը արևմտյան եզրին շուրջ 4 մետր է⁸⁰: Բանասեր-մանկավարժ Լևոն Բաբայանը, դարասկզբին Թիֆլիսից գալով, նկատում է, որ զանգակատան աշտարակը շատ բարձր է և, ինչպես երևում է, վանքի բնակիչների համար երբեմն ծառայել է իբրև ապաստան⁸¹:

1809 թ. պատերազմի ժամանակ ավստրիական կառավարությունը Զամբան դարձրեց ռազմածրեքի պահեստ: Պատերազմի ավարտից հետո, իսկ հակառակ հայերի երկար դիմումներին, միայն 21 տարի անց, 1829 թ. այն հանձնվեց Սուլավայի հայ գաղութին: Հանձնման օրը գաղութը ամեն տարի նշում էր հանդիսավորությամբ և դարձրել էր մատակարար օր: Վանքում պատսպարվողների համար խիստ կարևոր էր նաև նրա բակում գտնվող խոր ջրհորը, որի ջուրը համարվում էր ամենալավը և սառնորակը*:

Խիստ ուշագրավ է նաև այն, որ Սուլավայում հայերի տները ևս պաշտպանական նկատառումներով էին կառուցված: Խումինահայ պատմաբան Գրիգոր Կոչլավը, ռումին գիտնական Դ. Դանի աշխատությունները կատարած իր հավելումներում ցույց է տվել, որ հայերի տները այնպես էին սարքված, որ հարկ եղած դեպքում կարող էին հաղորդակցվել: Չորս

* Զամբալի վանքը այժմ պետության կողմից պահպանվում է իբրև պատմական հուշարձան, համարվելով Խումինայի նշանավոր կոթողներից մեկը: Նրա մասին Լ. Շիմանսկու հեղինակությամբ մի քանի լեզուներով ուղեցույց-գրքույկ է հրատարակվել և նրա համաչափատկերով բացիկներ և նամակածրարներ են լույս ընծայվել:

Մասնակի նորոգումից հետո Զամբալի վանքի վերաբացումը տեղի ունեցավ 1984 թ. օգոստոսին, («Էջմիածին», 1984 թ., № Ժ, էջ 49):

կամ ավելի տները առանձին կղզի էին կազմում և թուրքերի կամ թաթարների հարձակման դեպքում ծառայում իբրև ապաստարան⁸²։

Մուղղովայում և հատկապես նրա մայրաքաղաք Յաշում շարունակում էր գոյատևել աղեղնագործությունը։ Նորանոր պատմական փաստերը վկայում են, որ այս մասնագիտության մեջ որոշակի դեր են ունեցել նաև հայ աղեղնագործները։ Այդ արհեստը շատ հին էր Յաշում։ Ռումին պատմաբաններ Դան Բըղըրըուի և Յոան Կապրոշուի նորահայտ ավյանների շնորհիվ մեզ հայտնի է դառնում, որ Յաշի «Աղեղնագործություն» կոչված հնագույն փողոցը անմիջական հարևանության մեջ էր գտնվում նույնքան հին «Հայնոց» կամ «Հայկական փողոցին» և որ աղեղների պատրաստման արհեստը շարունակվում էր մինչև XVIII դարի առաջին տասնամյակները⁸³։

Մուղղովայի հայերը գեռ փոքրուց ձիավարությունյան գիտակ էին, իսկ նրանց բուծած ձիերը մեծ պահանջարկ ունեին արտասահմանում, նույնիսկ հեռավոր շուկաներում։ Դանը նշում է, որ կարավանները ապրանք էին տեղափոխում ձիերի վրա, իսկ ունևոր հայերը Մուղղովայում մեծ տոնի օրերին գեղեցիկ և սպիտակ արաբական ձիերով էին երթևեկում⁸⁴։ Ապրանքատար կարավաններով արևմուտքը արևելքի հետ կապող հայերը ուղևորվում էին լավ զինված։ Մուղղովայի տարբեր քաղաքներում ստեղծված հայկական կտրիճների կամ պատանիների եղբայրությունները ևս կարևոր նպաստ էին բերում ձիավարությունյան և զինավարժության զարգացմանը հայ երիտասարդների շրջանում։ Կվովում, մեզ հայտնի է, որ XVII դարից հայ երիտասարդությունը ձիարշավներ էր կազմակերպում ս. Խաչ եկեղեցու մոտ գտնվող դաշտում⁸⁵։ Լեհահայերը չէին սիրում կառավարության կողմից, բոլոր բնակիչների նման, իրենց ևս հարկադրված ռազմական փորձերը։ Նրանք իրավացի կերպով նշում էին, որ իրենց երիտասարդները զինավարժության կարիք չունեն, քանի որ նրանք 16—18 տարեկանից առևտրական գործերի պատճառով տանից ստիպված բացակայում էին մեկ կամ մի քանի տարով։ Ահա և այդ կարավանների կատարած երթևեկությունների ընթացքում նրանք վարժվում էին հրացանաձգության մեջ, էրե կարավանի վրա հարձակվում էին թաթարների և կողոպտիչների խմբեր, որոնցից պաշտպանվելու համար երիտասարդությունը զենքի էր դիմում։ Միաժամանակ հայերը նշում էին. «Աստված մի արասցե, եթե՝ թշնամին հարձակվի քաղաքի վրա, այն ժամանակ մեզանից և մեր երիտասարդներից յուրաքանչյուրը ի գործ կդնի իր զենքը, շնորհքն ու հմտությունը»⁸⁶։ Սրա լավագույն ապացույցն են Լեհաստանի արքա Յան Սոբեսկու՝ 1685 թ. հունիսի 6-ի դրվատալից

խոսքերը՝ ուղղված հայերին նրանց ցուցաբերած դարավոր քաջության վերաբերյալ, երկրի սահմանային բերդերը պաշտպանելու գործում⁸⁷։ Ե՛վ Մուղովայի, և՛ Լեհաստանի հայկական գաղթավայրերում նույնն էին սովորույթներն ու բարքերը, հետևաբար նույնն էր նաև նրանց ռազմական պատրաստականությունը, քանի որ Մուղովայի շատ հայեր ծագում էին լեհահայ գաղութից և միասին էլ հաճախ անցնում կարավանային բազում արկածալի ճանապարհներ։ Ահա և իրենց ռազմական պատրաստության շնորհիվ է, որ նրանք մասնակցում էին նաև Մուղովայի պաշտպանությանը։

Մուղովայի հայերը տարբեր երկրներից ներմուծում էին պերճանքի առարկաներ, նաև թանկագին քարերով զարդարված զենքեր, որոնք հետագայում սկսեցին արտադրել նաև տեղում։ Լվովում հայկական էին կոշվում մի շարք ապրանքներ, այդ թվում և զենքեր՝ զարդարված փորագրություններով ու թանկագին քարերով, ձիու սարքեր, կապարճներ, աղեղի պատյաններ և այլն։ Հայազգի նշանավոր ռակերիչ Գրիգոր Կամենեցկու պատգամած ձիու սարքը Լվովից հասնում էր մինչև Վալախիա⁸⁸։

Մուղովայում և նրան հարակից երկրներում ապաստան գտած հայերի հայրենասիրական տրամադրությունների է՛լ ավելի կայունացման գործում, անկասկած, կարևոր նշանակություն պետք է ունեցած լինեին XVII դարի վերջում հայ ժողովրդի ազատագրության մեծ ռահվիրա Իսրայել Օրու կատարած ուղևորությունները նաև Մուղովայում, Վալախիայում և Տրանսիլվանիայում, ուր, ամենայն հավանականությամբ, ինչպես հայերի, այնպես էլ տեղացիների մեջ նա լուծեցավ համախոհներ։ Այս առումով էլ բնավ պատահականության արդյունք չպետք է համարել Պետրոս Մեծի արքունիքում Օրու՝ Հայաստանի ազատության գործին մեծապես սատարող, Մուղովայի զավակ, հումանիստ և գիտնական, նախկինում Մուղովայի և Վալախիայի մեծ սպրտար (գորահրամանատար) Նիկոլայ Միլեսկուի (1636—1708) հանդես գալը, ինչպես նաև ավելի ուշ Օրու՝ դեպի Պարսկաստան իր դեսպանության համար նախատեսված շքախմբում երկու տրանսիլվանացիների՝ Սիմոն Վենիտերի, որ Կրոնշտադտ (Իմա՝ Բրաշով) քաղաքից էր, և Անդրեյ Հարիտոնովի ներկայությունը⁸⁹։ Այս առումով միանգամայն ճիշտ էր կռահում ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, երբ նշում էր, որ ազատագրական լեզենդի նոր վերախմբագրման ժամանակ Օրին ներշնչումներ էր ստանում նաև Մոսկվայում՝ շփման մեջ գտնվելով Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքին ու լեզուներին ծանոթ և դեսպանական ատյանում թարգմանի դեր

կատարող Նիկողայոս Սպաթարի (իմա՝ Նիկողայն Միլեսկու) հետ, որ նշանավոր այդ մատենագիրն ու քաղաքական գործիչը, ինչպես ակնհերև է նրա ժառանգությունից, լավ տեղյակ էր սիբիրյան հին գրքերին և կարող էր ազդած լինել Օրու հայացքների ձևավորման վրա: Նրանից կամ այլ աղբյուրներից Օրին կարող էր իմացած լինել թերևս մի լեզանդ, որ տարածված էր հույների մեջ: Ոմն Ագաթանգեղոսի (իմա՝ Ագադրոն) մի «մարգարեութուն» էր դա, թե «հյուսիսից պիտի գա շիկահեր մի ժողովուրդ, «Русый народ», տապալի մուսուլմանների լուծը և խաչ բարձրացնի մահիկի վրա»:

Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նշում է նաև, որ «Թուրքերի դեմ Օրին և Սպաթարը հետամուտ էին ապահովել ոչ միայն հայերի ու հույների (մենք կասեինք նաև մոլդովացիների, քանի որ վերջինս մոլդովացի էր, այդ երկրում էր ծնվել և այդտեղից էր գնացել Մոսկվա), այլև սրանց ու վրացիների համագործակցությունը: Հավանական պիտի համարել Սպաթարի գաղափարական կապը ոչ միայն Օրիի, այլև Արշիլի հետ»⁹⁰: Միլեսկուն 1671 թ. էր հաստատվել Մոսկվայում, որտեղ և 1673 թ. սլավոններենի էր թարգմանել վերոհիշյալ սիբիրյան գիրքը⁹¹: Միլեսկուն Օրիի՝ Ռուսիայի ներկա տարածքը կատարած այցի ժամանակ այնտեղ չէր արգեն, սակայն նա Միլեսկուի բարեկամներից կարող էլ տեղեկություններ ստանալ և նրան ուղղված հանձնարարականներ ունենալ իր ձեռքում, որոնք և հետագայում պիտի նպաստեին նրանց սերտացմանը: Միլեսկուն ոչ միայն նշանակված էր Ռուսաստանի դեսպանական ատյանի թարգմանիչ, այլև դիվանագիտական գրասենյակի թարգմանիչների պետ⁹²: Նա դիվանագիտական գործունեություն է ծավալում մինչև Զինաստան, մասնակցում Պետրոս Մեծի Ազովի հակաթուրքական պատերազմին: Միլեսկուն իր երկերից մեկը ձոնելով Պետրոս Մեծին, գրել էր. «Ռուս թագավորի ուժեղ ձեռքը ազատագրելու է Մոլդովան և բալկանյան ժողովուրդներին, որոնք տընքում են թուրքական բռնակալական լծի տակ...»⁹³:

Հայագետ և արևելագետ Հ. Ծ. Սիրունին, հիմնվելով Կ. Եզյանի հրատարակած վավերագրերի և այլ աղբյուրների վրա, հատուկ կանգ է առել Միլեսկուի գործադրած այն երկարատև ճիգերի վրա, որոնք նոր ուղի էին հարթելու հայ ժողովրդի ազատագրության գործում: Փաստերը վկայում են, որ սկսած 1701 թ. հուլիսի 2-ից մինչև 1707 թ. ապրիլը, այսինքն՝ Օրու ռուսական կողմնորոշման սկզբից մինչև նրա Պարսկաստան մեկնելը, հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների մշակման գործում ամենուրեք հիշվում է Միլեսկուի կատարած եռանդուն

գործունեության մասին: Վերոհիշյալ տրանսիլվանացի Հարիտոնովը դեռևս 1707 թ. նշում էր, որ Միլեսկուն տեղյակ էր Պարսկաստան կատարելիք Օրու ուղևորությանը: Այսպիսով, անգամ իր կյանքի վերջում, երբ 71 տարեկան էր, նա միշտ ներկա էր հայ-ռուսական դիվանագիտական բանակցություններին: Ռուս կանցլեր Գոլովինի և մոլդովացի Միլեսկուի ջանքերը բարձր են գնահատվել մեխիքների կողմից, որոնք 1703 թ. մայիսի 27-ին ութ ստորագրություններով իրենց երախտագիտությունն են հայտնի նրանց՝ հայկական դատին ցուցաբերած օգնության համար:

Երկար տարիներ անց, 1736 թ. Օրու զինակիցն ու հաջորդը՝ Մինաս Վարդապետ Տիգրանյանցը, գեներալ Ս. Ա. Սալտիկովին գրելով 1701 թ. Մոսկվայում իր կատարած ուղևորության մասին, դարձյալ անդրադառնում էր Միլեսկուի ցուցաբերած օգնությանը: Միանգամայն իրավացի է Հ. Ծ. Սիրունին, որ, նկատի ունենալով Միլեսկուի օգնությունը, եզրակացնում է, գրելով, որ նա գործուն օգնություն է ունեցել սկզբից և՛ հայ-ռուսական բարեկամության ամրապնդմանը, ինչպես նաև միաժամանակ նպաստել հայ ժողովրդի աղատագրական շարժմանը: Այսպիսով, Մոլդովայի դավակ Միլեսկուն հայերին բերած օգնությամբ ի հայտ է գալիս իբրև անկեղծ բարեկամ և հայկական հարցը սրտով զգացող, այնպիսի պատմական մի պահի, երբ հայերը, գտնելով ռուսական կողմնորոշման ճիշտ ուղին, առաջին քայլերն էին անում իրենց ազգային տենչանքների իրականացման ճանապարհին⁹⁴:

Կարևոր է նաև նորահայտ վավերագրերի սփռած լույսը, որով հայտնի է դառնում, որ Հայաստանի ազատագրության շարժմանը իրենց մասնակցությունն էին ուզում ցուցաբերել նաև Մոլդովայում ապաստանած հայերը: Այսպես, 1720-ական թվականներին, երբ Հայաստանում ծավալվում էին ազգային-ազատագրական շարժումները, դրանց արձագանքները հասել էին մինչև Արևելյան Եվրոպայի հայ գաղութները, և այնտեղ ապաստանած հայերը ևս անմասն չէին ուզում մնալ իրենց հեռավոր հայրենիքի անկախության սրբազան գործից: Պատմաբաններ Վ. Պարսամյանի, Վ. Ոսկանյանի և Վ. Մարտիրոսյանի հայտնաբերած փաստաթղթերից հայտնի է դառնում, որ Կամենեց-Պոդոլսկում 500 մարդ էր հավաքվել, որոնք բոլորն էլ ցանկանում էին գնալ հայկական սղնախներ՝ տեղի հայերին օգնելու համար: Կամենեց-Պոդոլսկի հայ պատվիրակները հայտնում էին, որ Լեհաստանում, Վալախիայում, Հունգարիայում և այլ վայրերում ևս մեծ թվով հայեր կան, որոնք ուրախությամբ կանցնեին Ռուսաստանի տիրապետության տակ և սղնախներին օգնության կգնային: Նրանք հայտնում են նաև, որ թուրքերի հարձակման հե-

տեւանքով շատ հայեր ստիպված հեռացել են և հաստատվել Արեւելյան Եվրոպայի զանազան գաղթավայրերում: Հայտնի է դառնում նաև, որ նշված հայերը զինվորական մարդիկ են, բայց այդ բանը թաքցնում են և տեղից տեղ են թափառում, զբաղվում առևտրով: Նրանցից ոմանք նաև ձի և հրացան ունեն: Բայց երբ նորին կայսերական մեծության հրամանով թուլլատրվի Ռուսաստան գալու, ապա բոլորը կգան, թե նրանք, ովքեր ի վիճակի են զինվել, թե նրանք, ովքեր հնարավորություն չունեն հրացան և ձի ձեռք բերել՝ կգան առանց դրանց և նորին մեծության հրամանի համաձայն, այսինքն, եթե կարգադրվի, որ բոլորը գան հրացաններով կամ առանց դրանց, նրանք կգան հենց այնպես՝ իրենց սեփական հաշվով Ռուսաստանով անցնելու համար, չցանկանալով նորից կայսերական մեծությունից որևէ օժանդակություն ո՛չ դրամով, ո՛չ սնունդով, ո՛չ սալներով, միայն թե իրենց Ռուսաստանով անցնելու ազատ և անհապաղ իրավունք տրվի:

Այս շարժմանը եռանդուն ղեկավարություն է ցույց տալիս Իսրայել Օրու վաղեմի ընկերներից, Հայաստանի ազատագրության համար պայքարող Մինաս վարդապետ Տիգրանյանցը: Վերջինս նամակ ստանալով Կամենեց-Պոդոլսկի հայերից 1728 թ. փետրվարի 1-ին, այդ մասին հայտարարություն է արել Արտաքին գործերի կոլեգիայում, իսկ նույն 1728 թ. մարտի 13-ին Արտաքին գործերի կոլեգիան Մինաս վարդապետին բանավոր հայտարարել է, որ նա գրի իրեն ղեմող հայերին, որ նորին կայսերական մեծությունը ողորմածաբար բարեհաճեց թույլ տալ Ռուսաստանով Պարսկաստան անցնել կամ նրանց, ովքեր կցանկանան քնակություն հաստատել և ապրել Ռուսաստանում, այստեղ գան Կիևի վրայով, անպայման իրենց միջոցներով, ինչպես նրանց ներկայացուցիչները հայտարարել են:

Մի այլ վավերագրից պարզվում է, որ Մոսկվա ժամանած Պետրոս Խաչատուրովը Պարսկաստանի խառնակությունների ժամանակ ուղևորվել է Կ. Պոլսի վրայով իր եղբոր՝ Գրիգոր Ստեփանովի մոտ, որը վաճառական է և նրա մոտից իր կամքով եկել է այստեղ և ցանկանում է գնալ հայկական սղնախներ: Իսկ մնացած եկվոր հայերը Մինաս վարդապետին իրենց մասին հայտնել են, որ բոլորը թեև ունևոր չեն, բայց զինվորականներ են, և Պարսկաստանից խառնակությունների և խռովության ժամանակ, որից անցել է արդեն 6 տարի, իրենք եղել են Թուրքիայում, Վոլոսկի երկրում և Լեհաստանում, որտեղ իրենց ապրուստի համար տոնավաճառներին տեղից տեղ գնալով, եկել են այստեղ: Եվ այսպես, 23 հայեր սղնախներ գնալու համար Կամենեց-Պոդոլսկից Մոսկվա են

եկել, որոնցից առաջինը հիշվում է Պետրոս Խաչատուրի որդին, ապա Գրիգոր Ստեփանի որդին և ուրիշներ: Հետագա նշութերը ցույց են տալիս, որ մինչև Մոսկվա գալը Գրիգոր Ստեփանյանը ապրել էր Իզմայիլում և Կամենեց-Պոդոլսկում, զբաղվել առևտրով և զինվորական գործով: Մոսկվայում, ամենայն հավանականությամբ, նա նշանակվում է սղնախներ մեկնող հայերի հրամանատար: 1728 թ. Գրիգոր Ստեփանյանը 22 հոգուց բաղկացած իր խմբով Մոսկվայի—Ցարիցինի—Թերեֆի վրայով գալիս է Բաբու և ներկայանում այդտեղ գտնվող ռուսական զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ռումյանցևին: Անհրաժեշտ ռազմական օժանդակություն և հրահանգներ ստանալուց հետո, Գ. Ստեփանյանի ջոկատն անցնում է սղնախներ, միանում տեղի հայկական զինված ուժերին և ակտիվ մասնակցություն ունենում 1728—1730 թթ. ազատագրական կռիվներին: Գրիգորն ստանում է յուզբաշու (հարյուրապետի)⁹⁵ կոչում: Վերոհիշյալ Վոլոսկի կամ Վալախիայի երկիրը աշխարհագրականորեն համապատասխանում է Մոլդովային, քանի որ լեհական աղբյուրներում, ինչպես և լեհահայերի կողմից Մոլդովան կոչվում էր Վալախիա, իսկ հիշատակվող Իզմայիլ քաղաքը, ուր բնակվել էր ապագա հարյուրապետ Գրիգոր Ստեփանյանը, Մոլդովայի մի մասն էր կազմում: Հավանական է, որ Մոլդովայից և Հունգարիայից (իմա՝ Տրանսիլվանիա) հայրենիք վերադառնալ ցանկացողների մեջ պետք է լինեին նաև տեղացի հայեր:

Հայ ժողովրդի ազատագրական շարժումների նկատմամբ ունեցած հայերի ցուցաբերած հետաքրքրության մասին են խոսում նաև նրանց խոշորագույն կենտրոններից Բոտոշանի հայ գաղութի ունեցած կապերը Հնդկաստանի Մադրաս քաղաքի հետ, որն այն ժամանակ Հայաստանի ազատագրական տենչանքների և լուսավորյալ ծրագրերի խոշորագույն կենտրոններից էր: Այդ հարաբերությունների լավագույն ասպցույցն է հայագետ Հ. Ճ. Սիրունու՝ Բոտոշանում հայտնաբերած և 1967 թ. ֆրանսերենով լույս ընծայած այն վավերագիրը, որը 1786 թ. Մադրասից ուղարկել էր հայ ազատագրական շարժման Մադրասի խմբակի ռահվիրա Շահամիր Շահամիրյանի որդի Եղիազար Շահամիրյանը: Վերջինս նկատի էր առել այն հանգամանքը, որ Բոտոշանը մոլդովահայերի ամենաբազմամարդ կենտրոնն էր, սկսած XVIII դարից մինչև XIX դարի կեսերը, և գաղթավայրում որոշակի դիրք էր գրավում: Այդ փաստաթուղթը Մադրասից ուղարկված պետք է լինեի ուղղակի Բոտոշան՝ համահայկական նշանակություն ունեցող հայ ազատագրական շարժմանը մոլդովահայերի համագործակցությունը ապահովելու նպատակով: Անկասկած է,

որ Բոստոշանի, ինչպես նաև բովանդակ Մոլդովայի հայերը ոչ միայն իրենց հավանությունը պետք է տված լինեին հիշյալ նախագծին, այլև, ինչպես երևում է հայերեն բնագրի կողքին ղուգահեռ բերված նախագծի ռումիներեն թարգմանությունից, ցանկացել են իրենց ազատագրական մտորումներին և ծրագրերին տեղյակ պահել նաև Մոլդովայի, գուցե և Վալախիայի իշխանությունների ղեկավարներին, նրանցից ևս խորհուրդ և օգնություն ակնկալելու հույսով, չէ՞ որ թե՛ Մոլդովան, թե՛ Վալախիան տենչում էին ազատագրվել օսմանյան դարավոր լծից: Այդ նախագծի խորագիրն է. «Հայոց ազգին և աշխարհին նախազգուշություն, ի հայրապետութեան տեսուն Ղուկասու սրբազան կաթողիկոսի, ի Վաղարշապատ»: Ինչպես նկատում է Հ. Ճ. Սիրունին, Բոստոշանի նորահայտ փաստաթղթում արձանագրված է Հայաստանի ազատագրության նախագիծը և ժամանակագրորեն հաջորդում է 1772 թ. հրատարակված «Նոր տեսութակ, որ կոչի հորդորակին» և 1773 թ. «Որոգայթ փառացին»: Ինչպես երևում է, հակառակ իրենց դեմ ստեղծված խոչընդոտներին, Մազրասի հայրենասերները չեն հուսահատվում: Այս անգամ նախաձեռնությունը պատկանում է Շահամիր Սուլթանում Շահամիրյանի ընտանիքի անդամներից մեկ ուրիշին՝ Եղիազար Շահամիրյանին: Այդ նախագիծը պատրաստվել էր՝ բոլոր կարևոր հայկական համայնքներին իրազեկ դարձնելու և նրանց հավանությունը ևս ստանալու համար⁹⁶: Դժբախտաբար, այդ վավերագրի վերաբերյալ հետագայի նյութերը մեզ չեն հասել:

Հաջորդող տարիներին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի՝ մոլդովահայ բոլոր հայաշատ կենտրոններ կատարած այցելությունները նրա կողմից տպագրված հայրենասիրական գրքերի մեծ տարածումը տեղի հայերի մոտ և ստեղծված բուռն ոգևորությունը վկայում են այն մասին, որ Մոլդովայի հայերը ջերմորեն հավատում էին հայ ժողովրդի ազատագրական մեծ գործին և իրենց ստրկացված հայրենիքի լուսավոր ապագային: Ինչպես հայտնի է, Հովսեփ Արղությանը, իբրև հայ ազատագրական շարժման ռահվիրաներից մեկը, Մոլդովայի Յաշ մայրաքաղաքում կազմեց ղեկուցագիր՝ նվիրված Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրությանը, և 1790 թ. այն ներկայացրեց իշխան Գ. Ա. Պոտյոմկինին: Արղությանի հետ միասին, այդ օրերին բացառիկ ցնծության մեջ պետք է լինեին նաև Յաշի և բովանդակ Մոլդովայի մյուս հայաշատ կենտրոնների հայերը:

Հայերի՝ ուռմին ժողովրդի հետ մղած դարավոր համատեղ պայքարը բնորոշում օսմանյան առաջատակող զորքերի, ինչպես նաև օտարերկրյա այլ զավթիչների, շարունակվեց նաև հետագայում:

Այսպիսով, միջնադարյան Մոլդովայում և Վալախիայում դարեր շարունակ հյուրընկալված և առանձնաշնորհումների արժանացած հայերն իրենց նպաստն են բերել երկրի անկախության պահպանության և օսմանյան բանակների դեմ մղված պայքարին: Հայերը ոչ միայն երկրի բանակին պարգեւ են զինվորներ ու զորամասեր, այլև զորապետներ, ականավոր զինանագետներ, որոնք մաքառել են օսմանյան բանակների առաջխաղացման դեմ, տարբեր քրիստոնյա ժողովուրդներից համադաշնակցություն ստեղծել: Հայերը երկրին տվել են իշխաններ, որոնք ազատության և պայքարի դրոշ են պարզել զավթիչների դեմ, հերոսի մահով ընկել անհավասար կռիվում և անմոռաց անուն թողել ռումին ժողովրդի պատմության ոսկեմատյանում: Հայերը միաժամանակ իրենց նպաստն են բերել երկրի ամրոցաշինարարության գործում, կառուցելով ամրոցներ, բերդանման վանք, պաշտպանողական բնակելի տներ: Նրանք հմուտ են եղել նաև ձիավարության, զինագործության և դենքերի օգտագործման մեջ: Հայերն արյան գնով պայքարում էին օսմանյան բանակների դեմ, համոզված, որ Մոլդովայի և Վալախիայի ազատագրումից հետո մի երջանիկ օր բախտը կվիճակվի նաև իրենց հայրենիքի անկախության վերականգնմանը:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ C. C. Giurescu, D. C. Giurescu, Istoria românilor, ed. II, București, 1975, p. 315—316.

² Գրիգոր Դարանաղի կամ Կամախեցի, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915, էջ 12:

³ Գ. Ապանյան, «Շողակաթ», 1953, էջ 258. հմտ. Հ. ձ. Սիրունի, Պոլիս և իր դերը, հ. 1, 1453—1800, 1965, Պելյուսթ, էջ 182:

⁴ Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 346:

⁵ Գրիգոր Դարանաղի, նույն տեղում, էջ 125:

⁶ P. P. Panaitescu, Mihai Viteazul, 1936, p. 61.

⁷ H. Dj. Siruni, O năvălire necunoscută a bandelor turcești în Țările Române la 1769, București, 1940, p. 37.

⁸ «Կոռնկ Հայոց աշխարհի», Թիֆլիս, 1863, օգոստոս, էջ 419—448:

⁹ «Նոր կյանք», Բուխարեստ, 1955, № 16(25), էջ 3:

¹⁰ Donado da Lezze, Historia Turchesca (1300—1514), ed. I. Ursu, București, 1909 pp. XLVI, 189.

¹¹ N. Grigoraș, Instituții feudale din Moldova. Organizarea de stat până la mijlocul sec. al XVIII-lea, București, 1971, p. 347.

¹² N. Iorga, Armenii si Românii; O țară veche istorică (Gr. M. Buiuciu 1840—1912), București, 1914, p. 64.

13 С. Коланджян, Сучава, как центр средневековой культуры армян в молдавском княжестве, «Общественное сознание на Балканах в средние века», Калинин, 1982, с. 73—88.

14 P. P. Panaitescu, նույն տեղում, էջ 61.

15 P. P. Panaitescu, Viața feudală ... p. 435.

16 N. Grigoraș, նույն տեղում, էջ 348.

17 Վլադ Բրեքեանու, Հայկական ծագում ունեցող բարձրաստիճան պաշտոնյաները ին Մոլդովայում, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, Երևան, էջ 269:

18 Исторические связи народов СССР и Румынии в XV—начале XVIII вв., т. I, 1408—1632, М., 1965, с. 70—71.

19 Բոտիխա Չոխան, Մոլդովայի հայ ազգաբնակչության դերը Մեծն Շեքիանի ժամանակ, «Նոր կյանք», Բուխարեստ, 1957, № 161 (359), էջ 3:

20 Nicolae Stoicescu, Dicționar al marilor dregători din Țara Românească și Moldova, sec. XIV—XVII. București, 1971, pp. 334—335.

21 Վլադ Բրեքեանու, նշվ. աշխ., էջ 278—280: Documente privitoare la Istoria Românilor culese de Hurmuzaki. v. II, p. I-a, (1451—1575), p. 240. Hurmuzaki, v. XV, p. I-a, pp. 401—462.

22 N. Stoicescu, նշվ. աշխ., էջ 334, ծանոթ. 5:

23 Վլադ Բրեքեանու, նշվ. աշխ., էջ 280:

24 Վլադ Բրեքեանու, նշվ. աշխ., էջ 280: Դ. Ղուբիկյան, Վարդիկները միջնադարյան ուսմանական ժողովրդական երգերում, ՊՐԶ, 1962, № 4, Հովհ. Գալիպցյան, Ռումանահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 219: B. P. Hașdeu, Ioan Vodă cel Cumplit, București, 1978, p. 22.

25 Տե՛ս նաև Ս. Քոլանջյան, Յոան Քաջ կամ Հայր, ՀՍՀ, հ. 8, 1982, էջ 128:

26 Gr. Ureche, հմմտ. B. P. Hașdeu, 58.

27 Goreki, Descriptio belli Ivoniae Voivodae Valachiae, Francofurti, 1565, հմմտ. B. P. Hașdeu, 26.

28 Dimitrie Cantemir, Descrierea Moldovei, București, 1973, p. 139.

29 Cronicile slavo-române. ed. P. P. Panaitescu, p. 148.

30 Dinu Giurescu, Ioan Vodă cel Viteaz, București, 1974, p. 4.

31 Documente turcești privind Istoria României, vol. I, 1455—1774, Intocmit de Mustafa A. Mehmed, București, 1976, p. 115—116, doc. № 123.

32 Goreki, նույն տեղում, էջ 31:

33 Исторические монографии и исследования Николая Костомарова... т. 2, СПб., 1963 с. 12.

34 B. P. Hașdeu, նույն տեղում:

35 I. Cupșa, Arta militară a moldovenilor în perioada domniei lui Ioan Vodă cel Cumplit, București, 1959, pp. 86—102.

36 D. C. Giurescu, նույն տեղում, էջ 82:

37 Ղ. Ալիշան, Կամենից, Տարեգիրք Հայոց կենսատանի և Ռումենիոյ հաւաստեալ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 44—45, 48—49 և այլն:

38 Հ. Ճ. Սիրունի, «Արագ», տարեգիրք, Ա տարի, 1933, Բուխարեստ, էջ 116:

38 Վ. Ռ. Գրիգորյան, Յաշ բաղաբույս հայկական դատարանի գոյության մասին վկայող մի ուշագրավ վավերագիր, *Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ հաս. գիտությունների, երևան, 1961, № 9*:

39 D. C. Giurescu, էջ 84:

40 Կամենից, էջ Թ:

41 B. P. Haşdeu, էջ 164:

42 H. M. Кaramзин, История государства российсого, СПб., т. X, 1824, зам. 193.

43 Կամենից, էջ 48:

44 D. C. Giurescu, էջ 88:

45 B. P. Haşdeu, էջ 184: Տե՛ս նաև Ս. Քոլանջյան, *Կարապետ Յոան Պոտկոպլը, շՄՀ, հ. 8, 1982, էջ 128*:

46 N. Iorga, Pretendenții domnești... „Anal. Academiei Române“, ser. II. Tom XIX, 1896/1897, București, 1897.

47 Կամենից, էջ 49:

48 N. Iorga, Pretendenții... Doc. Hurmuzaki, v. III, p. 13. Տե՛ս նաև Ս. Քոլանջյան, *Ալեքսանդր Սերպիկա, շՄՀ, հ. 1, 1974, էջ 154*:

49 A. D. Xenopol, Istoria Românilor, v. V, p. 87.

50 D. C. Giurescu, էջ 90:

51 Նույն տեղում, էջ 90:

52 A. D. Xenopol, Նույն տեղում, հ. 4, էջ 125:

53 Նույն տեղում, էջ 126: Lucian Predescu, Enciclopedia Gugetarea, București, 1940, p. 656.

54 N. Iorga, Studii și documente, v. XXIII, pp. 432—433.

55 Կամենից, էջ 53—59:

56 Lucian Predescu, Enciclopedia „Cugetarea“ București, 1943, p. 479.

57 Călători sirăini despre țările române, v. VI, București, 1976, p. II-a Evlia Celebi, p. 717.

58 «Նոր կյանք», Բուխարեստ, 1955, № 16 (254), 15 ապրիլի, էջ 3:

59 T. Holban, Boierii lui Mihai Viteazul. boierii țără ranguri, „Arhiva“, Iași, 1930, № 37, p. 179.

✓ 60 Գ. Գրիգորյան, Հայերու մասնակցությունը միջնադարյան Ռումանիո գիվանագիտական կյանքին մեջ, ՊԲՀ, 1960, № 3:

61 Գ. Գրիգորյան, Պետրոս Գրիգորովիչի գերբ Միհայ Վեթեպուլի արտաքին քաղաքականության մեջ, «Նոր կյանք», Բուխարեստ, 1961, № 7 (355), 17 փետր., էջ 5: Տե՛ս նաև Ս. Քոլանջյան, Գրիգորովիչ Պետրոս, շՄՀ, հ. 3, 1977, էջ 228:

62 N. Iorga, Armenii și Românii... p. 66. I. N. Angelescu, Histoire économique des roumains, I. Paris.—Genève, 1920, p. 293.

63 «Նոր կյանք», Բուխարեստ, 1955, № 16 (254), 15 ապրիլի, էջ 30:

64 N. Iorga, Armenii și Românii... p. 66.

65 Կամենից, էջ 77, Istoria oraşului Iaşi, v. I, Iaşi, 1980, p. 217. Գֆշադերենից Քարգմանությունը տե՛ս H. Dj. Siruni. Mărturii armenesti despre români. Extrase din Cronica armenilor din Camenița, p. I-a (1430—1611), București, 1936, p. 18.

- ⁶⁵ B. P. Hașdeu, *Istoria toleranței religioase în România*, 1865, p. 61—63.
 Տե՛ս նաև Ս. Քոլանջյան, *Գրական կապերի պատմությունից, «Գրական թերթ», 1976, № 15 (1879), էջ 6: Նույնի՝ Հաժդեու Ալեքսանդր, Հե՛շ, հ. 6, էջ 6:*
- ⁶⁶ Grigore Goilav, *Armenii intemeitori de orașe în partea de răsărit a Europei, București*, 1909, p. 16.
- ⁶⁷ P. Constantinescu—Iași, *Relațiile culturale româno-ruse în trecut*, București, 1954, fig. 80, 83.
- ⁶⁸ V. Vatașianu, *Istoria artei feudale în țările române*, v. I, 1959, p. 297.
- ⁶⁹ Կամենից, էջ 22:
- ⁷⁰ Գ. Գաբանդցի, *Նույն տեղում*, էջ 409:
- ⁷¹ Călători... p. I-a Paul de Alep... 99. 306.
- ⁷² Ս. Քոլանջյան, *Համառոտ ցուցակ հայերեն ձեռագրաց Գեղա հայաբաղադի, «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 40—41, 443, 451—452:*
- ⁷³ Կամենից, էջ 197:
- ⁷⁴ Հ. Տ. Սիրունի, *Արխիվային հայկական նյութեր ուսմանական հոդի վրա, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1966, № 2, էջ 106—108:*
- ⁷⁵ C. C. Giurescu, D. C. Giurescu, *Istoria Românilor*, București, p. 463—471.
 C. C. Giurescu, *Tărguri sau orașe și cetăți Moldovene din secolele al X-lea până la mijlocul sec. al XVI-lea*, București, 1967, p. 282.
- ⁷⁶ L. Șimanschi, *Mănăstirea Zamca*, București, 1967, p. 7.
- ⁷⁷ Պեմետրիոս Տանի (*Դումիտրու Դան*), *Արևելյան Հայք ի Պուրովինա, Բրդա*.
 Գ. Գալեմբյարյանի, *Վիեննա*, 1891, էջ 22—24:
- ⁷⁸ Նույն տեղում, էջ 25:
- ⁷⁹ Նույն տեղում, էջ 36—37:
- ⁸⁰ L. Șimanschi, էջ 28:
- ⁸¹ Լ. Բաբայան, *Հայերի Մոլդավիայում և Բուկովինայում, Թիֆլիս*, 1911, էջ 184:
- ⁸² Grigorie Goilav, *Datinele, obiceiurile și credințele armenilor din țările române (după D. Dan)*, „Șezătoarea”, Fălticeni, 1912, p. XII.
- ⁸³ Dan Bădărău, Ioan Caproșu, *Iași vechilor zidiri*, Iași, 1974, p. 30—31, 64.
- ⁸⁴ Պեմետրիոս Տանի (*Դումիտրու Դան*), *Նույն տեղում*, էջ 65:
- ⁸⁵ «Հայրենիք», 1929, № 11, 9, էջ 120:
- ⁸⁶ Նույն տեղում, 1929, № 9, 7, էջ 153:
- ⁸⁷ Նույն տեղում, 1929, № 12, էջ 144:
- ⁸⁸ Նույն տեղում, էջ 140:
- ⁸⁹ Г. А. Эзов, *Сношения Петра Великого с армянским народом, докумен-ты...* Санкт Петербург, 1898, с. 238—239.
- ⁹⁰ Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմության, դիրք 2-րդ, Երևան, 1959, էջ 512—513:*
- ⁹¹ *Dicționarul literaturii române dela origini până la 1900*, București, 1979, p. 571.
- ⁹² Նույն տեղում:
- ⁹³ P. Constantinescu—Iași, p. 169.

⁹⁴ H. Dj. Siruni, Le spathaire Nicolae Milescu et son rôle dans les relations des arméniens avec Pierre le Grand, „Studia et Acta Orientalia“, II, 1960. Bucarest. pp. 207—216.

⁹⁵ Վ. Պարսաձյան, Լեհահայերի մասնակցությունը Դավիթ Բեկի ազատամարտին, Երևան, 1962, Վ. Ա. Ոսկանյան, Գ. Ա. Մարտիրոսյան, Նոր վավերագրեր 1720-ական թթ. հայ ազատագրական շարժման վերաբերյալ, ՊԲՀ, 1962, № 4, 19:

⁹⁶ H. Dj. Siruni, Le rôle des arméniens de l'Inde dans le mouvement d'émancipation du peuple arménien, „Studia et Acta Orientalia“, V—VI, Bucarest. 1967, p. 297 — 336.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԶՈՒՂԱՅԱՀԱՅ
ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ**

Թուրքերի կողմից 1453 թ. Կ. Պոլսի գրավումը ծանր հարված էր Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրին: Ավելի ուշ, Բարեհուսո հրվանդանի հայտնագործումից հետո առևտուրը ցամաքային ճանապարհներից տեղափոխվեց դեպի Պարսից ծոց, Կարմիր ծով և Հնդկական օվկիանոս, որի հետևանքով Միջերկրականի ասիական նավահանգիստներն ու Մերձավոր արևելքի վրայով կատարվող ցամաքային տարանցիկ առևտուրը կորցրեցին իրենց նախկին նշանակությունը:

Զրկվելով մերձավորարևելյան շուկաների հետ անմիջականորեն կապեր ունենալու հնարավորությունից, եվրոպացի վաճառականներն ստիպված էին դիմել Արևելքի միջնորդ առևտրականների օգնությանը: Դրա հետևանքով XVI դարից սկսած կրկին ասպարեզ է իջնում հայ առևտրական դասը, որի գործունեությունը միառժամանակ խամրել էր Առաջավոր Ասիայում տեղի ունեցած քաղաքական վայրիվերումների, առևտրական ճանապարհների անապահովության և մի շարք այլ պատճառներով: Այսպիսով, հայ վաճառականները դառնում են Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրի միջնորդներ, այլևս մրցակիցներ չունենալով ցամաքային ճանապարհների վրա:

Արևելյան Հայաստանում, հատկապես Նախիջևանի և Ղափանի շրջաններում առաջ են գալիս բազմաթիվ վաճառականական գյուղեր ու ավաններ, որոնցից հատկապես նշանավոր էին Հին Զուղան, Աստապատը, Օրդուբազը, Ագուլիսը, Դաշտը, Ագարակը, Վանանդը, Մեղրին, Երնջակը, Շոռթթը, Շահկերտը, Յղնան, Կալերը, Բիստը, Զահուկը, Խոշկաշենը և այլն, որոնք վերածվում են Եվրոպայի և Ասիայի միջև միջազգային տարանցիկ քարավանային առևտրի կարևորագույն հանգուցակետերի: Այս վայրերի հայ առևտրական բուրժուազիան կամ «խոջաների» դասը, իր ձևավորման ու զարգացման հենց սկզբնական շրջանից ստիպ-

ված էր գործել ծայրահեղ դժվարին պայմաններում: Հիշենք, որ XVI դարի սկզբից Հայաստանի երկու հատվածներում էլ աղետալի վիճակ էր: Հայ ժողովրդի բնօրրանը դարձել էր ռազմական գործողությունների թատերաբեմ Մերձավոր արևելքի հզորագույն տերություն՝ Օսմանյան Թուրքիայի և էքսպանսիոնիստական հակումներ դրսևորող ու Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնություն ձգտող Սեֆյան Իրանի միջև:

Հայաստանի տարածքում վաշկատուն ցեղերի էթնիկական էքսպանսիան ուղեկցվում էր նստակյաց բնակչության զանգվածային ջարդերով: Գերեզմարությունների, տարագրությունների և ամեն տեսակի բռնությունների հետևանքով հայ բնակչությունը դուրս էր մղվում հայրենի բնօրրանից:

Անտարակույս, այս փոթորկահույզ դարաշրջանում տիպիկ արևելյան բարբարոսական ճնշումներն ու կեղեքումները հայ ժողովրդի տարբեր խավերի մոտ առաջ էին բերում դժգոհություններ ու հրահրում ազատագրական բաղձանքներ: Պատահական չէ, որ հայ և վրաց ժողովուրդների ազատագրական ձգտումները ճնշելու նպատակով և՛ օսմանցիները, և՛ սեֆյանները իրագործում էին բազմաթիվ վարչական ու ռազմական բնույթի միջոցառումներ, որոնց նպատակն էր մեկընդմիջ վերջ տալ հպատակ ժողովուրդների ազատագրական ոգորումներին:

Հայաստանի տնտեսական ու քաղաքական մասնատվածության պայմաններում Թուրքիայի և Իրանի բռնատիրության դեմ պայքարելու իրական հնարավորություններ չկային: Հայաստանի երկու հատվածներում էլ գոյություն չունեին քիչ թե շատ ուժեղ իշխանություններ, որոնք ի վիճակի լինեին համախմբելու ժողովրդին և դառնալու ազգային անկախության հենարաններ: Իսկ ազգային եկեղեցին, որը պետականությունից զուրկ ժողովրդի համար սովորաբար դառնում է ազգի բնական առաջնորդ, XVI դարում նույնպես ի վիճակի չէր ազգային հավաքականության անունից հակադրվելու օտար նվաճողներին, մանավանդ, որ այդ շրջանում խաթարվել էր հայ ազգային-եկեղեցական կազմակերպության միասնությունը: Բուրժուականացող հայ առևտրական դասը, որի շահերը տուժել էին Հայաստանում տեղի ունեցող գործողություններից, սկսեց դժգոհություն դրսևորել իր գործունեության ազատությունը կաշկանդող օտար լծի նկատմամբ: Որքան նա հարստանում էր և ձեռք բերում նյութական ուժ, այնքան ավելի ցայտուն էին դրսևորվում նրա այդ տրամադրությունները: Հայ խոջայությունն աստիճանաբար սկսում է հետաքրքրություն դրսևորել նաև սեփական ժողովրդի քաղաքական կյանքի նկատմամբ, հատկապես մտահոգվելով նրա իրավագույն վիճակով:

Ինչպես հայտնի է, XVI դարում վերստին արժարժվում է Արևմուտքի քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը: 1547 թ. Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը գումարում է հատուկ խորհրդաժողով, որը որոշում է պատվիրակություն ուղարկել Արևմուտք՝ Հայաստանի վիճակի բարվոքման շուրջը բանակցություններ վարելու: Հայկական կղերը փորձել է խորհրդաժողովի գումարման նախաձեռնությունը վերագրել իրեն: Մինչդեռ իրականում այն պատկանում էր հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներին: «Այսպիսի մի դիվանագիտական առաքելություն հնարավոր դարձնողը ընդհանրապես հայ առևտրական կապիտալն էր և մասնավորապես նրա արևելյան խոշոր ճյուղը, խոջայական կապիտալը...», — գրում է Լեոն¹:

1562 թ. Միքայել Սեբաստացի կաթողիկոսը որոշում է Արևմուտք ուղարկել մի նոր պատվիրակություն՝ Աբգար Թոխաթեցու գլխավորությամբ: «Ակներե է, — նկատում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, — որ Աբգարը և իր գործակիցները մերձավոր կապեր ունեին ոչ միայն հայ եկեղեցական խավերի, այլև հայ խոջայական վերնաշերտի հետ»²: Ընդ որում, եթե Ստեփանոս Սալմաստեցու առաքելությունը հետամուտ էր միայն իրանահայ շահախնդրությունների, ապա Աբգարի առաքելությունը «ոգեշնչված էր ոչ միայն իրանական, այլև թուրքական լուծը թոթափելու գաղափարով»³:

Հարկ է նշել, որ հայ վաճառականների քաղաքական ակնկալություններն Արևմուտքի տերություններից պատահական չէին նաև այն պատճառով, որ հայ առևտրավաշխառուական կապիտալը սերտ համագործակցության մեջ էր եվրոպական կապիտալի հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայ ազատագրական միտքը ամենից վաղ ծնունդ է առել առևտրական բուրժուազիայի՝ խոջայության շրջանում: Հենց այս դասն է, որ, աստիճանաբար համակվելով հայ բնաշխարհն ազատագրելու տրամադրություններով, սկսում է տոն տալ նաև այդ նպատակով ձեռնարկվող բանակցություններին:

XVI դարի վերջին՝ Անդրկովկասում թուրքական տիրապետության շրջանում, երբ օսմանյան իշխանությունները ավատական դասի նկատմամբ վարում էին հողային տիրույթները բռնագրավելու, տնտեսապես հյուծելու և արտամղելու քաղաքականություն, բազմաթիվ ավատատերեր փախչում էին Իրան և ապաստան փնտրում այնտեղ: 1587 թ. Սեֆյան գահը ժառանգած շահ Աբբաս I-ը, որը նախապատրաստվում էր մեծ պատերազմի Թուրքիայի դեմ, սիրով ընդունում էր նրանց, արժա-

նացնելով մեծամեծ պատիվների և շնորհելով բազմապիսի իրավունքներ ու արտոնություններ⁴:

«Եւ պատճառ զնալոյ սոցա առ շահն այս էր,— շեշտում է Առաքել Դավրիժեցին,— զի հաւաստեալ և ստոյգ գիտէին, թէ շահն պատրաստեալ է գալ յաշխարհս Հայոց... Եւ է պատճառ դիւակեցւոց և դաշտեցւոց զնալն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կուռեճութիւն առնելն և անխնայ սպանանելն զբրիստոնեայսն»⁵:

Իրան գաղթածների մեջ մեծ թիվ էին կազմում նաև մեծահարուստ հայ վաճառականները, որոնք նույնպէս զրսեւորում էին շեշտված դժգոհություն թուրքական իշխանությունների նկատմամբ: Հարկ է նշել, որ օսմանյան գրավումից առաջ Արևելյան Հայաստանում գտնվող վաճառականական ավանները և հատկապէս Զուղան Սեֆյան շահերից ստացել էին «խաս» կոչված իրավունքներ և ըստ այնմ վայելում էին մի շարք արտոնություններ: Մինչդեռ թուրքերը ոչ միայն չճանաչեցին այդ իրավունքները, այլև հայ վաճառականական դասի նկատմամբ սկսեցին վարել կողոպուտի, նրանց ունեցվածքը բռնագրավելու ու հարստահարելու քաղաքականություն: Շահ Աբբաս I-ը առանձնակի ուշադրության էր արժանացնում հայ վաճառականներին՝ փայփայելով Իրանի արտաքին առևտուրն աշխուժացնելու ծրագրերը⁶: Այդ պատճառով նա XVI դարի վերջին Իրան տեղափոխված ջուղայեցի վաճառականներին շնորհեց մի շարք արտոնություններ, այդ թվում նաև Իրանի տարածքում ազատորեն առևտուր անելու իրավունք⁷:

Հայ առևտրական դասի հակաթուրքական տրամադրությունների հայտանիշ է այն, որ XVI դարից սկսած ջուղայահայ խոջայությունն սկսում է իր գործուն մասնակցությունը բերել Սեֆյան Իրանի և եվրոպական պետությունների միջև ընթացող դիվանագիտական բանակցություններին, որոնց նպատակն էր հակաթուրքական ռազմական դաշինքի ստեղծումը⁸:

Օգտվելով Թուրքիայի ներքին քաղաքական ծանր վիճակից, շահ Աբբաս I-ը խախտեց 1590 թ. թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և 1603 թ. ռազմական գործողություններ սկսեց Օսմանյան Թուրքիայի դեմ: Ինչպես հայտնի է, այդ պատերազմի ժամանակ նա կազմակերպեց հայ ժողովրդի զանգվածային բռնագաղթ դեպի Իրան: Շահի հրամանով Սպահանի հարավային մասում, Զենդե-րուդ գետի ափին հիմնադրվում է նոր Զուղա ավանը, որը շուտով դառնում է Արևելքի և Արևմուտքի միջև միջազգային առևտրի հանգույց և միաժամանակ

«գաղութային հայ կապիտալի ամենամեծ ու ամենաուժեղ կենտրոնը»⁹ ողջ XVII—XVIII դարերի ընթացքում:

Այսպիսով, XVII դարի սկզբներից հայ առևտրական բուրժուազիայի մի ստվար հատվածը, պատմական աննպաստ պայմանների հետևանքով, ստիպված էր գործել հայրենի բնաշխարհից դուրս:

Շահ Աբբաս I-ը Նոր Զուղայի վաճառականներին շնորհեց ամենալայն արտոնություններ և իրավունքներ, այդ թվում նաև շահապատկան ապրանքները վաճառող «խասսե-յե շարիֆե» վաճառականի կոչում: Նրանք ստացան նաև ազատ քաղաքացիություն և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու իրավունք: «Ի տապանաքարինս ոմանց ականաւոր տոհմականաց Զուղայու գրեալ կայ բառս «ազատ», թերեւ վասն յայտնելոյ ապագայից թէ ազատ քաղաքացի էին յԱսպահան և ոչ իբրեւ գերի: Այլ այդ արտօնութիւն՝ Զուղայեցոց տեսանի գլխաւորապէս տուեալ»¹⁰:

Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի վկայությամբ «շահը հարուստ և անվանի ջուղայեցիներին շնորհեց այն բոլոր իրավունքները, որոնցից օգտվում էին իրանական բարձր պաշտոնավորները»¹¹:

Շահագրգռված լինելով Իրանի արտաքին առևտրի զարգացմամբ և իրանական քաղաքացիական բյուրոկրատիայի տնտեսական ու քաղաքական դիրքերի ամրապնդմամբ, շահական կառավարությունը հովանավորում էր գլխավորապես միջազգային մեծածախ առևտրով զբաղվող խոջաների վերնախավին: Վերջիններս հաճախ դառնում էին իրանական պետության առևտրական գործակալարներ:

Ստանալով առևտրի ազատության իրավունք, ջուղայեցի վաճառականներն անմիջապես ձեռնամուխ եղան լայն գործունեության: Նրանց հաջողվեց նույնիսկ իրենց ձեռքը վերցնել իրանական հում-մետաքսի արտահանման մենաշնորհը:

Գերմանացի փիլիսոփա Կանտը հատկապես ջուղայեցիներին նկատի ուներ, երբ գրում էր. «Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ տիրապետում է ինչ-որ հատուկ տեսակի առևտրական ոգի: Նրանք զբաղվում են փոխանակությամբ, ոտքով ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեայի ափի Կորսո հովանդանը: ...Նրանք հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևմուտք անցնում են Հին աշխարհը և կարողանում են գրկաբաց ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում են»¹²:

Խոջաներն իրենց առևտրով ոչ միայն հարստացնում էին շահական գանձարանը, այլև իրենք էին կուտակում հսկայական հարստություն:

Շրջանառության մեջ գտնվող նրանց կապիտալները հասնում էին միլիոնների: Տավերնիեի վկայությամբ ջուղացի խոջաներից մեկը մահից հետո թողել էր մոտ 40 մլն թումանի հասնող հարստություն¹³:

Խթանո՞ւմ էր արդյոք Նոր Զուղայի առևտրական բուրժուազիայի տնտեսական հզորության մեծացումը նրանց քաղաքական ակտիվացմանը, թե ոչ: Այս հարցին սովորաբար տրվել է բացասական պատասխան: Մասնավորապես հայտնվել է այն տեսակետը, որ հայ առևտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Զուղայի խոջայությունը հայ ժողովրդի քաղաքական շահագրգռություններից հեռու կանգնած, ապաքաղաքական հակումներ ունեցող մի զանգված էր, որն ավելի շուտ բռնում էր տիրողների նկատմամբ խոնարհ համակերպության ճանապարհը, քան ճակատ տալիս իր ժողովրդի ազատագրման համար: Ավելին, նշվել է, որ առհասարակ գաղթավայրերի հայ առևտրական բուրժուազիան XVII դարում բացասական վերաբերմունք է ունեցել սեփական ժողովրդի ազատագրական մտորումների նկատմամբ¹⁴: Միայն XVIII—XIX դարերի ընթացքում, թևակոխելով զարգացման առևտրաարդյունաբերական ոլորտը, աստիճանաբար սկսում է հետաքրքրություն դրսևորել դեպի հայ ժողովրդի ազգային-քաղաքական խնդիրները:

Նույնիսկ մեծավաստակ պատմաբան, ակադեմիկոս Ա. Գ. Հովհաննիսյանը, իր տեսադաշտից դուրս թողնելով մի շարք իրողություններ, գրում է. «Քաղքենի արտոնված մի դաս էր այդ, որի հասարակական մոբալը որոշվում էր համրիչի ցուցանիշներով, մարդիկ, որոնք, գլուխ խոնարհելով տիրողների առաջ, ջանում էին ճանապարհ հարթել դեպի իրենց բարեկեցությունը, անտարբեր դեպի ազգակիցների շարքաշ ու նեղ օրը: Այս կարգի առևտրականները լիակատար հիմք ունեին խուսափելու հատկապես ազգային քաղաքականության ստորջրյա ժայռերից և պահանջված դեպքում փողի օգնությամբ նվաճել անձնական հանգրստություն»¹⁵:

Նոր Զուղայի հայ խոջայության ազգային-քաղաքական անգործունեությունն ու կրավորականությունը ցույց տալու նպատակով սովորաբար վկայակոչվել է XVII դարի հայագետ Յոհ. Շրյոդերի «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ բերված եվրոպացի ոմն Ֆրանչեսկոյի և Նոր Զուղայից առևտրական գործերով Ամստերդամ ժամանած խոջա Սաֆարի երկխոսությունը, որտեղ եվրոպացին շոշափում է նաև հայ ժողովրդի քաղաքական դրության հարցը: Սակայն խոջա Սաֆարը, ինչպես երևում է երկխոսությունից, խուսափել է այդ նյութից, նույնիսկ հայտարարելով, որ հայերը քաղաքական հարց չունեն և չեն ցանկանում ունենալ.

«Ուղորդ այ, մեր ազգն էսօր էլ դինջ այ քանց մեր թագաւորաց վախտին. զարա կոխ չի գնալ, ու ամէն ազգի հետ ազատ ելումուտ ունի»¹⁶։ Լեոն առևտրական խոջայի արտահայտած այդ միտքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հային հարկավոր էլ չէ սեփական թագաւոր. եթե ունենա այդպիսի բան, պիտի պատերազմի գնա, մինչդեռ այժմ նա կովի չի գնում և ազատ առևտուր է անում բոլոր ազգերի հետ»¹⁷։

Սեկասկած, XVII դարում հայ տիրապետող դասակարգի շրջանում նման մտայնութիւնը բավականին մեծ տարածում է ունեցել։ Նույնիսկ XVIII դարում հայ հոգևորականներից մեկը՝ Գեորգ Մխլէյիմյանը, ճիշտ է այլ դրդապատճառներով, սակայն կրկնելով խոջա Սաֆարին, գրում էր. «...Արեւելյան քրիստոնեայք թեպետ առանց թագաւորութեան են, սակայն առաւել երջանկութիւն և անդորրութիւն ունին, քան զնոսա, որք ընդ թագաւորութեամբ են»¹⁸։

Սակայն նման տեսակետները չեն կարող ընդհանրական լինել նոր Զուլայի առևտրական կապիտալի բոլոր ներկայացուցիչների համար։ Բացի այդ, Սեֆյան պետութեան կողմից խոջայական վերնաշերտի համար ստեղծված բացառիկ դրութիւնը հասկանալի է դարձնում «հայ այդ մեծատունների իրանասիրական դիրքաւորումը»¹⁹։ Զպետք է մոռանալ նաև, որ հայ խոջաները տնտեսական սերտ կապերի մեջ էին Սեֆյանների իշխող վերնախավերի հետ և, վերջին հաշվով, նրանց բարեկեցութիւնը կախված էր իրանի առևտրական քաղաքականութիւնից, որ խոջաների առևտուրը հենց սպասարկում էր իրանական ավատատերերին։ «Հայ առևտրականներն արտահանում էին և վաճառում արդյունավճար ռենտայի, հարկերի ու տուրքերի ձեռք ֆեոդալների ամբարներում կուտակված հավելյալ արդյունքը և մատակարարում նրանց արտասահմանյան շուկաներում գնված (գլխավորապես շքեղութեան) ապրանքներ»²⁰։ «Ինքյան հայ «խոջայական կապիտալը» նոր արտադրական հարաբերութիւնների արդյունք չէր,— նշում է Աշոտ Հովհաննիսյանը։ Հայ խոջան իր հարստութիւնը կուտակում էր ֆեոդալիզմի հետ միազոդված առևտրական և վաշխառական կապիտալի շրջանառութեան ճանապարհով և հասկանալի է, որ նա հանդես չէր գալիս ֆեոդալական իշխող կարգերի անտագոնիստի դերում։ Սրանով էլ պայմանավորված էր ոչ միայն նրա տնտեսական պրակտիկան, այլև նրա ազգային-քաղաքական ծայրահեղ չափավորութիւնը»²¹։

Այս ամենը իրողութիւն է։ Սակայն իրողութիւն է նաև այն, որ իրանահայ վաճառականութիւնը գտնվում էր երկակի դրութեան մեջ։ Որպես առևտրավաշխառական կապիտալի ներկայացուցիչներ, նրանք

կողովարտում էին ժողովրդին, սակայն իրենք էլ ենթակա էին ազգային ու կրոնական ճնշման: Կրոնական հալածանքները նույնիսկ «քրիստոնեասերի» հուշակ վայելող շահ Աբբաս I-ի ժամանակ սովորական երևույթ էին: Այսպես, 1621 թ. Սպահանում շահը հայերի նկատմամբ իրականացրեց կրոնական զանգվածային հետապնդումների քաղաքականություն²²: Իսկ 1624 թ., թուրքերից Բաղդադը վերցնելուց հետո, նա մտադրվում է մահմեդականացնել մայրաքաղաքի՝ Սպահանի շուրջը տեղավորված հայկական 43 գյուղերի բնակչությանը: Սակայն, բարձնելից նախ միաբանության անդամներին հաջողվում է կաշառել շահական աստիճանավորներին, որի շնորհիվ հայերը փրկվում են մահմեդականացումից²³:

Թեև շահի հայ հպատակները վճարում էին «խարաջ», այսինքն՝ գլխահարկ, որը, ըստ շարիաթի, այլադավաններին տալիս էր իրենց կրոնն ազատորեն դավանելու իրավունք, սակայն դրանով հանդերձ իրանի հայ բնակչությանը մշտապես սպառնում էր զանգվածային իսլամացման վտանգը: Այդ մասին են վկայում նահատակության բազմաթիվ փաստերը և այդ պատճառով էր Առաքել Դավրիժեցին շահ Աբբաս I-ին անվանում «վիշապ անդնդային»²⁴:

Ֆրանսիացի Տյուրնեֆորը նշում է, որ շահը ջուղայեցիներին չէր ստիպում մահմեդականություն ընդունել, որովհետև նրանց քրիստոնյա լինելը հեշտացնում էր առևտրական հարաբերությունները եվրոպական երկրների հետ²⁵: Սա, ընդհանուր առմամբ, ճշմարիտ է, թեև քիչ չէին նաև մեծահարուստ խոջաների նկատմամբ կրոնական բռնությունները: Սակայն Սեֆյան բռնակալության պայմաններում, երբ այլադավան հպատակները ենթակա էին ամեն տեսակի հալածանքների և նույնիսկ առանց դատի մահվան դատապարտվելու, հայ առևտրական դասը ստիպված էր միշտ զգուշ լինել և իրեն դրսևորել որպես քաղաքական չեզոք տարր: Ֆրանսիացի Շարդենը, օրինակ, վկայում է, որ Նոր Զուղայի խոջաները, որոնք իրազեկ էին Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի բանակցություններին՝ Հռոմի հետ, քրիստոնյա պետությունների օգնությամբ, Հայաստանի ազատագրման վերաբերյալ, երկյուղի մեջ էին, թե իրանական պետությունը կարող է վրեժխնդիր լինել²⁶: Նման երկյուղներն անհիմն չէին, մասնավորապես որ իրան բռնագաղթված հայերի մեջ քիչ չէին նաև մարդիկ, ովքեր տրտնջում էին Սեֆյան պետության դաժանություններից և ու երազում էին «ֆրանկների» օգնությամբ ազատագրվել ոչ միայն թուրքական, այլև իրանական լծից²⁷:

Սեֆյան պետության մեջ գոյություն չունեի հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների անձի, գույքի և պատվի ապահովություն: Ֆ. Էնգելսը նշում է. «Թուրքական, ինչպես և ամեն մի այլ արեւելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ. ստացված հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների և փաշաների գիշատիչ ձեռքերից. բացակայում է բուրժուական ձեռքերման առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա սեփականության ապահովությունը»²⁸:

Այս հանգամանքը չէր կարող հայ առևտրավաշխառուական դասի մոտ առաջ չբերել ծածուկ կամ բացահայտ դժգոհություն Սեֆյան կառավարության և առհասարակ իրանական ավատական լծի նկատմամբ: Մյուս կողմից, տնտեսական ու բարոյական անտանելի միջավայրում ապրող և մահմեդական լծի տակ տառապող հայ ժողովրդի քաղաքական ազատության գաղափարը այլևս չէր կարող անըմբռնելի լինել արևելահայության մեջ քաղաքականապես ամենահասուն և ամենագործուն դասի՝ առևտրական բուրժուազիայի համար, որն այլևս անտարբեր չէր սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Նա սկսել էր գիտակցել, որ հայ ժողովրդի թշվառ դրությունը հետևանք է սեփական պետականության բացակայության:

Նոր Զուղայի խոջայության քաղաքական պատմության տեսակետը հերքվում է նաև նրանով, որ XVII դարի սկզբներից մեծանում էր նրա կշիռը համազգային գործերում, կամ, ավելի ճիշտ, նա իր ձեռքն է վերցնում հայ ազգային կյանքի ղեկավարությունը: Համահայկական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր լուծվում են ջուղայեցիների գիտությամբ և նրանց միջոցով:

«Զուղան մի մեծ հեղինակություն դարձավ և առանց նրա համաձայնության չէր կարող Վճովել ոչ մի նշանավոր ազգային գործ: Էջմիածինը ենթարկված էր նրան, կաթողիկոսի ընտրության գործում առաջին ձայնը պատկանում էր Զուղային»²⁹: XVII դարի կեսերին Հայաստանում երկար տարիներ բարոզական գործունեություն ծավալած կաթողիկ միսիոներ Փիրումալին շեշտել է այն մեծ ազդեցությունը, որ ունեցել են ջուղայեցիները հայ եկեղեցու կյանքում: Նրանք, ըստ Փիրումալիի, «ի վիճակի են ըստ իրենց ցանկության պաշտոնագրելի ուրևէ վարդապետի, եպիսկոպոսի կամ նույնիսկ կաթողիկոսի»³⁰:

Ինչպես հայտնի է, XVII դարի երկրորդ տասնամյակից սկսած էջմիածինը վերածվում էր ազգային-ազատագրական գաղափարների կենտրոնի: Պատահական չէ, որ հայ առևտրական բուրժուազիան նեցուկ հան-

դիսացաւ նրա այդ ձգտումներին, միաժամանակ կանգնելով հայկական լուսավորչական եկեղեցու ինքնուրույնության, նրա դավանանքի ու համենի ավանդույթների պաշտպանության դիրքերի վրա:

Նոր Զուղայի խոջայությունը սկսում է կարևոր դեր խաղալ նաև հայ ժողովրդի ազգային-մշակութային առաջադիմության գործում: Դեռևս XVI դարի վերջերին ջուղայեցի վաճառականների նյութական օժանդակությամբ Մարսելում Հովհաննես Տերզնցին հրատարակում է մի շարք գրքեր: Ավելի ուշ Նոր Զուղայում և բողոքական Հոլանդիայում ստեղծվում է հայկական տպագրություն: Հայ իրականության մեջ գրատպությունը ևս ինքնանպատակ չէր: Այն ուներ ազգային-քաղաքական երանգ և գալիս էր նպաստելու հայ ազատագրական շարժմանը: Այդ տպարանների գործունեությունը ֆինանսավորող նորջուղայեցի խոջաների համար գիրքը միայն վաճառքի ապրանք չէր, այլ հզոր միջոց՝ հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների փայփայած քաղաքական իդեալը կենսագործելու համար: Պատահական չէ, որ Ամստերդամում լույս են տեսնում հայ դասական պատմագրության գլուխգործոցը՝ Խորենացու «Հայոց պատմութիւնը», ինչպես նաև Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը»: Այդ հրատարակությունների նպատակն էր հայրենասիրական ոգով կրթել ու դաստիարակել այն հայ երիտասարդներին, որոնք, ինչպես գրում էր Թովմա Վանանդեցին, «գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ»³¹:

Այսպիսով, ակներև է, որ XVII դարում գրատպությունը ևս արտահայտում էր հայ ժողովրդի՝ վերելք ապրող ազատագրական ձգտումները և արտացոլում օտար լուծը թոթափելու նրա քաղաքական իդեալը:

Կարևոր է նաև շեշտել, որ եթե նշված դարաշրջանում հայ եկեղեցականներն առաջվա պես հայ ժողովրդի ազատագրումը շարունակում էին ակնկալել Հռոմից, ապա Նոր Զուղայի խոջայությունը մերժում էր «Ֆրանկների» միջոցով ազատագրվելու խաբուսիկ ցնորքը: Այդ մասին մենք բազմաթիվ փաստեր ենք գտնում երկու հատորանոց սովարածավալ «Քարմելիթների տարեգրությունում»³²: Կան այդ հանգամանքը փաստող բազմաթիվ այլ տվյալներ ևս: Այսպես, երբ 1613 թ. Մելիքսեթ կաթողիկոսը, առանց Նոր Զուղայի խոջաների համաձայնության, պաշտոնական նամակ է ուղարկում Հռոմ, որտեղ պատրաստակամություն էր հայտնում ընդունելու Հռոմի պապի գերագահությունը, խոջաներն անմիջապես համոզում են շահին ձերբակալել կաթողիկոսին, որպեսզի չհղյալ հայտարարվի նրա որոշումը³³: Այնուհետև, 1607 թ. կաթողիկ միսիոներների հրահրումով շահ Աբբաս I-ը հրաման է արձակում էջմիածնի եկե-

ղեցին քանդելու և նրա քարերն ու սրբազան մասունքները Սպահան տեղափոխելու վերաբերյալ, որպեսզի այնտեղ կառուցվի մի տաճար³⁴։ Անշուշտ, այդ որոշման նպատակն էր հարված հասցնել հայ ազգային եկեղեցու հիմքերին։ Սակայն Նոր Զուղայի խոջաների և, մասնավորապես, քալանթար (քաղաքապետ — Վ. Բ.) խոջա Նազարի վճռական բողոքի հետևանքով, շահը որոշում է հետ կանգնել իր մտքից³⁵։

Արևմտյան Նվրոպայի երկրներում, բախվելով իրենց ազգային ու կրոնական զգացումների ոտնահարման փաստերի հետ³⁶, և, ենթարկվելով անօրինակ հալածանքների, ջուղայեցի վաճառականները թշնամաբար էին տրամադրվում ոչ միայն միսիոներների ու կաթոլիկ եկեղեցու, այլև այդ հալածանքների կազմակերպիչ արևմտանվորպական տերութայունների դեմ։ Նոր Զուղայում հիմնավորված միսիոներներից մեկը՝ եպիսկոպոս Փիրոմալին, օրինակ, 1644 թ. ապրիլի 5-ի թվակիր նամակում հայտնում էր Հոռմի իր ղեկավարությանը, որ «այն վաճառականները, ովքեր առևտրական գործերով եղել են Նվրոպայում, առավել կատաղի դիմադրություն են ցույց տալիս միավորման գաղափարին³⁷, և այդ ոգով նրանք ազդում են ժողովրդի վրա՝ եռանդուն կերպով աշխատելով առաջ բերել նրա ատելությունը Հոռմի նկատմամբ»³⁸։ Իսկ 1681 թ. դեկտեմբերի 1-ին ջուղայեցիները հատուկ ուղերձով պատասխանում են լյուդովիկոս XIV-ին, որ իրենք հաստատուն կանգնած են հայկական լուսավորչական եկեղեցու դիրքերի վրա և մերժում են ֆրանսիական թագավորի առաջարկը՝ հայերին «հովանավորելու վերաբերյալ»³⁹։ Նման փաստերը բազմաթիվ են։

Անշուշտ, Նոր Զուղայի առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների և կաթոլիկ միսիոներների ներհակությունները գլխավորապես հայ և ֆրանսիացի առևտրականների շահերի հակադրության հետևանք էին։ Բանն այն է, որ Իրանի հետ Ֆրանսիայի առևտրական հարաբերությունները մինչև 1664 թ. գործնականում հավասար էին զրոյի, մինչդեռ Ֆրանսիան իրանական հում մետաքսի խոշորագույն ներմուծողներից մեկն էր։ Հետևաբար, մինչև 1664 թ. իրանա-ֆրանսիական առևտուրը համարյա ամբողջապես տեղի էր ունենում հայ վաճառականների, առավելապես ջուղայեցիների միջոցով։ Այդ պատճառով ֆրանսիական կապիտալը ջանում էր հայ առևտրականներին ենթարկել իրեն և նրանց ունակություններն ու փորձը ծառայեցնել իր տնտեսական ու քաղաքական նպատակներին։ Շատ հաճախ իրենց ծրագիրն իրականացնելու համար ֆրանսիական իշխանությունները կանգ չէին առնում նույնիսկ հայ վաճառականների նկատմամբ հալածանքներ կազմակերպելու քաղաքա-

Ճանության առաջ: Այսպես, Մարտիի քաղաքապետարանի՝ 1622 թ. դեկտեմբերի 10-ի հրամանագրով Ֆրանսիական նավերի նավապետներին խստիվ արգելվում էր տեղափոխել հայ վաճառականների բեռները⁴⁰: Նման որոշում ընդունեցին Ֆրանսիական մեկ այլ քաղաքի՝ Տուլոնի իշխանությունները ևս: Դատելով Ֆրանսիական արխիվային փաստաթղթից, հայ վաճառականների նկատմամբ հալածանքներն առանձին դադարներով շարունակվել են մինչև 1656 թվականը⁴¹:

Այսպիսով, հայ խոջաների կողմից կաթոլիկ միսիոներներին ցույց տված դիմադրության հիմքում, իհարկե, առաջին հերթին, պետք է տեսնել առևտրական-տնտեսական շահախնդրություններ: Սակայն, պակաս կարևոր նշանակություն չունեին նաև քաղաքական գործոնները, այսինքն՝ այն, որ հայ առևտրական կապիտալի մագնատները, բացառությամբ կաթոլիկություն ընդունած խոջաների, Հայաստանի ազատագրում չէին ցանկանում կաթոլիկ Եվրոպայի կողմից, որովհետև դա իրենց համար լիակատար զինաթափում էր հզոր Ֆրանսիական կապիտալի առջև:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ իրանահայ առևտրական բուրժուազիայի պայքարը կաթոլիկ միսիոներների դեմ օբյեկտիվորեն ուղղված էր Սեֆյան Իրանի, ինչպես նաև այդ ժամանակ նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանի նկատմամբ եվրոպական պետությունների և առաջին հերթին Ֆրանսիայի գաղութակալական էքսպանսիայի դեմ:

Չպետք է մոռանալ նաև, որ միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառականները շփվում էին ամենատարբեր երկրների ու ժողովուրդների հետ: Դրիգոր Դարանաղցին գրում է, որ ջուղայեցիները լինում էին «ընդ ամենայն յերեսս երկրի», «ի Հնդկս ներքինս, և յԵթովպիա, և յՍեդիպոսս, և յամենայն աշխարհս Ֆռանգաց, և ի Կոստանդինուպոլիսս, և յամենայն աշխարհս Թրակացոց և Մոսկոֆայ և Վրկանաց, և ընդ ամենայն աշխարհս Թուրքաց և Քրդաց Քաղդէացոց և ամենայն Պարսկաստանաց, և արևելայս՝ մինչև ի Չինն և Մատչինն, ի Թօնն և ի Թօնճան և յԱնգալիան, և յամենայն աշխարհքն Տաթարաց և Ափսազաց, մինչև ի Փագս աշխարհաց անծառօթից»⁴²:

Իհարկե, այս շփումները չէին կարող չադրել հայ վաճառականության քաղաքական մտահորիզոնի վրա: Հատկապես Եվրոպայից նրանք Իրան էին ներմուծում ու հայ բնակչության մեջ իրացնում ոչ միայն եվրոպական ապրանքներ, այլև Եվրոպայում տարածված գաղափարներ:

XVII դարի կեսերին Նոր Զուղայի առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունների մեջ ակնառու բեկում է նկատվում: Դա

պայմանավորված էր Իրանի տնտեսական ու քաղաքական խորը ճգնա-
ժամով: Սկսվում են միջավատական երկպառակույթյուններ ու ներքին
ապստամբություններ: Իրանի կառավարող շրջանները սահմանափակում
են Նոր Զուղայի խոջայության առևտրական ու քաղաքական իրավունք-
ները, տնտեսական հարվածներ հասցնում նրան, ենթարկում ազգային
ու կրոնական հալածանքների: Այս շրջանում կառավարության քաղաքա-
կանությունն էր «ոչ թե պաշտպանել խոջայական առևտուրը, այլ հարըս-
տահարել ու կողոպտել նրան»⁴³: Եվրոպական ուղեգիրները վկայում են,
որ նորջուղացի խոջաների հարստության աղբյուրներն սկսում են ցամա-
քել և հազվագյուտ են դառնում մեկ միլիոնի կամ ավելի կարողություն
ունեցող ընտանիքները⁴⁴:

Ստեփանոս Ռոշբան վկայում է, որ Նոր Զուղայի մեծահարուստ վա-
ճառականներից մեկի՝ Մուրադ Շեհրիմանյանի որդի Նազարը «...անօրեն
հրամանաւ տանջեալ... ողորմեա ինձ Աստուած եւ զերից մանկանց օրհ-
նութիւնն երգելով, հանգեաւ ի Քրիստոս»⁴⁵: Եսաչի կաթողիկոսը, որպես
ականատես, գրում է. «որքան դովլաթավորս և մեծատունս աշօք մերովք
տեսաք ի Զուղայ և յԵրևան, ո՛ր ի վերջին աղքատութիւնն և թշվառու-
թիւնն հասեալ էին. և հարցեալ զպատճառս տեղեկացաք, որ վասն ուրա-
ցողացն և յափշտակութեան ընչից իւրեանց եղեալք այնպէս»⁴⁶: Ծիզվիթ
միսիոներները հաղորդում են, որ Սեֆյան իշխանությունները հայ բնակ-
չության վրա դրված ծանր տուրքերը հավաքում էին բռնությամբ և, բացի
պաշտոնականից, կորդում նաև ապօրինի տուրքեր:

Սպահանի և Զուղայի հայ բնակչությանը իսլամացնելու համար
գործի էր դրվում նաև, այսպես կոչված, իմամ Զաֆարի օրենքը, ըստ
որի մահմեդական կրոնն ընդունած քրիստոնյաները ժառանգության հար-
ցում առավելություն էին ձեռք բերում իրենց ազգական հավակնորդների
հանդեպ:

Մի խոսքով, ասիական բիրտ տիրապետությունը փոխում է հայ
առևտրական բուրժուազիայի քաղաքական տրամադրությունները: Նա
սկսում է դրսևորել քաղաքական անբավականություն և որոնել ազգային-
ազատագրության պայքարի ուղիներ: Նրա այդ գաղափարները պարարտ
հող են գտնում ոչ միայն իրանահայ զանգվածների շրջանում, այլև
Արևելյան Հայաստանում, որտեղ Սեֆյան իշխանությունների ճնշման
ուժեղացման հետևանքով ազատագրական շարժման ալիք էր բարձրա-
նում: Վերջապես, իրանահայ առևտրական բուրժուազիայի քաղաքական
տրամադրությունները համահնչյուն էին արևմտահայերի շրջանում խմոր-
վող տրամադրություններին: «Հայ առևտրական բուրժուազիան,— գրում

է Հ. Անասյանը,— զարգացման համար կաշկանդված լինելով թուրքական տիրապետութեան պայմաններում, առաջ էր քաշել նոր ուղեգիծ, նպատակ ունենալով ընդմիշտ դուրս գալ օսմանյան ավատականութեան խեղդող մթնոլորտից և ուրիշների նման ունենալ իր շահերն ապահովող հարազատ իշխանութուն: Հենարան ընտրելով կայսրութեան մեջ ապրող երիցս դժգոհ տանջվող ու կեղեքվող հայ աշխատավորական տարրը, նա իր քաղաքական ծրագիրը հիմնում էր արեւմտահայ ժողովրդի ազատագրման և Հայաստանի անկախութեան վերականգնման գաղափարի ու ծրագրերի վրա:

Արեւմտահայ խոջայութեանը, հրապարակ գալով հայրենիքի ազատութեան նշանաբանով, 1666 թ. սկսած հանդուգն քայլ էր անում: Նա դիմում էր արտաքին աշխարհին, հայտնելով, որ հայերը, բախտակից ժողովուրդների հետ, պատրաստ են ոտի կանգնելու և թոթափելու Օսմանյան Թուրքիայի ծանր լուծը»⁴³:

Հրաժարվելով Սեֆյանների քաղաքական շահախնդրություններին աջակցելու իրենց նախկին դիրքերից, իրանական պետությունից դիմադարձ ջուղաչահայ խոջայութեանը, որն ատելություն էր տածում նաև Հայաստանի արեւմտյան հատվածում իշխող Օսմանյան Թուրքիայի նկատմամբ, հետևողականորեն քաղաքական ազատության ուղիներ էր որոնում: Հայ բուրժուազիայի մի մասը (հատկապես կաթոլիկություն ընդունած հատվածը), ինչպես նաև նրա գաղափարախոսը հանդիսացող մտավորականությունը, այդպիսի հեռանկար էր որոնում դարձյալ հին, տրորված ուղիներում, կաթոլիկ պետությունների մոտ: Օրինակ, այդ մտավորականներից մեկը՝ Ստեփանոս Դաշտեցին, գտնում էր, որ հայերը պիտի ազատագրվեն «անօրենների» հպատակությունից և ենթարկվեն համադավանների իշխանությանը, այսինքն՝ կաթոլիկ Նվրոպային: «Դաշտեցին պատկանում էր XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին նոր Զուղայում հանդես եկած լատինադավան նորատիպ այն առևտրականների թվին, որոնք, բռնելով կաթոլիկ եկեղեցու փեշը, ակնկալում էին նրանից հայ ազգի փրկությունը, թերևս նույնիսկ՝ ազգի կորցրած «ականակուռ թագի» և «յաղթութեան նիզակի» գլուխը: Իդեալականացնելով եվրոպական կարգերը, հայ ազգի փրկությունից ոչ պակաս Դաշտեցին երազում էր հայրենի երկրի ապագա մի իրակարգի մասին, որն անհամատեղելի էր իրանական և թուրքական բռնատիրության հետ»⁴⁹:

Ինչպես հայտնի է, այդ նույն ակնկալություններով XVII դարի 70-ական թվականների վերջերին Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը մտադրվում է մեկնել Նվրոպա՝ քրիստոնյա պետություններից հովանավո-

րություն հայցելու: Այդ նպատակով նա 1677 թ. էջմիածնում գումարում է խորհրդաժողով, որին մասնակցում էին նաև մեծահարուստ խոջաները: Իտալացի մի միսիոների վկայությամբ Հակոբ կաթողիկոսը «թշնամի մահմեդականաց, կըսեր թե, կհուսա տեսնել և հետո գոհ մեռնել՝ թյուրքերու խրոխտանքը ջախջախված քաջ պարսկահայերեն հռովմեացոց ամենազոր բազկին հետ»⁵⁰: Լեոյի կարծիքով, «քաջ պարսկահայեր» անվան տակ հասկացվում էին հյուսիսարևելյան լեռնագավառների, այսինքն՝ Արցախի հայերը: Եվ եթե մենք նկատի ունենանք, որ «հայ կալվածատեր ազնվականության (մելիքների— Վ. Բ.) և առևտրական կապիտալի մեջ ջրբաժան բարձրություններ չկային, և նրանք գրեթե խառնված էին իրար հետ»⁵¹, ապա պարզ կգառնա, որ մելիքների տրամադրությունները բաժանում էին նաև հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները:

Հայ ազատագրական պայքարի պատմության մեջ նոր էտապ է սկսվում 1660 թվականից, երբ Ռուսաստանի հետ առևտրական պայմանագիր կնքելու միտումով Մոսկվա է ժամանում նոր Զուլայի մեծահարուստ վաճառականական ընտանիքի ներկայացուցիչներից մեկը՝ Զաքար Սահրադյանը կամ Շահրիմանյանը իր ընկերներով: Սա այն ժամանակ էր, երբ Ռուսաստանի կովկասյան քաղաքականության հետապնդած նպատակներից մեկն էր Թուրքիայի դեմ ռազմական հենակետի ստեղծումը: Ռուսական քաղաքական շրջաններում իրավացիորեն գտնում էին, որ այդ նպատակին հասնելու համար կարևոր քայլ է հանդիսանալու հայկական առևտրական կապիտալի միջոցով Իրանը և Անդրկովկասը Ռուսաստանին կապելը⁵²: Հայ առևտրական բուրժուազիայի շրջաններում ևս ուժեղանում էր համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Նույնիսկ արևմտաեվրոպական պետությունների հետ բանակցող հայերն արդեն աչքաթող չէին անում այն հանգամանքը, որ իրանական ճնշումների ու հալածանքների դեմ իրենք կարող են օժանդակություն սպասել նաև Ռուսաստանից⁵³: Այս բոլորը արդյունք էր այն բանի, որ «բուն Հայաստանում անձի և սեփականության անապահովությունը, ծանր մաքսերը, պնդմանը պատերազմները խոչընդոտում էին հայ առևտրական կապիտալի զարգացմանը: Մինչդեռ հզոր Ռուսաստանին մերձենալը կարող էր լայն հորիզոններ բանալ հայ վաճառականության համար: Ազգային բռնությունները և առևտրատնտեսական սահմանափակումների դառնությունները՝ ճաշակած գաղութահայ բուրժուազիան նույնպես շրջվում է դեպի Ռուսաստան:

Գաղութահայ բուրժուազիան XVII—XVIII դդ., հանձին Ռուսաստանի տեսնում էր մի երկիր, որը կարող էր իրեն արտոնյալ պայմաններ տալ առևտրական լայն ու շահավետ գործառնություններ կատարելու համար, ինչպես նաև օգնել ռուսական կայսրության շրջանակներում հայկական պետականության վերականգնմանը:

Շեհրիմանյանների գերդաստանը, 1646 թ. հարելով կաթողիկ եկեղեցուն, դարձել էր Նոր Զուղայի հայկական կաթողիկական համայնքի ղեկավարը: Մոսկվայում Զաքար Շեհրիմանյանը, բացի զուտ առևտրական շահերից, հետապնդում էր նաև քաղաքական նպատակներ, մասնավորապես իրանական կառավարության ու Իրանում գործող կաթողիկ միսիոներների հանձնարարությամբ աշխատում էր շոշափել ռուսական կառավարության տրամադրությունը Թուրքիայի դեմ իրանա-եվրոպական ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ:

Աշոտ Հովհաննիսյանը նշում է, որ «առաջժ չկա որևէ դրական փաստ, որ ցույց տար, թե Իրանի կամ կաթողիկների կողմից իրեն տրված հանձնարարությունները կատարելիս խոջա Զաքարը, թիկունք դարձնելով Արևմտյան Նվրոպային, քաղաքականապես դիմաշրջվում էր դեպի Մոսկովյան պետությունը, բացառապես նրա մեջ տեսնելով հայերի կամ գեթ հայ խոջայական դասի ազգային քաղաքական ակնկալությունների ապավինը»⁵⁵: Կարելի է ենթադրել, որ Նոր Զուղայի հայ կաթողիկական համայնքի ներկայացուցիչները ևս, եթե ամբողջապես չէին դիմաշրջվում դեպի Ռուսաստան, համենայն դեպս սկսել էին հայ ժողովրդի քաղաքական բաղձանքներն իրականացնելու ճանապարհին Արևմուտքի կաթողիկ պետություններին ապավինելու ուղուց բացի որոնել նաև այլ ուղիներ:

Վեց տարի անց Մոսկվա է ժամանում նաև Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության ներկայացուցիչ Գրիգոր Լուսիկենցը: Ինչպես հայտնի է, այդ ընկերության և ռուսական կառավարության միջև 1667 և 1673 թթ. կնքվում են առևտրական պայմանագրեր, որոնց նշանակությունը չի սահմանափակվում լոկ իրանահայ առևտրի ռուսական վերակողմնորոշման շրջանակներում: Դրանք նաև կարևոր քաղաքական իմաստ ունեին: «Սկսվում էր պատմական նոր մի շրջան, երբ Ռուսաստանը հանդես էր գալիս որպես միակ այն երկիրը, որի հետ կարող էին ազատագրական ռեալ հեռանկարներ կապել ոչ միայն հայ իշխող հասարակախավերը, այլև հայ ժողովրդական մասսաները»⁵⁶:

Այսպիսով, դեպի Ռուսաստան հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման գործում կարևոր դեր էր ստանձնում գաղութահայ առևտրական բուրժուազիան: Հետագայում այդ բնագավառում և առհասարակ հայ

ազատագրական պայքարի շավիղներում շրջադարձային դեր է խաղում Իսրայել Օրին, որի գործունեությունը ևս բազմաթիվ թեւերով կապված է Նոր Զուղայի խոջայության հետ:

Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ արդեն Պետրոս Մեծի կառավարման տարիներին քաղաքական համակրանքը դեպի Ռուսաստան աննախընթաց մեծացել էր գաղութահայ առևտրական բուրժուազիայի և մասնավորապես Նոր Զուղայի խոջայության մոտ⁵⁷: Այդ բուրժուազիան արդեն հայ ժողովրդի քաղաքական ազատագրման ակնկալությունները համարյա բացառապես սպասում էր ոչ թե արևմուտքից, այլ Ռուսաստանից: Ընդ որում նա ակնկալում էր ռուսական հզոր պետության օգնությամբ ոչ միայն ազատագրվել հայ ժողովրդի վրա ծանրացած թուրքական և պարսկական լծից, այլև ձեռք բերել պետական անկախություն:

Ինչպես հայտնի է, XVIII դարում Իրանում ստեղծված քաղաքական ու տնտեսական անապահով պայմանների պատճառով Նոր Զուղայից Հնդկաստան տեղափոխված խոջաները ևս բոլորանվեր լծվեցին Հայաստանի ազատագրության գործին: Մտահոգված լինելով սեփական ժողովրդի վերածնության խնդրով, նրանք ձեռնամուխ եղան քաղաքական եռանդուն գործունեության, որն իր մակարդակով հայ առևտրական բուրժուազիայի քաղաքական գործունեության ավելի հասուն շրջան էր: Նրանց գործունեությունը հատկապես մեծ թափ ու ծավալ է ստանում այն ժամանակ, երբ Հնդկաստանում XVIII դարում անգլիացիներն սկսում են հետևողականորեն դուրս մղել իրենց մրցակից հայ առևտրական բուրժուազիային: Ելք փնտրելով այդ անբաղձալի վիճակից Շահամիր Շահամիրյանը և Մադրասի հայրենասիրական խմբակի մյուս ներկայացուցիչներն առաջ են քաշում Հայաստանի անկախության վերականգնման իրենց հայտնի ծրագիրը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Առ, *Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ*, հ. 1, Երևան, 1934, էջ 116:

² Աշ. Հովհաննիսյան, *Դավազները հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2-րդ*, Երևան, 1959, էջ 59:

³ Նույն տեղում, էջ 51:

⁴ Առաֆեյ Դավրիժեցի, *Պատմություն, վաղարշապատ, 1896*, էջ 15:

⁵ Նույն տեղում, էջ 15 և հտ.

⁶ С. В. А. Байбуртян, *Армянская колония Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях*, Ереван, 1969, с. 15—19.

- 7 Հ. Տեր-Հովհաննես, Պատմութիւն Նոր Զուլայի, հ. 1, Նոր Զուլա, 1880, էջ 11—12:
- 8 *St' u G. Berchet*, La Republica di Venezia e la Persia, Torino, 1865.
- 9 Տե՛ս նաև *B. A. Байбуртян*, Посредническая роль ново-дзульфинских купцов в дипломатических отношениях Ирана с западноевропейскими странами в начале XVII века, «Краткие сообщения Института народов Азии АН СССР», № 77, 1964.
- 10 Ան, *Խոջայական կապիտալ*, հ. 1, էջ 66:
- 11 Հ. Տեր-Հովհաննես, *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 45—46:
- 12 *J. B. Tavernier*, Les six Voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1692. p. p. 616, 617.
- 13 *Иммануил Кант*, Сочинения, том 6, Москва, 1966, стр. 572—573.
- 14 *J. B. Tavernier*, *նշվ. աշխ.*, էջ 418—419:
- 15 Տե՛ս Ան, *Խոջայական կապիտալ*, հ. 1:
- 16 Աշ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 458:
- 17 *Joh. Joachim Schröder*, *Արամեան լեզուին գանձ*, Thesaurus linguae Armeniacae, Amsterdam. 1711, էջ 338—339:
- 18 Ան, *Խոջայական կապիտալ*, էջ 171:
- 19 «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1871, էջ 129—139 (ցիտված է *Լեոյի Խոջայական կապիտալից*, էջ 102):
- 20 Աշ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 104:
- 21 Աշ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 455:
- 22 Նույն տեղում, էջ 456:
- 23 A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries. vol. 1, London. 1939, p. 257.
- 24 Նույն տեղում, էջ 271:
- 25 Առաքել Գավրիլյան, *նշվ. աշխ.*, էջ 25:
- 26 *Tournefort Pitton de*, Relation d'un voyage du Levant, Paris. 1718, t. II, p. 158.
- 27 *Chardin, Jean de*, Voyage en Perse, Paris, 1811, t. II, p.p. 1'6—1'7.
- 28 Աշ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 104:
- 29 *K. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. XVI, ч. II, М., 1936, с. 22.
- 30 Ան, Հայկական տպագրություն, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 194:
- 31 Կարապետ Եսյ. Ամատունի, Ոսկան վարդապետ և իւր ժամանակը, Վենետիկ, Ս. Ղազար, 1975, էջ 119:
- 32 Աշ. Հովհաննիսյան, *նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 171:
- 33 A Chronicle of the Carmelites...., vol. I—II, London. 1939.
- 34 Գ. Վ. Գալմիսյան, Կենսագրություններ, Վիեննա, 1915, էջ 44:
- 35 Առաքել Գավրիլյան, *նշվ. աշխ.*, էջ 212—213:
- 36 Հ. Տեր-Հովհաննես, *նշվ. աշխ.*, հ. 1, էջ 52—56:
- 37 Տե՛ս Մ. Վ. Ուրուրյան, Պատմութիւն Հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոնոյ բաղաբի, Վենետիկ, 1891, էջ 46—48:
- 38 *Խոսքը վերաբերում է հայ լուսավորչական և կաթոլիկ եկեղեցիների միավորմանը*:
- 39 A Chronicle of the Carmelites...., vol. I, p. 375.
- 40 Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, Թղթ. 91, փ. 6ա, Բ. 27 և հտ.:

⁴⁰ *Տե՛ս* *Fr. Macler*, „Notices de Manuscrits arméniens ou relatifs aux Arméniens, vus dans quelques bibliothèques de la péninsule ibérique et du sud-est de la France“. *Revue des Etudes Arméniennes*, t. II, Paris, 1922, p.p. 10—13; *Կմմտ. Շհ.-Ժ. Էկեյան*, „Marseille, La Provence et les Arméniens“, *Marseille*, 1929, p.p. 14—15.

⁴¹ *Տե՛ս* *P. Pacifique*, *Relation du voyage en Perse*, Lille, 1632, p. 423.

⁴² Գրիգոր Դարանաղցի, *Ժամանակագրութիւն*, *Երուսաղեմ*, 1915, էջ 457—458:

⁴³ Ան, *Խոջայական կապիտալ*, էջ 171:

⁴⁴ *Chardin*, *Նշվ. աշխ.*, հ. 8, էջ 106:

⁴⁵ Համագաստ *Ոսկեան, Ստեփանոս Ռօշբա, Մատթէոս Զուղայեցի, Վիեննա, 1968*, էջ 11:

⁴⁶ Եսայի կարողիկոս, *Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշարհին Աղուանից, Շուշի, 1839*, էջ 19:

⁴⁷ *Տե՛ս* „Lettres édifiantes et curieuses concernant l'Asie, l'Afrique etc.“, t. III, Paris, 1780, p. 34.

⁴⁸ Հ. Ս. Անստյան, *XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում*, *Երևան*, 1962, էջ 83:

⁴⁹ Աշ. Հովհաննիսյան, *Նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 463:

⁵⁰ Ան, *Խոջայական կապիտալ*, էջ 118:

⁵¹ Նույն տեղում, էջ 159:

⁵² *Տե՛ս* Վ. Կ. Ոսկանյան, *Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում, Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների*, 1948, № 1, էջ 63:

⁵³ Աշ. Հովհաննիսյան, *Նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 215—216:

⁵⁴ Զ. Տ. Գրիգորյան, *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը*, *Երևան*, 1978, էջ 79—80:

⁵⁵ Աշ. Հովհաննիսյան, *Նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 481:

⁵⁶ *В. К. Восканян*, *Новый торговый устав и договор с Армянской компанией*, *Известия АН АрмССР*, 1947, № 6, տե՛ս նաև Աշ. Հովհաննիսյան, *Նշվ. աշխ.*, գիրք 2-րդ, էջ 491 (*ընդգծումը Աշ. Հովհաննիսյանի*):

⁵⁷ *Տե՛ս օրինակ* *A Chronicle of the Carmelites...*, vol. I, p. 523.

ՀՈՒԱՆԴԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՐ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԻՏՔԸ (XVII ԴԱՐ)

Հոլանդական քաղաքներն ու նավահանգիստները հայերին ծանոթ են եղել դեռևս միջնադարից: XIV—XV դարերում այս երկիրը հետաքրքրել է հատկապես հայ վաճառականներին, որոնք հոլանդական քաղաքներում հայկական ու արևելյան գորգերի և համեմունքների առևտրով զբաղվելու զանազան արտոնություններ են ունեցել¹: Ուշադրության են արժանի մասնավորապես Կիլիկյան Հայաստանի և Հոլանդիայի միջև եղած հարաբերությունները: Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանի կարևորագույն նավահանգիստներից Ալասը, որտեղ «գտնվում էր իր եկամուտներով պետության առաջին մաքսատունը» և ուր, ժամանակակիցների հաղորդմամբ, «այցելում են աշխարհի տարբեր երկրների բոլոր նավերը»², կապված է եղել նաև հոլանդական Բրյուզգե նավահանգստի հետ³: Ավելին, XIV դարում «սարակինոսների» արշավանքներից փախած մի խումբ հայեր պատսպարվել են այս քաղաքում՝ վայելելով հասարակության խնամքն ու հոգատարությունը⁴:

Սակայն հայ-հոլանդական առևտրական կապուն հարաբերությունների մասին կարելի է խոսել, սկսած XVII դարից: 1612 թ. Թուրքիայի և Հոլանդիայի միջև կնքված քաղաքական ու առևտրական դաշնագիրը⁵ նոր հնարավորություններ բացեց Արևելքի, այդ թվում նաև հայ վաճառականների համար: Հոլանդական նավերն ավելի հաճախ էին բեռնավորվում հայ առևտրականների ապրանքներով՝ Հոլանդիա տանելով մետաքս, արևելյան համեմունքներ, յուղեր ու թանկարժեք քարեր, նրանք Եվրոպայից Արևելք էին բերում կերպասներ, տնային կահավորման, խոհանոցային իրեր և այլն:

Բնականորեն հարց է ծագում, թե ինչով էր Հոլանդիան գրավում հայ վաճառականության, հետագայում նաև մտավորականության ներկայացուցիչների ուշադրությունը: XVI—XVII դարերի հոլանդական իրակա-

նությունը հարուստ էր սոցիալական մեծ տեղաշարժերով, որոնք խար-
խըլում էին ֆեոդալական հասարակարգի հիմքերը: Ազգային անկախու-
թյան համար մղվող պատերազմներից ու 1566 թ. բուրժուական հեղա-
փոխությունից հետո երկիրը վերելք էր ապրում: Հոլանդիան դարձել էր
ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական, գիտական
ու մշակութային ամենաբարձր զարգացում ունեցող երկրներից մեկը:
Ամստերդամը, որ համաշխարհային շուկայի, մշակութային կյանքի
կենտրոն էր, այդ դարերում իրավամբ վայելում էր «Եվրոպայի կայս-
րուհու» համբավը: Սրան մեծապես նպաստում էր նաև հոլանդական
հզոր նավատորմը: Հայ առևտրականը, գալով Ամստերդամ, գործ էր
ունենում ոչ միայն հոլանդացի, այլև ուրիշ երկրներից և նույնիսկ այլ
մայրցամաքներից եկած ալլազգի վաճառականների հետ: Նա կարողա-
նում էր եկամտաբեր առևտրական պայմանագրեր կնքել, տեական առև-
տուր կազմակերպել և այլն: Շուտով անհրաժեշտ է դառնում մշտական
առևտրական ներկայացուցիչներ ունենալ Ամստերդամում: Հիմնվում են
հայկական առևտրական տներ: Հոլանդիա են գաղթում վաճառականնե-
րից շատերի ընտանիքները: Աստիճանաբար կազմավորվում է հայկա-
կան գաղթօջախ, որն Ամստերդամում գոյատևում է շուրջ 200 տարի:
Հոլանդացի գիտնական Ս. վան Ռոյի կատարած հաշվումների համա-
ձայն տարբեր տարիների նոտարական արձանագրությունների մեջ ար-
տացված են 750-ից ավելի հայեր⁶: Իսկ ժամանակակից հոլանդացի
ուսումնասիրող Ռ. Ա. Բեկիուսի նմանատիպ պրպտումները նրան թույլ
են տալիս խոսել 800-ից ավելի հայկական ազգաբնակիչների մասին⁷ (ընդ-
գծումը մերն է— է. Թ.): Նկատենք, որ նոտարական արձանագրությու-
ներն ու գործարքները կատարվում էին գաղութի միայն արական սեռի
ներկայացուցիչների միջոցով:

Ռ. Ա. Բեկիուսը փաստական տվյալների հիման վրա գալիս է այն
եզրակացության, որ հայ վաճառականները վայելում էին հոլանդացի-
ների համակրանքը: «Հայ գաղութը Ամստերդամի հասարակության ցան-
կալի մասնիկն էր,— գրում է նա,— և մեծ մասամբ միաձուլված էր նրա
մեջ: Հայերն այս հասարակության համար շատ ավելի վաղ էին ընդու-
նելի դարձել (չնայած իրենց սեփական եկեղեցին ունեին), քան հոտմեա-
ցի կաթոլիկներն ու հրեաները»⁸: Նա նույնիսկ թվարկում է այն նկարիչ-
ներին ու քանդակագործներին, որոնք երբևէ անդրադարձել են հայերին
ու նրանց կենցաղին (վան Բրիստրատեն, վան Ուլֆտ, Բերկհեյդե և այլն):
Նշանակալից է նաև այն հանգամանքը, որ քաղաքային բորսայի դահլիճի

պատերին այլազգի վաճառականների, դրամափոխների հետ միասին պատկերված են նաև հայ վաճառականները՝ զանազան գործարքներ կատարելիս⁹:

Խոսելով հայկական գաղութի մասին, «De Amsterdammer» շաբաթաթերթը գրում է. «Հայկական գաղութի պատմությունը մի ոսկե էջ է Ամստերդամ քաղաքի պատմության մեջ»¹⁰:

Հայկական գաղութի ստվարացման ու կազմակերպվածության մասին է վկայում Ամստերդամում հայ քահանա ու աղոթատուն, տարիներ անց նաև եկեղեցի ունենալու փաստը: Հայազգի վաճառականների մասին հոլանդացիներն այն կարծիքին էին, որ նրանք կաթոլիկներ են, բայց չեն ենթարկվում հոմեական եկեղեցուն, ուստի չէին կաշկանդում նրանց կրոնական ձգտումներն ու գործունեությունը:

Շուրջ մեկ դար Ամստերդամի հայկական համայնքը իր կրոնական ծեսերը կատարելու համար հավաքվում էր հայրենակիցներից որևէ մեկի տանը կամ վարձու աղոթարանում: 1715 թվականից Ամստերդամում սկսում է գործել հայկական եկեղեցի, որը դառնում է գաղութահայ կյանքի կենտրոն, ազգային լեզվի, սովորույթների ու ավանդույթների պահպանման օջախ և գոյատևում է շուրջ մեկ դար՝ մինչև 1806 թվականը¹¹:

Սակայն շափազանց աղքատիկ կլինեի Ամստերդամի հայկական համայնքի դերը լուսավորության տարածման, ազգային ինքնագիտակցության արթնացման, մայր հայրենիքի հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքին արձագանքելու գործում, եթե չլինեի Ամստերդամում գործող հայկական տպարանը¹²: Այս երկու ազգային հաստատությունները միավորվելով, հոլանդահայ համայնքում կարողացան այնպիսի մթնոլորտ ու շարժում ստեղծել, որ փոքրաթիվ այդ գաղութը անվերադարձ մտավ ինչպես հայ ժողովրդի հոգևոր մշակույթի, այնպես էլ նրա ազատագրական մտքի պատմության մեջ:

Սույն հոդվածի ուղղվածությունը մեզ թելադրում է գաղութահայ կյանքին նայել որոշակի տեսանկյունից: Սակայն սա այն դեպքն է, երբ համայնքի բոլոր խավերը այս կամ այն ձևով մասնակցել են ազգի ազատագրման համար մշակվող կանխագծումներին:

Հայկական տպարանի հիմնադրումն ու գործունեության ողջ ընթացքը մշտապես ուղեկցվել են նյութական դժվարություններով և կաթոլիկ իշխանությունների կողմից կազմակերպվող մշտական հալածանքներով: Սակայն հայ համայնքի ներկայացուցիչները միշտ էլ ձեռք են մեկնել նրանց՝ վերջիններիս ազգանվեր մղումների իրագործմանն օգնելու նպատակով: Տպարանի հրատարակությունները համարյա միշտ ֆինանսա-

վորվել են գաղութում ապրող կամ իրենց առևտրական գործունեությունը ծավալող հարուստ վաճառականների կողմից: Նրանք, իրենց առևտրին նպաստող զանազան ձեռնարկներ պատվիրելուց և նյութական ծախսերը հոգալուց զատ, հովանավորում էին շատ ուրիշ հրատարակություններ ևս, որոնք մեծ կարևորություն ունեին հայ ժողովրդի, նրա ազատագրական մտքի պատմության համար: Նրանց դերը փոքր չէր նաև հրատարակված գրքերը երկրից երկիր տեղափոխելու և հայ գրավաճառներին հանձնելու գործում: Այս մեկենասների մասին մանրամասն տեղեկություններ կարելի է քաղել հրատարակված գրքերի հիշատակարաններում:

Գաղութահայ մի այլ խավի, հայկական գրքի հրատարակության նկատմամբ ունեցած սրտացավ վերաբերմունքի լավագույն արտահայտություն է 1685 թ. հրատարակված «Շարակնոցի» հիշատակարանում պահպանված փաստը: «Արդ երես անկեալ աղաչեմ զընթերցողսդ,— գրում է հրատարակիչ Մատթեոս Վանանդեցին,— յիշել զերևանցի պարոն Ուղուրլուի որդի զտէր յՕհան սրբանուէր քահանայն, և զհանգուցեալ ծնողսն զհայրն իւր զպարոն Ուղուրլուն և զմայր նորին զՄասում Փաշայն, և զկողակիցն իւր Եղիսաբեթն՝ և զեղբարս նորին զպարոն Աւետիքն և զպարոն Կարապետն՝ և քորք իւրեանց զԽաթունն զԲէկին զՄարիամն և զԿատարինէն, և զայլ արեան առու մերձաւորսն, քանզի աշխատեցան ՚ի սրբագրութիւն շարակնոցին և զթուղթ չորացնելն և զայլ աշխատանս»¹³:

Հոլանդահայ գաղութի տարբեր խավերի ներկայացուցիչները, չուրաքանչյուրն, անշուշտ, ունենալով իր սեփական շահերն ու գործունեության ոլորտը, միաժամանակ չէին կարող անտարբեր հայացքով նայել Ամստերդամի հայկական տպարանի ծավալած ազգանվեր գործունեությանը, մանավանդ որ այստեղ աշխատել ու ստեղծագործել են հայ դպրության այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպես Ոսկան Երևանցին, Թովմաս, Դուկաս և Մատթեոս Վանանդեցիները: Նրանք իրենց հեղինակությունը պատկառանք էին ներշնչում ոչ միայն հայրենակիցներին, այլև օտարներին: Սակայն թող չստեղծվի այն տպավորությունը, որ հայկական տպարանի գործունեությունը ծավալվել է նյութական ապահով պայմաններում: Տպարանի հիմնադրման օրից նրան մշտապես հետապնդել են նյութական սուղ պայմանները: Հրատարակիչները հաճախ ստիպված են եղել և՛ սրբագրիչի, և՛ գրաշարի աշխատանք կատարել՝ և հաճախ առանց նյութական վարձատրության որևէ ակնկալության: «...Նս նուստըս յամենից Մատթեոս դպիրս եկի ծառայելով ընդ արենակից վարդապետին իմոյ... և վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ (ընդգծումը մերն

է— է. թ.) քանզի և տէր Յակոբ Կաթողիկոսն գրեաց առ իս 'ի Մար-
սիլիայ թէ ընկալայ զհամբաւ 'ի քէն զբարութ ուսանիլն զարհեստիդ-
վասն որոյ և զփոքր նամակս օրհնութեան առաքեցի առ հոգևոր որդեակդ
իմ Մատթէոս զի բարութ ծառայիցես տեարն Ոսկանայ արհի եպիսկոպո-
սի աշակերտի իմոյ, և զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս՝
աչնպես համարեա՛ թէ ինձ ես արարեալ, որպէս ասէ տէրն: Եւ ես զքո
վարձն հատուցանելոց եմ, և եթէ մահ հասարակաց հանդիպի՝ զհետնա-
մնաց նըստող սրբոյն աթոռոյն պարտին հատուցանել¹⁴: Ինչպես տես-
նում ենք, նրանցից բավական մեծ ջանքեր էին պահանջվում տպարանի
աշխատանքները չկասեցնելու և իրենց հիմնական նպատակների իրա-
գործմանը նպաստող աշխատութիւններ հրատարակելու համար: Թե
ինչ միջոցներով ու ինչ գծվարութիւններով էր հայկական տպարանն
Ամստերդամում պահպանուած իր գոյութիւնը, հետո է մեր սույն հետա-
դոտութեան սահմաններից, սակայն պետք է նշենք, որ, հիմնադրվելով
1660 թ., աչն Ամստերդամում գոյատեւեց շուրջ կես դար՝ հրատարակելով
շուրջ 40 անուն գիրք և, որ ամենանշանակալիցն է, ամստերդամյան
տպարանից հետո հայկական տպագրութեան ավանդույթն այլևս երբեք
ընդհատումներ չունեցավ:

Ամստերդամի հայկական տպարանն ունեցել է գործունեութեան եր-
կու շրջան: Առաջին՝ 1660—1674 թվականներն ընկած շրջանը կապվում
է հայ գրքի տպագրութեան նահապետ Ոսկան Երեանցու անվան հետ:
Ծնված լինելով Սպահանում՝ ծագումով երևանցի ծնողներից, նա իր
ժամանակի կրթված մտավորականներից էր, Ուշի վանքի վանահայրը¹⁵:
Հայտնի է, որ Հակոբ 4-րդ Զուղայեցի կաթողիկոսը 1662 թ. նրան Եվրո-
պա էր ուղարկել, նախ և առաջ, Աստվածաշունչ հրատարակելու նպա-
տակով: Սակայն Ոսկան Երեանցու՝ Եվրոպայում ծավալած տպագրական
գործունեութիւնը շատ ավելի լայն սահմաններ ու կարևոր կողմեր ունէր
հայ ժողովրդի մշակութային պատմութեան զարգացման, կրթութեան ու
լուսավորութեան տարածման համար, քան սոսկ հոգևոր գրականութեան
հրատարակութիւնը, թեև սա ևս անկարևոր չէր այդ ժամանակաշրջանում
օտար բռնակալների լծի տակ հեծող հայ ժողովրդի մեջ իր գիրն ու գրա-
կանութիւնը, իր հավատը մշտապես վառ պահելու և դրանով իսկ աղ-
գային ինքնագիտակցութիւնն արթնացնելու համար: Ոսկանյան հրատա-
րակութիւնների մյուս, մեզ հետաքրքրող կողմին կանդրադառնանք
ստորև:

Տպարանի գործունեութեան երկրորդ շրջանը՝ 1685—1717 թթ.
կապված է հրատարակիչ Վանանդեցիների գործունեութեան հետ: Նրանք

ազգականներ էին և ծագում էին Նախիջևանի Գողթան գավառի Վանանդ գյուղից: Նախ Մատթեոս Վանանդեցին էր եկել Եվրոպա՝ Ոսկան Երևանցու տպարանում գրաշարության արհեստ սովորելու: Նա ժամանակի լավագույն գրաշարներից մեկն էր համարվում¹⁶: Ղևոնդ Ալիշանը, խոսելով նրա մասին, ասում է. «...և Մատթեոսի, ... յոյժ ճարտար և աջողակ գտաւ յարուեստին, վարժեալ նախ 14 ամ առ Ոսկանայ, և իրաւամբք կոչի «յոգնեախտ և միակ բուն տպագիր Հայոց»¹⁷: Ոսկան Երևանցու վախճանից հետո տպարանը փաստորեն տնօրինում էր նա և ամեն ջանք գործադրում նրա գործունեությունը շարունակելու համար:

Ղուկաս Վանանդեցին ուսումը ստացել էր Հռոմում: Նա հմտացել էր ղանազան լեզուների, փիլիսոփայության, աստվածաբանության, աշխարհագրության, տոմարագիտության, քարտեզագրության և բնական ալլ գիտությունների ասպարեզում և Ամստերդամ էր եկել որպես ժամանակի զարգացած ու առաջադեմ հայացքներով տոգորված անձնավորություն: Հայտնի է XVII դարի փիլիսոփա, մաթեմատիկոս Լայբնիցի հետ ունեցած նրա նամակագրական կապը: Հայտնի է, որ Ղուկաս դպիրը հանդիպել է նրան, և նրանք զրուցել են աշխարհագրության ու քարտեզագիտության ժամանակակից խնդիրների շուրջ¹⁸: Ղուկասի պատրաստած երկրաբաշխական սարքավորումը (աստրոլյաբիան) այսօր պահվում է Բյուրականի աստղադիտարանում: Ղուկաս Վանանդեցին Ամստերդամի հայկական տպարանի գիտական ռգին էր, նրա ամենաարժեքավոր հրատարակություններից շատերի հեղինակը:

Տպարանի գործունեության երկրորդ շրջանը ղեկավարում էր Թովմաս Վանանդեցին: Նա Գողթան գավառի Սուրբ Խաչ վանքի եպիսկոպոսն էր, ուսյալ, առաջադիմական, լուսավորական հայացքներով տոգորված, հայրենասեր մի անձնավորություն, որը բազմիցս լինելով տարբեր երկրներում, նրանց ազդեցիկ միապետներին ու հոգևոր գործիչներին ծանոթացրել էր իր հայրենիքի անմխիթար վիճակին և իր ազատագրական ու լուսավորական ծրագրերին, կարողացել ստանալ շատերի բարոյական, հաճախ նաև նյութական օգնությունը¹⁹: Նրան զուր չէին կոչում «աստուածազգեստ րաբունի(ն) և առաքելագործ եպիսկոպոս Սրբոյ Խաչին»²⁰:

Հայ ազատագրական պայքարում և ազատագրական մտքի ձևավորման ու մշակման գործում Ամստերդամի հայկական տպարանի ծավալած գործունեությունը կարելի է ուսումնասիրել երկու տեսանկյունով:

Առաջինը հայ գրականության մնայուն արժեքների հրատարակությունն է: Վեր հանելով ազգի փառավոր անցյալը, նրա մշակութային գո-

հարները, հայ տպագրիչները նպատակ ունեին բորբոքել ժողովրդի ազատագրական ոգին, արթնացնել նրա մեջ ազատագրական պայքարի դարավոր ավանդույթները:

Ամստերդամի հայկական տպարանի գործունեության առաջին արժեքավոր նվաճումը 1666 թ. Ոսկան Երևանցու լույս ընծայած Աստվածաշունչն էր՝ «Քարգմանությունների թագուհու» շքեղ, նկարազարդ, դավանաբանական ու տպագրական անօրինակ դժվարությունների ու ջանքերի գնով գլուխ բերված այս հրատարակությունը: Ոսկան Երևանցին, իրագործելով Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի կամքը, համոզված էր, որ Աստվածաշնչի բազմաթիվ օրինակները միայն եկեղեցական ծիսակատարություններին չեն ծառայելու, որ դրանք կտարածվեն ժողովրդի մեջ, և օտար բռնակալության տակ հեծող իր հայրենակիցներն իրենց ընտանեկան օջախներում ու դպրոցներում մեկ անգամ ևս առիթ կունենան շփվելու հայ գրին ու գրքին²¹:

1668 թ. Ոսկան Երևանցին հրատարակում է «Գիրք աշխարհաց և առասպելաբանությունաց որ է Աղուեսագիրքը» երկը: Սա մի փոքրագիր գրքույկ է, ուր ամփոփված են Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույցը» և Վարդան Այգեկցու «Աղուեսագիրքը»:

«Աշխարհացույցի» հեղինակը, որն օգտվել է անտիկ շրջանի աշխարհագրական ավանդույթներից, ճշգրտելով ու նորացնելով ընդունված սահմանները, առավել հանգամանորեն է անդրադառնում Մեծ ու Փոքր Հայքերի, հարևան երկրների պատմաքաղաքական սահմաններին, աշխարհագրական ու բնակլիմայական առանձնահատկություններին, բուսական ու կենդանական աշխարհին: Այս գիրքը ճանաչողական մեծ նշանակություն է ունեցել պատմական Հայաստանն ուսումնասիրելու առումով: Գրքի հրատարակությունը, որպես հայ մատենագրության նմուշի տպագրության առաջին փորձ, նշանակալից էր ու կարևոր:

Վ. Այգեկցու «Աղուեսագիրքը» ժողովրդական առակների, լեգենդների, խրատական զրույցների մի գողտրիկ հավաքածու է, որը դեռ այսօր էլ չի կորցրել իր բարոյախրատական, դաստիարակչական նշանակությունը: Նկատենք, որ Ոսկանը Այգեկցու «Աղուեսագրքի» առաջին հրատարակիչն է եղել²²: Սա խոսում է այն մասին, թե որքան մեծ նշանակություն ու կարևորություն է ունեցել նրա համար հայ միջնադարյան գրականության ամենագեղեցիկ նմուշներից մեկը, հայկական բանահյուսության այս փալլուն էջը գեղեցիկ հրատարակությամբ հասցնել հենց իրեն՝ այդ ստեղծագործության հեղինակին՝ իր բազմաշնորհ ու բազմաշարժար ժողովրդին:

1669 թ. Ոսկան Երևանցին ֆրանսիացի ուսումնասիրող Լակրուայի օգնութեամբ գրաբարից լատիներեն է թարգմանել Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրութիւնը: Այս թարգմանութեամբ (ի դեպ, այն «Վարքի» համառոտ, խմբագրված օրինակի թարգմանութիւնն է)²³, Ոսկանն օտար ընթերցողին ծանոթացնում էր V դարի Հայաստանում կատարվող քաղաքական ու մշակութային անցքերին և, մանավանդ, Կորյունի լեզվով ներկայացնում հարուստ պատմական անցյալ ունեցող իր ժողովրդին, իր ազգին՝ որպէս հնագույն քաղաքակրթութեան ու բազմադարյան մշակութի կրողի:

Նույն տարին հրատարակվում է Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատութիւնը: Հայ մատենագրութեան մեջ սա առաջին երկն էր, որ տպագրվում էր հեղինակի կենդանութեան օրոք: Այն ընդգրկում է 1602—1662 թթ. պատմական իրադարձութիւնները: Դավրիժեցին արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում Հայաստանում XVII դարի առաջին կեսին թուրք-պարսկական երկարատև պատերազմների հետևանք հանդիսացող կոտորածների ու ավերածութիւնների մասին, անդրադառնում Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթին, այդ ժամանակաշրջանում հայերի տնտեսական ու սոցիալական ծանր վիճակին: Աշխատութիւնը կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Թուրքիայի, Սեֆյան Իրանի, Շիրվանի, Վրաստանի XVII դ. առաջին կեսի պատմութեան: Դավրիժեցու «Պատմութիւնը» շատ արդիական էր, ճանաչողական մեծ նշանակութիւն ունէր և իրավամբ բորբոքում էր հայ ընթերցողի հայրենասիրութիւնն ու ազատատենչ ոգին:

1695 թ. Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» հրատարակութեամբ է սկսում իր ամսաերգամյան գործունեութիւնը Թովմաս Վանանդեցին: Հրատարակութեան «Առ համայն ընթերցողս Հայաստանեայց» հատվածում նա գրում է. «Քաջավարժից և հմտագունից, հարց և եղբարց ուսումնասիրաց բացայայտութիւն սակաւութեամբ, սակս առաջիկացելոյ գրոյս, Առնս մեծի Մօսէսի Խորենացույ. զորոյ զգտանէն, ամենուրեք սուղ՝ և պակաս, որպէս պարզագոյն է բանասէր տեսողաց: Ուստի և իմ նայելով յայսպիսի աղէտ անբերելի, բարոք վարկայ տպագրել թուովք նուազիւր, վասն անձեռնտու գոլոյ տեղւոյս. քանզի յարուցմունք պատերազմաց՝ և հեղմունք անբաւից արեանց. սասանեցուցին զբնաւ՝ և զբոլոր կալուածս Եւրօպայու, որք միշտ հնչեն՝ և գոչեն յունկն լսողաց ամենեցուն: Ուստի ես անպիտան, ունայն, և թափուր յամենից լաւաց՝ և օգտակարաց, Թօմաս ծառայ ծառայից Աստուծոյ. ՚ի վայելուչ Քաղաքէ Վանանդու Գողթնեաց, ձեռնամուխ եղեալ տպեցի զՋնաղավէպ՝ և Գեղեցկաշար Պատմութիւնս,

նախնեաց մերոց, և Հայկազունեաց Տոհմի, համեղ՝ և ախորժալուր
 ոնի»²⁴ (ընդգծումները մերն են — է. Թ.): Վանանդեցին, անշուշտ, գի-
 տակցում էր հատկապես խորհնացու երկի տպագրության կարևորությունն
 իր ժողովրդի համար և՛ որպես հայ մատենագիտության անօրինակ ար-
 ժեքի, և՛ որպես հայոց պատմությանը վերաբերող գիտաքննական առա-
 վել արժեքավոր աշխատության, և՛, վերջապես, որպես ազգի անցյալն
 ուսումնասիրելու լիակատար ուսումնական ձեռնարկի: Խորհնացու «Հա-
 յոց պատմութեան» հրատարակությունն արժեքավոր էր նաև նրանով, որ
 այն ևս մեկ փորձ էր օտար ընթերցողներին հայ ժողովրդի պատմական
 ու մշակութային հարուստ անցյալին ծանոթացնելու ուղղությամբ: Օտար
 բռնակալության տակ հեծող ժողովրդին հիշեցնելով իր արմատների վա-
 ղեմությունը, իր ազգային հերոսների առասպելական պայքարը օտար
 նվաճողների դեմ, իր ազգի փառավոր պատմությունը և այս ամենը Հա-
 յաստանի հարևան երկրների պատմության համեմատական քննությամբ,
 Վանանդեցին նպատակ ուներ հայ ժողովրդին ցույց տալ իր տեղը հա-
 մաշխարհային պատմության քառուղիներում, նշել, թե որտեղից է ինքը
 սերում և ինչ է ներկայացնում իրենից թե՛ քաղաքական և թե՛ մշակու-
 թային տեսակետից, և որքանով է արդարացիում նրա պայքարն իր գո-
 յությունը պահպանելու ուղղությամբ: Ինչպես Մ. Գրիգորյանն է նշում.
 «Թովմաս տպագրահայրը... կը խորհէր... ազգային ոգիով ու հպարտու-
 թեամբ ջրդեղել գիտակցութիւնը իւր հայրենակիցներուն, որոնք կը տա-
 ուայէին տգիտութեան յւ բռնակալութեան ներքեւ»²⁵:

Ամստերդամյան հրատարակությունների մեջ կային նաև այնպիսի-
 ները, որոնց տպագրությամբ, եթե շասենք կոքոսից փրկվեցին, ապա
 լայն տարածում գտան և ժողովրդի համար մատչելի դարձան հայ մշա-
 կույթի գանձերից շատերը: Խոսքը վերաբերում է «Շարակնոցներին»
 (տարբեր թվականների հրատարակություններ, որոնց լույսընծայումը
 մեծ բարդություն էր ներկայացնում այն իմաստով, որ, բացի հայկական
 տառատեսակների բազմազան գործածությունից, այստեղ շարականներն
 արտացոլված են նաև խաղերի միջոցով: Ահա թե ինչպես է բնութագրում
 այդ հրատարակությունները երաժշտագետ Ն. Թահմիզյանը. «...համար-
 ձակորեն կարող ենք պնդել, — գրում է նա, — թե նրանով (տվյալ դեպ-
 քում խոսքը ոսկանյան «Շարակնոցի» մասին է (1665 թ.) — է. Թ.) առ-
 հասարակ մեր շարականի խաղագրությունը տպագիր գրքին անցել է,
 եթե կարելի է ասել, նվազագույն կորուստներով...: ...Ոսկան Վարդապե-
 տը տպագիր առաջին շարակնոցին կցել է նրա օգտագործումը դշուրաց-
 նող մի շարք օժանդակ նյութեր ևս, որ և ավանդույթ է դարձել նրանից

հետո»²⁶։ Յանկանալով հնարավորին չափ ժողովրդին մատչելի դարձնել շարականի արվեստը, Ոսկան վարդապետը նպատակ է հետապնդել ցույց տալ նրան իր հոգևոր մշակույթի հարստությունները և դրանով իսկ հայ մշակույթի, տվյալ դեպքում հայ հոգևոր երգի գեղեցկությունը արմատավորել նրա մեջ։

Հայ ազատագրական մտքի ձևավորման ու մշակման գործում Ամատերդամի հայկական տպարանի ծավալած գործունեության մյուս ոլորտը նոր սերնդի կրթության, ժողովրդի մեջ լուսավորության տարածման նպատակի իրագործումն էր։ Ե՛վ Ոսկան վարդապետը, և՛ Վանանդեցիներն այս խնդրին մոտեցել են ամենայն պատասխանատվությամբ և ամեն ջանք գործ են դրել այն իրենց ապրած ժամանակին համապատասխան մակարդակով իրագործելու համար։ Նրանք քաջ գիտակցում էին, որ այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է ունենալ գիտաքաղաքական լուրջ պատրաստվածություն։

Այս կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Մի հայտնի չափով տպագիր գիրքը պիտի գիներ ընթերցողին մտավոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նրանց գիտակցությունը կաշկանդող խավարը ցրելու և նրանց ազատությունը ճնշող բռնակալության լուծը խորտակելու համար։ ...Ինչպես առաջներում՝ Որոտնեցու և Տաթևացու ժամանակ, հիմա ևս հայադավան եկեղեցու առաջավոր մարդիկ ձգտում էին տիրանալ գիտության և ուսուցման գեներին՝ եկեղեցու և ազգի հարատևությունը ապահովելու նպատակով»²⁷։

Թովմա Վանանդեցու թղթերի մեջ գտնում ենք նրա գերագույն նպատակն արտահայտող հետևյալ խոսքերը. «Իմ պատանեկությունից սկսած ես միտք եմ ունեցած իմ թեմում մի լատինահայկական դպրոց հիմնել։ Այս նպատակով Պարսկահայաստանից Եվրոպա բերել տուի իմ ազգական երեք պատանի (խոսքը Մատթեոս, Ղուկաս և Միքայել Վանանդեցիների մասին է— է. Թ.), որպեսզի նրանցից երկուսը ընտիր ուսումով եւ բարքով կրթուին, իսկ միւսը տպագրական արուեստին հմտանայ։ Տպարանը անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին գրեանք հասցնելու համար։ Այս երիտասարդներն եկան եւ լիովին իրականացրին իմ սպասածը։ Այժմ մնում է, որ նրանք էլ հնարաւորութիւն ունենան կրթել մեր այն թշուառ քրիստոնյաներին, որոնք գտնւում են խավարի մեջ եւ ապրում են բռնակալական լուծի տակ»²⁸։

Այն հանգամանքը, որ հայկական տպարանը շուրջ կես դար գործել է ժամանակի տնտեսական, գիտամշակութային ու լուսավորական այնպիսի մի կարևոր կենտրոնում, ինչպես Հոլանդիայի մայրաքաղաքն էր,

մեծ չափով նպաստել է Լ՛ Ոսկան Երևանցու, Լ՛ Վանանդեցիների լուսավորական, հասարակական-քաղաքական հայացքների, գիտական-փիլիսոփայական ըմբռնումների ձևավորման վրա:

1666 թ. Ոսկան Երևանցու կողմից հրատարակվում է «Այբբենարան եւ Քրիստոնէականի գիրքը»՝ «...հաղագս նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից...» (նաեւ՝ արանց դեռ եւս ոչ ուսելոց, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան եւ ի վարժումն ճահապէս ընթերցողութեան): Նույն տարում հրատարակվել է «Քերականութեան գիրքը», որը Սիմեոն Զուղայեցու և Կղեմես Գալանոսի (1645 թ.) քերականական երկերից հետո հարստացրեց մեր լեզվի ուսումնասիրության շրջանակները ևս մեկ տպագիր ձեռնարկով: (Նշենք, որ Զուղայեցու «Քերականութիւնը» ձեռագիր վիճակում էր: Այն գրվել է 1637 թ. և հրատարակվել միայն 1725 թ. Կոստանդնուպոլսում)²⁹: Բավական է անդրադառնալ քերականության մասին Ոսկանի բնութագրմանը, սահմանմանը, իմանալու համար, թե ինչպիսի գիտական մոտեցում է ցույց տալիս նա այս բնագավառին. «Քերականութիւն է հմտութիւն գործիական մարդկայնոյ քաղաքականութեան, բանականաբար ասելոյ, որև գրելոյ՝ զոր ինչ մտօք առնումք պարզապէս իւրաքանչիւրոյ իրի ծանօթութիւնս: ...ննթակայ քերականութեան է. ասացման և գրման պատշաճաւորութիւն և յարմարաւորութիւն»³⁰:

Ոսկանի «Քերականութեան գիրքը» որոշ հայագետների ու լեզվաբանների շրջանում լուրջ վեճերի առիթ է տվել, որպես լատինաբան քերականություն³¹: Ոսկանն իր գրքի հիշատակարանում նշում է, որ քերականությունը ոչ թե իր ստեղծագործությունն է, այլ, ժամանակակից տերմինով եթե ասենք, «կաղապարված է» լատինական քերականությունից. «...աշխատեալ թարգմանեցի ի բառբառոյ դաղմատացուցն ի հայս...»: Սակայն պետք է նշել, որ Ոսկանն այս քերականության մեջ առաջ է քաշել հայերենին հատուկ մի շարք սահմանումների նոր ընկալումներ, որոնք առավել հետաքրքիր են դարձնում երկը, որպես XVII դարի լեզվամշակութային արվեստի ստեղծագործություն³²: Ինչպիսին էլ լինե՞ր այդ քերականությունը, կրթության ու լուսավորության ծարավ ժողովրդի կյանքում այն կարևոր իրողություն պիտի լինե՞ր և սերունդներ պիտի կրթվե՞ին ոսկանյան քերականության սահմանած կանոններով:

Նշենք նաև, որ վերոհիշյալ երկու հրատարակություններով Ոսկան Երևանցին սկիզբ դրեց հայ աշխարհիկ գրականության պարբերական տպագրությանը (ընդգծումը մերն է— է. Թ.): Առաջներում էլ են հայ տպագրիչներն անդրադարձել աշխարհիկ բնույթի աշխատություններին

(տաղարաններ, բժշկարաններ և այլն), սակայն դրանք եղել են հատ ու կենտ, պատահական հրատարակություններ:

1675 թ. լույս տեսավ «Արհեստ համարողութեանց» աշխատությունը, որը հայերենով հրատարակված առաջին մասեմատիկական ձեռնարկն էր: Այն մեծ պահանջարկ ուներ ոչ միայն Հայաստանի դպրոցներում, այլև նրանից երկար ժամանակ օգտվում էին հայ վաճառականները: Սակայն առավել կարևոր էր այն հանգամանքը, որ այս գիրքը առաջին աշխարհաբար հրատարակությունն էր: Սա մեկ անգամ ևս ցույց է տալիս, թե որքան մեծ կարևորություն է տրվել մատչելի, ժողովրդին հասկանալի լեզվով գիրք ստեղծելու անհրաժեշտությանը: Այս թվաբանական-հաշվապահական ձեռնարկը թարգմանություն էր իտալերենից, բայց թարգմանչի անունը չի պահպանվել հիշատակարաններում³³: Սակայն մեզ համար կարևորն այն է, որ այստեղ մենք գործ ունենք «գրականացված բարբառի, այսինքն գրական աշխարհաբարի, ...հայ աշխարհաբարի հետ»³⁴:

Կրթական-լուսավորական բնույթի կարևորագույն ստեղծագործություններից էր նաև «Համատարած աշխարհացույցը», որը նախատեսված էր Թովմաս Վանանդեցու կողմից Հայաստանում հիմնվելիք կրթօջախներում սովորող երիտասարդների համար: Հաջորդ, 1696-ին հրատարակված «Բանալի համատարածի աշխարհացույցին մերոյ նորածնի» աշխատության «Առ Հայկասեռ Ընթերցողս» գլխում հեղինակը նշում է. «Ճկեղեցականաց, ոչ քնափից՝ ասեմ, ոչ թուլամտից՝ կամ, ուսումնատէից. այլ՝ քաջամտաց, ուսումնասիրաց՝ արթուն, և զուարթուն արանց, որքան օգտակար, և ձեռնտու իցէ՝ ծանօթութիւն այսր ազնուականի Գիտութեան՝ վասն գիտահասութեան Սուրբ, և Արտաքին Գրոց, նոցին ինքեանց ուշիմութեանն թողցուք՝ դատել՝ և դարակել»³⁵:

Զափազանց մեծ էր նաև «Աշխարհացույցի» կիրառական նշանակությունը: Այն աշխարհագրական իր ստույգ ճշգրտությամբ լավ նվեր էր հայ վաճառականներին: «Բայց՝ ևս քան զևս՝ առավելապէս պիտանանայ Վաճառականաց՝ մահաւանդ Հայկազարմից, որք ՚ի մէջ Ասիական՝ և Արեւելական Ազգաց, այսու գոնեա անուամբ Փառաւորք՝ և հնարագէտք երեւին, զի՝ յամենայն ազգաց Ընդունելիք, և ՚յոչ սակաւուց Սիրելիք. ընդ ամենայն աշխարհ զանբոյթ երթեկութիւն ունելով՝ զամենայն երկիր առ ոտն հարելով յաճախեն: Վասն որոյ՝ ոչ ընդվայր աշխատիմք, ՚ի շահ՝ յօգուտ Մերազնեացդ. ՚ի Լոյս ածելով զՀամատարած Աշխարհացույցն՝ Հայկական տառիւ՝ և բառիւ տպեցեալ»³⁶:

Վանանդեցիները, ձեռնարկելով «Համատարած աշխարհացույց» հրատարակելու գործը, դրան մոտենում էին ամենայն պատասխանատվությամբ: Նախ, քարտեզը մեկ տասնամյակից ավելի որպես ուսումնական ձեռնարկ պետք է ծառայեր հայ ուսանողներին: Սա ինքնին պահանջում էր հնարավորին չափ նոր ու գիտական մոտեցում: Բացի այդ, ինչպես ասացինք, հայ վաճառականների գործունեությունն այնպիսի ծավալուն չափեր էր ընդունել XVII դարում և ընդգրկում էր այնպիսի հեռավոր երկրներ, որ նրանց համար առաջին անհրաժեշտությունն առարկա էր ձեռքի տակ ունենալ հնարավորին չափ նոր, հանգամանալից ու ճշգրիտ քարտեզ, ուր անսխալ նշված լինեին հեռավոր ու մոտիկ երկրներին սահմանները, ծովային ու ցամաքային ճանապարհները և այլն:

«Համատարած աշխարհացույցը», որի հեղինակը Ղուկաս Վանանդեցին էր, հակառակ ժամանակին ընդունված կարգի, ոչ թե մի այլ քարտեզի պարզ արտատպությունն էր, այլ արդյունք էր ժամանակի համաշխարհային գիտությունը հայտնի համեմատաբար ճշգրիտ բազմաթիվ քարտեզների, նույնիսկ դեռևս գիտական շրջանառության մեջ չգտնվող աշխարհագրական ամենաթարմ նյութերի գիտական, քննական խստապահանջ համադրության³⁷: Այն տասնամյակներ շարունակ ծառայել է որպես ուսումնական ձեռնարկ և կրթել բազմաթիվ սերունդներ: Նրանով աշխարհագրություն են սովորել ոչ միայն հայ ուսանողները, այլև օտարազգիները, քանի որ իր հրատարակությունից բավական հետո էլ «Աշխարհացույցը» շարունակում էր արտատպվել օտարալեզու ձեռնարկներում³⁸:

Միանգամայն իրավացի է կենոն, երբ գրում է. «...Միայն այս մեծագործությունը բավական էր Թովմաս Վանանդեցու և նրա ընկերների անունները երախտապարտություն և անմոռաց հիշատակություն արժանացնելու, միայն այսքանը բավական է, որ Նուրիջանեանների տոհմը Ոսկան վարդապետի ետևից դասեր լուսաւորիչների թւում»³⁹:

Ուշագրավ է նորօրյա հետազոտողներից մեկի՝ Ս. վան Ռոյի նկատառումն այն մասին, որ «եթե հայ ժողովրդի ազատագրության ծրագրի իրականացման բաղաբական-դիմանագիտական բեռն իր ռեսերին էր վրում Իսրայել Օրին, ապա մշակութային մասն իրականացնում էր Թովմաս Վանանդեցին իր համախոհ-գործակիցներով»⁴⁰:

Հաջորդ տարին՝ 1696-ին, հրատարակվում է «Բանալի համատարածի աշխարհացույցին մերոյ նորածնի» աշխատությունը, որը հանրահայտ քարտեզի տրամաբանական շարունակությունն էր, նրա հանգամանալից բացատրագիրը: Առանձին գլուխներով մանրամասն ու գիտա-

կան բարձր մակարդակով Ղուկաս Վանանդեցին սահմանում ու բացատրում է այնպիսի աշխարհագրական հասկացություններ, ինչպիսիք են հասարակածը, միջօրեականը, արևադարձը, բևեռները, կլիմայափոխությունը, աշխարհագրական լայնությունն ու երկարությունը: Գրքում գետեղված է աշխարհի մայրաքաղաքների ու առավել նշանավոր քաղաքների (հատկապես առևտրական մեծ կենտրոնների) ամբողջ մի ցուցակ: Այստեղ ֆրանսիական, իտալական, արևելյան քաղաքների կողքին բավական հանգամանորեն տրվում են Մոսկվայի, Աստորախանի, Կազանի, Արխանգելսկի աշխարհագրական դիրքերը:

«Համատարած աշխարհացույցը» և նրա «Բանալին» բարձր են գնահատվել նաև ժամանակին: Դրա վառ ապացույցն այն է, որ «Աշխարհացույցի» գիտական արժեքների համար 1699 թ. Ղուկաս Վանանդեցին պարգևատրվել է Հոլանդիայի աշխարհագրական ընկերության հատուկ պատվոգրով⁴¹: Իսկ 1707 թ. Անգլիայում նրան շնորհվել է Արվեստների մագիստրոսի պատվավոր կոչումը⁴²:

Առհասարակ, բնական գիտություններին վերաբերող Վանանդեցիների հրատարակություններն առաջնակարգ ուսումնական ձեռնարկներ կարող էին լինել հայ ուսանողության համար: Թվենք դրանցից մի քանիսը:

1698 թ. հրատարակված «Համաձայնություն հնգետեսակ ամսաց Հոռոմայեցուց, Ազարիայի, Հայոց, Հրէից և Տաճկաց» գիրքը նախ և առաջ տոմարագիտական ձեռնարկ է, այստեղ Ղուկաս Վանանդեցին հրատարակում է 1616 թ. Ազարիա Զուղալեցու կողմից ստեղծված և հայկական գաղթօջախներում (Նոր Զուղա, Հնդկաստան և այլն) լայն տարածում գտած հայկական նոր տոմարը՝ համեմատելով այն չորս այլ տոմարների հետ: Ղուկաս Վանանդեցու կազմած տոմարագիտական տախտակները XVII դարի հայ տոմարագիտության անհերքելի նվաճումն են և զուր չէ, որ որոշ փոփոխություններով դրանք հետագայում բազմիցս հրատարակվել են:

Հաջորդ՝ 1699 թ. հրատարակվում է նշանավոր «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» աշխատությունը, որը բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ հաղորդելով XVII դարի առևտրական հարաբերությունների, տարբեր երկրների չափային, կշռային և դրամական միավորների ու նրանց հարաբերակցության մասին, բավական ուսանելի նյութ է պարունակում նաև մի շարք ժողովուրդների էթնիկական ինքնագիտակցության, սովորույթների, ազգային լեզուների, կրոնների վերաբերյալ: Դրանով Ղուկաս Վանանդեցին նպաստում ու դյուրացնում էր հայ վաճառականների ելումուտը Եվրոպայի ու Արևելքի

երկրներ: Գրքում նշվում էին այն շուկաները, ուր հայ վաճառականները եկամտաբեր առևտուր կարող էին անել, և ուր մեծ պահանջարկ ունեին Պարսկաստանից կամ Թուրքիայից բերված ապրանքները և այլն⁴³: Գրքի վերջում զետեղված է թվաբանական խնդիրների մի փոքրիկ հավաքածու՝ վաճառականների մտավոր կարողությունները մարզելու նպատակով:

Իսկ 1700 թ. հրատարակված «Ոսկեայ գուռն դպրատան» աշխատությունը, որը նախատեսված էր ցածր տարիքի աշակերտության համար, ուսուցանում էր հայկական. այբուբենը, տարրական հնչյունաբանությունն ու քերականական կանոնները, խոսքի մասերը, սովորեցնում էր թվաբանական գործողությունները, հարց ու պատասխանի միջոցով լուծում զանազան խնդիրներ ու վարժություններ: Երեխաները ծանոթանում են բարոյական հասկացության. տարրական նորմերին:

1702 թ. հրատարակված «Բնաբանութիւն իմաստասիրական կամ տարեբաբանութիւն» ուսումնասիրության մեջ Ղուկաս և Մատթեոս Վանանդեցիներն իրենց «բանասէր» եղբայրներին և ուսումնատենչ հայրենակիցներին հանգամանորեն ծանոթացնում են Ֆիզիկայի, քիմիայի, երկրաբանության բնագավառներում եվրոպական գիտնականների ձեռք բերած նվաճումներին:

Ահա այսպիսին է Վանանդեցիների կրթական-լուսավորական հայացքների ընդհանուր պատկերը: Ինչպես համոզվեցինք, այն բավական հեռու տանող հեռանկարներ ու լայն մասշտաբներ ունի: Եվ եթե Վանանդեցիների լուսավորական հայացքները շարադրված էին սիստեմատիկորեն, շուրջ մեկ տասնյակ գիտական աշխատությունների և ուսումնական ձեռնարկների մեջ, ապա նրանց սոցիալ-քաղաքական ըմբռնումները, ազատագրական պայքարին վերաբերող մտքերը սփռված են նրանց ողջ գրական ժառանգության մեջ:

Վանանդեցիների ազատագրական հայացքներով տարբեր ժամանակներում զբաղվել են բազմաթիվ մասնագետներ: Այս պորբլեմին անդրադարձել են և՛ լեոն, Ա. Հովհաննիսյանը, Մ. Գրիգորյանը, Հ. Միրզոյանը⁴⁴: Հիմնվելով Վանանդեցիների աշխատությունների, ինչպես նաև վերջ թվարկված գիտնականների տեսակետների վրա, փորձենք որոշ դիտարկումներ կատարել ու լուսաբանել Վանանդեցիների և հոլանդահայ գաղութի այլ ներկայացուցիչների ազատագրական հայացքներն ու գործունեությունը:

Վանանդեցիներն ապրում ու ստեղծագործում էին իրենց ժամանակի ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական բարձր զարգացում ունեցող երկրներից մեկում: Մոցիալական մեծ տեղաշարժեր,

հին ֆեոդալական հասարակարգի խարխուլում, բուրժուական հեղափոխություններ, նոր բուրժուական հարաբերությունների սաղմնավորում, ազգային անկախության համար մղվող պատերազմներ, այս ամենը տեղի էր ունենում նրանց աչքի առջև: Բնականաբար, նրանք չէին կարող անտարբեր լինել հասարակական-քաղաքական նշանակալից այդ իրադարձությունների նկատմամբ և ակամա իրենց հայացքն ուղղում էին դեպի հայրենիք: Նրանք իրենց քաղաքական հայացքներն արտահայտում էին հին ու նոր Կտակարանների հանրահայտ տողերի արանքում, բարոյագիտական տրակտատների ավանդական շարադրանքն ընդհատելով, շատ հաճախ երազների խղճով մեկնաբանությունների ու գուշակությունների ձևով, բայց արտահայտում էին և այն էլ բավական համարձակ:

Ամենից առաջ նրանք խոսում էին պատերազմների մասին, նշելով, որ դրանք կործանարար ազդեցություն են ունենում ժողովրդի վրա, թափվում է անմեղների արյունը, երկիրը դառնում է ավերակ, մարդիկ թրշվառանում են, ի հայտ են գալիս գողեր ու ավազակներ, և այդ ամենը իշխանների ու թագավորների քմահաճույքի արդյունքն է: «...ի կողմանէ թագաւորին հասանիցին մարդոց սաստիկ նեղութիւնք և տրտմութիւնք...»⁴⁵: Պատերազմների ընթացքում և հետո «Թագաւորք, և իշխանք դիցեն հարկս ծանունս 'ի վերայ ժողովրդեանն, զի կատարեսցեն զարարս անիրաւս»⁴⁶: Հետաքրքրական է Ղուկաս Վանանդեցու այն տեսակետը, ըստ որի գոյություն ունի երկու տեսակի գերություն՝ անտեսանելի և տեսանելի: Եթե խաղաղ տարիներին առանձնապես չի նշմարվում ժողովրդի թշվառ վիճակը, նրա գերությունը, ապա պատերազմների ժամանակ «տեսանի անտես գերութիւն մարդոց»⁴⁷: Ղուկաս Վանանդեցու այս կարևոր դիտարկումը նրան հանգեցնում է մի այլ եզրակացություն՝ ժողովուրդը միշտ չէ, որ դիմանում է թագավորների ճնշմանը, հաճախ «...ի պատճառէ կռուից մարդիկ անձկանան և սրտնեղին յիրեանց թագաւորէն... ոամկական ժողովուրդն ամբոխիցի... բանտք բռնութեամբ բացեալ լինին, և բազումք 'ի բանտարգելացն ելանիցեն» և նույնիսկ լինի «անհնազանդութիւն ոամկաց առ թագաւորն, և կորուստ թագաւորութեան իմեք», ուստի իշխաններն ու մեծավորները «...ինքեանք անկցին 'ի նոյն գուրն, զոր այլոց փորեցին»⁴⁸: Ահա, թե ինչպիսի ընդհանրացումներ կարող է անել XVII դարի հայ դպիրը, իր ժողովրդին ցույց տալու համար, որ երբեք էլ ուշ չէ ճնշողների ու հարստահարիչների դեմ պայքարելու համար: Այո, Ղուկասն ասում է պատերազմները, սակայն ժողովրդական մասսաների պայքարն իր իրավունքներն ու հայրենիքը պաշտպանելու համար նա «Օրինազանցութիւն» չի համարում: Այստեղից

էլ բխում է Ղուկաս Վանանդեցու տեսակետը արդարացի և անարդարացի պատերազմների մասին: Պատերազմների, դրանցում ժողովրդական մասսաների խաղացած դերի մասին այս ընդհանուր խոհերից ու եզրակացութիւններից բացի, Ղուկաս Վանանդեցին անդրադառնում է նաև հայ իրականութեանը: Նրա դիտողութիւններից ու գուշակութիւններից շատերը նպատակ ունեն օտար լծի տակ հեծող հայ ժողովրդին ազատագրական ոգի ներշնչել, արթնացնել նրա մեջ օտար լծից ազատագրւելու ցանկութիւն:

Բացահայտելով իր նվիրական ցանկութիւններից մեկը, հերթական գուշակութիւններից մեկում, արևի դիրքի հետ կապված, Ղուկաս Վանանդեցին ասում է. որ դա «է նշան՝ որ տաճկաց թագաւորն սաստկապէս նեղիցի չիւր թշնամեացն, և գուցէ (ընդգծումը մերն է— է. Թ.)՝ ի նոցանէ առցէ զմահն՝ հանդերձ արիւնահեղ կոտորուածովք զինուորացն»⁴⁹:

Վանանդեցու այս «և գուցէ» արտահայտում էր այն մեծ հույսը, որ XVII դարի ազատատենչ հայ մտավորականութիւնը կապում էր եվրոպական մի շարք երկրների՝ Թուրքիայի դեմ ծրագրվող արշավանքի և Հակաթուրքական լիգա ստեղծելու հետ: Այս հարցի դրսևորումներից մեկն էլ Իսրայել Օրոս 1699 թվականին կազմած «Պֆալցյան» ծրագիրն էր:

Աշխարհագրագետ Մ. Խաչատրյանը ցույց է տալիս Պետրոս Մեծի և Վանանդեցիների միջև եղած ծանոթութեան հնարավորութիւնը, կապված «Համատարած աշխարհացույցի» հրատարակութեան հետ:

Զանազան փաստաթղթերից հայտնի է⁵⁰, որ Թովմաս Վանանդեցին և Իսրայել Օրին որոշակի դիվանագիտական հարաբերութիւններ են ունեցել Ավստրիայի Լեոպոլդ կայսեր հետ: Փաստերի մի այլ խումբ թույլ է տալիս ենթադրելու, որ Օրին և Վանանդեցիները ոչ միայն ծանոթ էին, այլև, բացառված չէ, որ համագործակցել են⁵¹: Այս ենթադրութիւնն առավել ևս հիմնավոր կլիմա, եթե նկատի առնենք Աշոտ Հովհաննիսյանի կողմից բերվող այն փաստը, որ Օրին Մոսկվա մեկնելուց առաջ եղել է Ամասերգամում և ինչ-ինչ միջոցներով զենք և հանդերձանք է գնել շախմբի անդամների համար⁵²: Վերը հիշված «ինչ-ինչ միջոցների» տակ պետք է ընկալել հոլանդահայ վաճառականների՝ Իսրայել Օրոն ընձեռած հնարավորութիւններն ու նշութական օգնութիւնը⁵³: Այստեղից էլ, եթե վաճառականները ճանաչում ու օգնում էին Իսրայել Օրոն, ապա ժամանակի ամենաառաջագեմ հայացքներով օժտված և իրենց ազգի ազատագրութեան համար մտածող Վանանդեցիները չէին կարող ծանոթ չլինել նրան և նրա ազատագրական ծրագրին:

Եթե այս միտքը հաստատվի այլ փաստարկներով ևս, ապա վստահորեն կարող ենք ասել, որ Վանանդեցիները ազատագրական գաղափարի ոչ միայն տեսական կրողներն էին, այլև, պետք եղած դեպքում, գործնական աջակցություն էին ցույց տալիս դրան:

Օրու և Վանանդեցիների գործնական կապերի օգտին կարող ենք նշել այլ փաստեր ևս: Հատկապես աչքի է զարնում մի կարևոր հանգամանք՝ Ռուսաստանին մեծ տեղ է տրվում Վանանդեցիների հրատարակություններում: Մինչ այդ հայ գրականության մեջ Ռուսաստանը հրեք չէր պատկերվել նման ճշգրտությամբ ու մանրակրկիտությամբ: «Համատարած աշխարհացույցը» հանգամանորեն անդրադառնում է Ռուսաստանի քաղաքական սահմաններին ու հիմնական առևտրական կենտրոններին: Դրանից դատ, «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ ևս դրամից բոլոր աշխարհի» աշխատության մեջ հատկապես շեշտվում է այն հանդամանքը, որ ռուսական մաքսատները հայ վաճառականներից միայն փոխադրվաճ են վերցնում: Վանանդեցիներն իրենց բազմաթիվ գիտական աշխատություններում զանազան երևույթների, իրերի, նյութերի թվարկման ժամանակ այլ լեզուների հետ միասին բերում են նաև դրանց ռուսերեն անվանումները:

Բերենք հոլանդահայ վաճառականության՝ Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններն արտահայտող պերճախոս մի վկայություն: Պետրոս Առաջինը Ամստերդամում ապրող և իրենց առևտրական գործունեությունը ծավալող Աբրոյան⁵⁴ երեք եղբայրներին, նրանց զավակներին, թոռներին և առհասարակ նրանց կողմից ներկայացած որևէ անձնավորության Ռուսաստանի սահմանամերձ որևէ քաղաքի՝ լինի դա Ժովալին, Կամաքալին, թե գետալին՝ մաքսատնից անցնելու դեպքում շնորհում է կայսերական ամենամեծ արտոնություններից օգտվելու իրավունք⁵⁵: Կայն հնարավորություններ էին տրվում նրանց առևտուր անել թե՛ Ռուսաստանի տարածքում, թե՛ ճամփորդելիս՝ Ռուսաստանի վրայով Պարսկաստան ապրանք տեղափոխելիս: «...а сверх того ничего от них самих и от прикащиков их вымогать и им ни каких налогов и озлобления чинить никто из подданных наших (կայսերական — է. Թ.), под опасением нашего гнева и жестокого штрафа, отнюдь да не дерзает...»⁵⁶:

Այս փաստերը մեզ հանգեցնում են այն մտքին, որ Օրու ռուսական կողմնորոշման ձևավորման մեջ փոքր չի եղել նաև հոլանդահայ գաղութի որոշ ներկայացուցիչների, հատկապես Վանանդեցիների՝ հայ առաջավոր մտքի ներկայացուցիչների դերը, որ նրա կառույկ շրջադարձը

(«Պֆալցյան» ծրագրից «Մոսկովյան» ծրագիր) ինչ-որ ձևով կապված էր Վանանդեցիների միջանկյալ օղակով: Մեր կարծիքով հետագա ուսումնասիրությունները պետք է, որ դան հաստատելու այս միտքը:

Որ Վանանդեցիների դերը հայ ազատագրական պայքարում շատ հեռու էր սոսկ տեսական լինելուց, հաստատվում է նաև այլ փաստերով: Այս խնդրին անդրադարձել է նաև Հ. Միրզոյանը իր «17-րդ դարի հայ փրկիստիպայական մտքի վերլուծություն» աշխատության մեջ⁵⁷: «Բնաբանություն իմաստասիրական կամ տարերաբանություն» աշխատության մեջ Ղուկաս Վանանդեցին, ի թիվս այլ բնական հանածոների, խոսում է նաև աղբրի մասին և շատ անսպասելի հայտնում, որ նատրիումական աղից «կամ 'ի շօրայից, 'ի ծծմբոյ և 'ի գործելեաց» (որ անձող կամ ածուխ ևս ասի) յօրինի, և կազմի հրային փոշին՝ որ գուհկօրէն բարութ ձայնի»⁵⁸: Ապա հեղինակը աղյուսակների միջոցով հանգամանորեն բացատրում է, թե զենքի որ տեսակի համար հրային փոշին ինչ համամասնություններ է պատրաստվում: Մի՞թե սա այն բանաձևը չէ, որի արդյունքները մի քանի տարի անց պիտի կիրառվեին Ամատերդամից հարյուրավոր մղոններ հեռու, հայկական լեռներում:

Ինչպես համոզվեցինք, հոլանդահայ գաղթօջախի ներկայացուցիչները ևս անմասն չեն մնացել XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժումների նախապատրաստման, դրանք գաղափարապես և, մեր կարծիքով, նաև ոչ միայն գաղափարապես զինելու գործից: Ելումուտ ունենալով Եվրոպայի առաջադեմ երկրներ, հատկապես բուրժուական հալածվածության զարգացում ապրող Հոլանդիա՝ հայ վաճառականներն ու մտավորականությունը հայրենիք էին բերում ոչ միայն ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը բուրժուական գաղափարներ ու գրականություն, այլև եվրոպական պատերազմների ու հեղափոխությունների փորձը:

Այնպես որ, փոքրաթիվ հոլանդահայ գաղութի դերը, թեկուզ ոչ անմիջական և ոչ շրջադարձային, սակայն նշանակալից է եղել XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժումներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Ղ. Ալիշան, Սխական, Վենետիկ, 1893, էջ 460—461: Ա. Սարուխան, Հոլանդիան և հայերը ԺԶ—ԺԹ դարերում, Վիեննա, 1926, էջ 43—45:

² Գ. Գ. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 22.

³ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 460: Ալիշանը խոսում է այն մասին, որ Բյուզանդիայի իմպերատորի մարտադրական աշխատակիցներից մեկն իր տարեգրքում «յիշէ նաւահանգիստ

մի» կայացցո, որ Կիլիկիայի Այսա քաղաքն է, որտեղից, ինչպես «ի գիրս մի վիպասա-
նից Փռանկաց ասի, բամբակ և այլ պէսպէս համեմունք ի Հայոց զան Պրիւս և յերկիրն
Յիւնդրայ»: Նաև Ա. Սարուխան, նշվ. աշխ., էջ 44:

4 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 461: Ա. Սարուխան, նշվ. աշխ., էջ 44:

5 Ա. Սարուխան, նշվ. աշխ., էջ 12:

6 S. van Rooy, Armenian merchant habits as mirrored in 17--18-th century
Amsterdam documents. Revue des Études arméniennes. N. S., P., t. III, 1966,
p. 349.

7 R. A. Bekius, The Armenian community in Amsterdam in the 17-th and
18-th centuries. Integration and disintegration. Paper presented at the 1-st con-
ference of the Association International des Etudes arméniennes, Amsterdam,
1983, p. 3.

8 Նույն տեղում, էջ 6:

9 Նույն տեղում: Հեղինակը նշում է այս նկարիչների ու քանդակագործների՝ Քաղա-
քային թանգարանում (Municipal Museum) պահվող համապատասխան աշխատանքների
թանգարանային գույքահամարները (վան Բիրստրատեն՝ Ը—6658, Բերկհիյդե՝ Ը—26900,
վան Ուլֆտ՝ առանց նեղատիվային համարի):

10 Le Amsterdammer, 1887, օգոստոսի 14-ի համարը:

11 Ամստերդամի հայկական եկեղեցու պատմությանը հանգամանորեն անդրադարձել
է Ա. Սարուխանը իր վերահիշյալ աշխատության մեջ (էջ 146—173): 1874 թ. հայկական
եկեղեցու շենքը վաճառվել է և վերածվել կաթոլիկ իգական դպրոցի, որը գործում էր
մինչև վերջերս: Հռոմեոհայ ժամանակակից համայնքի ջանքերի շնորհիվ պատմական
մեծ արժեք ունեցող հայկական եկեղեցու շենքը այսօր վերադնվել է և նորից պատկա-
նում է տեղի հայկական գաղթօջախին (տե՛ս Ն. Մելիքյան, Ամստերդամի հայկական
եկեղեցու վերադնումը, էջմիածին, 1986, № ք, էջ 35—38):

12 Ամստերդամի հայկական տպարանի հիմնադրման, նրա գործունեության և հրա-
տարակոթյունների ուսումնասիրման անդրադարձել են Գ. Զարբանյանը, Լեոն, Գ. Լե-
վոնյանը, Ա. Սարուխանը, Ռ. Իշխանյանը, Մ. Գրիգորյանը, Կ. Ամատունին և այլք:

13 «Շարակնոց, Երաժշտական Երգեցմունք հոգևորականք», Ամստերդամ, 1685,
էջ 779:

14 Նույն տեղում, էջ 777:

15 Ոսկան Երեանցու կենսագրությունն առաջին անգամ հրատարակվել է 1699 թ.
Ամստերդամում, հեղինակի կենդանության օրոք լույս տեսած Ա. Դավրիժեցու «Գիրք
պատմութեանց» երկի Մէ գլխում և, քանի որ տվյալ գլխի հեղինակը Դավրիժեցին չէ
(մասնագետների կարծիքով այդ գլուխը գրքի մեջ զետեղվել է հենց ինքը՝ Ոսկան Երեան-
ցին), ուստի «Պատմութեան» հետագա հրատարակություններում (վաղաքապատ՝ 1884,
1896) այն իրավացիորեն հանվել է: Այս մասին մանրամասն տե՛ս Լ. Կ. Դանելյան,
Առաքել Դավրիժեցու երկը, որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղ-
բյուր, Երևան, 1978, էջ 32—33, 2. Միրզոյան, Առ. Դավրիժեցու «Պատմութեան» առաջին
հրատարակության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 190—197:
Պետք է նշել, որ Ոսկան Երեանցու ինքնակենսագրությունը, հանվելով հետագա հրատա-
րակություններից, շուրջ երեք հարյուր տարի չի արժանացել լիակատար քննական ուսում-
նասիրության, չնայած որ իրենց կրկնում նրա գործունեությանն անդրադարձել են
Գ. Զարբանյանը, Ա. Ղադիկյանը, Մ. Օրմանյանը, Մ. Զամչյանը, Գ. Ալիշանը, Լեոն,

Ա. Սարգսյանը և ուրիշներ: Ոսկանի ինքնակենսագրությունը 1966 թ. հրատարակվել է «Հասկ» և «Սիրոն» ամսագրերում (№ 2—3 և 3—5)¹ Աստվածաշնչի հրատարակության 300-ամյա հոբելյանին նվիրված բացառիկ համարներում: Նման բացառիկ համարներ են հրատարակել նաև «Հանգեռն ամսօրյան», «Բազմավեպը» և «Էջմիածինը»: Ոսկան Երեանցուն նվիրված ուսումնասիրություններ են կատարել նաև Բ. Իշխանյանը, Կ. Ամատունին, Ս. Ճևմենյանը, Ա. Գալստյանը, Ն. Տեր-Ներսեսյանը, Ս. Քոլանջյանը և այլք: 16 Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 661, 662, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 340, Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի բնական վերլուծություն, Երևան, 1983, էջ 17—18:

17 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 340:

18 Յ. Շրլոդեր, Արամեան լեզուին գանձ, Ամստերդամ, 1711, էջ 357, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 340, Հ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի բնական վերլուծություն, Երևան, 1983, էջ 17—18:

19 Մ. Գրիգորյան, Նոր էությունը և դիստոֆիաններ հրատարակել է Վանանդեցոյց ձախին, Վիեննա, 1969, Փաստաթղթեր Ա, Գ, Զ, է, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ:

20 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 340:

21 Հայտնի է, որ ոսկանյան Աստվածաշնչի համար որպես բնօրինակ է ծառայել Հևիում Բ (1289—1301) թագավորի պատվերով Կիլիկիայում 1295 թ. գրված գրչագիր Աստվածաշունչը: Նկատենք, որ ոսկանյան Աստվածաշնչի բնօրինակի խնդիրը երկար ժամանակ ճշգրտված չի եղել և հայագետների կողմից տարակարծությունների առիթ է տվել (այս մասին մանրամասն տե՛ս Ս. Է. Քոլանջյան, Հևիում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը, էջմիածին, 1966, № ԺԱ—ԺԲ): Սրան հատկապես նպաստում է այն հանգամանքը, որ ոսկանյան հրատարակությունը փոքր-ինչ տարբերվում է Հևիում Բ-ի գրչագիր օրինակից, այն տեսված է, գլուխների բաժանված՝ ըստ լատինական վուլգատայի: Զետեղված են որոշ գլուխներ, որոնք բացակայում են արքայական օրինակում: Սակայն սա ոչ այնքան Ոսկան Երեանցուն լատինամոլության, որքան ժամանակի կաթոլիկ աշխարհում այդ հրատարակությունն իրականացնելու և կաթոլիկ կրոնավորների համար այն անխոցելի դարձնելու Էսսին է խոսում: Բացի այդ, ինչպես Ս. Է. Քոլանջյանն է նշում իր հոդվածում (էջ 129), Ոսկանը նպատակ ուներ այն տարածել նաև հայ կաթոլիկ կղերականների շրջանում, ինչպես նաև կաթոլիկ երկրներում ծվարած և ձուլման կգրին գտնվող հայկական դպրավայրերում:

22 Այս մասին մանրամասն տե՛ս Н. Я. Марр, Сборники притч Вардана. Материалы для истории средневековой армянской литературы, СПб., ч. 1. 1899, § 91, с. 98—100.

23 Լատիներեն թարգմանությունը պահվում է Փարիզի Ազգային գրադարանում՝ Nouv. Acq. lat., 2083 (Supl. Arm. 85): Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Անանյան, Ոսկան վարդապետի լատիներեն թարգմանությունը Կորինի «Վարք ս. Մեսրոպայ» համառոտ պատմության, Բազմավեպ, 1966, № 9—10, էջ 273—274:

24 Թովմաս Վանանդեցին խորհեացու երկը հրատարակել է «Ազգաբանութիւն տոհմին Յարկեան, յորինեցաւ ՚ի Մովսիսէ խորհեացոյ, յեռանձ վարդապետէ, և յոգնեալստ Քերթողաշօրէ» վերնագրով:

25 Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 26:

26 Ն. Թախմիզյան, Ոսկան վարդապետն ու խաղաղությունն արվեստը, էջմիածին, 1966, № ԺԱ—ԺԲ, էջ 163:

27 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երեւան, 1959, էջ 171, 172:

28 Բարձրագույն ուսումնարանի ստեղծման Թ. Վանանդեցու ծրագրի հրատարակությունը (լատիներեն) տե՛ս Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., փաստաթուղթ Ն, էջ 106—108: Մենք օգտագործել ենք փաստաթղթի համառոտ թարգմանությունը. տե՛ս Ա. Սարգսյան, Բեկդիս և հայերը, Վիեննա, 1937, էջ 145—147: Այս մասին տե՛ս նաև J. Vannérus, Note sur une imprimerie Arménienne établie à Amsterdam en 1695, Revue des bibliothèques et archives de Belgique, (fasc. 4), Bruxelles, 1906, p. 313—314.

Հայ ժողովրդի, հատկապես նախիջևանի հայության սոցիալական ու քաղաքական ծանր վիճակի մասին են խոսում XVII դարի վերջին նախիջևանում դրված հայկական ձեռագրերի հիշատակարանները.

«Նւ եղև զի ի նոյն ժամանակի շարագործ դարագլուխ ոմն յղեալ ի Թագաւորէն (իւմ՝ Պարսից— է. Թ.), իյրև թէ կամէր զՎրաց տուն երթալ, և ժողովեաց անթիւ դարս ի վերայ իւր զմեծամեծս և փոքունս, որ իբրև զաւազ ծովու և զաստեղս յերկնիս. և եկեալ վերջև ելլին ամ՝ խաբեութեամբ շրջեցաւ յերկիրս Աղտանից, Գանձալու, Գեղարբունու, Սիւնեաց և Բարգուշտու. և մասն ինչ ի Դոդքնեաց, ոչ կայ առնելով ի տեղի ուրեք, և ոչ ամենեկին կասկած ունելով ի Թագաւորէն և կամ ալլոց մեծամեծաց. և բազում սառտ քիստոնեայք, զսուրբ և զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին... և միաբանեցան ընդ Պարսից (տե՛ս Գ. Զարպիսեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց դար Դ—ԺԳ, Վենետիկ, 1889, էջ 614), (ընդգծումները մերն են— է. Թ.):

«Ի դառն եւ յանբարի ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց եւ թողլոց մեղ զօրէնս Աստուծոյ, մատնեալ կամբ ի ձեռն ժանդարարոյ ազգին Պարսից, զոր իբրեւ անսաստալիք ծովու յարուցեալք են ի վերայ սրբոյ եկեղեցւոյ և յորդոց նորին, եւ կամին կլանել: Զոր եւ ի սոյն ամի հրաման դառնութեան ել ի դրանէ Թագաւորին, զի զվաճէ, զանպատմ եւ զեկեղեցիք հանդերձ բնակչօք իւրեանց ի ներքոց ծաւր հառկողքն, զի ղեռ նոր է բորբոնեալ հուրս այս: ... (Ցուցակ տիփսիսեցի Աբգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի, Երկասիրեց Յրանց Նիկողաոս Ֆինկ, Լայպցիգ, 1903, էջ 159—160)» (ընդգծումները մերն են— է. Թ.):

29 Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի, Երևան, 1971, էջ 37—46, Հ. Միրզոյան, Սիմեոն Զուղայեցի և Ոսկան Երևանցի, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1978, № 3:

30 Ոսկան Երևանցի, Քերականութեան գիրք, Ամստերդամ, 1666, էջ 3:

31 Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Տեր-Ներսիսյան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները, Բազմավէպ, 1966, № 9—10, էջ 310—321:

32 Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Մխիթարյան, Ոսկան Երևանցին իբրև քերականագետ, էջմիածին, 1966, № ԺԱ—ԺԲ, էջ 210—216:

33 Այս մասին մանրամասն տե՛ս Ռ. Իշխանյան, Ոսկանյան տպարանը և նրա հրատարակած Աստվածաշունչը, էջմիածին, 1966, № ԺԱ—ԺԲ, էջ 136:

34 Նույն տեղում:

35 Ղ. Վանեղեցի, Բանայի Համատարածի աշխարհացուցին մերոյ նորածնի, Ամստերդամ, 1696, էջ 2:

36 Նույն տեղում:

37 Այս մասին մանրամասն տե՛ս Բանբեր Երևանի Համալսարանի, 1971, № 1, էջ 187—192: Պետք է նշել նաև որ համարյա նույն տարիներին Սկոնբեքեկ եղբայր-ների մոտ, ուր փորագրվել են «Համատարած աշխարհացույցի» տախտակները, փորագրու-թյան արվեստի մեջ հմտանալու նպատակով սովորել է նաև Պետրոս 1-ինը: Նրա նա-խաձեռնությամբ 1639 թ. Ամստերդամում հրատարակվում է կիսազնդերի բաժանված ծա-վալուն մի քարտեզ՝ «Աշխարհի գլոբուսի պատկերացույց» վերնագրով, որը, ըստ Մ. Խա-չատրյանի իրավացի եզրակացության, որպես նախատիպ ունեցել է Վանանդեցիների հրատարակած «Աշխարհացույցը» (նշվ. հոդվածը, էջ 190—193): Այս մասին տե՛ս նաև Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, էջ 4645:

38 Հ. Պապեսյան, Աշխարհի ամենազնդեցիկ քարտեզը հայերեն լեզվով, Հոսարեր, Ջուհրի, 1944, դեկտեմբերի 9-ի համարը:

39 Առ, նշվ. աշխ., էջ 297:

40 S. van Rooy, Oldest printed Armenian World Map Appeared in Amster-
dam in 1695, Prague, New Orient, 1968, № 1.

41 Մ. Խաչատրյան, Հայ է ուս քարտեզագրության կապերը 17-րդ դարում, ՊԲՀ, 1966, № 2, էջ 183:

42 Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 74:

43 Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս աշխատությունը գրելիս Ղ. Վա-
նանդեցին օգտվել է XVII դ. հնդկնակ Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածոդվից»
(1687 թ.): Այս մասին տե՛ս Լ. Խաչիկյան, Le registre d'un marchand Arménien en
Perse, en Inde et au Tibet (1682—1693), Annales, Economies, Sociétés, Civili-
sations (Extrait du № 2, Mars, Avril). P., 1967, p. 266. Հ. Միրզոյան, նշվ. աշխ.,
էջ 64, է. Խ. Թաշիրյան, Ղ. Վանանդեցու «Գանձ լափոյ, կշոյ, թոյն եւ դրամից բոլոր
աշխարհի» աշխատության հայկական աղբյուրների հարցի շուրջ, ՀԽՍՀ ԳԱ պատմու-
թյան ինստիտուտի երկուստարգ գիտաշխատողների 19-րդ նստաշրջանի զեկոնցումների
թեզիսներ, Երևան, 1985, էջ 6—7:

44 Առ, նշվ. աշխ., Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., Մ. Գրիգորյան, նշվ. աշխ.,
Հ. Միրզոյան, նշվ. աշխ.:

45 Ղ. Վանանդեցի, Համաձայնություն հնգետեսակ ամսոց Հոսմայեցոց, Ագարիայի,
Հայոց, Հրէից եւ Տաճկաց, Ամստերդամ, 1698, էջ 61:

46 Նույն տեղում, էջ 62:

47 Նույն տեղում, էջ 68:

48 Նույն տեղում, էջ 62, 63, 65, 68, 74, 76:

49 Նույն տեղում, էջ 69:

50 Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 212—213:

51 Առ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 95: Մ. Խաչատրյան, նշվ. աշխ.,
էջ 162:

52 Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 560:

53 Հ. Միրզոյան, նշվ. աշխ., էջ 162: 1707 թ. մայիսի 10-ին Ամստերդամից Ար-
խանդեկսկ են հասնում Օրու ծանրոցները: Օրու կողմից Պետրոս Առաջինին ուղղված նա-
մակում, 1707 թ. հուլիսին, ուր ներկայացված է այդ ծանրոցների բովանդակությունը,
հիշատակվում են նաև «три сундука оружия, фузей и пистолей, шесть маленьких
пушечек железных» (см. Армяно-русские отношения в первой трети XVIII века.

Сборник документов. Т. II, ч. I, под ред. А. Г. Иоаннисяна, Ереван, 1964, док. 117, с. 279; ср. Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян, Ереван. 1968, с. 59, сн. 194).

54 Արրոյան եղբայրների մասին մանրամասն տե՛ս Վ. Զաղախյան, Հիշատակարան, Կահիրե, 1941, էջ 35:

55 Այս հրովարտական ամբողջությամբ հրատարակված է «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. I, док. 42, с. 105—107.

56 Նույն տեղում, էջ 106:

57 Հ. Միգրոյան, նշվ. աշխ., էջ 165:

58 Ղ. Վանանեցի, Բնաբանություն իմաստասիրական կամ տարեբարանություն որ է րան, Ամստերդամ, 1702, էջ 62:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՐ XVIII ԴԱՐՈՒՄ

Ռուսաստանի հայ գաղթավայրերը նշանակալի դեր էին խաղում հայ ժողովրդի ազատագրական շարժումների մեջ: Դրան նպաստում էին մի շարք պատմական, տնտեսական, քաղաքական և այլ գործոններ: Ռուսաստանի հայ գաղութներից միայն Աստրախանում տեղի ունեցավ բոլոր այդ գործոնների բարենպաստ զուգակցումը: Դա վճռական նշանակություն է ունեցել հայ ժողովրդի ազատագրական պայքարում Աստրախանի հայ գաղութի տեղը որոշելու համար:

Աստրախանի աշխարհագրական ու ռազմաստրատեգիական բացառիկ դիրքը Վոլգայի գետաբերանում, որպես Ռուսաստանի հարավարևելյան տիրույթների ֆորպոստի, հանրահայտ է: Դրա շնորհիվ Աստրախանը եղել է տնտեսական ու քաղաքական կապերի կարևոր հանգույց և ռուսական կառավարության ռազմական ու դիվանագիտական զանազան միջոցառումների մշտական ելակետ:

Աստրախանի գաղութը Ռուսաստանի հայ ամենահին գաղթավայրերից մեկն էր: Հայերն այնտեղ ապրել են քաղաքը Ռուսաստանին միացնելու հենց առաջին տարիներից, այսինքն՝ XVI դարի կեսերից:

XVII դարի երկրորդ կեսից աշխուժանում է Զուլայի հայ առևտրական ընկերության գործունեությունը: Աստրախանի հայերի թվաքանակը աճում և նրանց առևտրաբաղյուճաբերական գործունեությունը ակտիվանում է հատկապես XVIII դարի առաջին կեսին, մի կողմից, Պետրոս Առաջինի և նրա հետևորդների հովանավորող քաղաքականության, մյուս կողմից՝ 1720-ական թվականների ազատագրական շարժումների վայրէջքից հետո, Անդրկովկասից հայ բնակչության զանգվածային գաղթի շնորհիվ: XVIII դարի կեսերին Աստրախանի հայ բնակչության քանակը հասնում էր մեկ ու կես հազարի:

Աստրախանը մեծ դէր էր կատարում Ռուսաստանի արեւելյան առևտրի, մանածագործական արդյունաբերության և տնտեսութեան այլ հնուդերում: Հայերը մասնակցում էին քաղաքի առևտրատնտեսական կյանքին և միաժամանակ ապրում իրենց հայրենիքի հոգսերով: Աստրախանի հայ բնակչությունը զգալի չափով կազմված էր Իրանից և Անդրկովկասից նոր եկած գաղթականներից, որոնք մասնակցել էին XVIII դարի առաջին երեսնամյակի ազատագրական շարժումներին և Ռուսաստանի օգնությունը Հայաստանի և Անդրկովկասի ազատագրման ջերմ կողմնակիցներ ու ջատագովներ էին:

Կիննին նրանք ազատագրական շարժումների ակտիվ գործիչներ, թե սոսկ մասնակիցներ, ստիպված էին թողնել հայրենի երկիրը: Թեպետ նրանք Ռուսաստանում ունեին նշանակալի արտոնություններ ու հեռանկարներ, իրենց ապագան տեսնում էին ազատագրված հայրենիք վերադառնալու մեջ: Աստրախանի հետ են կապված XVIII դ. հայ ազատագրական շարժման այնպիսի ականավոր գործիչների անուններ, ինչպես Իսրայել Օրին և Ավան Յուզբաշին, Հովսեփ Հմինը և Մովսես Բաղրամյանը, կաղարյանների ընտանիքը, Հովսեփ Արդուսյանը և ուրիշներ: Աստրախանում էր տեղավորված հայկական և վրացական էսկադրոնների հրամանատարությունը: Վերջապես, Աստրախանը Ռուսաստանի հայերի թեմական կենտրոնն էր:

Պարզ է, որ ուսական քաղաքականությանը վերաբերող որոշումներն ընդունվում էին Աստրախանից հեռու, երկրի մայրաքաղաքում, սակայն հայկական բնակչություն ունեցող շրջանների ռազմական և քաղաքացիական իշխանությունները ամենագործուն մասնակցությունն են ունեցել այդ որոշումները նախապատրաստելու ընթացքին, դրա համար հաճախ խորհրդակցում էին նաև հայերի ներկայացուցիչների հետ: Մյուս կողմից, Ռուսաստանի (այդ թվում Աստրախանի) հայերը սերտորեն կապված էին հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի հետ, և այդ կապերը շատ բազմերանգ են եղել՝ սկսած հայրենիքի ազատագրման նախագծերը կազմելուց մինչև մարտական գործողություններին անձամբ մասնակցելը:

Մենք նշված պրոբլեմին վերաբերող հարցերի շուրջ հանդես գալու արդեն առիթ ենք ունեցել: Տվյալ հոդվածի մեջ, հայտնի փաստերից բացի, կուզենայինք կանգ առնել մի շարք պարագաների վրա՝ կապված գլխավորապես նոր հրապարակումների և հետագա մեր ուսումնասիրությունների հետ:

Արդեն XVII—XVIII դարերի սահմանակետին Հայաստանի աղատագրման առաջին ծրագրի հեղինակները՝ Իսրայել Օրին և Մինաս Վարդապետ Տիգրանյանը, կարևոր տեղ էին հատկացնում Աստրախանին: Նրանք առաջարկում էին Ռուսաստանում կազմավորել հատուկ հայկական գունդ, տեղավորել այն Աստրախանում և հավաքել երկու հազարից ավելի հայ ռազմիկ²: Քեպետ, այդ առաջարկությունը չի իրականացվել, այնուամենայնիվ, արժանացել է Պետրոս Առաջինի հավանությունը: Իհարկե, խոսելով երկու հազար հայերի զորահավաքի մասին, այդ գործիչները նկատի ունեին Անդրկովկասից Ռուսաստան վերաբնակված հայերին: Բայց անպայման նախատեսվում էր նաև Աստրախանի հայերի ներգրավումը, ինչպես և նրանց գործունե աջակցությունը:

Պետրոս Առաջինի Կասպյան արշավանքի ժամանակ, որի ազդեցությամբ XVIII դ. 20-ական թթ. ծավալվել են հայ ազատագրական շարժումները, Աստրախանում կազմավորվում էին ռազմական ստորաբաժանումներ ռուսահայերից՝ ռուսական բանակի հետ ռազմական գործողություններին մասնակցելու համար: 1722 թ. Աստրախանում կազմավորվել է հայ կամավորների հեծյալ ջոկատ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի գլխավորությամբ: Աստրախանում էին գտնվում նաև հայ ազատագրական շարժման ուրիշ շատ գործիչներ³:

Ռազմական ուժերից բացի, Աստրախանի հայերը ռուսական բանակին տրամադրել են որակյալ արհեստավորներ, թարգմանիչներ, ուղեկցողներ ու հետախուզներ, որոնք հաճախակի կատարում էին ռուս զինվորական իշխանությունների ռազմաքաղաքական հանձնարարությունները, զրանով իսկ նպաստելով հայրենիքի ազատագրման գործին: Այսպես, Պետրոս Գիլանենցը տեղեկություններ էր հավաքում Պարսկաստանի իրավիճակի մասին և հաղորդում ռուսական հրամանատարությունը⁴: Օրինակ, 1723 թ. ապրիլին Մինաս վարդապետը հաղորդում էր Պետերբուրգ՝ Արտաքին գործերի կոլեգիային, որ գնդապետ Շիրովի հետ Աստրախանից Պարսկաստան են ուղարկվել հայեր, որոնք Շիրովի համար տեղեկություններ էին հավաքում⁵:

Աստրախանում հայկական ռազմական ջոկատների կազմավորման գործում նշանակալի էր Պողոս Զենենցի (Պավել Զինովևի) դերը: 1715 թ., առևտրով զբաղվելու նպատակով, Իրանից Ռուսաստան գաղթելով, Պ. Զենենցը 1722 թ. անցել է ռուսական զինվորական ծառայության և 1723 թ. ընտրվել աստրախանահայերի ավագի պաշտոնում⁶: 1725 թ. նա Աստրախանում կազմակերպել է 79 հոգուց բաղկացած զինվորական ջոկատ: Ընդ որում, փաստաթղթերում ասվում է, որ ջոկատը հավաքա-

գրված էր վրաստանցիներից՝ այսինքն՝ վրաստանից եկած վրացիներից և, զգալի չափով, հայերից⁷։ Իսկ Ա. Ի. Յուխտը հրապարակել է 1736 թ. վերաբերող Պ. Զենենցի խնդրագիրն այն մասին, որ ջոկատը կազմավորվել է «վրաստանցիներից և հայերից»⁸։ Այդ նշանակում է, որ ջոկատի կազմում եղել են հայեր ոչ միայն վրաստանից, այլ նաև Կովկասի, Իրանի և, հավանաբար, Ռուսաստանի ուրիշ վայրերից։

Հետագայում, ծառայելով աստրախանյան կայազորում (արդեն փոխգնդապետի աստիճանով), Պ. Զենենցը տեղեկացնում էր Ռազմական կոլեգիային, որ դժվար չէ Աստրախանում մարդիկ գտնել, որոնք կարող են հակառակորդի մասին տեղեկություններ հավաքել և դրանք հաղորդել վաճառականների միջոցով⁹։

Աստրախանի հայերի՝ հարազատ ժողովրդի ազատագրական պայքարին նվիրվածության պերճախոս մի իրողություն է, ազատագրական շարժման ակնավոր գործիչ Հովսեփ Էմինի ժամանելը Աստրախան՝ 1762 թ. ամռանը։ Էմինն իր հուշերում գրում է, որ Աստրախանի հայերն իրեն նյութական զգալի օգնություն են ցույց տվել։ Բացի դրանից, Էմինը տեղացի հայերից հավաքել ու կազմել է զորական ջոկատ։ Նրկար ժամանակ հայտնի չէր այդ ջոկատի քանակը։ Ինքը՝ Էմինը հիշատակում էր 30 հոգի¹⁰։ Սակայն Ժ. Հ. Անանյանի՝ վերջերս հրապարակած փաստաթղթերից պարզվում է, որ ջոկատը բաղկացած է եղել ոչ թե 30, այլ 20 հոգուց։ Աստրախանի նահանգային գրասենյակում հարց է առաջացել, հնաբավոր է արդյոք թույլատրել, որ այդ ջոկատը երկրի սահմաններից դուրս գա։ Հայկական դատարանի (ոստհաուզի) տեղեկանքի համաձայն ջոկատի մարտիկները արտասահմանից Աստրախան են եկել արհեստով զբաղվելու համար և ռուսական հպատակություն չեն ընդունել¹¹։ Այսպիսով, նրանք հիմնականում Աստրախանի ժամանակավոր բնակիչներ էին, գաղթողների առաջին սերնդի ներկայացուցիչներ, որոնք հատկապես տրամադրված են եղել պայքարելու հայրենիքի ազատագրման համար։ Չնայած նրանք բնիկ աստրախանցիներ չէին, այնուամենայնիվ, ջոկատի կազմավորումը պետք է գիտել նաև որպես Աստրախանի հայ գաղութի բնակչության հայրենասիրության դրսևորման բարձր աստիճան։

Հայտնի է, որ Աստրախանում և Ղզլարում հայ բնակչությունը խանդավառությամբ է ընդունել Հովսեփ Էմինին։ Նորահայտ փաստաթղթերը թույլ են տվել Ժ. Անանյանին եզրակացնելու, որ նման ընդունելությունը անհանգստություն է պատճառել ոչ միայն Ղզլարի պարետ Ա. Ստուպիշինին (դրա մասին գրել է ինքը՝ Էմինը)¹², այլ Աստրախանի նահանգապետ Վ. Ներոնովին (որին Էմինը, հավանաբար, տեղյակ չէր)¹³։ Հետա-

քրքիր է նաև հրապարակված փաստաթղթերի մեջ եղած այն տեղեկութ-
յունը, որ էմինի հետ (Ղլլարից Աստրախան վերադառնալու ժամանակ)
ուղարկվել են վերոհիշյալ ջոկատից երկու հոգի, իսկ մնացած 18 կամա-
վորները ուղևորվել են Վրաստան, որտեղ նրանք արգեն կարող էին
մասնակցել Անդրկովկասի ժողովուրդների առաջիկա ազատագրական
պայքարին¹⁴:

1762 թ. սեպտեմբերին վերադառնալով Մոսկվա, Հ. էմինը այդտեղ
մնում է մինչև 1763 թ. գարունը: Այդ ընթացքում նա անհրաժեշտ նոր
նամակներ, փաստաթղթեր և անձնագիր է ստանում ռուս պաշտոնյանե-
րից: Ընդ որում էմինին առաջարկվում է վերցնել «աստրախանյան հա-
յերի» հրամանատարությունը¹⁵: Այդ անվան տակ, երևի, նկատի ունենի
հայկական էսկադրոնի՝ Աստրախանում և Ղլլարում գտնվող մարտիկ-
ներին:

Հավանական է, որ Ռուսաստանում հայկական զորամիավորումները
վերականգնելու վերաբերյալ բանակցությունները սկսվել են դեռևս էմի-
նի՝ Մոսկվա և Աստրախան կատարած առաջին այցի ժամանակ: Մենք
հայտնաբերել ենք մի փաստաթուղթ, որը վերաբերում է 1762 թ. սեպ-
տեմբերին՝ էմինին Աստրախանից Մոսկվա ուղարկելու հարցին: Ինչպես
հայտնի է, էմինը գնացել է Մոսկվա՝ Աստրախանի կայազորի Յարիցինի
գնդի սերժանտ Պյոտր Երմոլաևի ուղեկցությամբ: Այստեղ մենք կուզե-
նայինք ուշադրություն դարձնել այդ որոշման մի նախադասության վրա,
որտեղ ասված է, որ Հ. էմինին ուղեկցող Պ. Երմոլաևը ուղևորվում է
Պետական ռազմական կոլեգիա՝ հայկական գնդում նշանակվելու հա-
մար¹⁶: Այդ նամակագրությունից երևում է, որ գոյություն ունեւ հայկա-
կան ռազմական ստորաբաժանումների լրացման ինչ-որ պլանավորում
(ընդ որում ոչ միայն հայերից):

Հովսեփ էմինը չի ընդունել իրեն «Աստրախանի հայերի հրամանա-
տար» նշանակելու առաջարկությունը, որովհետև հայկական էսկադրոնը
այդ ժամանակ (1763 թ.) արգեն կազմավորվում էր և այն հնարավոր
չէր օգտագործել ռազմական և քաղաքական այս կամ այն նախագծի
իրականացման համար: Նշանակալից է սակայն, որ այդ զորամասերը
իրենց գոյության ընթացքում ռուս և հայ գործիչների կողմից ընդունվում
էին որպես աստրախանցի հայերի զորաջոկատ:

Խոսելով հայ ժողովրդի ազատագրական պայքարում աստրախանա-
հայերի ունեցած դերի մասին, պետք է նշել նաև հայկական եկեղեցու
գործունեությունը: Թեպետ Աստրախանում և մյուս հայ գաղութներում
գոյություն են ունեցել ինքնավարության մարմիններ, այնուամենայնիվ,

հայկական եկեղեցիները եղիլ է միակ ճանաչված համադրացիներ կաղամակերպությունը, որը պահպանում էր բոլոր հայերի կապն ու միասնությունը՝ ինչպես գաղթավայրերում, այնպես և մայր Հայաստանի հետ: Ինչպես հայտնի է, հայկական պետականության բացակայության պայմաններում հայ լուսավորչական եկեղեցու գործիչները հաճախ ստանձնում էին հայ ժողովրդի քաղաքական շահերի արտահայտիչների դերը:

Սղբյուրները վկայում են, որ Աստրախանի հայ գաղութի առաջաման ժամանակներից այնտեղ միշտ եղել են հայ քահանաներ: Հայ քահանայի մասին առաջին հիշատակումը վերաբերում է 1616 թվականին¹⁷: Հավանաբար կառուցվել էր ինչ-որ ժամանակավոր (երևի փայտից) շինություն՝ եկեղեցական արարողությունների համար: Քաղաքում մշտական և ժամանակավոր հայ բնակչության քանակի և տեսակարար կշռի մեծանալու հետ հարց է առաջացել Աստրախանում հայկական եկեղեցի կառուցելու մասին: Առաջին անգամ այս հարցը հարուցվել է 1652 թ. Երուսաղեմում, հայ կաթողիկոս Փիլիպոսի և Երուսաղեմի ուղղափառ պատրիարք Պայիսիի հանդիպման ժամանակ: Վերջինս միաժամանակ լինելով ուսական եկեղեցու ազդեցիկ գործիչ, պետք է որ համապատասխան հարց բարձրացներ ցար Ալեքսեյ Միխայլովիչի առջև¹⁸: Աստրախանում եկեղեցի կառուցվեց 1660 թվականին¹⁹:

Ռուսաստանի տնտեսական կյանքում և միջազգային հարաբերություններում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ 1717 թ. կազմավորվել է ուսահայերի առանձին թեմը: Թեմի կենտրոնն Աստրախանն էր, որը նույնպես վկայում է տեղի հայ գաղութի դերի և նշանակության մասին: Դրանից հետո Աստրախանի և էջմիածնի միջև հաստատվել են ավելի կանոնավոր հարաբերություններ, որոնք, սակայն, հաճախ ձևական բնույթ էին կրում: էջմիածնի կաթողիկոսից բացի, Ռուսաստանում իր թեմական առաջնորդներին էր նշանակում նաև Գանձասարի կաթողիկոսը, որը փաստորեն ինքնուրույն ղեկավարում էր Շիրվանի, Արցախի և հարակից շրջանների հայոց թեմերը և, բնական է, ուղում էր իրեն ենթարկել նաև Աստրախանի հարուստ թեմը: Մենք նպատակ չենք դնում լուսաբանել Գանձասարի աթոռի առաջացման և նրա գործունեության պատմությունը, մեր խնդիրն է՝ բացատրել էջմիածնի և Գանձասարի դերը հայ ազատագրական շարժման պատմության քննարկվող փուլում և որոշել Աստրախանի հայերի դիրքը այդ աթոռների միջև ծավալված վեճում:

Հայ ազատագրական շարժման նախնական փուլում էջմիածնի կաթողիկոսները խուսափում էին անմիջական քաղաքական կապերի մեջ

մտնելուց ուսական կառավարութեան հետ, շնայած որ պաշտպանում էին ազատագրական բոլոր ելույթները և հասկանում Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրութեան գործում: Այն թելադրում էր տակտիկական նկատառումներով, որոնք պայմանավորված էին պարսկական և թուրքական բռնակալներից էջմիածնի աթոռի կախվածութեամբ:

Դրան հակառակ Գանձասարի ղեկավարները Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցութեան մեծ փորձ ունեին: Դեռ 1672 թ. Գանձասարի կաթողիկոս Պետրոսը ջողայահայ առևտրականների ներկայացուցիչ Դրիգոր Լուսիկենցի հետ նամակ է ուղարկում՝ հասցեագրված ռուսաց քաղաքացի Ալեքսեյ Միխայլովիչին: Այդ նամակի մեջ նա խնդրում է ոչ միայն հայ վաճառականներին, այլև ամբողջ հայ ժողովրդին հովանավորութիւն ցույց տալու մասին²⁰:

XVIII դարի սկզբներից Գանձասարի պատրիարքները անմիջական մասնակցութիւն էին ցուցաբերում հայ ժողովրդի ազատագրական պայքարին:

Գանձասարի կաթողիկոս Նսայի Հասան-Ջալալյանը, որը գործուն մասնակցութիւն էր ունեցել պարսիկ և թուրք նվաճողների դեմ մղված ազգային-ազատագրական պայքարին և անմիջական քաղաքական հարաբերութիւններ հաստատել ռուսական արքունիքի հետ, դեռ 1711 թ. Իսրայել Օրու հետ գնացել է Աստրախան՝ տեղի հայ բնակչութեան և ռուսական իշխանութիւնների հետ կապը ամրապնդելու համար²¹: Ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր ռուսահայերի համար ունենալ թեմական առաջնորդ, որը հոգալու էր Աղվանից կոչվող աթոռի իրավասութեան ենթակա շրջաններից Ռուսաստան գաղթած հայերի հոգևոր կարիքները: Դեռ 1716 թ. Իսրայել Օրու ղինակից Մինաս վարդապետի Ղարաբաղ ժամանելուց (Պետրոս Առաջինի համաձայնութեամբ) օգտվելով, Նսայի կաթողիկոսը նրան եպիսկոպոս ձեռնադրեց և, շնորհելով արքեպիսկոպոսի աստիճան, ուղարկեց Ռուսաստան՝ որպես թեմական առաջնորդ²²:

Մինաս արքեպիսկոպոսն ապրում էր Մոսկվայում կամ Պետերբուրգում և փաստորեն չէր կատարում թեմական առաջնորդի պարտականութիւնները: Վերջերս հրապարակվեց 1735 թ. վերաբերող նրա նամակը, որտեղ նա խնդրում է Արտաքին գործերի պետական կոլեգիային՝ Աստրախանում բնակվելու թույլտվութիւն ստանալու մասին²³: Նա ստացել է համապատասխան թույլտվութիւնը, բայց այդպես էլ չի գնացել առաջնորդական իր նստավայրը և 1740 թ. մահացել է Պետերբուրգում:

Միաժամանակ Աստրախան էին գալիս հայ եպիսկոպոսներ, որոնք նշանակվում էին Էջմիածնի կաթողիկոսի կողմից: 1717 թ. Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցին ռուսահայոց նորաստեղծ թեմի (Աստրախանի նստավայրով) առաջնորդ նշանակեց Ստեփանոս արքեպիսկոպոս Գաղաթացուն: Այսպես շարունակվում է մինչև 1749 թ., երբ Սիմեոն կաթողիկոս Երևանցու հաղորդած տվյալների համաձայն. «...թ ժամանակս Ղազար կաթողիկոսին Ճահկեցույ, ի ՌՃՂԸ թուռն մերում ապստամբեցան (Աստրախանի հայերը— Վ. Խ.) յԱթոռոյս, և եղին իւրեանց յատուկ Առաջնորդ հրամանաւ թագաւորին ռուսաց զՍտեփանոս եպիսկոպոս ոմն ի վիճակեն Գանձասարոյ վասն դժնեալ բարոյութեան Բարսեղ եպիսկոպոսին Փառակեցույ, որ յայնմ միջոցի առաջնորդ էր տեղւոյն ի Ղազար կաթողիկոսէն կարգեցեալ»²⁴: Այս համառոտ հաղորդման մեջ նկարագրված իրադարձությունների պատճառներն ավելի խորն են, քան այս կամ այն եպիսկոպոսի բնավորությունից եղած դժգոհությունը:

Ստեփանդարանի արխիվում պահպանվում է Բարսեղ Փառակեցու դեմ Ղազար կաթողիկոսին Աստրախանի հայերի գրած գանգատը, որը պարունակում է նաև Բարսեղի փոխարեն Ստեփանոս վարդապետին թեմակալ նշանակելու խնդրանքը²⁵: Ե՛վ «Ջամբուխ» բերած հատվածում, և՛ բուն գանգատի մեջ ուշագրավ է այն փաստի հիշատակումը, որ Ստեփանոսը ստացել է «ռուսական ցարի թույլտվությունը»: Ինչի՞ց է առաջացել նման վերապահումը:

1746 թ., իրենց իրավունքների համար հայերի մղած համառ պայքարի շնորհիվ, Աստրախանում ստեղծվեց հայկական դատարան, հաստատվեցին Աստրախանի հայերի արտոնությունները, և ամրապնդվեց նրանց վարչական-իրավական դրուժյունը ռուսական օրենսդրական համակարգում: Աստրախանում հայկական դատական վարչական մարմնի ստեղծումը, որպես նրանց իրավական ստատուսի ամրապնդման արդյունք, ըստ երևույթին ռուսահայերին հանգեցրեց իրենց եկեղեցական իրավական դրուժյունը ռուսական օրենսդրության հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունը:

Այդ տեսակետից Ստեփանոս արքեպիսկոպոս Անանյանը, որպես Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման գործուն մասնակիցներից մեկը, իր ծառայությունների դիմաց կարող էր ակնկալել ռուսական արքունիքի հովանավորությունը: Ստեփանոսի դերը Աստրախանի հայկական համայնքի հասարակական կյանքում երևում է կաթողիկոս Ալեքսանդրի՝ 1755 թ. Ստեփանոսին գրած նամակից, որտեղ

կաթողիկոսը նրան շնորհակալություն է հայտնում՝ նվիրակ Իգնատիոս վարդապետին, Աստրախանում եղած ժամանակ, աջակցություն ցույց տալու համար²⁶։ Բայց Ստեփանոսը միշտ չէ, որ ընդառաջում էր էջմիածնի նվիրակներին։ Այդ պատճառով նա աստրախանցիների և էջմիածնի նվիրակ Բարսեղի ընդհարման ժամանակ սպասողական դիրք չգրավեց, այլ անձամբ մեկնեց Պետերբուրգ և, օգտագործելով իր կապերը, հաստատվեց ռուսահայերի հոգևոր հովվի պաշտոնում²⁷։

Երբ էջմիածնի կաթողիկոսը չբավարարեց Աստրախանի հայերի խնդրանքը, Ստեփանոսը, որն արդեն հաստատվել էր ռուսական արտաքին գործերի կոլեգիայի կողմից, շարունակեց կատարել թեմական առաջնորդի իր պաշտոնը, ենթարկվելով Գանձասարի Ներսես կաթողիկոսի գերակայությանը, որի հետ սերտ կապերի մեջ էր և եպիսկոպոս էր ձևոնադրվել նրա կողմից²⁸։

Ստեփանոսին թեմական առաջնորդ հաստատելով, ռուսահայերը հետամտում էին ռուսական օրենսդրության շրջանակներում, իրենց եկեղեցական-իրավական դրություն ամրապնդումը, 1746 թ. Աստրախանի հայկական համայնքին արված արտոնությունների և հայկական դատարանի ստեղծման փաստի մեջ տեսնելով ռուսական կառավարության բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ։ Ռուսահայ գաղթավայրերի ղեկավարներն ըմբռնում էին, որ անհրաժեշտ է առաջին հերթին հենց այդ կառավարության հետ համաձայնեցնել իրենց եկեղեցական գործիչների թեկնածությունը։ Այսպիսով, Աստրախանի հայերը գործեցին հօգուտ այն թեկնածուի, որին սատարում էր ռուսական կառավարությունը և հօգուտ այն կաթողիկոսի (ավյալ դեպքում՝ Գանձասարի կաթողիկոս Ներսեսի), որը կողմնակից էր Ռուսաստանի հետ համաձայնեցված ակտիվ գործողությունների ծավալելուն։

Մյուս կողմից, հայերի նկատմամբ ռուսական կառավարության հովանավորող քաղաքականության դրսևորումն էր ինչպես արքեպիսկոպոս Ստեփանոսի գործունեության խրախուսումը, այնպես էլ Աստրախանի թեմի հետագա ամրապնդումը։

Այս հանգամանքները, անշուշտ, իրենց գերն ունեցան, և հայ եկեղեցու բարձրաստիճան գործիչները, էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, ավելի պարզ գիտակցեցին հայ-ռուսական հարաբերությունների վարդապետան բախտորոշ նշանակությունը։ Նրանք չէին կարող չգիտակցել նաև, որ էջմիածնից Աստրախանի թեմի անջատումը ոչ այնքան սուբյեկտիվ, որքան քաղաքական գրգռումներ ուներ, որ այդ թեմն ունի ոչ միայն

տնտեսական (եկամուտների առումով), այլև քաղաքական մեծ նշանակություն:

1764 թ. հունվարին Սիմեոն կաթողիկոս Երևանցին նամակ է ուղարկում Աստրախանի հայեքին, որտեղ հորդորում է աստրախանցիներին՝ խզել իրենց կապը Գանձասարից և ուղղակի ենթարկվել էջմիածնի աթոռին²⁹: Բայց ո՛չ Ստեփանոս արքեպիսկոպոսը, ո՛չ էլ Աստրախանի հայ գաղութի ղեկավարներից որևէ մեկը չպատասխանեց կաթողիկոսի նամակին³⁰:

Մի քանի տարի անց, սակայն, դրուժյունը փոխվում է: 1766 թ. Սիմեոնը Պետերբուրգ է առաքում իր ներկայացուցիչ Դավիթ վարդապետին՝ Եկատերինա 2-րդ կայսրուհուն ուղղված մի նամակով: Բացի դրանից, Դավիթը ուրիշ հանձնարարություններ էլ ուներ, որոնք վերաբերում էին հայերի դրուժյանը³¹: Ռուսաստանի (այդ թվում նաև Աստրախանի) հայերը, կոահելով Դավթի առաքելության բուն նպատակները, նրան հանդիսավոր ընդունեցին:

Հավանաբար, Աստրախանի հայերի շրջանում հաղթանակել էր Աստրախանի թեմի նկատմամբ էջմիածնի կաթողիկոսի գերակայությունը ճանաչելու տեսակետը, որի արդյունքն էր Սիմեոն կաթողիկոսին հասցեագրված 1767 թ. հունվարի գրությունը, որով Աստրախանի հայ համայնքի և հոգևորականության կողմից հավանություն էր տրվում էջմիածնի մայր աթոռին ենթարկվելու առաջարկին³²:

1768 թ. հունիսի 30-ին հրապարակվեց Եկատերինա 2-րդի հայտնի հրովարտակը, որտեղ նա, ինչպես ներկա «ազնվափայլ Սիմեոնին», այնպես էլ նրա պատրիարքական աթոռի հաջորդներին ու ողջ հայ ժողովրդին կայսերական բարեհաճություն ու ողորմածություն հայտնելով, թրջլատրում էր կաթողիկոսին՝ իրենց կրոնական օրենքով տնօրինելու տեսական կայսրության մեջ ապրող հայ ժողովրդի հոգևոր գործերն ու եկեղեցական ծիսակատարությունները³³: Այսպիսով, հրովարտակը բավարարում էր ինչպես ռուսահայերի, այնպես էլ էջմիածնի աթոռի պահանջները:

Հետագայում Աստրախանի թեմի առաջնորդներ նշանակում էր միայն էջմիածնի կաթողիկոսը: Ստեփանոս արքեպիսկոպոսը մահացավ 1768 թ., և նրա փոխարեն Սիմեոնը նշանակեց Մինաս արքեպիսկոպոսին, իսկ հինգ տարի անց 1773 թ. կաթողիկոսն այդ պաշտոնը հանձնեց երիտասարդ Չովսեփ Արղուժյան—Երկաչնաբազուկ արքեպիսկոպոսին: Ապագան հաստատեց, թե որքան հաջող էր այդ ընտրությունը:

Աստրախանի թեմի առաջնորդի պաշտոնում Հովսեփ ԱրղուՅյանը դրսևորել է իրեն որպէս սկանալոր աղգային-քաղաքական գործիչ, որը մեծ ներդրում է ունեցել հայ ազատագրական շարժման, հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման և Ռուսաստանում հայ գաղութների զարգացման պատմության մեջ: Եվ շատ բնական էր, որ քաղաքական-հոգևորական իր գործունեությունը պսակեց ամենայն հայոց կաթողիկոսի պաշտոնում ընտրվելով՝ 1800 թվականին: Հետաքրքիր է, որ Աստրախանի թեմի առաջնորդի պաշտոնում Հ. ԱրղուՅյանին հաջորդող արքեպիսկոպոսները նույնպէս ընտրվել են ամենայն հայոց կաթողիկոսներ, ինչպէս օրինակ, Եփրեմ Ա.-ն (1809—1831 թթ.) և Հովհաննես Ը.-ն (1831—1842 թթ.): Այդ հանգամանքը ցույց է տալիս, որ հայ ժողովրդի պատմության բեկումնային և պատասխանատու շրջանում, երբ Անդրկովկասը և Արևելյան Հայաստանը միացվել էին Ռուսաստանին, ու վերականգնվում էր հայերի աղգային օջախը, էջմիածնում կաթողիկոս պետք է ընտրվեր այնպիսի մի գործիչ, որն ունենար հայկական հասարակական, հայրենասիրական և ռուսական վարչական-քաղաքական շրջանների հետ համագործակցության համապատասխան փորձ: Աստրախանի թեմի առաջնորդի պարտականությունները բարենպաստ պայմաններ էին ստեղծում նման փորձ ձեռք բերելու համար:

Անդրադառնալով Աստրախանի հայ գաղութում 1760-ական թթ. ազատագրական մտքի դրսևորումներին, պետք է նշել, որ այդ շրջանում (այսինքն՝ 1769 թ.) հենց Աստրախանում է ծնվել Հայաստանի ազատագրման նախագծերից մեկը: Դրա հեղինակները՝ խոշոր վաճառական Մովսէս Սարաֆովը, Աստրախանի մի քանի ուրիշ ազդեցիկ հայ գործիչներ (Գրիգոր Կամպանյան, Միքայել Նաղարով և ուրիշներ) կազմել են նախագիծ, որտեղ պաշտպանվում էր Հայաստանում միապետութունը վերականգնելու և կալվածային հողատիրությունը պահպանելու հարցը: Միաժամանակ նախագիծը պարունակում էր նաև բավականաչափ առաջադեմ մտքեր հայ կամավորական և ապստամբական շարժումներ կազմակերպելու վերաբերյալ: Այդ փաստն արդեն խոսում է հայ բնակչության դեմոկրատական շարժումների՝ նշված նախագծի բովանդակության վրա ունեցած ազդեցության մասին³⁴:

Հայ-ռուսական քաղաքական կապերի մեջ կարևոր իրադարձություն էր ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի՝ Աստրախան ժամանելը, որպէս Անդրկովկաս արշավանքի նախապատրաստվող զորքերի հրամանատար: Կարևոր նշանակութուն է ունեցել նաև այն հանգամանքը, որ Աստրախանի հայ բնակչութունը միշտ պաշտպանել է Ռուսաստանի ռազմական

պլանները, աշխույժ կապեր է ունեցել Անդրկովկասի հետ և պատրաստ է եղել աջակցելու ռուսական հրամանատարության միջոցառումներին:

Ա. Վ. Սուվորովը Աստրախանից կանոնավոր զեկուցագրեր էր ուղարկում Պետերբուրգ, իշխան Գ. Ա. Պոտյոմկինին՝ Իրանում, Անդրկովկասում և Մերձկասպյան մարզերում Ռուսաստանի ռազմաքաղաքական պլանների տեսանկյունով: Ընդ որում նա հաճախ օգտվում էր հայ վաճառականների հաղորդած տեղեկություններից³⁵: Այսպես, օրինակ, 1780 թ. ապրիլին (Աստրախան ժամանելուց անմիջապես հետո) Սուվորովը Իրանից ստացել է կարևոր տեղեկություններ, որոնք բերել էին հայ վաճառական Վասիլի Աբրամովի «Սուրբ Աննա» նավով եկած առևտրականները³⁶: Նույն թվականի հունիսին նման տեղեկություններ բերել են Բ. Խաստատովի և Մ. Լազարևի նավերով եկած հայերը³⁷: Պատահական չէ, որ Սուվորովի շտաբը տեղավորված է եղել Աստրախանի հայաբնակ շրջանում³⁸:

Ի միջի այլոց, Բոգդան Խաստատովը, որը մինչ այդ աշխատում էր որպես Աստրախանի մաքսատան պետ, Սուվորովի աջակցությամբ զինվորական ծառայության է անցնում ռուսական բանակում՝ Սուվորովի անմիջական հրամանատարության ներքո: Սուվորովի հետ ծառայել է նաև Բոգդան Խաստատովի եղբայրը՝ Հովակիմ Խաստատովը³⁹:

1785 թ. աստրախանցի հայ Ալավերդի Մելիքովը, ուղևորվելով Թիֆլիսից Սպահան, ռուս զննապետ Վ. Տամարայի հանձնարարությամբ նամակ և նվերներ է տարել պարսկական նոր կառավարիչ Ջաֆար խանի համար⁴⁰:

Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ աստրախանաբնակ հայերի հետաքրքրության մասին վկայում են նաև հետագա շրջանի փաստաթղթերը: Մենք ուսումնասիրել ենք Մատենադարանում պահպանված նամակները, որոնք ստացել է արքեպիսկոպոս Հովսեփ Արղուժյանը Աստրախանից, իր՝ Պետերբուրգում գտնված ժամանակ: Աստրախանում Արղուժյանի ամենակտիվ թղթակիցներն էին վաճառական Մկրտում Գալստյանը և Թադեոս վարդապետ Մարությանը: Այսպես, 1799 թ. մարտի 8-ի և հոկտեմբերի 12-ի նամակներում Մ. Գալստյանը հաղորդում էր Հայաստանի բնակչության նկատմամբ պարսիկների կատարած ավազակաբարո արարքների մասին⁴¹: Աստրախանցի հայ Աղալու Լազարևը 1799 թ. մարտի 3-ին Հ. Արղուժյանին գրած նամակում հայտնել է Անդրկովկասում ռուսական զորքի ուժեղացման անհրաժեշտության մասին՝ հայ բնակչությանը նոր դժբախտություններից և լուսանալներից փրկելու համար⁴²: Քանի որ Արղուժյանը գտնվում էր

Պետերբուրգում, նման խոսակցություններն ու ցանկությունները պետք է դիտել ոչ միայն որպես տեղեկություններ, այլ որպես որոշակի խընդրանքներ՝ ուղղված ռուսական կառավարող շրջաններին, որոնց մոտ Արդուժյանը մեծ հեղինակություն էր վայելում:

XVIII դարի 80-ական թվականներին հայ ազատագրական շարժման նոր վերելքը, Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիվացումը Կովկասի շրջանում, Ռուսաստանի հայ գաղութների բնակչության հասարակական-հայրենասիրական գործունեությունը՝ բոլոր այդ գործոնները, նպաստել են Աստրախանի հայ գաղութի քաղաքական դերի բարձրացմանը և նրա կապերի ուժեղացմանը հայ ժողովրդի և նրա պայքարի հետ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ինչպես Աստրախանի, այնպես էլ Ռուսաստանի մյուս հայ գաղութների ղեկավարները և աշխատավոր զանգվածները իրենց նոր բնակավայրերը դիտում էին որպես ժամանակավոր բնակվելու տեղ և երբեք չէին կորցնում ազատագրված հայրենիք վերադառնալու հեռանկարը: Այդ պատճառով հայ գաղութները եղել են իրենց ժողովրդի ազատագրական շարժման ջերմ ջատագովներ և գործուն մասնակիցներ:

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Տե՛ս Վ. Ա. Խաչատրյան, Հայ-ռուսական քաղաքական կապերի պատմությունից, ՊԲՀ, 1978, № 3, էջ 98—108; նույնը՝ Астраханская армянская колония и русско-армянские отношения в XVIII веке. — «Լրաբեր հաս. գիտությունների», 1978, № 10, էջ 77—85:

2 Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов. Под ред. Ашота Иоаннисяна, т. II, ч. I, Ереван, 1964, сс. 258—259.

3 Մանրամանություններ տե՛ս Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества. (Исследование и документы). Подг. к изд. А. Н. Хачатрян. Ереван, 1968, сс. 74, 80—83.

4 Дневник осады Испагани афганами, веденный Петросом ди Саргис Гиланени в 1722 и 1723 годах. Материалы для истории Персии. Перевод и объяснения К. Патканова, СПб., 1870, сс. XXII—XXIII.

5 Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. II, ч. 2, Ереван, 1967, сс. 32—34.

6 А. Н. Юхт. Челобитные астраханских армян. Բանբեր Հայաստանի արխիվների, 1963, № 2, էջ 113:

7 Армянское войско в XVIII веке, док. 10, с. 107; Տե՛ս նաև Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сб. документов, т. III, Отв. ред. В. К. Восканян, Ереван, 1978, с. 15.

8 Челобитные астраханских армян, с. 113.

9 Армянское войско в XVIII веке, док. 19, с. 122.

¹⁰ Жизнь и приключения Иосифа Эмина. Пер. с англ.—ՀՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, փաստ, 47, թթ. 235, 236, 260: Մանրամասնությունները Հովհաննիս Էմինի՝ Ռուսաստանում գործունեության մասին տե՛ս Ա. Ք. Խոաննիսյան, Իոսիֆ Էմին, Երևան, 1945, ժ. 82—122.

¹¹ Страница из истории армяно-русских отношений второй половины XVIII века (Новые документы об Иосифе Эмине). Публикация Ж. А. Ананяна. ՊՐԶ, 1978, № 3, էջ 256—257: Մենք գերադասում ենք հավատալ ժամանակակից փաստաթղթին, բան թե էմինի հիշողություններին, որոնք գրվել են տասնյակ տարիներ հետո: Ղզարից Տիգրան ժամանած էմինի ջոկատի մասին Բարսեան Մարգարի հաղորդման մեջ հիշատակվող 30 թվաթիվներ (Ա. Խոաննիսյան, Իոսիֆ Էմին, ժ. 334). հավանաբար պետք է բացատրել այն իրողությամբ, որ մոտ 10 մարդ միացել են նշված ջոկատին՝ Ղզարում:

¹² Жизнь и приключения Иосифа Эмина, ժ. 240; Ա. Ք. Խոաննիսյան, Իոսիֆ Էմին, ժ. 98.

¹³ Страница из истории армяно-русских отношений второй половины XVIII века, ժ. 246—247.

¹⁴ Նույն տեղում, էջ 256—257:

¹⁵ Полное собрание законов (ПСЗ), т. XVI, № 12152.

¹⁶ Гос. архив Астраханской области (ГААО), ф. 394, оп. 1, д. 2338, л. 43. Հրատարակ. տե՛ս Страница из истории армяно-русских отношений второй половины XVIII века, ժ. 257.

¹⁷ Памятники дипломатических и торговых отношений Московской Руси с Персией. Под ред. Н. И. Веселовского, т. III, Спб., 1898, ժ. 124.

¹⁸ Хачатрян Р. Г. Ценный источник по истории русско-армянских отношений («Просквинитарий» Арсения Суханова)—ՊՐԶ, 1982, № 2, էջ 59:

¹⁹ Саввинский И. Астраханская епархия (1602—1902 гг.). Вып. II. Грузины и инославные христиане в Астраханской епархии. Астрахань, 1905, ժ. 85—86.

²⁰ Армяно-русские отношения в XVII веке. Сб. документов. Под ред. В. А. Парсамяна, Երևան, 1953, ժ. 91—92.

²¹ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. 1, ժ. 360.

²² Էջով Գ. Ա., указ. соч., ժ. 323.

²³ Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, ժ. 59, 112—113.

²⁴ «Զամրո, Համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմէոնէ կաթողիկոսէ Երեւանցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 39:

²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 11: Հրատարակված է սույնից թարգմանությամբ, տե՛ս Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, ժ. 222—236.

²⁶ ГААО, ф. 857, оп. 1, д. 76, л. 6.

²⁷ Архив внешней политики России (АВПР), ф. 100, оп. I, 1767—1768, д. 1, л. 43; տե՛ս նաև՝ Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, ժ. 216—217.

²⁸ «Զամրո», էջ 39:

- 29 «Դրևան հայոց պատմութեան», գիրք Դ, Քիֆլիս, 1894, էջ 84:
- 30 Նույն տեղում, էջ 81Ե:
- 31 Առ, Կաթողիկոս Հովսեփ Արղուիսյան, Քիֆլիս, 1902, էջ 34—35:
- 32 Մատենադարան, Լազարյանների արխիվ, Բղթ. 109, գ. 22, վավ. 1:
- 33 Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, М., 1833, сс. 174—175.
- 34 Այդ նախագծի լրիվ տեքստը հրատարակված է *Ա. Բ. Իոաննисяն*. Իոսիֆ Յմին, (Երևան; 1915) գրքում, էջ 339—352:
- 35 Մանրամասն այդ մասին տե՛ս *Մ. Գ. Ներսիսյան*. *Ա. Վ. Суворов и русско-армянские отношения в 1770—1780 гг.* (Երևան, 1981) **ԴԻՐԵԸ**:
- 36 Центральный гос. военно-исторический архив (ЦГВИА) СССР, ф. 52, оп. 1/194, связка 107, д. 218, л. 20.
- 37 Նույն տեղում, Բ. 26:
- 38 *Палкин Б.* Первые астраханские мосты.—Газ. «Волга» (Астрахань). 11 марта 1982 г.
- 39 ЦГВИА СССР, ф. 52, оп. 1/194, связка 107, лл. 69, 80.
- 40 *Бутков П. Г.* Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг., т. II, Спб., 1869, сс. 154—155.
- 41 Մատենադարան, Կաթ. Գրվան, Բղթ. 8, վավ. 16, 79:
- 42 Նույն տեղում, Բղթ. 9, վավ. 37:

ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ XVII ԴԱՐԻ
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Պետրոս Առաքինի իրանական արշավանքը կարևոր նշանակություն ունեցավ Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Արևելյան Կովկասում հայկական գաղթավայրերի սկզբնավորման և հայ-ռուսական հարաբերությունների նորոգի: զրսևորման գործում: Հայ-ռուսական վաղեմի և բազմաբնույթ առնչությունները ժամանակի պահանջներից բխող քաղաքական նոր բովանդակություն ստացան: Իրանական արշավանքը, միաժամանակ, ուժերի նոր հարաբերակցություն ստեղծեց երկրամասում և շրջադարձային եղավ կովկասյան ժողովուրդների կյանքում: Ազգային-ազատագրական պայքարի զարթոնքը Անդրկովկասում զգալի չափով պայմանավորված էր Ռուսաստանի կովկասյան քաղաքականության ակտիվացմամբ և նրանից սպասվող ակնկալություններով:

Պետրոս Առաքինի իրանական արշավանքը մեծ ոգևորություն առաջացրեց նաև Ռուսաստանի հայկական գաղթավայրերում և Իրանի ու Թուրքիայի հայաբնակ շրջաններում: Ռուսական ղենքի օգնությամբ Հայաստանը ազատագրելու գաղափարով ոգևորված, հայերը սեփական միջոցներով զինված և տեղական ուժերով համալրված ջոկատներ էին կազմավորում և ուղարկում Աստրախան՝ միանալու ռուսական զործող բանակին: Արդեն 1723 թ. Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, Այվազ Աբրամովի և Աղադար դի Խաչիկ Ախիջանենցի (կազար Խրիստաֆորով) գլխավորությամբ զործող հայկական ջոկատները միավորվելով՝ մտան ռուսական բանակի կազմը: ստանալով «Հայկական էսկադրոն» անունը: 1724 թ. Գիլանում ռուսական զորքին է միանում նաև «Հայ-վրացական էսկադրոնը»՝ (բաղկացած էր վրաստանցի հայերից և վրացիներից), հայ ազատագրական շարժման ակտիվ մասնակիցներ Փարսադան Բեկի և նրա որդիներ Ռաֆայել և Թադի Ղուզանենցների գլխավորությամբ:

Արխիվային բազմաթիվ վավերագրերի վկայությամբ, «Հայկական» և «Հայ-վրացական» էսկադրոնների հայ ղեկավորականները զգալի դեր են կատարել ոչ միայն Մերձկասպիում Ռուսաստանի զորքերի ամրապնդման գործում, այլև հետագայում, համարել են Սուրբ խաչի, Դերբենդի հայ համայնքները, իսկ Ղզլար փոխադրվելուց հետո, տարիներ շարունակ իրենց ձեռքում են պահել նորաստեղծ հայ գաղթավայրի հասարակական-քաղաքական կյանքի ղեկը:

Մերձկասպիում Ռուսաստանի հաջողության կարևոր գրավականներին էր երկրամասի ազգաբնակչության գրական վերաբերմունքը Ռուսաստանի և նրա ձեռնարկումների հանդեպ: Թուրքական կողմնորոշում ունեցող զաղստանյան ֆեոդալների մի մասը, հենվելով երկրամասի սյունի ազգաբնակչության վրա, խիստ թշնամական դիրք գրավեց Ռուսաստանի հանդեպ: Ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմաններում ռուսական կառավարող շրջանները միջոցներ են ձեռնարկում երկրամասում ավելացնելու քրիստոնյա և ռուսական կողմնորոշում ունեցող հայ ու վրացի ազգաբնակչության թիվը՝ ի հակակշիռ մահմեդականների²: Ռուսական կառավարող շրջաններում տեղյակ էին, որ Մերձկասպյան շրջաններում, Դերբենդից մինչև Բաբու, բնակվում են մեծ թվով հայեր, որոնք հակված են անցնելու Ռուսաստանի հովանու տակ: Զգալի թվով հայ բնակչություն էր կենտրոնացված Շամախիում և շրջակա հայաբնակ գյուղերում, որոնք քաղաքական խառն իրադրության պայմաններում պարզորոշ գիտակցում էին, որ միայն ռուսական զենքի հաղթանակով կարող են ձեռք բերել ազատություն և խաղաղ գոյավիճակ:

Լեզգի ֆեոդալների և նրանց հրոսակախմբերի հավաքատեղի դարձած Շամախու գրավումը Ռուսաստանի կողմից կարևոր ուղեմատարան գիտական նշանակություն կունենար: Դրանով, նախ, երկրամասում ղեպի Անդրկովկաս ռուսների հետագա առաջխաղացումն ապահովելու ամուր հենարան կստեղծվեր և հետո՝ վերջ կտրվեր լեզգիների կրկնվող ասպատակություններին, որոնք նպաստավոր պայմաններ էին ստեղծում թուրքական ագրեսիայի ծավալման համար: Քաղաքական նման իրավիճակում կարևոր էին Մերձկասպյան ռուսական իշխանություններին հասցեագրված, Շամախու և Շիրվանի տարբեր շրջաններից ստացվող հայերի տեղեկությունները՝ երկրամասում և Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների մասին: Դերբենդի պարետ Ա. Յունգերի մատյանում (1722—1730 թթ.) պահվում են բազմաթիվ նամակներ, այդ թվում՝ Դերբենդի հայերի նամակը Մեյսարի վանքի (Շամախու մոտ) վանահայր

Մարտիրոս եպիսկոպոսին, վերջինիս նամակը Յունգերին մահմեդականների մեջ ապրող հայերի թշվառ վիճակի և Ռուսաստանից սպառնող օգնության ակնկալության մասին, շամախեցի հայեր Սահակ Յակովլևի և Ալեքսանդր քահանայի նամակները Յունգերին³։ Վերջիններս կարևոր և հավաստի տեղեկություններ էին հաղորդում դադստանյան Ֆեոդալների և Դաուդ բեկի՝ թուրքական զեսպանի հետ բանակցությունների վերաբերյալ, զգուշացնելով նրանց երկդիմի քաղաքականության և սպառնալիք անակնկալների հնարավորության մասին։ Նամակների բովանդակությունից պարզվում է, որ հայերից շատերը (Գրիգորի Դաուդով, Բոգդան և ուրիշներ), ռուսական զինվորական իշխանությունների ցուցումով, ստույգ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով, մեկնել են Շամախի և հարևան հայաբնակ գյուղերը, հանդիպել հայրենակիցներին, վերադարձել նամակներով, երբեմն էլ, զգուշանալով գերի ընկնելուց, տեսածը հաղորդել բերանացի⁴։

XVIII դարի 20-ական թվականների կեսերի վավերագրում բազմիցս հիշատակվում է Մարտիրոս եպիսկոպոսի անունը, որը զգալի դեր է խաղացել հայ-ռուսական հարաբերություններում, նպաստել Մերձկասպիում (Սուրբ Խաչում, Դերբենդում և այլն) հայ համայնքների ձևավորմանը։ Օգտագործելով Մերձկասպյան ռուսական զինվորական իշխանությունների հետ ունեցած կապերը, նա հայ համայնքներին օժանդակել է աշխարհիկ և հոգևոր գործերի կարգավորման, հայ գաղթականների նյութական վիճակի բարելավման և այլ հարցերում։ Ռուսաստանի հանդեպ ունեցած հավատարմության, հաղորդած կարևոր տեղեկությունների, հայերի գաղթը կազմակերպելու և այլ գործերի համար ռուսական կառավարությունը նրան ներկայացրել է պարգևատրման⁵։

Առավել ուշագրավ է՝ Մարտիրոս եպիսկոպոսի՝ 1724 թ. փետրվար և մարտ ամիսների երկու նամակները, հասցեագրված Դերբենդի պարետ Ա. Յունգերին։ Այդ նամակներից պարզվում է, որ նա փորձել է կապ հաստատել Մերձկասպյան ռուսական իշխանությունների և հայկական սղնախներում գործող հայ ազատագրական շարժման գործիչների՝ այդ թվում նաև Իվան Կարապետի հետ։ Եպիսկոպոսը 1724 թ. փետրվարի 24-ին Դերբենդի պարետին գրում է, որ իր մոտ ժամանած պարետի ներկայացուցչին մի նոր հանձնարարական նամակով ուղարկել է հայկական սղնախները, ուր նամակատարը հանդիպել է Իվան Կարապետին։ Հայտնում է, միաժամանակ, որ նույն ներկայացուցչի միջոցով ուղարկում է նաև Իվան Կարապետի պատասխան նամակը։ Երկու նամակներում էլ, Մարտիրոս Եպիսկոպոսը պարետին զգուշացնում էր թուրքերի՝

դեպի Իրանի Մերձկասպյան շրջանները նախապատրաստվող հարձակման, Սուրխայ շամխալի, դայթաղների ուսմեյի՝ ուսանների հանդեպ առերես հպատակության, բայց, միաժամանակ, թուրքերի հետ տարվող բանակցությունների մասին: Վերջում ավելացնում էր, որ նրանք պատրաստվում են հաշվհարգար տեսնել Շամախու և հարևան շրջանների ուսական կողմնորոշում ունեցող հայ բնակչության հետ: Նա խնդրում էր շուտափույթ ուսական զորք ուղարկել Շամախի և Նիզաբադ, խոստանալով տեղի զինված հայերի օժանդակությունը: Նամակների բովանդակությունից նկատում ենք, որ եպիսկոպոսը արտահայտում էր Շիրվանի նահանգի հայերի և սղնախների ղեկավարության նպատակներն ու ձգտումները: Այն էր՝ ուսանների կողմից Շամախու գրավումով կանխել թուրքական հարձակումը Անդրկովկաս և ստանալ Շամախի շարժվելու ու ուսական զորքին միանալու հնարավորություն:

XVIII դարի 20-ական թվականների կեսերին Թուրքիայի քաղաքականության ակտիվացումը Կովկասում լուրջ վտանգ էր ներկայացնում թե՛ Ռուսաստանի հետագա առաջխաղացման և թե՛ անդրկովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համար: Բախումը Թուրքիայի հետ տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանի համար ոչ միայն վտանգավոր էր, այլև անհնար: Ռուսաստանից օգնություն չստանալու դեպքում, պայքարի ելած հայ զինվորական ուժը մենակ էր մնալու գերակշռող թշնամական զորքերի առաջ: Արշավանքի նախօրյակին և հետո ուսական իշխանությունները հովանավորում էին անդրկովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, նկատի ունենալով այդ պայքարի կարևորությունը ուսական զորքերի իրանական արշավանքի ժամանակ թուրքական հարձակումը գոնե ժամանակավոր խափանելու գործում:

Միաժամանակ, հայ ազատագրական շարժման գործիչները, նպաստելով ուսական զորքերի առաջխաղացմանը դեպի Անդրկովկաս, դրանում տեսնում էին թուրքական ագրեսիայի կանխման և իրենց պայքարի հաջողության միակ գրավականը:

Հաշվի առնելով Թուրքիայի դեմ պատերազմելու դժվարությունները, 1724 թ. հուլիսի 12-ին Կ. Պոլսում Ռուսաստանը պայմանագիր կնքեց սուլթանական կառավարության հետ: Այդ պայմանագրով Թուրքիան ճանաչեց Ռուսաստանի տիրապետությունը Իրանի Մերձկասպյան շրջաններում, իսկ Ռուսաստանը, փոխադարձաբար, Թուրքիայի իրավունքները Իրանի անդրկովկասյան տիրույթների նկատմամբ:

Զիրականացաւ հայ սղատագրական շարժման գործիչներին դժվարին, բայց բաղձալի երազանքը՝ Մերձկասպիում և մայր հայրենիքում գործող հայ զինական ուժերի միավորումը և ռուսական զորքերի օգնութեամբ հայրենի երկրի ազատագրումը: Արցախի և Սյունիքի հայ ազատագրական ուժերը մնալով մենակ, մոտ մեկ տասնամյակ համառ պայքար մղեցին հակառակորդի գերակշռող ուժերի դեմ, բայց, ի վերջո, ստիպւած եղան տեղի տալ: Օգնութեան փոխարեն, ռուսական կառավարութիւնը սղնախների բնակչութեանը առաջարկում էր գաղթել Ռուսաստանի տիրապետութեան տակ գտնվող Մերձկասպյան երկրամասի նորակառույց քաղաք-ամրոցներն ու գյուղական բնակավայրերը, խոստանալով անձի ապահովութիւն և բազմաթիւ արտոնութիւններ:

Հայերի գաղթը Մերձկասպյան և Թերեքի շրջանները մեծ չափերի հասաւ Հայաստանում ազատագրական պայքարի ճնշումից հետո: Ապրտամբ հայերի մի մասը, Թուրքական և պարսկական զսւթիչներին դաժան հետապնդումներից փրկվելու համար, Արցախից և Սյունիքից գաղթում են Արեւելյան Կովկաս: Պաշտոնական զեկուցագրի համաձայն, 1730 թ. օգոստոսին, թշնամու գերակշիռ ուժերի ճնշման ներքո, հայկական սըղնախներից Դերբենդի շրջան են գաղթում մեծ թվով հայեր՝ իրենց հրամանատարների գլխավորութեամբ, որոնց բնակութեան վայր են հատկացվում Դերբենդին մոտակա հայաբնակ գյուղերը⁷:

Այսպիսով, XVIII դարի 20-ական թվականների կեսերից Սուրբ Խաչում և Դերբենդում հաստատվեցին Անդրկովկասից, Իրանի և Թուրքիայի հայաբնակ շրջաններից գաղթած հայեր, այդ թվում նաև ռուսական բանակում ծառայութեան մեջ գտնվող հայ զինվորականներ, հոգևոր և աշխարհիկ դասի ներկայացուցիչներ, գերութիւնից փրկված հայեր, որոնց մի մասը զինվորագրվում էր, իսկ մյուսները լրացնում էին երկրագործների շարքերը:

XVIII դարի 30-ական թվականների կեսերին զգալի տեղաշարժ կատարվեց Ռուսաստանի կովկասյան քաղաքականութեան մեջ: Սեծովյան շրջանում, պատրաստվելով Թուրքիայի դեմ պատերազմի, Ռուսաստանը, հանձին Իրանի, դաշնակից ձեռք բերելու լուրջ մտադրութիւն ուներ: 1735 թ. Ռուսաստանի և Իրանի միջև Գանձակի պայմանագրի կնքումից հետո ռուսներն ստիպված էին թողնել Կասպից ծովի արևմտյան ափերը՝ Գիլանից մինչև Սուրբ Խաչ: Մինչ այդ, դեռևս 1730 թ. Մերձկասպիում հաստատված հայերը Գիլանի, Մազանդարանի շրջաններից տեղափոխվել էին Դերբենդ, 1733 թ.՝ Սուրբ Խաչ, իսկ 1735 թ. վերջերին՝ Ղզլար⁸:

Փաստորեն, բազմաթիվ ղեգերումներից և փորձություններից հետո, բավական համահավաք հայկական գաղթօջախ է հաստատվում Ղզլարում, որին, նույնպես, վիճակված էր նշանակալի դեր խաղալ XVIII—XIX դարերի հայ-ռուսական հասարակական-քաղաքական հարաբերություններում:

1736—1764 թթ. Ղզլարում էր կենտրոնացված հայկական և հայ-վրացական էսկադրոնների զինվորականության զգալի մասը՝ կազար երիտաֆորովի և Թաղի Ղուզանենցի գլխավորությամբ: Ղզլարում բնակություն էին հաստատել նաև մեծ թվով հայ բարձրաստիճան զինվորականներ՝ այդ թվում փոխգնդապետ Պետրոս Գասպարովը, գնդապետ Փիլիբեկ Բասաուրովը, փոխգնդապետ Ամբակում Շերգիլովը (Փ. Բասաուրովի որդին), կապիտան Պապադար Սարգիսովը, Իշխան Հովսեփ Թումանովը (նա վախճանդ 6-րդի հետ մեկնել է Ռուսաստան, անցել զինվորական ծառայության, ստացել կապիտանի կոչում և 1756 թ. ծառայության նշանակվել Ղզլարի հայ-վրացական էսկադրոնում) և ուրիշներ⁹:

Փաստերը վկայում են, որ ինչպես Պետրոս Առաջինի իրանական արշավանքի ժամանակ, այնպես էլ հետագա տարիներին, այդ զինվորական գործիչներին հուզել և մտահուզել են հայ ազատագրական պայքարի, Հայաստանի անկախության, Անդրկովկասում կատարվող իրադարձությունների և Ռուսաստանի կովկասյան քաղաքականության հարցերը: Օրինակ, գնդապետ Պողոս Զենենցը (Պավել Զինովև), որ իր ջոկատով ռուսական բանակի կազմում ակտիվ մասնակցություն է ունեցել Մերձկասպյան շրջանում մինչև 1736 թ. ծավալված ռազմական գործողություններին, միաժամանակ, կապեր է հաստատել սղնախներում կենտրոնացված հայկական զորքի հետ¹⁰: Յավոք, մեզ հայտնի չեն այդ կապերի մանրամասները, սակայն, փաստն ինքնին վկայում է, որ թեկուզ և դժվարին պայմաններում, բայց արվել են միավորվելու և միասնական ուժերով պայքարելու փորձեր:

Ղզլարում ու Աստրախանում բնակվող և ծառայության մեջ գտնվող հայ զինվորականներից շատերը (ինչպես այդ նախատեսված էր ռազմական կոլեգիայի կողմից) տարբեր ժամանակներում և դանազան առիթներով, դիվանագիտական հանձնարարությունների են մեկնել Անդրկովկաս, Իրան, Թուրքիա: Մասնակի չէին նաև հետախուզական և այլ բնույթի ուղևորությունները: Այսպես, օրինակ՝ XVIII դարի 50-ական թվականների կեսերին, հատուկ առաջադրանքով վրաստան է ուղարկվել ռուսական բանակում ծառայության մեջ գտնվող հայազգի իշխան Օթար

Թումանովը՝ պարզելու Թուրքիայի դավթողական ծրագրերը Իրանի նկատմամբ և Վրաստանի վերաբերմունքը այդ հարցում: 1762 թ. Թեյմուրազ 2-րդ վրաց թագավորի աճյունը Ռուսաստանից Անդրկովկաս ուղեկցողների թվում է եղել հայկական էսկադրոնի պրապորշիկ Դմիտրի Մանգովը: Աստրախանի նահանգապետի առաջարկով, որպես բանիմաց և հավատարիմ անձնավորություն, 1764 թ. վաճառականի անվան տակ Աֆղանստան է ուղարկվել Ղզլարի հայկական էսկադրոնի կապիտան Բոգդան Ասլանովը՝ պարզելու իրանա-աֆղանական հարաբերությունները և նրանց դիրքորոշումը Ռուսաստանի ու հարևան երկրների նկատմամբ¹¹:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի (Սուրբ Խաչ, Գերբենդ, Ղզլար, Մոզդուկ, Գեորգիևսկ) դերը հայ-ռուսական հարաբերություններում հատկանշական է եղել նաև այն առումով, որ XVIII դարում և XIX դարի սկզբներին դրանք երկրամասում Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերի իրականացման հիմնական հենակետերն էին: Նրանց միջոցով են իրականացվել դիվանագիտական և հետախուզական աշխատանքները, քրիստոնյա քահանաների միսիոներական և վաճառականների առևտրատնտեսական գործունեությունը Կովկասում, Անդրկովկասում և Իրանում: Արևելյան Կովկասի տարբեր վայրերում բնակվող, տեղանքին և լեզուներին քաջատեղյակ հայերը, ընդ որում ոչ միայն ծառայության մեջ գտնվողները, այլև կամավորները, հաճախ մեկնում էին Կովկաս և Իրանի տարբեր վայրեր, տեղեկություններ հավաքում հակառակորդի ուժերի և մտադրությունների վերաբերյալ և հարմար առիթի դեպքում հայտնում ռուսական իշխանություններին: 1769 թ. Ղզլարի պարետին ուղղված հայ վաճառականի մի զեկուցագրում նըշվում է, որ թուրքական բոլթանի կեղծ խոստումներով ոգևորված, կարողինքները իրենց կողմը գրավելով նաև չեչեն իշխանին, պատրաստվում են հարձակվել Մոզդուկի վրա. հայտնվում են գործի հետ կապված մի շարք մանրամասներ: Զեկուցագրի հեղինակը, չնշելով իր անունը, ստորագրել է՝ «Ձեզ անհայտ մի հայից»¹²:

XVIII դարից մինչև XIX դարի կեսերը, Կովկասյան լեռնյիների հնազանդեցման, ռուսական զորքերի տեղաշարժերի և ռազմական գործողությունների կազմակերպման գործում մեծ նշանակություն էր տրվում կովկասյան ռազմական գծին, որտեղ գտնվող քաղաքներում, գյուղերում և ավաններում (Ղզլարից մինչև Մոզդուկ) բնակվում էին մեծ թվով հայեր, որոնք Ռուսաստանին հաղթանակած էին ուզում տեսնել ոչ միայն Հյուսիսային Կովկասում, այլև Հայաստանում և Անդրկովկասում¹³:

XVIII դարի վաղերագրերից տեղեկանում ենք, որ բազմաթիվ ղզլա-
րաճայ և մոզզոկաճայ կամավորներ քաղաքների ոռոսական կայազորների
հետ միասին մասնակցել են պաշտպանական կռիվներին, հարկ եղած
դեպքում օր ու գիշեր հերթապահել քաղաքներում և նրանց շրջակա-
քում: Էսկադրոնների հայ զինվորականները (հիմնականում սպաներ)
պահակային ծառայությունն են կատարել Թերեքի շրջանի սահմանամերձ
ոռոսական ամրություններում (Урчуковский форпост)¹⁴: Հայ համայնք-
ների բնակչությունը բազմիցս փոխադրամիջոցներ և ուղեկցողներ է
տրամադրել ոռոսական զորքերին, ունեցել ոռոսական բանակին կից հայ
նպարավաճառներ (маркитанты): Վաղերագրերի վկայությամբ, XVIII
դարի վերջերին և XIX դարի սկզբներին, Արևելյան Կովկասում գործող
ոռոսական բանակին պաքսիմատով ապահովելու գործը հանձնարարված
է եղել Ղզլարի և Մոզզոկի հայ համայնքներին, որոնք պատվով են կա-
տարել այդ խնդիրը¹⁵:

Ռոսական զորքերի առաջխաղացման յուրաքանչյուր լուր մեծ խան-
դավառությամբ էր ընդունվում Հյուսիսային Կովկասի հայերի կողմից,
որոնք, բնական է, առաջինն էին իրազեկ դառնում իրադարձություննե-
րին, նոր և լավագույն հույսեր ակնկալելով դրանցից:

Հայերից շատերը, վտանգելով կյանքը և քաջ գիտակցելով ունեց-
վածքից զրկվելու անխուսափելիությունը, բացահայտ հանդես են եկել
Ռուսաստանի կողմում, ուժերի հնարավորության սահմաններում արել
ամեն ինչ՝ ապահովելու ոռոսական զենքի հաղթանակը և արագացնելու
հայրենակիցների մոտալուտ ազատագրումը: XVIII դարի երկրորդ կեսի
վաղերագրերում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել դերբենդ-
ցի հայ Պետրոս Իվանովի մասին, որը, 1775 թ. գնեբրալ-պորուչիկ
Ի. Դեմեդեմի գլխավորությամբ, ոռոսական կորպուսի Դերբենդում եղած
ժամանակ, 13 ամիս շարունակ, անվճար սննդամթերքով ապահովել է
ոռոսական կորպուսը, իսկ հետագայում, խուսափելով Դերբենդի Ֆաթ
Ալի խանի վրեժխնդրությունից, հեռացել է քաղաքից և բնակություն
հաստատել Ղզլարում¹⁶: Նկատի ունենալով Պ. Իվանովի ծառայություն-
ները, Ա. Սուվորովը 1780 թ. սեպտեմբերին, Պ. Տուրչանինովին հղած
նամակում խնդրում է արժանին հատուցել հայ կամավորին, որը ոռ-
ոսական բանակին օգնելու համար Դերբենդի խանի հրամանով զրկվել է
ողջ ունեցվածքից և այժմ, ոռոսահպատակություն ընդունելուց և Ղզլար
փոխադրվելուց հետո, մեծ կարիքի մեջ է¹⁷:

XVIII դարի 80-ական թվականների սկզբին, ոռոսական զորքերի՝
Անդրկովկաս առաջխաղացման լուրը կրկին մեծ ոգեւորություն է առա-

շացնում Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի հայերի շրջանում: 1780 թ. հունվարին Աստրախան է ժամանում Ա. Սուվորովը, ընդունում բանակի հրամանատարությունը, միաժամանակ, լայն աշխատանք ծավալում Անդրկովկասի և Իրանի վերաբերյալ անհրաժեշտ տվյալների հավաքման ուղղությամբ: Պահպանված տեղեկությունների համաձայն Սուվորովը կայեր է հաստատել ոչ միայն Լազարյանների, Հովսեփ Արղուիսյանի, այլև Արևելյան Կովկասում բնակվող հայերի հետ, որոնք կատարել են նրա տարբեր հանձնարարությունները: Այսպես օրինակ՝ Սուվորովի անունից Գիլանի Հեղայեթ խանի հետ գաղտնի բանակցություններ է վարել Ղարաբաղցի հայ Նիկիտա Յակովլևը: Վերջինիս հետ կապված են եղել Ղզլարցի հայ վաճառականներ Յադար Հեյդարովը և Հաջի Կիրակոսը, որոնք առևտրի և, անկասկած, նաև հետախուզական նպատակներով մեկնել էին Իրանի քաղաքները¹⁸:

XVIII դարի վերջին, Սուվորովի բանակում, ծառայության մեջ է գտնվել Ղզլարցի հայ Յակով Աբրամովը (Հակոբ Աբրահամյան)¹⁹: Աղբյուրներում վկայություն կա ևս մեկ դերբենդցի հայ Պետրոս Իվանովի մասին, որը Ղրիմից հայերի գաղթը կազմակերպելու տարիներին կատարել է Ա. Սուվորովի հանձնարարությունները: Ա. Սուվորովը, տեղեկանալով Պ. Իվանովի ծառայությունների համար նշանակված ցածր թոշակի մասին, 1778 թ. հոկտեմբերին բարեխոսել է Գ. Պոտյոմկինին՝ նրան նյութապես օգնելու և հովանավորելու հարցում²⁰:

1795 թ. վերջերին ռուսական կառավարությունը սկսում է Իրանի դեմ պատրաստվել նոր արշավանքի: 1796 թ. գարնանը Ղզլար է ժամանում կոմս Վ. Զուբովը, այնտեղ էր նաև Հովսեփ Արղուիսյանը, որը հրավիրված էր արշավանքի ժամանակ ուղեկցելու կոմսին: Ռուսական զորքերը 1796 թ. ապրիլին Ղզլարից շարժվում են Դերբենդ: Արշավանքի առաջին իսկ օրը Հ. Արղուիսյանը ղեկուցագիր է ներկայացնում կոմսին, որով խնդրում էր օգնություն ցույց տալ հայ ժողովրդին: Արշավանքի ժամանակ, Հ. Արղուիսյանի գործունեությունը նկարագրող վավերագրի վկայությամբ, վերջինս կայեր է հաստատել հայերի հետ, նրանց միջոցով պարեն և փոխադրամիջոցներ տրամադրել ռուսական զորքին, անհրաժեշտ տեղեկություններ հավաքել Արևելյան Կովկասի և Անդրկովկասի վերաբերյալ: Իրեն հավատարիմ հայերի օգնությամբ Արղուիսյանը նպաստել է մի քանի քաղաքների խաղաղ գրավմանը, իսկ արշավանքի ընդհատումից հետո ոչ միայն կազմակերպել է Դերբենդի և Մսկուրի հայերի գաղթը Ռուսաստան, այլև, հետագա տարիներին, բարեխոսել է ռուսական իշխանություններին, նոր բնակավայրերում բա-

ընկալելու հայ համայնքների իրավաստեսական վիճակը²¹: Աղբյուրներում եղած տեղեկությունների համաձայն, ուսաների կողմից պաշարված Դերբենդը առաջից արշուճահեղձության և զոհերի անձնատուր չէր լինի, եթե դերբենդցի հինգ հայ կամավորներ ժամանակին չբացահայտեին Դերբենդի Շեյխ Ալի խանի դիտավորությունը: Հայ երիտասարդները քաղաքից դուրս դարանակալելով, կարողանում են զինաթափել նամակատարների 12 հոգուց լսողկացած խումբը, որը օգնության խնդրանքով գիմելու էր Դերբենդի տիրակալին հավատարիմ խաներին²²:

Մեկ այլ վավերագրի վկայությամբ, Դերբենդի պաշարմանը և գրավմանը (1796 թ.) մեծ օգնություն է ցույց տվել դերբենդցի հայ Հարություն Գրիգորևը: Նա ուսաներին ցույց է տվել բերդը տանող ամենակարճ և հարմար ճանապարհը, վառողի պահեստը և զինամթերքների թաքստոցը, «...որից հետո,— գրում է Հ. Գրիգորևը,— բերդի պաշտպանությունը անիմաստ կլիներ»: Հ. Գրիգորևը, այնուհետև, փախել է Դերբենդից, ճանապարհին վիրավորվել, գերի ընկել, Գուգովիչի միջնորդությամբ ազատվել գերությունից և բնակություն հաստատել Ղզլարում:

Այս դեպքերից հետո Դերբենդի խանը, հուսալքված, հեռանում է Ղուրա, իսկ քաղաքի բնակիչները բերդի բանալիները հանձնում են ուսաներին: Հետագայում, 1803 թ. հունվարին, Ալեքսանդր 1-ին թագավորին ուղղված խնդրագրում Հ. Գրիգորևը կնշի, որ ինքն այդ բոլորը արել է Ռուսաստանի հանդեպ ունեցած հավատարմության և հազարավոր հայերի փրկության համար, որոնք, մոտ 600 ընտանիք, մասամբ իր ջանքերի շնորհիվ, գաղթել են Ռուսաստան²³:

Սակայն, ուսական նոր կայսր Պավել 1-ինը 1796 թ. վերջերին ուսական զորքերին հետ քաշվելու հրաման է տալիս: Վերջիններիս հեռանալը ծանր հետևանքներ ունեցավ անդրկովկասյան ժողովուրդների, մասնավորապես հայերի համար: Սովը, համաճարակը և ավերածությունները անասելի ծանր վիճակ էին ստեղծել Արցախի, Սյունիքի և Գանձակի հայ բնակչության համար: Վարդան Օձնեցու վկայությամբ. «...բազումք ի հայոց անցին ի Վրաստան, ի Սօմխեթ, յԵրևան, ի Կարս և յաշխարհն Սարմատացոց՝ ի Մօզդօք և ի Ղզլար»²⁴: Պավել 1-ինը, տեղեկանալով հայերի նվիրվածության ու հավատարմության մասին, զորքերը դուրս բերելու ժամանակ գեներալ Սավելևի միջոցով հայտնում է նրանց կայսերական թույլտվությունը. «Եթե հայերը կցանկանան հեռանալ զորքի հետ կամ զրանից հետո, աչպիսիներին ընդունել, բնակեցնել անվտանգ վայրերում, ապահովել պարենով և այլ անհրաժեշտ օգնություն ցույց տալ»²⁵:

Ծանր էր նաև Դերբենդի և շրջակա գյուղերի հայ բնակչության վիճակը, որ, վախենալով խաների վրեժխնդրությունից, ուստական զորքերի ուղեկցությամբ, հարյուրավոր բնտանիքներով գաղթում են Արևելյան Կովկասի հայաբնակ վայրերը։ Ստվարացնելով տեղի հայ համայնքները, նրանք միաժամանակ հիմնադրում են նորերը, այդ թվում՝ Սուրբ Խաչ բաղաքը Դեորգիևսկի շրջանում, Դերբենդի, Մոլախալի և Ղարաջալի հայկական գյուղերը Ղզլարի շրջանում, Կասաեռ Յամա (հետագայում Եղեսիա) հայկական գյուղը Մոզդուկի շրջանում։ Պահպանված տեղեկությունների համաձայն գաղթականների հիմնական հատվածը, մոտ 5000 երկսեռ բնակչություն, հաստատվել է Թերեքի ավազանում և միայն աննշան մասը՝ Աստրախանում²⁶։

XVIII դարը Հյուսիսային Կովկասի և մասնավորապես Արևելյան Կովկասի հայ գաղթավայրերի համար միաժամանակ մեծ փորձությունների, նախկին արտոնությունները պահպանելու և նորերը ձեռք բերելու երկարատև և համառ պայքարի ժամանակաշրջան էր։ Ռուսաստանի առևտրատնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում վաղուց ճանաչում ստացած Ղզլարը, Մոզդուկը և մյուս հայկական գաղթավայրերը, այնուամենայնիվ, կարիք ունեին ազդեցիկ հովանավորողների, որպիսիք հանդիսացան Լազարյանները։ Վերջիններիս անձնական ֆոնդերում պահվող և այլ վավերագրեր վկայում են, որ XVIII դարի երկրորդ կեսից Լազարյանները սերտ կապեր են հաստատել Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի հետ։ Օգտագործելով ուստական միջավայրում ունեցած իրենց անձնական ծանոթությունները, դիրքը և հեղինակությունը, նրանք մշտապես պաշտպանել են հայերի դատը ուստական կառավարող շրջաններում, բարեխոսել հայ համայնքների արտոնյալ գոյավիճակի պահպանման համար։ Լազարյաններից տարբեր ժամանակներում և զանազան առիթներով ստացած դրամական նվիրատվությունները ղգալի օգնություն էին նորաստեղծ հայկական գաղթավայրերին²⁷։

Պատահական չէ, որ ղզլարահայերը, մոզդուկահայերը, դերբենդահայերը՝ Լազարյաններին հղած ավելի ուշ շրջանի (XIX դարի 20-ական և 30-ական թվականներ) բազմաթիվ խնդրագրերում և նամակներում նրանց անվանում են «ազգի խնամատարներ և բարերարներ», հույս հայտնելով, որ իրենք աշուհհետև ևս կշարունակեն օգտվել նրանց հզոր հովանավորությունից²⁸։

Արևելյան Կովկասի հայկական գաղթավայրերը XVIII—XIX դարերում նշանակալի մասնակցություն են ունեցել կամ իրազեկ եղել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ մայր հայրենիքի իրադարձություններին, ջեր-

մորեն արձագանքել դրանց և մշտապես գտնվել ռուսական իշխանությունների, լազարյանների, հայ հոգևոր գործիչների (Հ. ԱրղուՅյան, Ն. Աշտարակեցի), ռուսական բանակում ծառայող բարձրաստիճան հայ զինվորականների (Բ. Բևհուլթով, Լոռիս-Մելիքով և ուրիշներ) ուշադրության կենտրոնում և զգալի դեր կատարել հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման գործում²⁹։

Ինչպես հայտնի է, հայկական պետականության բացակայության պայմաններում, հայոց եկեղեցին միևնույն ժամանակ իրականացրել է նաև քաղաքական իշխանությունը։ Այդ երևույթը դրսևորվել է նաև ռուսահայ գաղթավայրերում։ Էջմիածնի հայոց կաթողիկոսները և ռուսահայ թեմի առաջնորդները ռուսական կառավարող շրջաններում հանդես են եկել ոչ միայն որպես հոգևոր սպասավորներ ու գործիչներ, այլև հայ համայնքների սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական կյանքին առնչվող աշխարհիկ բնույթի խնդրանքների, պահանջների և առաջարկությունների թարգմաններ։ Պահպանված բազմաթիվ վավերագրերից տեղեկանում ենք, որ նրանց հուզել և մտահոգել են ժամանակի կարևոր քաղաքական հարցերը³⁰։ Հայ հոգևոր և աշխարհիկ գործիչները ռուսական իշխանություններին են ներկայացրել սեփական առաջարկները, հայկական գաղթավայրերի առաջացման և տնտեսական վիճակի կարգավորման հարցերը՝ դրանք անմիջականորեն զուգակցելով Ռուսաստանի շահերին։

Այսպես, ռուսական իշխանությանն ուղղված 1798 թ. խնդրագրում, անդրադառնալով Ղզլարի, Մոզդոկի, ինչպես նաև Դերբենդի շրջանից գաղթած հայերի տնտեսական վիճակի բարելավման հարցերին, Հովսեփ ԱրղուՅյանն ընդգծում է, որ դա մեծապես կնպաստի Ռուսաստանում հայերի նոր զանգվածների վերաբնակվելուն։ «Եվ քանի որ վերը նշված բոլոր բնակավայրերը սահմանի վրա են տեղավորված,— գրում է Հ. ԱրղուՅյանը,— ապա թշնամու հարձակումների ժամանակ հայերը կպաշտպանեն ոչ միայն իրենց, այլև սահմանամերձ մյուս շրջանները և, բնականաբար, մեծ թվաքանակով ռուսական զորք պահելու անհրաժեշտություն չի լինի։ Դրա օրինակը ոչ մեկ անգամ և հերոսաբար ցույց է տվել Ղզլարը»,— ավելացնում է Հ. ԱրղուՅյանը։ Խնդրագրի վերջում նա առաջարկում է բավականաչափ հոգիք տրամադրել և խրախուսել հայերին՝ տեղում զարգացնելու մետաքսի, հացահատիկային կուլտուրաների, խաղողի այգիների մշակությունը, որը միայն օգուտ կբերի և զգալիորեն կհարստացնի պետական գանձարանը³¹։

Ռուսական կառավարությունն, անշուշտ, նաև քաղաքական և տրնս-տեսական այս շահախնդրությունները նկատի ունեն, երբ խրախուսում և հովանավորում էր հայերի գաղթը հարավային Ռուսաստանի ամայի և անմշակ տափաստանները, բազմաթիվ արտոնություններ շնորհելով նորաստեղծ հայ համայնքներին:

Դարավերջին, Հ. Արղությանի կազմած ցուցակի համաձայն, Թերե-բի ավազանում (Ղզլարում, Մոզդուկում, Սարաֆանով և մյուս գյուղե-րում) և Հին Մաջառում (Սուրբ Խաչ) բնակություն էր հաստատել 1.782² հայ ընտանիք՝ 11.307 երկսեռ բնակչությամբ³², որը ոչ միայն արագորեն ընդգրկվել էր երկրամասի առևտրատնտեսական կյանքի ոլորտը, այլև իր համեստ լուման ներդրել ռուսահայ հասարակական-քաղաքական կյանքում: Մոսկվայի, Պետերբուրգի, Աստրախանի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի հետ միասին Հյուսիսային Կովկասի հայկական գաղթա-վայրերը մասնակցել են ռուսահայ կյանքի գրեթե բոլոր կարևոր իրա-դարձություններին, անհրաժեշտության դեպքում դրսևորել քաղաքական ճիշտ կողմնորոշում, աշխուժորեն արձագանքել հայրենիքում տեղի ունե-ցող անցուդարձերին: Դարավերջին սկիզբ առած Դավիթ-Դանիելյան վե-ճի տարիներին, Հազարյանների կոշով և սեփական նախաձեռնությամբ ռուսահայ գաղթավայրերում (այդ թվում Ղզլարում և Մոզդուկում) թեժ պայքար է մղվել ընդդեմ Դավթի կուսակից Գրիգոր վարդապե-տի, որը, ռուսահայ թեմի առաջնորդ դառնալու հավակնությամբ խառ-նակիչ քաղաքականություն էր վարում: Առեկտան Կովկասի հայկական գաղթավայրերն այս անգամ ևս անմասն չմնացին հասարակական-քա-ղաքական կյանքում տեղ գտած այնպիսի կարևոր հարցերի քննարկու-մից, ինչպիսիք էին հայ եկեղեցու ինքնուրույնության պահպանումը և կյանքում արդեն քանիցս քննություն բռնած ռուսական կողմնորոշման հաստատումը³³:

Այսպիսով, Ռուսաստանի արևելյան քաղաքականության անցկացման ամբողջ ընթացքում Հյուսիսային Կովկասն այն կարևոր օղակն էր, որի միջոցով Ռուսաստանը իրականացրել է իր ռազմաքաղաքական և դիվա-նագիտական քաղաքականությունը Անդրկովկասի, Իրանի և Թուրքիայի նկատմամբ: Ուստի միանգամայն պարզ և հասկանալի է այն կարևոր դերը և ուշադրությունը, որ ռուսական կայսրությունը հատկացրել է երկրամասում բնակվող ժողովուրդներին:

Եթե XVIII դարի 20-ական թվականներին հիմնական շեշտը դրվել է երկրամասի ռազմաքաղաքական յուրացման, տեղում հավատարիմ քրիստոնյա բնակչության թվի ավելացման և Առեկտան Կովկասը՝ դեպի

Անդրկովկաս առաջխաղացման համար ամուր հենակետ դարձնելու վրա, ապա XVIII դարի 80-ական թվականներից կարևոր քաղաքական խնդիր էր դարձել Անդրկովկասը Ռուսաստանի հովանավորության ներքո վերցնելը, որը միաժամանակ, ամրապնդելու էր Ռուսաստանի դիրքերը Հյուսիսային Կովկասում, ի հակակշիռ Թուրքիայի, նրա դրածոների և վերջիններիս հովանավորող եվրոպական տերություններին:

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը թե՛ առաջացման պատճառներով, թե՛ հասարակական-քաղաքական և տնտեսական գործունեությամբ որոշակիորեն տարբերվում են Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղթավայրերից: Եթե Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքները կարևոր ավանդ են ներդրել հայ-ռուսական գաղափարաքաղաքական հարաբերություններում և հայ ժողովրդի կուլտուր-մշակութային կյանքում, ապա Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, կարծես թե միջանկյալ, կապող օղակ են հանդիսացել Ռուսաստանի, այնտեղ բնակվող հայ համայնքների և Անդրկովկասի՝ մասնավորապես մայր Հայաստանի միջև: Վերը նշած փաստերը մեկ անգամ ևս հաստատում են, որ Արևելյան Կովկասի հայկական գաղթավայրերը չեն ապրել ներփակ կյանքով և չեն սահմանափակվել զուտ առևտրատնտեսական գործունեությամբ: Վերջիններիս հուզել, մտահոգել են հայ ազատագրական պայքարի և հայ ժողովրդի անկախության հարցերը: Ավելին, ի տարբերություն ռուսահայ մյուս գաղթավայրերի, նրանք առավել անմիջական և գործուն մասնակցություն են ունեցել երկրամասում ծավալվող քաղաքական իրադարձություններին, հնարավորության սահմաններում, նվիրվածությամբ աջակցել ու նպաստել Ռուսաստանի Կովկասյան քաղաքականության կարևորագույն հարցերի դրական և շուտափույթ լուծմանը, դրանում տեսնելով հայ ժողովրդի ազատագրման միակ երաշխիքը:

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ «Армянское войско в XVIII в. Из истории армяно-русского военного содружества (Исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян, Ереван, 1968, стр. 38—87.

² В. Г. Лысцов, Персидский поход Петра I, 1722—1723, Москва, 1951, стр. 150—151.

³ ЦГВИА СССР (Центральный государственный военно-исторический архив СССР), ф. ВУА, д. 18472, л. 3—4.

⁴ Նույն տեղում, էջ 4, 12—36:

5 АВПР (Архив внешней политики России), ф. СРП, 1727 г. оп. 77/1, д. 11, л. 8 об; ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18472, л. 3—18.

6 АВПР, ф. СРП, 1724 г. д. 4, л. 90—90 об, 91—91 об, տե՛ս նաև՝ Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов. т. II, ч. II, Ереван, 1967, док. 215 и 224.

7 Армяно-русские отношения в XVIII в. (сб. док), т. III, Ереван, 1978 г., док. 7.

8 П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 г. по 1803 г., ч. II, СПб., 1869 г., стр. 113.

9 Армянской войско в XVIII в... стр. 448, 450, 454.

10 Նույն տեղում, էջ 445, տե՛ս նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, Թղթ. 3, վավ. 6:

11 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, Թղթ. 2, վավ. 20:

12 В. Г. Гальцев, Кавказская линия и терское казачество к началу XIX столетия, «Известия Северо-Осетинского НИИ», т. IX, Орджоникидзе, 1940, стр. 101.

13 Русско-армянское сотрудничество в период присоединения Восточной Армении к России 1826—1828 гг. (сб. док.), «Բանբեր Հայաստանի արխիվ-նեղի», 1978 թ., № 2, էջ 16:

14 ЦГА ДАССР (Центральный государственный архив Дагестанской ССР) ф. 379, оп. 1, д. 513, л. 99: ЦГИА СССР, ф. 1268, оп. 3. д. 303, л. 9—9 об.

15 ЦГИА Груз.ССР. ф. 4. оп. 5, д. 39. л. 2—2 об.

16 М. Г. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга 1, Ереван, 1956 г., стр. 67.

17 Նույն տեղում, էջ 57, 63, 284:

18 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, Թղթ. 8, վավ. 30, 43:

19 Письма и бумаги Суворова, т. 1, письма 1764—1781 гг., объяснил с примечаниями снабдил В. Алексеев, Петроград 1916 г. № 387 (Սովորովի նամակների բովանդակությունից և այլ վավերագրերի հիման վրա պատմական և թվական տվյալների համեմատությունից պարզվում է, որ այս Պ. Իվանովը և վերը նշված Պ. Իվանովը (առաջինը զինվորական, իսկ երկրորդը վաճառական) զուտ անվանակիցներ են և ոչ թե նույն անձնավորությունը, ինչպես կասկածում է ժողովածուի հեղինակ Վ. Ալեքսանբեր տե՛ս էջ 176 և 387):

20 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, лл. 15, об. 22—22 об.

21 Государственная публичная библиотека им. Салтыкова-Щедрина. Отдел рукописей и редких книг (ОР и РК) ф. Основное собрание рукописной книги (ОСРК), рукопись Ф. Мадейского, «Историко-статистическое описание поселенцев на Мажарах», 1844 г. л. 8.

22 ЦГИА Груз.ССР, ф. 2, оп. 1, д. 62, л. 59—60.

23 Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Եր., 1972, էջ 241:

24 ГПБ им. Салтыкова-Щедрина, рукопись Ф. Мадейского, л. 9.

25 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, л. 89.

- 26 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 8, վավ. 26, թղթ. 105, գ. 11, վավ. 87: Կաղարյանների արխիվ, թղթ. 102, վավ. 137:
- 27 ЦГИА СССР, ф. 880, оп. 5, д. 619, л. 16, 17, 22.
- 28 Նույն տեղում, ֆ. 1374, ց. 2, գ. 1815: Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 116, վավ. 232, 233, 235, թղթ. 152, վավ. 216:
- 29 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 111, վավ. 439:
- 30 ЦГИА СССР, ф. 1374, оп. 2, д. 1815, л. 22, об.
- 31 Նույն տեղում, թ. 89:
- 32 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռագիր № 2914, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. 34, 90ա, 133, 134, 163, 258:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ՍԵՎ ԾՈՎԻ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿՈՒՄ**

XVIII դարի երկրորդ կեսին Սև ծովի՝ Ռուսաստանին միացված հյուսիսային շրջաններում կազմավորվեցին երկու հայկական գաղութներ՝ Նոր Նախիջևանը և Գրիգորիոպոլը։ Ռուսաստանի հայկական գաղութներին վիճակված էր նշանակալի դեր խաղալ հայ և ռուս ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացման գործում։

Այդ գաղութների պատմությունը հանգամանալից մենագրություններ են նվիրվել¹։ Սակայն դրանց հեղինակները Սև ծովի հյուսիսային շրջանների մասը կազմող Նովոռոսիայում հայկական գաղութների կազմավորման և նախադրյալների մեկնաբանման հարցում չեն տարամիտվում։ Քննելով այդ գաղութների առաջացման պատմությունը, հետազոտողները, իբրև կանոն, ուշադրություն չեն դարձնում ներհայկական գործոնի վրա։ Այնինչ, Սև ծովի հյուսիսային ափերը հայերով բնակեցնելու հարցը հարկ է քննել երկու միահյուսված տեսանկյուններով՝ ներհայկական (իբրև իր պատմական հայրենիքի՝ Հայաստանի վերածնության նախադրյալ և նախապատրաստում) և ռուսական-գաղութացման։

Չնայած երկրորդ գործոնի առկայությունը ակնհայտ է, և նրա հաստատագրումը հատուկ ջանքեր չի պահանջում, այնուամենայնիվ, համառոտ կանգ առնենք ռուսական-գաղութացման ընթացքի էություն վրա։

Սևծովյան հյուսիսային շրջանների՝ այդ բերքառատ տափաստանային երկրամասի, պատմությունն իր արմատներով հասնում է դարերի խորքը։ Դեռ հեռավոր անցյալում այստեղ էին վերաբնակվում սկյութական և սարմատական ցեղերը, հիմնվում էին հունական գաղութներ, իսկ հետագայում բնակվում էին պեչենեգները, պոլովցիները և թաթարները։ Միայն XVIII դ. երկրորդ կեսին թուրք-թաթարական վտան-

գի վերացումից և երկրամասը Ռուսաստանին միացվելուց հետո ի հայտ եկան երկրամասի պլանավորված բնակեցման և տնտեսական յուրացման հնարավորություններ։ Մասնագիտական գրականության մեջ XVIII դ. երկրորդ կեսը Նովոռոսիայի յուրացման և հողաշինարարության պատմության մեջ բնութագրվում է իբրև «գաղութային» փուլ։ Ներքին նահանգներից վերաբնակիչների (այսպես կոչված ժողովրդական գաղութաբնակեցման) հետ միասին երկրամասի յուրացման գործում մեծ դեր խաղացին կառավարության կողմից հրավիրված օտարերկրյա գաղութաբնակները, այդ թվում և հայերը։ Այսպիսով, օտարերկրյա գաղութաբնակեցումը կազմակերպվում էր Ռուսաստանի պետական քաղաքականության մակարդակով։ Այդ քաղաքականությունն ուներ իր միանգամայն արդարացված քաղաքական և տնտեսական նշանակությունը։ Նոր Նախիջևանի գաղութի պատմության հետազոտող Վ. Բ. Բարխուդարյանն իրավացիորեն նշում է. «Ղրիմահայերի գաղթը և նոր Նախիջևանի հիմնադրումը տեղի չի ունեցել տարերայնորեն, այն կազմակերպված էր ռուսական կառավարության կողմից և... պայմանավորված էր վերջինի տնտեսական և ռազմաքաղաքական ձգտումներով»²։

Ընդհանուր առմամբ դիրքերից էր ելնում Ռուսաստանը, որոշելով Դնեստրի ձախ ափին հիմնել Գրիգորիոպոլ հայկական գաղութը։ Ցարական կառավարության ջանքերը զուր չանցան։ Հայերը որոշակի դեր խաղացին Սև ծովի հյուսիսային շրջանների բնակեցման և տնտեսական յուրացման գործում։ Նովոռոսիայի հայկական գաղութների տնտեսական զարգացման տեսակարար կշիռը բավականին բարձր էր։ Դա պայմանավորված էր շատ հանգամանքներով, այդ թվում այնպիսի փաստով, ինչպես քննրվող ռեգիոնի հայկական գաղութներում ու գյուղերում ճորտատիրական հարաբերությունների թույլ զարգացումը կամ թե լրիվ բացակայությունը։

Վերադառնալով սակայն Նովոռոսիայում հայերի բնակեցման ներհայկական գործոնին։ Այդ գործոնի առկայության մասին գրվել է Գրիգորիոպոլի մասին մեր ուսումնասիրության մեջ։ Ելնելով հարցի նման դրվածքից, XVIII դ. երկրորդ կեսին Սև ծովի հյուսիսային շրջաններում առաջացած հայկական գաղութները հարկ է դիտարկել իբրև իր պատմական հայրենիքի՝ Հայաստանի վերածնության նախադրյալ և նախապատրաստում*։

* Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը» գրքում տվյալ պորբեմի կոնկրետ և հստակ ձևակերպումը բացակայում է, սակայն, ստորև քաղվածաբար բերվող տողերը, ինչպես մեղ թվում է, հիմք են տալիս կարծելու, որ Հայաստանի ազատագրման և Ռուսաստանի հովանու ներքո հայ պետականության ստեղ-

Ընդգծենք երկու հանգամանք: Այդպիսի գաղափար կարող էր ծագել միայն հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների՝ Հովհաննես Լազարյանի, Հովսեփ Արղուիթյանի և ուրիշների մոտ*: Մյուս կողմից, թուրքերի և թաթարների տիրապետության տակ գտնված տարածքներից հայերի Ռուսաստան վերաբնակեցումը կարող էր կատարվել միայն Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացման, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նոր ակիբի պայմաններում, որը տեղի ունեցավ XVIII դ. վերջին երեսնամյակում: Այսպիսով, նոր Նախիջևանի և Գրիգորիոպոլի առաջացումը սերտորեն կապում ենք

ծումբ աղերսվում էր հայկական գաղթավայրերի հիմնադրման հետ: Իր մենագրության ներածական մասում Վ. Բարխուդարյանը նշում է. «Հատկանշական է, որ XVIII դարի վերջերին, ազատագրական շարժման վերելքի և Հայաստանի անկախությունը վերականգնելու պատրանքների շրջանում, նոր Նախիջևանը, իր հայկական ինքնուրույն կյանքով, պետականությունը վերականգնելու հույսեր էր ներշնչում հայ առաջավոր մտածողներին»³: Ակնհայտ է մի բան. հեղինակը հակված է նոր Նախիջևանի առաջացումը քննել զլխավոր ազգային խնդրի լուծման, անկախ Հայաստանի ստեղծման ենթատեքստում: Դա հասկանում էին և՛ ազգային գործիչները, և՛ հայ ժողովրդի առաջագնծ մասը, որը գտնվում էր օտար լծի տակ: Վ. Բարխուդարյանը իրավամբ գրում է. «...բնակչության մի մասը հենց սկզբնական շրջանից տրամադիր ու համակիր էր եղել Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու գաղափարին»⁴: Իրրե ամփոփում բերենք ևս մի հատված Վ. Բարխուդարյանի գրքից. «Տասնութերորդ դարի վերջին քառորդում ազատագրական անկախությունների աշխուժացման միջոցառում, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու «գաղնագրության» նախագծերի մշակման շրջանում Կովկասի նախադռներում գտտ հայաբնակ քաղաքի և հինգ գյուղերի հիմնադրումը մեծ տպավորություն է գործում ժամանակի հայության վրա»⁵:

* Անդրադառնալով Հովսեփ Արղուիթյանի գործունեությանը, Վ. Բարխուդարյանը նկատում է. «Երբ խոսք է լինում զրիմահայերի գաղթի կազմակերպման գործում XVIII դարի ոտտահայ ազատագրական շարժման ղեկավար գործիչների մասնակցության մասին, ավելի տեղին կլինե՞ր Հ. Արղուիթյանի փոխարեն հիշատակել թերևս Հ. Լազարյանի անունը: ...Հ. Արղուիթյանը միայն գաղթից, իրապես Պ. Մարկոսյանի մահից հետո է կապվում զրիմահայերի հետ»⁶: Մենք համոզված ենք, որ հեղինակի այդ եզրակացությունը հենվում է հարուստ փաստագրական նյութի վրա: Սակայն, այդ եզրակացությունը վերաբերում է միայն նվաճ կոնկրետ հարցին: Իսկ եթե Հովսեփ Արղուիթյանի գործունեությունը քննենք ամբողջության մեջ, ապա զրիմահայերին Դոնի ափերը վերաբնակեցնելու հարցը հայ արքայապետուհի դիտում էր իրեն ներհայկական գործոնի լուծման կարևոր օղակներից մեկը, այսինքն՝ իրեն Հայաստանի վերածննդի նախապատրաստման որոշակի փուլ: Ահա թե ինչու դժվար է համաձայնվել Վ. Բարխուդարյանի նման կտրուկ եզրահանգման հետ: Քանզի Հովսեփ Արղուիթյանը հայ ազատագրական շարժման առավել նախաձեռնող և գործուն ղեկավարներից մեկն էր և հայկական պետականության վերածննդի ջատագովը:

նշված ժամանակաշրջանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի և դարգացման հետ: Մեր առաջ քաշած դրույթը հասկանալու համար բավական է քննել հայ ժողովրդի ազատագրական շարժման և XVIII դ. երկրորդ կեսի հայ-ռուսական հարաբերությունները պատմության միայն մի քանի դրվագներ:

Ինչպես հայտնի է, հայ ազատագրական շարժման ղեկավարները հույսը դնում էին Ռուսաստանի վրա, հասկանալով, որ ռուսական պետության օգնությունը լինելու է Հայաստանի ազատագրության անհրաժեշտ նախադրյալը:

XVIII հարյուրամյակի երկրորդ կեսին Արևելքում և Անդրկովկասում ստեղծված օբյեկտիվ պայմանները դարձան այն հիմնական պատճառը, որ Ռուսաստանը նորից լրջորեն հետաքրքրվեց հայկական հարցով:

Քանի որ հայ ազգային գործիչների ազատագրական գաղափարները համընկնում էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության շահերին, ռուսական կառավարությունը որոշեց օգտագործել ազատագրական շարժման վերելքը Արևելյան Հայաստանում՝ սեփական դիրքերն Անդրկովկասում ամրապնդելու համար:

Ռուսաստանի համար Անդրկովկասը նոր հարմար հենակետ էր Թուրքիայի դեմ և ռազմաստրատեգիական նշանակություն ուներ: Բայց XVIII դարի 80-ական թվականներին, առավել ևս դրա առաջին կեսին, Ռուսաստանը տակավին իր առաջ հայկական տարածքներն անմիջականորեն միացնելու խնդիր չէր դնում*:

Եվ, իսկապես, դժվար է ենթադրել, որ Ռուսաստանն արտադրողական ուժերի թույլ զարգացման պայմաններում, արտաքին քաղաքական բարդ իրավիճակում, Նովոռոսիայի գաղութացմանը զուգընթաց ունենալով Անդրկովկասը տնտեսապես և ռազմաքաղաքական առումով յուրացնելու միջոցներ և հնարավորություններ:

Ուստի հայ ժողովրդի կողմնորոշումը դեպի Ռուսաստան և երկու ժողովուրդների շահերի ընդհանրությունը կապված չէին հայկական հոգիները միացնելու հեռանկարի հետ, այլ դրանք առաջացել էին թուրք և

* 1800 թ. ղեկավարներին պետական խորհրդի անդամներ Վորոնցովը և Կոչուբեյը դրում էին. «Եկատերինա երկրորդն, իր, այսպես ասած, զահակալության հենց սկզբից ողջ ուշադրությունը դարձնելով Ռուսաստանի գլխավոր թշնամուն՝ Թուրքերին նվաճելու և ոչնչացնելու վրա, ասենք, որքան էլ զբաղվում էր ասիական քաղաքականությամբ, մտադրություն չունեի իր գալիստին միացնելու Վրաստանը»:

պարսիկ կեղեքիշների դեմ մղված ազատագրական պայքարում հայ ժողովրդին ցույց տրված քաղաքական և ռազմական օգնության հողի վրա:

Շնորհիվ այդօրինակ քաղաքականության Ռուսաստանը կարողացավ իր կողմը գրավել հայ ազատագրական շարժման գործիչներին: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի այն երևույթները պարզաբանելու համար, որոնք տեղի էին ունենում Ռուսաստանի հարավում և Անդրկովկասում, XVIII դարի երկրորդ կեսին:

Հենց այդ ժամանակաշրջանում ձևավորվեց հայ քաղաքական գործիչների մի խումբ, որն իր ձեռքը վերցրեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի ղեկավարումը: Նրանց առավել վառ ներկայացուցիչներն էին Հովհաննես Լազարյանը և արքեպիսկոպոս Հովսեփ Արղուսյանը:

Ինչպես հայտնի է, Արղուսյանը Հայաստանից Ռուսաստան էր եկել Քուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրի ստորագրելուց ընդամենը մեկ տարի առաջ, բայց արդեն 70-ական թվականների վերջերին դարձել էր Ռուսաստանում բնակվող հայերի առավել ազդեցիկ ղեկավարը:

1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակը նպաստեց Արևելքի քրիստոնյա ժողովուրդների մոտ նրա հեղինակության բարձրացմանը, Ռուսաստանում բնակվող հայերի ակտիվացմանը: Նրանց շրջանում ծնունդ առան ոչ միայն հայկական մարզերի ազատագրումը և Ռուսաստանի հովանավորության ներքո անկախ հայկական պետության վերաստեղծումը նախատեսող նախագիծը, այլև թուրքերին ենթակա որոշ մարզերից հայերին Ռուսաստան վերաբնակեցնելու գաղափարը:

Ընդ որում, ռուսական տարածքում հայերին համախմբելու ծրագիրը հայկական ինքնուրույն պետություն կազմավորելու ծրագրից էր ածանցվում և վերջինիս էր ենթարկված: Եթե երկրորդ ծրագրի մասին հայտնի է աղբյուրներից, ապա առաջինի իրական լինելու մասին կարող ենք խոսել, հիմնվելով ոչ միայն հնդկահայերի հրապարակախոսական գրականության վրա, այլև ելնելով հայ ազատագրական շարժման գործիչների և ռուսական կառավարության վարքագծից՝ 1774 և 1787 թթ. ընթացքում, այսինքն՝ ռուս-թուրքական երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում:

Ժամանակագրական շրջանակները պատահական չեն վերցված, քանի որ մինչև Արղուսյանի Ռուսաստան գալը, հագիվ թե գոյություն ունենալու մասնօրինակ ծրագիր: Հենց Ռուսաստանում բնակվող հայերի գործունեության հետ, որոնք աշխուժացել էին Քուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրից և Արղուսյանի գալուց հետո, կարելի է կապել ռուսական

սահմաններում, մասնավորապես Բարձր դռան իշխանության ենթակա եվրոպական տարածքից, հայերին վերաբնակեցնելու ծրագրի ստեղծումը: 1778—1779 թթ. Ղրիմից հայերի դուրս բերումը Ռուսաստան և Նոր Նախիջևան քաղաք-գաղութի հիմնադրումը, կարծում ենք, այդ ծրագրի իրականացման ճանապարհին առաջին քայլերն էին:

Պատմագիտության մեջ արդարացիորեն նշվում է, որ հայերին և հույներին Ղրիմի խանութխանից Ռուսաստանի սահմաններում վերաբնակեցնելով, կառավարությունը հետամտում էր ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նպատակներ: Բայց, ընդամեն, ոչ մի տեղ չի նշվում այնպիսի կարևոր մի հանգամանք, որպիսին է հայ ազատագրական շարժման բուն ղեկավարների ցուցաբերած շահագրգռվածությունն այդօրինակ վերաբնակեցման նկատմամբ:

Փաստերը վկայում են, որ այդ ընթացքում հեռավոր Հնդկաստանում հայ ազատագրական շարժման գործիչների շրջանում (նրանց առավել ականավոր ներկայացուցիչներն էին Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը) ծագում է հնդկահայերի՝ Ռուսաստան վերաբնակեցնելու գաղափարը: Գրեթե միաժամանակ այդ գաղափարը հղացան նաև Ռուսաստանում բնակվող հայերի ղեկավարները, որոնք այն տարածեցին պարսկա-թուրքական և թաթարական լծի տակ ապրող իրենց հայրենակիցների շրջանում*:

«Հյուսիսային մեծ տերությունը» պիտի ժամանակավոր հանգրվան դառնար տարաբախտ ազգի համար, որը «երկար ժամանակ սպասում էր այն օրվան, երբ հայերը կկարողանան օտար երկրներից վերաբնակվել իրենց հայրենիքում, հարադատ «Արարատյան աշխարհում» և այնտեղ ապրել հայոց օրենքների հովանու ներքո»⁸:

Այժմ հասկանալի է, թե ինչու Ռուսաստանում հայ ազատագրական շարժման ականավոր գործիչները որոշակի դեր խաղացին Ղրիմում ռուսական կառավարության քաղաքական ծրագրերի իրականացման խնդրում: Այստեղ գործ ունենք հայ հասարակայնության և ռուսական պետության շահերի միահյուսման ականառու օրինակի հետ: Եթե հայ ազատագրական շարժման ղեկավարների առաջ ծառացած էր թաթարական լծից ղրիմահայերին ազատագրելու խնդիրը, եթե նրանք հույս ունեին

* Շատ հնարավոր է, որ հայերին Ռուսաստանի տարածքում վերաբնակեցնելու գաղափարը հնդկահայերի առաջնորդները վերցրել են լազարյանից և Արղությանից, քանի որ արդեն 1779 թ. (քաղաք-գաղութ Նոր Նախիջևանի հիմնադրումը) այդ գաղափարը գտավ իր գործնական մարմնավորումը, մինչդեռ Հնդկաստանի հաջ գործիչներն այն շարադրել են «Նշավակում» միայն, 1783 թ.:

օգտագործել ռուսական կառավարության՝ ապագա հայկական քաղաքին խոստացած ինքնավարության մարմինները, որպես ապագա անկախ Հայաստանի համար քաղաքական կադրեր պատրաստելու գործնական ղարոց*, ապա Եկատերինա 2-րդի կառավարությունն այլ նպատակներ էր հետապնդում: Ղրիմի խանության արհեստավորական և առևտրական բնակչության հիմնական զանգվածին (հայերին և հույներին) վերաբնակեցնելով, Ռուսաստանը փաստորեն տնտեսապես թուլացնելու էր իր պոտենցիալ հակառակորդին: Դրա հետ մեկտեղ Եկատերինա 2-րդի կառավարությունը շրնակեցված հարավի հայ բնակավայրերի հետ էր կապում առևտրի, արհեստների և այգեգործության զարգացման հույսերը:

Ռուսաստանի և հայ գործիչների շահերի միահյուսման տեսանկյունից պետք է դիտել, ինչպես մեզ թվում է, նաև հայ վերաբնակիչների նորանոր խմբեր ներգրավելու այն ծրագրերը, որ ռուսական կառավարությունը Ռուսաստանում բնակվող հայերի ղեկավարների հետ միասին մշակում էր XVIII դարի 80-ական թվականներին:

Այդ ծրագրի առանձին կողմերը պարզելու համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ստեփան Դավթյանի առաքելությունը Ռուսաստան:

1784 թ. Արարատյան աշխարհի հայերի և մելիքների պատվիրակին Ռուսաստան ուղարկելու մասին ռուսական հրամանատարության մի շարք խնդրանքներից հետո, ինչպես նաև Արղուժյանի պնդմամբ, Երևանի հայերը Ստեփանին ուղարկեցին Գեորգիևսկ ամրոց՝ գններալ Պ. Ս. Պոտյոմկինի մոտ: Այնինչ, մեկ տարի առաջ, երբ արարատյան հայերից լիազոր անձ ուղարկելու հարց ծագեց, ընտրության արժանացավ ոչ թե Ստեփանը, այլ Խուբովը⁹:

Դժվար է, իհարկե, բացատրել, թե ինչ նկատառումներով էր ղեկավարվում էջմիածինը պատվիրակ ընտրելիս: Պարզ է միայն մի բան, որ այդ փոփոխությունը հիմքեր ունեւ: Ստեփանի որդի Դավիթը այդ փաստը բացատրում էր իրենց տոհմի երեւելի լինելով, որն իբր սերում էր Դավիթ-Բեկից¹⁰:

Նմանօրինակ պատճառաբանությունը հազիվ թե կարելի է լուրջ համարել, բայց թուրք և պարսիկ աստիճանավորների հետ Ստեփան Դավթյանի կապերի մասին XIX դ. առաջին քառորդի վերջին Դավթի կողմից

* Այդ կապակցությամբ նշենք, որ նոր Նախիջևան քաղաքը հիմնելուց հետո հայերին Ռուսաստանի հարավում վերաբնակեցնելու ծրագիրն ավելի իրական հիմք ստացավ:

բերվող փաստը զարմանալիորեն համընկնում է Ստեփանի տվյալների հետ:

1793 թ. գործնական բնույթի նամակներից մեկում նա գրում է. «1784 թվականին իմ՝ Ռուսաստան ժամանելուց հետո, նորին գերազանցություն Պավել Սերգեևիչը (գեներալ Պոտյոմկինը— Ժ. Ա.), պատշաճը հատուցելով իմ ջանքերին, որ ես գործադրել էի Պարսկաստանում ինձ տված հանձնարարությունը կատարելիս, որտեղ իմ հաշվին գաղտնաբար հետախույզներ պահելով և զրացի ժողովուրդների իրավիճակի մասին տեղեկանալով, իրազեկ էի դարձնում նրան այդ մասին, երաշխավորությամբ ուղարկեց ինձ նորին պայծառափայլություն հանգուցյալ իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչի (Պոտյոմկինը— Ժ. Ա.) մոտ՝ Սանկտ-Պետերբուրգ»¹¹:

Այսպիսով, գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը, թեկուզ և հեռակա, բայց լավ էր ճանաչում Արարատյան աշխարհի հայերի պատվիրակին, և, հավանական է, որ ռուս հրամանատարի և հայ արքեպիսկոպոսի կարծիքները վճռորոշ գեր են խաղացել հայերի ներկայացուցչի բնորոշյան խնդրում:

Վավերագրական տվյալները վկայում են, որ գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը գործում էր Հովսեփ Արղուիսյանի միջոցով, որն այդ ժամանակ գտնվում էր նրա մոտ. «...Հենց նույն գեներալի (Պ. Ս. Պոտյոմկինի— Ժ. Ա.) հրամանով ես գրեցի Արարատ երեւելի մարդ ուղարկելու մասին...»¹²:

Հանձին Ստեփանի կառավարությունն ուներ մի մարդ, որը քաջատեղյակ էր Թուրքիայի և Պարսկաստանի ներքին գործերին: Պարսկական արշավանք նախապատրաստելու կապակցությամբ նա կարող էր ռուսական զորքին մեծ ծառայություն մատուցել: Եկատերինա II-ի կառավարությունը կամենում էր իր մայրաքաղաքում տեսնել հայոց լիազոր պատվիրակին: Ահա թե ինչու գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը, Կովկասյան պաշտպանական գծի վրա Ստեփանին դիմավորելով, անհապաղ նրան երաշխավորությամբ ուղարկեց Պետերբուրգ՝ իշխան Գ. Ա. Պոտյոմկինի մոտ:

Մյուս կողմից, Ստեփանը հարմար թեկնածու էր նաև հայերի համար: Հայ պատգամավորի առաջ ծառացած էր կառավարության հետ բանակցություններ վարելու բարդ խնդիրը: Հարցերի այն շրջանը, որ Ստեփանը պիտի կառավարության աստիճանավորների հետ քննարկեր, հայ դեսպանից պահանջում էր ճկունություն, ուշիմություն և սառնարյունություն:

Ստեփանին լավ ճանաչող Արղուժյանը Շահամիրյանին հասցեագրած նամակում նրան բնութագրել է որպես խոհեմությամբ և արժանապատվությամբ օժտված մարդ¹³։ Այդ նույն նամակի հաջորդ տողերը վերաբերում էին հայ հասարակայնության ուղերձի բովանդակությանը, որը Ստեփանը Պետերբուրգում հանձնել էր ռուսական կառավարությանը։ Նամակում խոսվում էր Հայաստանի երբեմնի մեծության և նրա ներկայիս անփառունակ վիճակի մասին, այնուհետև խնդրվում էր իրենց ազատագրել անհավատների լծից։ Արղուժյանի՝ Շահամիրյանին ուղղված այս տողերը բացահայտում են Ստեփանի առաքելության որոշակի նպատակամղվածությունը, որի հիմնական խնդիրն էր թուրքական և պարսկական լծից հայ ժողովրդի ձեռքազատումը։

Թեև Ստեփանը ձեականորեն Երևանի հայերի և մելիքների դեսպանն էր, սակայն, փաստորեն, իրականացնում էր Արղուժյանի գիծը, որի հայացքները հայ ազատագրական շարժման սկզբունքային հարցերի վերաբերյալ ըստ էության չէին տարբերվում հայ ավատատիրական ավագանու՝ Արցախի մելիքների հայացքներից։

Այդ առումով ուրվագծվում է Ստեփանի առաքելության հիմնական նպատակը, այն՝ որ հայ դեսպանը ազգի անունից* պիտի բանակցություններ վարեր ռուսական արքունիքի հետ՝ հայ հասարակայնության և Ռուսաստանի միջև պայմանագիր կնքելու, Ռուսաստանի հովանավորության ներքո Հայաստանին զորական օգնություն ցույց տալու խնդրի շուրջ։

Բերված միտքը հաստատվում է ոչ միայն Շահամիրյանին Արղուժյանի հասցեագրած հիշյալ նամակի բովանդակությամբ, այլև հայ արքեպիսկոպոսի՝ Ստեփանին գրած նամակներով։

Այսպիսով, 1784 թ. աշնանը, ռուսական մայրաքաղաք ժամանեց մի մարդ՝ օժտված հայ ազգի դեսպանի լիազորություններով**, մի մարդ, որի ուսերին էր դրվել եկատերինա II-ի և նրա կառավարության հետ բանակցություններ վարելու առաքելությունը։

Հենց այդ ժամանակ Գ. Ա. Պոտյոմկինին հասավ Գեորգիևսկ ամրոցից Հովսեփ Արղուժյանի գրած նամակը։ Հայ արքեպիսկոպոսի ուղեր-

* 1784 թ. հոկտեմբերի 24-ի Հովսեփ Արղուժյանի՝ Ստեփանին հասցեագրած նամակում նշվում է, որ Ստեփանը ողջ հայոց ազգի, այդ թվում Արցախի մելիքների դեսպանն ու ներկայացուցիչն է։ Իսկ ավելի վաղ հայ արքեպիսկոպոսը Ստեփանին էր ուղարկել հայ-ռուսական դաշնագրության նախագծի պատճենը¹⁴։

** Հավանաբար, զուր չէր այդ ժամանակաշրջանի վավերագրերում Ստեփանը հանդես գալիս որպես «արարատյան դեսպան»։

ձը տագնապով էր համտկված: Հայերի համար Անդրկովկասում իրադարձությունների ոչ նպաստավոր ընթացքից երկյուղած, Հովսեփը հարկադրված էր համաձայնվել նվազագույնին: Նա միջնորդում է հայ պետականության վերականգնման համար միայն «Արարատյան աշխարհում», իսկ Արցախի առթիվ սոսկ խնդրում է՝ մեկիքներին ազատել Իբրահիմ խանի իշխանությունից, նրանց վրաց արքային ենթարկելով¹⁵:

Հասկանալի է, որ այդ կրճատված ծրագիրը չէր կարող բավարարել ազատագրական պայքարի հայ գործիչներին: Սակայն այն ժամանակվա բարդ իրադրության մեջ այլ ելք չկար:

Հովսեփ Արղուիսյանի նամակին իշխան Գ. Ա. Պոտյոմկինի վերաբերմունքը մեզ անհայտ է: Բայց առավել հավանական է, որ Գ. Ա. Պոտյոմկինն այդ պահին անուշադրության է մատնել հայ արքեպիսկոպոսի խնդրանքը, բանի որ «արարատյան դեսպանը» «պայծառափայլ» իշխանի ընդունելությանն արժանացավ շատ ամիսներ անց, երբ Անդրկովկասում իրադրության լարվածությունն արդեն որոշ չափով մեղմացել էր: Իշխան Գ. Ա. Պոտյոմկինի հետ Ստեփանի բանակցությունների նպատակը կայսրուհու հետ հայոց ազգի դեսպանի տեսակցության համար հող նախապատրաստելն էր: Բայց ժամանակն անցնում էր, իսկ Եկատերինա II-ը չէր շտապում ընդունել նրան: Ստեփանը զուր էր բախում եկատերինյան բարձրաստիճան պաշտոնյաների դռները. վերջիններս միայն խոստումներ էին շոռյլում:

Ստեփանի նյութական վիճակը վատացավ: Եթե չլիներ Արղուիսյանի, Լազարյանի և Մանուշարյանի նյութական և բարոյական աջակցությունը¹⁶, գուցե և նրա առաքելությունը ձախողվեր:

Այդ ժամանակ Պետերբուրգում Ստեփանի համար բացվեց գործունեության կս մի ասպարեզ: Մայրաքաղաքում բնակվող հայերը նրան ներգրավեցին Մովսես Բաղրամյանի՝ 1773 թ. Մադրասում հրատարակված «Նոր տետրակ, որ կոչի հորդորակի» ռուսերեն թարգմանության հրատարակման գործում: Այդ մասին տեղեկանում ենք Արղուիսյանի՝ Շահամիրյանին հասցեագրած հենց նույն նամակից: Այնտեղ ասվում է, որ Ստեփանը, երկու տարի Պետերբուրգում գտնվելով, տիրապետում է ռուսերենին և շտկում է թարգմանության սխալները¹⁷:

Հայ ազատագրական շարժման գործիչներից մեկի գրքի ռուսերեն թարգմանությունը, Ռուսաստանում բնակվող հայերի կարծիքով, պիտի նպաստեր հայկական հողերի ազատագրման և հայկական պետականության վերաստեղծման գաղափարի տարածմանը, ինչպես նաև ռուս հասարակայնության շրջանում հետաքրքրություն արթնացնել հայկական

խնդրի նկատմամբ: Սակայն 1786 թվականը ավարտվում էր, իսկ Հայաստանը շարունակում էր մնալ Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ:

Արդությանը, հույսը կորցնելով, մտածում էր Ստեփանին Պետերբուրգից հետ կանչելու մասին: Բայց այդ ժամանակաշրջանում ռուսական կառավարությունը տակավին փայփայում էր պարսկական արշավանքի ծրագրերը և մտադիր չէր հրաժեշտ տալու հայոց աղգի միակ լիազոր ներկայացուցչին, թեև դաշնագիր չէր էլ կնքում նրա հետ: Այսինքն, Ստեփանի՝ Ռուսաստանում գտնվելու ընթացքում ռուսական կառավարությունը սոսկ սատարում էր հայ-ռուսական դաշնագիր կնքելու հնարավորության՝ հայ գործիչների պատրանքը: Եկատերինա II-ի կառավարությունն ամենեւին էլ մտադիր չէր իրեն կաշկանդել նմանօրինակ պաշտոնական համաձայնագրով, քանի որ նրա ծրագրերը նախատեսում էին միանգամայն այլ բնույթի գործողություններ:

Այդ կապակցությամբ ավելի հասկանալի են դառնում այն իրադարձությունները, որ Պետերբուրգում ծավալվեցին 1786 թ. վերջի և 1787 թ. ռուս-թուրքական պատերազմի միջև ընկած կարճ ժամանակահատվածում: Հենց այդ ժամանակաշրջանում Եկատերինա II-ը ընդունեց Ստեփանին: Ի դեպ, վերջին փաստը և դրան հետևող իրադարձությունները դուրս են մնացել հետազոտողների տեսագաշտից: Դա բացատրվում է հավանաբար այն պարագայով, որ նրանք ծանոթ չէին այն վավերագրերին, որոնք լրացնում են Ստեփանի առաքելության մասին տեղեկությունները:

Ստեփանի որդու՝ Դավթի՝ ռուսական ցարին հղած նամակը միանգամայն նոր պատկերացում է ստեղծում Ստեփանի առաքելության վերջին շրջանի մասին*:

Նախ, հիշյալ աղբյուրում ուղղակի նշվում է, որ Եկատերինա II-ը արարատյան դեսպանին ընդունել է առանձնահատուկ բարեհաճությամբ և երախտագիտությամբ: Երկրորդ, Դավթի տեղեկություններն օգնում են պարզելու ռուսական կառավարության կողմից Ստեփանին Պետերբուրգում պահելու պատճառը: Դավիթը հայտնում է, որ կայսրուհին Ստեփանին հանձնարարել է անհատազուտ մեկնել հայրենիք՝ հանձնարարություններ կատարելու: Հիշյալ նամակի շարունակությունից իրազեկ ենք դառնում, որ Ստեփանը վեց զորական զնդի ուղեկցությամբ գալու էր՝ Հայաստանը պարսիկներից ազատագրելու¹⁸:

* Դավթի տեղեկությունների արժանահավատությանը մենք չենք կարող կասկածել, քանզի նա ստույգ տեղյակ էր հոր գործերի վիճակին: Թեև Դավթի նամակը թվագրված չէ, բայց ըստ բովանդակության կարելի է վերագրել XIX դարի առաջին քառորդի վերջին:

Կարելի է եզրակացնել, որ հայ-ռուսական դաշնագիր կնքելու շուրջ բանակցությունները Եկատերինա II-ը, ի վերջո, հանգեցրեց դեպի Անդրկովկաս ռուսական զորքերի արշավանք կազմակերպելու բանակցություններին՝ իբր թե Հայաստանն ազատագրելու համար*:

Այստեղ մենք պետք է շեղվենք բուն տեքստից և նշենք, որ ցարիզմը բոլորովին էլ մտադրված չէր վերականգնելու հայկական պետականությունը ոչ XVIII դարի ընթացքում, և ոչ էլ XIX դ. առաջին տասնամյակում: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը մի կողմից, հայ ժողովրդի և նրա քաղաքական գործիչների ռուսական կողմնորոշման հարատևությունը մյուս կողմից, անհրաժեշտ էին ցարական կառավարությանը, որպես իր արտաքին քաղաքական խնդիրների լուծման կարևոր միջոցներից մեկը՝ ինչպես Թուրքիայի ու Իրանի, այնպես էլ նրանց ենթակա խաների նկատմամբ: Մինչդեռ հայ պատմագրություն մեծ գոյություն ունի հակառակ կարծիքը, որը ժառանգել են նաև որոշ երիտասարդ հեղինակներ: Օրինակ, 1796 թվականի ռուսական զորքերի Կասպիական արշավանքին նվիրված հոդվածում պնդվում է, որ Կովկասյան կորպուսի ծրագրի մեջ, որն իրականացնում էր այդ արշավանքը, համաձայն Եկատերինա Երկրորդի հրամանագրի, մտնում էր նաև «Հայաստանի վերականգնումը»¹⁹: Հեղինակի հասկացողությամբ խոսքը վերաբերում է հայոց պետականության վերականգնմանը: Սակայն, դիմենք սկզբնաղբյուրին, որին որպես իր կոնցեպցիայի հավաստում հղում է հեղինակը ընթերցողին, մոռանալով բերել այդ սկզբնաղբյուրը: Կորպուսի հրամանատար Վալերիան Զուբովին ռուսական կայսրուհու հղած հրամանագրում ասվում է. «Сильное наступление войск наших и тем отдаление Аги-Магомет-хана от левого берега реки Аракса, защита дагестанской и ширванской областей, восстановление Грузии и Арме-

* Սա ոչ միայն վկայում է, որ ցարական կառավարությունը լրջորեն չէր վերաբերում հայ-ռուսական դաշնագրի կնքմանը, այլև հայկական խնդրի լուծման հարցում հայ հասարակչության և ռուսական կառավարության միջև XVIII դարում նշմարվում է տարբեր մոտեցում: Ընդ որում, Հայաստանի նկատմամբ իր իրական մտադրությունների մասին (նույնիսկ հեռանկարային առումով) ցարական կառավարությունը, ելնելով տակտիկական նկատառումներից, հարկ չէր համարում տեղեկացնել հայ հասարակչությանը: Այլ կերպ ասած, ցարիզմը ամենևին էլ մտադիր չէր հայկական պետականությունը վերականգնել ոչ XVIII դարի ընթացքում, ոչ էլ XIX դարի առաջին երեսնամյակում: (Այստեղ մենք չենք շոշափում Ռուսաստանի հովանավորության ներքո հայ-վրացական պետական միավորում ստեղծելու մասին մտադրության հարցը, որը լրջորեն առաջ է բաշխել միայն Պետրոս Առաջինի օրոք, թեև հենց այդ ժամանակ ամենից քիչ հավանականություն կար այդ գաղափարը կենսագործելու համար):

нии, освобождение Ибрагим-хана шушинского и соединение с ним ханов азербайджанских против Аги-Магомет-хана на западе... все разные обороты сии, устремленные к единому и тому же предмету, к уничтожению слишком и так уже пространной власти Аги-Магомет-хана, удобны к уничтожению предположенной цели»²⁰. Ն. Ֆ. Դուբրովինի գրքից արված այս մեջբերումից և նույն գրքում գետեղված այլ փաստաթղթերից պարզ երևում է, որ խոսքը գնում է Աղա Մուհամեդ-խանի ագրեսիվ գործողությունների հետևանքով Անդրկովկասում գոյություն ունեցող քաղաքական վիճակի կայունացման մասին։ Ուրեմն, ռուսական զորքերի 1796 թվականի Կասպիական արշավանքի հիմնական նպատակն էր վերականգնել և պահպանել Անդրկովկասի ստրատեգիական կայունությունը և ոչ թե «Հայաստանի վերականգնումը», ինչպես փորձում է համոզել հեղինակը։ Ի դեպ ասենք, որ փաստաթղթից մեջբերում կատարելու ժամանակ հեղինակն ուղարկությունը կենտրոնացնելով իրեն հետաքրքրող տողերի վրա և անտեսելով կարևոր միտքը, թյուրիմացություն մեջ է գցում ընթերցողին։ Հոդվածագրի սխալ հետևությունները պրոֆեսիոնալիզմի խիստ պակասի հետևանք են, իսկ դրա արդյունքը պատմական փաստաթղթերի վերլուծության անճարակությունն է։

Վերադառնանք մեր նյութին։ Ռուսական կառավարության նոր ծրագրերում հայ դեսպանին փաստորեն հատկացվում էր ուղեկցորդի դեր։ Լեզոնների իմացությունը, տեղանքին ծանոթ լինելը, ինչպես նաև կապերը հայերի հետ, որոնք նրան տեղեկություններ էին ուղարկում Թուրքիայից և Պարսկաստանից, նրան դարձնում էին ռուսական հրամանատարության համար արժեքավոր մարդ։ Ուստի զարմանալի չէ, որ իշխան Գ. Ա. Պոտյոմկինը, նրան պահելով իր մոտ, շնորհեց պրեմիեր-մայորի զինվորական աստիճան։

Սակայն Ստեփանին բախտ չվիճակվեց զորքերով մուտք գործել Անդրկովկասի սահմանները։ Խանգարիչ հանգամանք էր 1787 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը։ Այդ մասին գրում է Դավիթբեկ հորը նշվելով իր պատմության մեջ։ Այդ նամակում կան տողեր, որոնք ոչ միայն լրացուցիչ լույս են սփռում Ստեփանի առաքելության վրա, այլև հարևանցիորեն բացահայտում են հայ ազատագրական պայքարի նոր միտումները, որոնք դրսևորվեցին ռուս-թուրքական պատերազմի ընթացքում։ Դավիթբեկը նշում է, որ այդ կարևոր դեպքը (իմա՝ պատերազմը—Փ. Ա.) պահանջում էր անհապաղ իրականացնել այն միջոցառումները, որոնց համար ընտրվել էր Ստեփանը²¹։

Թե որոնք էին այդ միջոցառումները, օգնում է պարզել կոմս Պ. Ա. Զուբովին Հովսեփ Արղուիթյանի հասցեագրած նամակը, որտեղ հայտնվում է, որ Գ. Ա. Պոտյոմկինը Ստեփան Դավթյանին հանձնարարել է հայերին արտագաղթեցնել Մոլդավիայից և Բեսարաբիայից²²:

Այսպիսով, ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ կառավարությունը նոր հանձնարարություն էր տալիս Ստեփանին, որը, ինչպես կարծում ենք, համաձայնեցված էր հայ ազգային գործիչների հետ: Խոսելով Ստեփանի նոր հանձնարարության մասին, ամենից առաջ նկատի ենք առնում ռուսական արտաքին քաղաքականության տակտիկական մանևրները, քանի որ հայ հասարակայնության աչքում Ս. Դավթյանի առաքելության էությունը գրեթե անփոփոխ էր մնում²³:

Նթե հիշենք, որ Ստեփանը ռուսական մայրաքաղաք էր մեկնել իր հայրենիքն ազատագրելու համար Ռուսաստանից օգնություն ստանալու նպատակով, ապա կհանգենք այն եզրակացության, որ Ռուսաստանում բնակվող հայերի ղեկավարությունը* հայերին թուրքահպատակ եվրոպական մարզերից ռուսական կայսրության սահմանները գաղթեցնելու հարցը դիտում էր որպես մի գործունեություն, որը հայոց ազգի այդ հատվածը թուրքական լծից ազատագրելուն է նպատակամղված:

1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որ հայ ազատագրական շարժման նոր փուլի սկիզբը դրեց, հարկադրեց իրադարձությունների ընթացքին զուգահեռ վերանայել հայ ժողովրդի ազատագրության որոշ կողմեր: Մինչև պատերազմը Արցախի մելիքությունները և նրանի հայերն անհամբերությամբ սպասում էին ռուսական զնդերի՝ Հայաստանի տարածք մուտք գործելուն, դրանց հետ կապելով ազատագրվելու հույսեր:

Անդրկովկասի սահմաններում ռուսական ազդեցության ներթափանցմանն առանձնակի մոլեգնությամբ դիմադիր էր Թուրքիան: Այդ դիտակցում էին նաև հայ ազատագրական շարժման ղեկավարները: Նրանք հասկանում էին, որ Ռուսաստանի հաղթական պատերազմը Թուրքիայի դեմ կարող է վերջինիս դուրս բերել խաղից, դրանով իսկ դուրին դարձնելով հայ ժողովրդին ազատագրելու գործը: Ահա թե ինչու, նրանք իրենց բաղձախեղները կապում էին ռուսական զենքի հաղթանակի հետ:

Հետևաբար, դժվար չէ ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում հայ գործիչները հայրենիքի ազատագրության համար հող էին նախապատրաստում երկու ուղղությամբ:

* Ստեփանի որդի Դավիթը, որն արքեպիսկոպոս Գրիգոր Զաքարյանի՝ Հովսեփ Արղուիթյանի սանի և հետնորդի մերձավորն էր, ամենայն հավանականությամբ, արտահայտում էր Հովսեփ Արղուիթյանի տեսակետը:

Նախ, նրանք ձգտում էին Թուրքիայի դեմ պատերազմում օգնութիւն ցույց տալ Ռուսաստանին, և, երկրորդ, Ռուսաստանում բնակվող հայերի ղեկավարութիւնը, հաշվի առնելով շահերը, գործուն մասնակցութիւն ունեցաւ թուրքահպատակ նշված մարզերից հայերին ռուսական պետութեան հարավային տարածքները վերաբնակեցնելու գործում: Վերջին հանգամանքը մեղաւելի հասկանալի կդառնա, եթե հաշվի առնենք, որ այն պայմաններում, երբ հայ գործիչների ազգային ծրագրերը խրվել էին Անդրկովկասի արտաքին և ներքին քաղաքական իրադարձութիւնների տիղմի մեջ, խելամիտ կլինեւ սկզբնական շրջանում իրենց հայրենակիցներին կենտրոնացնել Ռուսաստանի հարավային սահմաններում:

Դժվար է պարզել, արդո՞ք այդ գործիչներն իրենց նվիրական մտադրութեանն իրազեկ են դարձրել ռուսական կառավարութեանը, թե՞ ոչ: Մակայն նրանք պատրաստակամութեամբ իրենց ծառայութիւններն առաջարկեցին Եկատերինա II-ի կառավարութեանը՝ հայերին Ղրիմից և Բեսարաբիայից Ռուսաստան վերաբնակեցնելու գործը կազմակերպելու առթիւ, որի շնորհիւ ծրագրվեցին Ռուսաստանի հայերի ղեկավարութեան համատեղ գործողութիւնները ռուսական գերագույն հրամանատարութեան հետ, 1787—1791 թթ. պատերազմի ընթացքում:

Հայ հասարակայնութեան ծրագրերի իրականացմանը նպաստեց այն յուրօրինակ քաղաքական իրադրութիւնը, որ ստեղծվել էր Արևելքում:

Հասկանալով, որ, ի դեմս հայերի, Ռուսաստանը հուսալի դաշնակից ունի ընդդէմ Թուրքիայի, ինչպես նաև գիտակցելով հայերի շահագրգռվածութիւնն իրենց հայրենակիցներին թուրքահպատակ նշված մարզերից արտագաղթեցնելու խնդրում, Եկատերինա II-ի կառավարութիւնը Ռուսաստանում բնակվող հայերի գործունեութիւնը նպատակաւորում է քաղաքական և տնտեսական այն խնդիրների լուծմանը, որոնք Ռուսաստանի առաջ ծագել էին XVIII դարի երկրորդ կեսին:

Ստեղծվում է հազվագեպ ուշագրավ և երկու կողմերի համար նպաստավոր իրավիճակ: Ինչպես ռուսական կառավարութիւնը, այնպես էլ ազատագրական շարժման հայ գործիչները (թեև տարբեր դրդապատճառներով) շահագրգռված էին միեւնոյն քաղաքական մտադրութեան իրականացմամբ, այսինքն՝ հայ բնակչութեանը թուրքահպատակ մարզերից Ռուսաստան գաղթեցնելու խնդրով: Ընդ որում, այդ վերաբնակեցումը, ինչպես վերը նշվեց, մեր կարծիքով պիտի կրեր ժամանակավոր բնույթ՝ հայերի՝ հայրենիք վերադառնալու ճանապարհին:

1 Վ. Բ. Բարխուդարյան, Նոր նախնական հայկական գաղութի պատմությունը (1779—1861), Երևան, 1967: Ж. А. Анаян. Армянская колония Григориополь. Ереван, 1969.

2 Վ. Բ. Բարխուդարյան, *հշվ. աշխ.*, էջ 68:

3 Նույն տեղում, էջ 6:

4 Նույն տեղում, էջ 41:

5 Նույն տեղում, էջ 76:

6 Նույն տեղում, էջ 65:

7 ЦГИА СССР, ф. «Собственной Е. И. В. канцелярии» № 1409, оп. 1, д. 1934, л. 17 об.

8 А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х гг. XVIII столетия, Ереван, 1947, с. 157.

9 А. Р. Иоаннисян, указ. соч., с. 118.

10 Институт древних рукописей имени Маштоца при Совете Министров Армянской ССР. (Матенадаран), Архив Ашота Иоаннисяна, папка 224, док. 274.

11 ЦГАДА СССР, Госархив, ф. 15, д. 235, л. 2—2 об.

12 АВПР, ф. СРА, оп. № 100/111, д. 463, л. 148.

13 Матенадаран, рукопись № 2699, л. 101 б.

14 См. А. Р. Иоаннисян, указ. соч., с. 121, 122.

15 См. А. Р. Иоаннисян, указ. соч., с. 120—121.

16 Матенадаран, рукопись № 2699, л. 101 б.

17 Там же, л. 104 б.

18 Матенадаран, архив Ашота Иоаннисяна, папка 244, док. 274.

19 Ս. Գ. Դովաշյան, Հովսեփ Արղունյանը ռուսական զորքերի 1796 թ. Անդրկովկասյան արշավանքի ժամանակ, ՊԲՀ, 1987, № 3, էջ 92:

20 Н. Ф. Дубровин. История войны и владычества русских на Кавказе, т. III, СПб., 1886, с. 84.

21 Матенадаран, архив Ашота Иоаннисяна, папка 244, док. 274.

22 АВПР, ф. СРА, оп. № 100/111, д. 462, л. 16.

23 Матенадаран, архив Ашота Иоаннисяна, папка 244, док. 274.

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ
XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒՄ**

Աշխարհասփյուռ հայկական գաղութները տարբեր հանգամանքների բերումով զարգացման ու գոյատևման տարբեր հնարավորություններ են ունեցել: Դրանցից շատերը, գերազանցապես հյուրընկալող երկրի ընձեռած տնտեսական և իրավաքաղաքական պայմանների շնորհիվ, պատմական այս կամ այն դարաշրջանում վերելք են ապրել և նշանակալից հետք թողել տվյալ երկրի և հայ ժողովրդի տարեգրության մեջ: Ուշ միջնադարում նման դեր են ունեցել Ղրիմի, Ուկրաինայի, Լեհաստանի, Տրանսիլվանիայի, Նոր Զուլայի և այլ գաղթավայրեր: Հայկական ուրիշ գաղթավայրեր զարգացել և ծաղկուն շրջան են ապրել նոր կամ նորագույն դարաշրջանում:

Հին հասարակարգից նորին անցնելու՝ ֆեոդալիզմից աստիճանաբար կապիտալիստական հարաբերությունները թևակոխելու փուլում, հատկապես XVIII դ. վերջին քառորդում հայ իրականության մեջ նմանօրինակ խոշոր դեր էին կատարում Հնդկաստանի և Ռուսաստանի հայկական գաղութները: Հարկավ, տարբեր երկրներում ու անգամ տարբեր աշխարհամասերում գտնվող այդ գաղթավայրերը որոշակիորեն տարբերվում էին իրարից: Դրանց հետագա զարգացումն էլ տարբեր ձևով ընթացավ: Ռուսահայ գաղութները XIX դարում ապրում էին լիաթոք կյանքով, իսկ Հնդկաստանի համայնքները դարի առաջին կեսում արդեն թուլացել և կորցրել էին իրենց նշանակությունը:

Այսուհանդերձ, XVIII դարի վերջին տասնամյակներում՝ հայ ժողովրդի ազատագրական շարժման վերելքի շրջանում, նրա պատմական ճակատագիրը վճռվելու նախադեպն էր, իրենց ամբողջության մեջ համա-նման, իսկ իրենց նշանակությամբ շատ էական դեր էին կատարում այդ գաղթավայրերը:

Մենք մտադիր չենք սույն հոգւածում անդրադառնալ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվող ապագա Հայաստանի՝ ակնկալվող պետական կառուցվածքին վերաբերող ուսաահայ և հնդկահայ շրջանների մշակած, այսպես կոչված, «հյուսիսային» և «հարավային» ծրագրերին: Այդ ծրագրերը հանգամանորեն քննարկվել են սովետահայ պատմագրության մեջ: Մեր նպատակն է վեր հանել Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութների համագործակցությունն ու նրանց դերը հայ ազատագրական շարժումներում, լուսաբանել Հայաստանի ազատագրման՝ նրանց առաջադրած ուղիներն ու եղանակները:

Իր ռազմաքաղաքական շահերից ելնելով, Ռուսաստանը հայերի նկատմամբ հովանավորող քաղաքականություն էր վարում: Այդ հանգամանքն առավել որոշակի դրսևորվեց հատկապես XVIII դարի երկրորդ կեսին: 1762 թ. գահ բարձրացած Եկատերինա II կայսրուհին, որդեգրելով Պետրոս Մեծի՝ դարասկզբին կյանքի կոչված քաղաքականության սկզբունքները, սկսեց հեռևողականորեն իրականացնել դրանք: Նրա օրոք XVIII դ. II կեսին Ռուսաստանը մեծ հաջողությունների հասավ ինչպես Բալթիկայի ափերին, այնպես էլ Աև և Կասպից ծովերի շրջանում գերիշխող դիրք ձեռք բերելու, արևմտյան սահմանամերձ շրջանները կայսրությանը միացնելու գործում:

Հաջողություններն առավել ակնառու էին հարավային սահմաններն ընդարձակելու և ծով դուրս գալու, կայսրության վաղեմի փառփայած նպատակները իրականացնելու խնդրում: Սակայն, դրա համար անհրաժեշտ էր հարավի՝ Նովոռոսիայի ընդարձակ տափաստանները բնակեցնել, տնտեսապես յուրացնել: Ահա այդ նպատակով կառավարությունը հատուկ հրամանագրերով արտոնություններ էր շնորհում հարավում բնակվող օտարազգի բնակիչներին:

Պետության ընձեռած լայն հնաբավորությունների շնորհիվ 1770—1780-ական թվականներին գաղթեցին ու հաբավում բնակություն հաստատեցին հրեաներ, բուլղարներ, գերմանացիներ, սերբեր, լեհեր, հույներ, հայեր և այլ ազգությունների մեծ ու փոքր զանգվածներ:

Հարավային երկրամասի կառավարիչ իշխան Գ. Պոտյոմկինը վերաբնակեցումը կազմակերպելու հետ մեկտեղ մեծ եռանդով շինարարական վիթխարի գործունեություն էր ծավալում: 1778 թ. սկսվում է Ներսոն քաղաքի կառուցումը, նույն տարում հիմնադրվում են Եկատերինոսլավը (Դնեպրոպետրովսկ), ապա Նիկոլաևը (1789 թ.), Օդեսան (1794 թ.), Եկատերինոգարը (1794 թ., այժմ՝ Կրասնոդար) և բազմաթիվ այլ բնակավայրեր²:

ինչպես հայտնի է, Թուրքիայից անկախ հայտարարված Ղրիմի խանությունը թուլացնելու, Ղրիմը Ռուսաստանին միացնելու և Նովոռոսիան բնակեցնելու միտումով կազմակերպվեց թերակղզու բնակչության՝ հույների և հայերի արտագաղթը։ Հայերը Սբ. Դմիտրի Ռոստովսկի ամրոցի մոտ, Դոն գետի ափին հիմնեցին Նոր Նախիջևան քաղաքը և հինգ հայկական գյուղեր։

Նոր Նախիջևանը, ինչպես նաև այդ նույն պատմափուլում՝ XVIII դարի երկրորդ կեսին հիմնված Գրիգորիոպոլը, Ղզլարը, Մոզդուրը և մյուս գաղութները, կայսերական հրովարտակով տնտեսական արտոնություններից բացի, ստացան նաև իրավաքաղաքական առանձնաշնորհումներ։ Նորաբնակներին թուլյատրվեց կայսրության սահմաններում անարգել առևտրով ու արդյունագործությամբ զբաղվել, 10 տարով հարկերից, առհավետ զինվորակոչությունից ազատ լինել։ Նրանց վերապահվեց նաև էջմիածնի հոգևոր կենտրոնի ենթակայությամբ ազգային եկեղեցուն դավանելու, գաղութի ներսում գործավարությունը հայերենով վարելու և սեփական օրենքներով դատավարություն կատարելու իրավունք։ Այդ ամենի շնորհիվ կարճ ժամանակում ռուսահայ գաղթավայրերը տնտեսապես բարգավաճեցին և դարձան ազգային-մշակութային ավանդներ, գիրն ու գրականությունը պահպանելու և զարգացնելու նշանակալից կենտրոններ։

Սակայն, երկրի հարսվային սահմանների ամրապնդումն ու ընդարձակումը Ռուսաստանի արևելյան քաղաքականության կարևոր, բայց մի փուլն էր միայն։ Արևելքի շուկաներին տիրանալու համար խիստ կարևոր էր հաստատվել Անդրկովկասում։ Դրա համար կայսրությունը պահանջ էր զգում տեղում համակիրներ ու աջակիցներ ունենալ։ Այդպիսի ուժ առաջին հերթին կարող էին լինել վրացիներն ու հայերը։ Հայերը անվերադարձ, հուսախաբ լինելով Եվրոպայից սպասվող օգնությունից, ինչպես հայտնի է, դեռևս XVII դ. վերջերից իրենց հայացքն ուղղեցին դեպի աստիճանաբար հզորացող հյուսիսային հարևանի կողմը։ Դարավոր փորձը ցույց տվեց, որ Ռուսաստանն է այն միակ երկիրը, որը կարող էր հայերին ռեալ աջակցություն ցույց տալ պարսկական և թուրքական ծանր լուծը թոթափելու գործում։ Ուրիշ խոսքով՝ հայ ժողովրդի ազատագրական ձգտումները լիովին համընկնում էին Ռուսաստանի ռազմաքաղաքական պլաններին։ Դա էր պատճառը, որ ամբողջ XVIII դարում, հատկապես դարի երկրորդ կեսին խորանում և ամրապնդվում էր հայերի ռուսական կողմնորոշումը, զարգանում հայ-ռուսական հարաբերությունները։

Պետութեան բացակայութեան պայմաններում Հայաստանում միակ համազգային կազմակերպութիւնը մնում էր եկեղեցին, և, ինչպես պետք էր սպասել, քաղաքական հարաբերութիւններ են սկսվում հայ եկեղեցու և ռուսական արքունիքի միջև: Կաթողիկոսական գահ բարձրանալով, կրթված հոգևորականներից մեկը, Ռուսաստանի օգնութեամբ իր ժողովրդի ազատութիւնն ակնկալող Սիմեոն Երևանցին, աշխատեց հարաբերութիւնները սերտացնել կայսրութեան հետ: Այդ նպատակով 1766 թ. նա հատուկ բանազնաց է առաքում կայսրուհու մոտ: Եկատերինա II-ը էջմիածնի պատվիրակին ընդունում է բարեհաճութեամբ, հատուկ հրովարտակով ճանաչում Արարատյան Աթոռի իրավունքները Ռուսաստանում բնակվող հայ համայնքների նկատմամբ³:

Ռուսահայ թեմի առաջնորդի կարևոր պաշտոնը կաթողիկոսը վրստահում է իր երիտասարդ աշակերտ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանին: Վերջինս, լինելով գործունյա, խելամիտ և ուժեղ կամքի տեր անձնավորութիւն, չի սահմանափակվում 1773 թ. ստանձնած թեմի հոգևոր գործերով, այլ, ժամանակի ոգին ըմբռնելով, ակտիվորեն մասնակցում է ռուս-հայկական հարաբերութիւններին, Հայաստանի ազատագրման քաղաքական ծրագրերի մշակմանը և առհասարակ իր ժողովրդի ազատագրութեան ուղղութեամբ ձեռնարկվող միջոցառումներին: Այդ ամենի շնորհիվ նա կարճ ժամանակում լայն ճանաչում է գտնում ոչ միայն ռուսահայ գաղթավայրերում, որոնց գործերի փաստական տնօրենն էր, այլև ընդհանրապես հայրենակիցների մեջ և ռուսական պետական բարձրաստիճան շրջաններում:

2. Արղությանի հետ մշտապես գործակցում էր և սկզբնական շրջանում նրա համար ճանապարհ հարթում Ռուսաստանի առևտրաարդյունաբերական ոլորտում, ինչպես նաև արքունիքում լայն ճանաչում ունեցող Հովհաննես Լազարյանը: Նոր Զուղայից դուրս եկած Լազարյանները դեռևս XVIII դարում հաստատվում են Աստրախանում, ապա տեղափոխվում Մոսկվա: Այստեղ տնտեսական ակտիվ գործունեութիւն են ծավալում մասնավորապես մետաղարդյունաբերութեան մեջ, առևտրի ասպարեզում, ձեռք բերում կալվածքներ և դառնում երկրի վիթխարի կարողութեան տեր խոշոր մագնատներից մեկը: Շուտով տեղափոխվում են Պետերբուրգ, ստանում ազնվականական տիտղոս և կապեր հաստատում նաև արքունիքում: Լազարյանները, մեծ հարստութեան տեր դառնալով և լայն ճանաչում գտնելով, շնորհաբան իրենց ազգային պատկանելութիւնը, շօտարացան հարազատ ժողովրդից, նրան հուզող խնդիրներից: Օգտագործելով իրենց դիրքն ու միջոցները, նրանք հաճախ օգնութեան ձեռք

էին մեկնում ուսման հայ զանգվածներին, ակտիվորեն զբաղվում հայ ժողովրդի պատմական ճակատագիրը տնօրինելու հարցով:

Հարկ է միաժամանակ նշել, որ Ռուսաստանի հայկական համայնքները իրենց տնտեսական վիճակով, հասարակական հասուն մակարդակով հաճախ վեր էին բարձրանում ներգաղութային առօրյա խնդիրներից և պարարտ հող, համապատասխան մթնոլորտ ստեղծում կադրայանների, Արդուխանի և մյուս նշանավոր դեմքերի համազգային գործունեության համար:

Բնապատմական միանգամայն այլ պայմաններում առաջացան և զարգացան Հնդկաստանի հայկական գաղութները: Հնդկաստանը վաղուց էր հայտնի հայ առևտրականներին, սակայն այնտեղ հայերը մշտական բնակություն են հաստատում և իրենց համայնքները ստեղծում XVI դարից: Նրանք, ծանոթ լինելով տեղի պայմաններին, հնդիկների սովորություններին ու բարքերին, ձեռներեց կերպով զբաղվում էին առևտրով ու արդյունագործությամբ: Մինչև անգլիացիներին՝ Հնդկաստանում հաստատվելը և մասամբ էլ դրանից հետո հայերը երկրի առևտրատնտեսական կյանքում նշանակալից դեր էին կատարում: Աստիճանաբար սովաբանում է հայ բնակչությունը. Կալկաթայում, Բոմբեյում, Մադրասում, Ակրայում և այլ բնակավայրերում ձևավորվում են հայկական գաղութներ: Հնդկահայերը աշխույժ հարաբերությունների մեջ էին Մերձավոր արևելքի երկրների, հատկապես Պարսկաստանի հետ: Նոր Զուղայի նշանավոր գաղութի անկման շրջանում, XVIII դարի սկզբներից, շատերը տեղափոխվեցին Հնդկաստան և սովարացրին տեղի հայ բնակչության քանակը:

Ստեղծված նպաստավոր պայմանների, հայերի տնտեսական ակտիվ գործունեության շնորհիվ XVIII դարում, հատկապես դարի երկրորդ կեսին, Հնդկաստանի հայկական գաղութները վերելք էին ապրում: Հայ համայնքների բնակիչներից շատերը մեծ կարողության տեր էին դարձել: Հնդկաստանում անգլիացիների վերջնական հաստատվելուց հետո մշտական երթևեկ սկսվեց Անգլիայի հետ: Շնորհիվ դրա, հնդկահայերը աստիճանաբար սկսում են առնչվել ու հաղորդակից դառնալ արևմտահվրոպական երկրների հասարակական-մշակութային կյանքին: Մեծ էր հատկապես XVIII դարի լուսավորական շարժման և կատարված հեղափոխությունների ազդեցությունը: Հնդկահայերի շրջանում հետզհետե պարարտ հող էր գտնում և արմատավորվում դեմոկրատական, ազատագրական մտայնությունը: Այդ հետնախորքի վրա ազատ առևտուր անելու դեմոկրատական մտայնություն ունեցող վաճառականների ոլոր-

ստում առաջանում է իրենց շահերը պահպանող սեփական պետութիւն ունենալու, հետեւաբար հայրենիքը ազատագրելու և հայկական պետականութիւնը վերականգնելու գաղափարը: Այդ ուղղութեամբ հնդկահայ գործիչները լայն գործունեութիւն ծավալեցին հատկապէս մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Բնականաբար նրանք կապեր հաստատեցին ինչպէս Հայաստանի, այնպէս էլ հայրենիքի ազատագրութեան գաղափարով տարված և այդ նույն ուղու վրա գտնվող ռուսահայերի հետ:

Մագրասում ձեւավորված, ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված, հայրենասիրական այդ խմբի գործունեութիւնը ոգեշնչում ու փաստորեն գլխավորում էր մեծահարուստ վաճառական Շահամիր Շահամիրյանը: Նա էր ապագա Հայաստանի դեմոկրատական կարգերը նախանշող, 1786 թ. հրատարակված «Որոգայթ փառաց» աշխատութեան հեղինակը: Հնդկահայ նշանավոր գործիչներից էր Մովսէս Բաղրամյանը՝ հայ երիտասարդութեանը թմրութեան տեսական քննից արթնացնող, հայրենի երկրի փառավոր անցյալով ոգեշնչող ու նրան պայքարի կոչող «նոր տետրակ, որ կոչի հորդորակ» (1772) աշխատութեան հեղինակը, ինչպէս և իր ամբողջ կյանքը հայրենիքի ազատագրութեան գործին նվիրաբերած Հովսէփի էմինը և ուրիշներ: Վերջինս դարի կեսերին ազատագրական բաղձանքներով մեկնեց Անգլիա, սակայն անմիջական շփումները և տեղի մտայնութեանը ի մոտո ծանոթութիւնը Ի. Օրու նման նրան էլ հուսախաբ արեցին: Համոզվելով, որ Հայաստանի ազատագրման ռեալ ուղին կապվում է միայն Ռուսաստանի հետ, Հ. էմինը վերագործավ և իր ամբողջ գործունեութիւնը տարավ այդ հունով:

XVIII դարի վերջերին Ռուսաստանի օգնութեամբ թուրքական լուծը թոթափելու մտայնութիւնը այնքան արդեն լայն ու հիմնավոր ընդունելութիւն էր գտել, որ հասարակական բոլոր շերտերը, թե՛ բուն Հայաստանում և թե՛ գաղթավայրերում, լինեին նրանք կղերաֆեոդալական, թե բուրժուական գաղափարների արտահայտիչներ, միևնույն է, բոլորն էլ Ռուսաստանի հետ էին կապում հայկական պետութեան վերականգնումը: Տարբերութիւնը կարող էր լինել միայն դրա իրականացման կոնկրետ ուղիների ու եղանակների մեջ:

Մի շարք հանգամանքների բերումով XVIII դարի վերջին քառորդում, հայ ազատագրական շարժման վերելքի շրջանում Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները առաջատար դեր էին կատարում: Հայրենիքը ազատագրելու նպատակով այդ երկրների հայ գործիչները կապեր են հաստատում մի կողմից իրար, մյուս կողմից հայոց կաթողիկոսի, հայ մելիքների և վրաց արքունիքի հետ:

Փաստերը ցույց են տալիս, որ, անկախ իրենց սոցիալ-դասակարգային ու հանգրվանած երկրների տարբերություններից, Ռուսաստանի և Հնդկաստանի հայ գործիչները հայրենիքի ազատագրման հիմնական ուղիների հարցում լիովին համերաշխ էին: Ավելին, այդ ասպարեզում նրանք այնքան սերտորեն էին համագործակցում, որ իրենց ամբողջ գործունեությունը ուղղել էին դրա իրականացման նպատակին:

* * *

Հնդկահայերը հայրենիքի ազատագրման առաջին ու հիմնական պայմանը համարում էին լուսավորություն տարածելը, ժողովրդին ինքնաճանաչման բերելը: Առևտրական գործերով նրանք շրջում էին ոչ միայն արևելքում, այլև Եվրոպայի երկրներում: Նրանց վրա մեծ ազդեցություն է ունենում մասնավորապես XVIII դ. եվրոպական լուսավորական շարժումը:

Լուսավորությունը, ինչպես հայտնի է, ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանի գաղափարական հոսանք է, որն առաջացել է XVII—XVIII դդ. Արևմտյան Եվրոպայում (Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա): Այդ գաղափարախոսությունը վերածնության տրամաբանական շարունակությունն էր, որը հրապարակ եկավ բուրժուական հարաբերությունների սաղմնավորման և հակաֆեոդալական պայքարի առավել հասուն փուլում, որպես բուրժուական հեղափոխությունների գաղափարական նախապատրաստություն: Միջնադարյան խավարամոլության դեմ էր ուղղված լուսավորական շարժումը: Մարդկության առաջադիմությունը նրանք լուսավորության, կրթության մեջ էին տեսնում:

XVII դ. բնական գիտությունների զարգացումը և գիտատեսիլական առաջադիմությունը նպաստեցին հակաֆեոդալական այդ մտայնության ձևավորմանը: Լուսավորչությունը միջնադարյան սխոլաստիկայի ու եկեղեցական խավարամոլության դեմ գիտության հաղթանակն է: Նրանք, դնելով հասարակության վերափոխման հարցը, հասարակական զարգացման մեջ հիմնական դերը վերապահում էին բանականությանը, որը պետք է փոխարիներ կույր հավատին: Այդ հիմքի վրա նրանք մարդկային հասարակության ամբողջ պատմությունը բանականության աստիճանական առաջադիմության արդյունք էին համարում: Հավատալով բանականության վերափոխիչ ուժին, հատուկ նշանակություն էին տալիս ժողովրդին լուսավորելու և դաստիարակելու խնդրին: Լուսավորիչների կարծիքով հասարակական կյանքը իր հիմնական ձևով որոշվում է առանձին օրենսդիրների, նշանավոր դեմքերի ցանկությամբ ու կամքով:

Անձնական շփումների, գերազանցապես Հնդկաստան ներթափանցող անդլիական գրականության ու պարբերականների միջոցով Մադրասի հայկական խմբակը քաջատեղյակ էր այդ գաղափարներին: Հնդկահայերը ըստ ամենայնի գիտակցում էին, որ ժողովրդին խավարի ճիրաններից հանելու և լուսավորելու առաջադիմական շարժումը անհրաժեշտ է տարածել հատկապես Հայաստանում: Դարեր շարունակ գտնվելով Փուրբիայի և Պարսկաստանի նման հետամնաց երկրների տիրապետության տակ և ենթարկվելով ազգային, սոցիալական բիրտ հալածանքների, հայ ժողովուրդը զրկված էր առաջադիմության ամենատարրական հնափութությունից: Հատկանշական է, որ Հ. էմինը 1760 թ. Եվրոպայից վերադառնալու ճանապարհին, Արևմտյան Հայաստանի Զենիս գյուղում, երբ գրպանից հանում է Մ. Խորենացու «Պատմություն հայոցը», ազգի անցյալը վերհիշելու փորձ կատարում, հանդիպում է սառն անտարբերության և զարմանում ժողովրդի ճնշված ու հետամնաց վիճակի վրա:

Հնդկաստանի հայկական գաղութների, մասնավորապես Մադրասի հայրենասիրական խմբի ազատագրական, լուսավորական հայացքներն իրենց արտացոլումն են գտել «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», «Որոգայթ փառաց» և «Նշառակ» գրքերում:

Այդ աշխատություններում, մասնավորապես առաջին երկուսում Մ. Բաղդամյանը և Շ. Շահամիրյանը հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնությունը կորցնելու և նրա հետամնացություն հիմնական պատճառը համարում են միապետությունը, թագավորի միահեծան կամայականությունը: Ֆեոդալական-միապետական կարգերը նրանք անընդունելի, արատավոր են համարում նաև այն պատճառով, որ այնտեղ պետությունների բախտը տնօրինում են առանձին անհատներ: Իսկ անհատը միշտ էլ կարող է սխալվել, ուստի և ամբողջ երկրի, ժողովրդի բախտը մեկ անհատի վստահելը կարող է աղետալի հետևանքներ ունենալ:

Ժխտելով ֆեոդալական-միապետական կարգերը, նրանք հանդես էին գալիս նոր, բուրժուական հարաբերությունների պաշտպանությամբ, որ միապետի փոխարեն կոլեկտիվ միտքն էր կառավարելու: Հնդկահայ գործիչները ձգտում էին ազատագրվելիք Հայաստանում նոր հասարակական-քաղաքական այնպիսի կարգ հաստատել, որը հիմնված լիներ և ղեկավարվեր բոլորի համար պարտադիր օրենքներով, «ըստ կամաց և ըստ հաճույից համահաւասար ժողովրդոց ի զօրութենէ բանական հոգւոյ ձերոյ՝ կալ և մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց, զի ոչ ոք իցէ՝ որ իշխեսցէ ի վերայ ձեր, բայց օրէնս ձեր, որում դուք կազմէք նա թագաւորեսցէ և իշխեսցէ ի վերայ գործոց ձերոց»:

«Որոգայթ փառացի» առաջին մասը ամբողջովին նվիրված է ֆեոդալական-ձորտատիրական կարգերի քննադատությանը և նոր հասարակական կարգերի հիմնավորմանը: Գրքի երկրորդ մասում տրվում է ապագա սահմանադրական Հայաստանի պետական կառուցվածքը:

Մ. Բաղրամյանը «Հորդորակում» հայ երիտասարդության մեջ սերարթնացնելով հայրենիքի հանդեպ, Հայաստանի հերոսական անցյալին հակադրում է տխրալի առօրյան, օտարի ծանր ու ավերածություններ բերող լուծը և կոչ անում դուրս գալ բռնակալների դեմ և զենքի ուժով նվաճել բաղձալի ազատությունը: Այս աշխատության ազատագրական, լուսավորական գաղափարները, ինչպես նաև Հայաստանի ազատագրման՝ Բաղրամյանի մտահղացումները կրում էին Հ. էմինի հասարակական-քաղաքական հայացքների ազդեցությունը⁷:

Մարդու բանական ազատության գաղափարը կարմիր թելի նման անցնում է այս երկու աշխատությունների միջով:

Ազատագրական, դեմոկրատական գաղափարների վրա է խարսխվում նաև վերոհիշյալ աշխատություններից մեկ տասնամյակ հետո հրատարակված երրորդ գիրքը՝ «Նշավակը»⁸: Համեմատաբար փոքրածավալ սույն աշխատությունը խնդրո առարկա հարցասիրության առումով առավել կարևոր է, քանի որ այն Մաղրասի հայկական գաղութի յուրօրինակ կանոնադրությունն է⁹: Դրանով սահմանվում է գաղութի ինքնավարության իրավասությունները, ներքին կարգն ու կանոնը, որպեսզի հաջգանգվածը չկորցնի ազգային հատկանիշները, զերծ մնա ձուլվելուց:

Կանոնադրության համաձայն հայ համայնքի բարձրագույն ատյանը ընդհանուր ժողովն է, որը գումարվում է տարին մեկ անգամ: Ընդհանուր ժողովն ընտրում է երեք հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ համայնքի կառավարչություն և համայնական հաստատությունների, այդ թվում և դպրոցի տնօրեններին: Գործավարությունը կատարվում է հայե-րեն (հոդ. 19):

Գաղութի գլխավոր հիմնարկությունը որբերի սնդուկն է («սնդուկ որբոց»), որը գանձարկղ կամ յուրատեսակ բանկ է՝ կազմակերպված բարեգործական հիմունքներով: Իրավացի է Թ. Ավդալբեգյանը, երբ այս առթիվ գրում է. «Այսպիսով, Մաղրասի հայոց «սնդուկը» բարեգործական-ազգասիրական, բայց և միաժամանակ առևտրային ձեռնարկու-թյուն է՝ կշռադատված ու զուտ գործարար հիմունքներով: Այն յուր տեսակի «Ազգային բանկ է՝ Բարեգործական թեքումով»¹⁰: Բազմաթիվ հոգ-վածներով սահմանվում են գանձարկղի՝ տարբեր աղբյուրներից գոյացող միջոցները, և դրանք որբերի, անդամալուծների, հասարակական հաս-

տառութիւնների՝ դպրոցի, տպարանի և այլ նպատակներով գործադրելու կարգը: Գանձարկղի դրամագլուխը մեծանալու պարագայում նախատեսվում է գումարի մի մասը գործադրել Կալկաթայում՝ շահույթ ստանալու համար:

Խիստ ուշագրավ է այն հանգամանքը, որ կանոնադրութիւնը նախատեսում է ընդհանուր ընտրական իրավունք՝ գաղութի բոլոր անդամների համար: Ընտրելու համար գույքային ցենզ չի պահանջվում, իսկ ընտրվելու դեպքում՝ համարվում է անհրաժեշտ: Առանձին հոդվածներով կարգավորվում են աշխարհիկ և հոգեւոր իշխանութիւնի հարաբերութիւնները, որոնց արգելվում էր միջամտել իրար գործերի: Սահմանվում է նաև համայնքի կառավարչութիւնը փոխելու, հարկերի, եկեղեցու սպասավորների իրավունքների, ամուսնութեան, նշանդրերի, գերեզմանոցի, թաղման կարգը:

Այդ ամենով հանդերձ առավել հետաքրքրականն ու կարեւորն այն է, որ աշխատութեան մեջ հայկական գաղութների ապագան կապվում է Մայր Հայրենիքի հետ: Հույս է հայտնվում, որ կգա բաղձալի այն ժամանակը, երբ աշխարհասփյուռ հայերը հնարավորութիւն կստանան վերագառնալ ազատագրված Հայաստան և կապրեն այնտեղ սեփական օրենքներով: Հեղինակը երջանիկ է համարում այդ բախտին արժանացող հայերին. «Յերանի՜ և բազմիցս երանի արանցն յայնոցունց, որում գտանիցին այն ոսկեղօծ ժամանակն երջանկութեան», երբ «պտուղ վաստակի գործոց ձեռաց մերոց մնացէ ժառանգութիւն յազգին մերոյ»¹¹:

Սակայն, կարող է պատահել, որ մինչև այդ նպատակի իրականացումը Մաղրասի հայերը հարկադրված լինեն թողնել Հնդկաստանը: Այդ դեպքում նախատեսվում է գաղթել ու հաստատվել Ռուսաստանի տարածքում՝ Ղզլարում: Հնդկահայերը հանգրվան են ընտրում Ղզլարը, որովհետև մոտ էր Հայաստանին: Դրանից զատ, պետք է ենթադրել, որ Հ. Էմինը Մաղրասի իր կեւակիցներին իրազեկ էր պահել Ղզլարի բնակչութեան հայրենասիրական ոգորումների, Հայաստանը ազատագրելու նրանց ձգտումների և այդ առթիւ իրենց ցույց տրված ոգեշունչ ընդունելութեան մասին: Ռուսաստանում վերաբնակվելու պարագայում ռուսական պետութեան հետ պետք է կնքվեր հատուկ պայմանագիր: Գրքում բերվում է 16 կետից բաղկացած այդ դաշնագրութեան նախագիծը:

Մաղրասի հայ համայնքի առաջադեմ գործիչները և, առաջին հերթին, գրքի հեղինակ Շ. Շահամիրյանը Ռուսաստանի տիրապետութեան տակ հնդկահայ ապագա գաղութի իրավասութիւնները կանխագծում էին հետևյալ կերպ: Հայերին ամենից առաջ տրվում էր դավանանքի ազա-

տություն՝ եկեղեցիներ կառուցելու, ազգային կրոնին դավանելու և ենթարկվելու էջմիածնի Մայր Աթոռի գերագույն իշխանությանը: Գաղութի գործերը տնօրինելու և դատավարության համար հիմնվելու էր 7 հոգուց բաղկացած հայկական դատարան: Ռուսաստանում հանգրվան գտած հնդկահայերը ազատ էին լինելու զինվորակոչությունից (ռեկրուտ) և զորքին օթեանով ու պարենով ապահովելու (պոստոյ) պարտավորություններից: Հայերն օգտվելու էին առևտրի, արհեստագործության, Ռուսաստանի սահմաններն անարգել թողնելու ազատությունից, իսկ նրանց պետական հարկերն էլ չպետք է գերազանցեին ռուս բնակչության վրա դրվող հարկերից: Անժառանգ մահացածների ունեցվածքը անցնելու էր որբերի գանձարկղը:

Տնանկները և հիվանդները ռուս բնակիչներին համահավասար օգտըվելու էին հիվանդանոցներից և այլ հաստատություններից (հոգ. ԺԵ): Կարևոր էր առանձնապես այն, որ պայմանագրում հստակ նշվում էր (9 հոդված), որ հայերը ազատ են լինելու ճորտությունից:

Դժվար է ասել, Շ. Շահամիրյանը և հնդկահայ մյուս գործիչները ծանոթ էին արդյո՞ք «Նշավակի» հրատարակությունից չորս տարի առաջ, 1779 թվականին Նոր Նախիջևանի գաղութի հիմնադրման առիթով Եկատերինա II կայսրուհու տված շնորհագրին, թե ոչ: Անկախ դրանից, նրանց մշակած «դաշնագրությամբ», հնդկահայ համայնքը Ռուսաստանում ազգային-կրոնական և տնտեսական ու իրավական միեկնույն իրավասությունն էր ունենալու, ինչ որ ունեին ռուսահայ զանգվածները և, առաջին հերթին, Նոր Նախիջևանի գաղութը: Դա վերաբերում է ինչպես ճորտությունից զերծ մնալուն, ազատորեն առևտրով ու արդյունագործությամբ զբաղվելուն, այնպես էլ էջմիածնի հոգևոր իշխանության ներքո եկեղեցական ազգային ծեսերն ու սովորությունները կատարելուն և առհասարակ գաղութի ողջ ինքնավարությունը:

Հետևաբար, ինքնին հասկանալի է դառնում, որ XVIII դ. Ռուսաստանի հայկական գաղութները այնպիսի նպաստավոր պայմաններում էին գտնվում և այնքան լայն արտոնություններից էին օգտվում, որ հնդկահայ բուրժուական մտայնություն ունեցող ղեմոկրատ գործիչները Ռուսաստանի իրենց ապագա համայնքը ցանկանում էին տեսնել հար և նման ռուսահայ գաղութների:

Այսպիսով, ակներև է, թե որքան մեծ նշանակություն էին վերագրում ժողովրդին լուսավորելու, նրան ինքնաճանաչման բերելու հանգամանքին հնդկահայ գործիչները: Միաժամանակ ուշագրավ է նաև այն,

որ նրանք Հայաստանի ազատագրումը, նրա պատմական ճակատագրի տնօրինումը աներեք կասկած էին Ռուսաստանի հետ:

* * *

Ռուսահայ շրջանների գործունեությունը ի մոտո ծանոթությունը ակներև էր դարձնում, որ նրանք հնդկահայերի նման նույնպես էական նշանակություն էին տալիս ժողովրդին կրթելու, նրան լուսավորելու, ինքնաճանաչման բերելու և համախմբելու հանգամանքին: Հ. Արղուսյանը, ըստ ամենայնի ըմբռնելով լուսավորություն տարածելու անհրաժեշտությունը, Նոր Նախիջևանում հանրագումար ձեռնարկումներ կատարելու համար հնդկահայ հարուստ Մարտիրոսին նվիրաբերությունների կողող նամակում գրում էր. «Քանզի ահա այգիք մեր սկսեալ են ծաղկել, ձայն տատրակին դարթուցանէ զմէջ ի քմութենէ, անմիաբանութենէ և տգիտութիւնէ» (ընդգծումը մերն է — Վ. Բ.)¹²:

Այս տողերում փաստորեն արտահայտվել է լուսավորության մարգում ունեցած Հ. Արղուսյանի ամբողջ դավանանքը, որը, ինչպես դժվար չէ նկատել, բխում էր ժամանակի ոգուց և հար և նման էր հնդկահայերի քարոզած գաղափարներին:

Ռուսահայերը սերտ կապերի մեջ էին և, սխալված չենք լինի, եթե ասենք, որ արգասավոր մղումներ էին ստանում Հնդկաստանի հայերից: Հատկանշական է, որ Դոնի ափին հայկական քաղաքի՝ Նոր Նախիջևանի հիմնադրման (1779 թ.) հենց առաջին տարիներին հնդկահայերը մեծագումար նվիրաբերություններ արեցին ոչ թե քաղաքի կառուցման կամ կարիքի մեջ գտնվող նորաբնակներին նյութական օգնություն ցույց տալու, այլ դպրոցներ և լուսավորական ուրիշ հաստատություններ բացելու համար: Այսպես, 1788 թ. Մադրասի հայերը նվիրաբերում են 3134 ռուփի, պայմանով, որ տաս տարվա ընթացքում այդ գումարով Նախիջևանում բացվի ուսումնարան, և հիմնադրվի տպարան: Տաս տարվա ընթացքում, եթե չկարողանան իրականացնել այդ ձեռնարկումները, ապա գումարը ծախսվելու է Մադրասի ուսումնարանի օգտին¹³: Մասեհ Բաբաջանյանը իր ամբողջ ունեցվածքի կեսը՝ 100 հազար ռուփի կտակում է նորահաստատ քաղաքում դպրոցներ, հիվանդանոց բացելու համար¹⁴: Սարգիս Աղավելյանը 200 հազար արծաթ ռուփի է նվիրում Նոր Նախիջևանում դպրոց և տպարան հիմնելու, իսկ Կալկաթայից Հակոբի որդի Նդիան Նախիջևանի դպրոցին է կտակում 5 հազար ռուփի¹⁵:

Նորահաստատ գաղութի լուսավորական ձեռնարկումներին օգնելու նպատակով Հնդկաստանի հայկական օջախներին դիմած Հ. Արղուժյանը տեղյակ էր պահում նրանց քաղաքի ու գյուղերի կառուցման մասին: 1793 թ. նա գրում է Մոսկվայում գտնվող Փ. Մանուչարյանին և տպագրական այլ գործերի հետ հանձնարարում. «Նախիջևանու պլանն ևս տպել տացես ի Հնդկաստան առաքել»¹⁶:

Հնարավոր չէ և թերևս անհրաժեշտություն էլ չկա այստեղ մեջ բերելու XVIII դ. վերջին բառորդում Ռուսաստանի հայկական բոլոր գաղութներում լուսավորություն տարածելու ուղղությամբ կատարված ձեռնարկումները: Պատկերացում կազմելու համար հիշատակենք միայն Նոր Նախիջևանի գաղութի հետ առնչվող հիմնական եղելությունները:

Դրիմից գաղթած և Դոնի ափերին հանգրվան գտած հայ զանգվածներին տակավին չհանդիպած, Հ. Արղուժյանը Պետերբուրգից զգուշացնում էր քաղաքի և գյուղերի հիմնադրման ժամանակ հոգևոր շինությունների համար հատկացնել ընդարձակ տեղ՝ դպրոց, տպարան և հարակից այլ շինություններ հիմնելու համար: «Արդ պատվիրեմ սիրելեացդ իմոց,— գրում էր նա 1780 թվին,— եթե մինչև մեր այդ գալն քաղաքի ձերոյ տեղն բաժանելոյ լինին Ժ եկեղեցւոյ և մեկ վանքի տեղն լինիցի մերձ գեղոցն. այնքան մեծ լինիցի, որ սա բավականացնի դպրատանն, տպագրատան (ընդգծումը մերն է— Վ. Բ.) միաբանից խցերի, բաղի և այլ հարկաւորութեանց տեղ ունիցի...»¹⁷:

Գ. Պոտլոմկինի՝ 1781 թ. արքունիք ներկայացրած զեկուցագրից երևում է, թե Հ. Արղուժյանի և Հ. Լազարյանի ներշնչանքով նա որքան կարևորություն էր տալիս Նոր Նախիջևանում դպրոցներ հիմնելու գործին: Նովոռոսիայի կառավարիչը դրամ էր պահանջում Դոնի հայկական գաղութում եկեղեցիներ և ուսումնարան կառուցելու համար և միաժամանակ ավելացնում, որ Նոր Նախիջևանում սկսվել են դպրոցների շինարարական աշխատանքները¹⁸: Հենց 1780-ական թվականների սկզբներին էլ բացվում է առաջին դպրոցը: Հ. Արղուժյանը Նոր Նախիջևանից այդ մասին Հ. Լազարյանին հաղորդում էր. «Շինեմ ահա, և վասն իմ գտուն բնակութեան և դպրոց, և Թիֆլիզու մեկ քահանա վարձել եմ, գալոց է և ի դպրոցին նստել ուսուցանելոց է զգիր և զքերականութիւն և զայլ ինչ»¹⁹:

Գաղութի հիմնադրման առաջին տասնամյակում հիմնված ուսումնարաններից նշանավոր է մասնավորապես Ս. Խաչ վանքի դպրոցը: Վանքի կառուցումը տակավին չավարտված՝ այնտեղ բացվում է գիշերօթիկ դպրոց: 1791 թ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով 30 որ-

բացյալ հայ մանուկների Հ. Արղուիթյանն ուղարկում է Ս. Խաչ վանք, այնտեղ ապրելու և տեղի վարժարանում, որտեղ կար քառասուն աշակերտ, ուսանելու²⁰։ Շուտով Լազարյանների միջոցներով նոր ուսումնարան է բացվում Նախիջևան քաղաքում և Հյուսիսային Կովկասում²¹։

Լազարյանները, սակայն, ոչ միայն Ռուսաստանի հայ զանգվածների, այլև հայ ժողովրդի կրթական պահանջները բավարարող ու նրան սպասարկող լուսավորչալ ուսումնարան հիմնելու մտադրություն ունեին։ Այդ մտահոգությամբ Հ. Լազարյանը պատկառելի գումար կտակեց նման կարգի ուսումնական հաստատություն բացելու համար։ Նրա մահից մեկուկես տասնամյակ անց Մոսկվայում բացվեց Լազարյան ճեմարանը, որը, հարկավ, լուսավորական խոշոր դեր կատարեց բովանդակ հայ իրականության մեջ։

Դժվար ու գրեթե անհնարին է կուլտուր-լուսավորական գործունեություն ծավալել առանց տպագրություն ունենալու։ Այդ բանը խորապես գիտակցելով, դեռևս քաղաքի հիմնադրման ժամանակ Հ. Արղուիթյանը մտադրություն է ունեցել այնտեղ հիմնելու տպարան։ 1782 թ. իր նամակներից մեկում, խոսելով նոր քաղաքի՝ Նախիջևանի ու դրա եկեղեցիների հիմքերը դնելու մասին, ավելացնում է, որ այնտեղ տպարան է հաստատելու²²։ Նա, իրավամբ գտնում էր, որ բացված և բացվելիք ուսումնարանները դասագրքերով, բառարաններով, առհասարակ գրականությամբ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ տպարան։ «Որպեսզի դպրատունն,— գրում է Հ. Արղուիթյանն իր մտադրությունների մասին,— այն զմանկունս ի կատարելութիւն իմաստութեան ածմամբ յարտաքին գիտութիւնս կրթեալ՝ տպագրութեանն օգնիցէ և տպագրատունն իրաւամբ և արդիւնաւոր արդեամբքն իւրով զմարմնաւոր պակասութիւնս՝ դպրատանն կառավարիցէ։ Այն զի ոչ դպրատունն առանց տպագրատան զհաստատություն անել կարէ, և ոչ տպագրատունն առանց դպրատան զմշտենջանաւորութիւն, ապա հարկաւոր է ղերկուսն ի միասին յառաջացուցանել»²³։

Ուսումնական գործից զատ տպագրությունը անհրաժեշտ էր նաև բնիկանրապես ժողովրդին լուսավորելու, հայրենիքի անցյալին նրան ծանոթացնելու, ազատագրական պայքարի կոչելու և այլ նպատակներով։ Հ. Արղուիթյանը ձեռնամուխ է լինում տպարան ստեղծելու դժվարին գործին, նկատի առնելով նաև, որ Կոստանդնուպոլսի և էջմիածնի հայկական տպարանները տարբեր պատճառներով հաճախ դադարում են գործել և հանրային խնդիրներին ու ժամանակի պահանջներին մատ են ծառայում²⁴։

Նոր Զ. Կայսի վաճառական Գրիգոր խաղարջանը Լոնդոնում հիմնեց էր հայկական տպարան և, մեկ գիրք տպագրելուց հետո, 1781 թ. այն տեղափոխել էր Պետերբուրգ²⁵։ Պետերբուրգում հաստատվելուց հետո Հ. Արղուժյանը սերտ կապեր է հաստատում տպարանատիրոջ հետ և իրեն հատուկ եռանդով աջակցում տպարանի գործունեությանը։ Նա ոչ միայն օգնում էր թերի սառերն ու պատկերները լրացնելու, ծախսերը հոգալու գործում, այլև ձեռք էր բերում համապատասխան գրքեր, անհրաժեշտ խմբագրման ենթարկում և, առաքելով Պետերբուրգ, ապահովում տպարանի անխափան աշխատանքը։ Սակայն Ռուսաստանի հայաշատ կենտրոններից հեռու գտնվելու հանգամանքը դժվարություններ էր ստեղծում դրա աշխատանքներին օժանդակելու հարցում։ Այդ պատճառով էլ Արղուժյանը ամեն կերպ ջանում էր համոզել խաղարջանին՝ տպարանը տեղափոխել Նոր Նախիջևան կամ Աստրախան։

Հարավային Ռուսաստանի գաղթօջախներում տպագրություն սկսվելու ուղղությամբ Արղուժյանի ծավալած եռուն գործունեության ամենակ' 1787 թ. մահանում է խաղարջանը՝ տպարանը թողնելով պարտքերի մեջ։ Արղուժյանը Նոր Նախիջևանի ուսումնարանի ուսուցիչ Թ. Մարությանին ուղարկում է Պետերբուրգ՝ հրատարակչական աշխատանքները գլխավորելու և տպարանը գնելու հարցով զբաղվելու։ Ինքը ձեռնամուխ է լինում տպարանը պարտքերից ազատելու և այն գնելու համար ֆինանսական միջոցներ հայթայթելու գործին։

Նա հատուկ պատվիրակի միջոցով դիմում է հնդկահայերին, ապա անձամբ՝ Հ. Լազարյանին։ Նոր Նախիջևանի, Ղզլարի և մյուս գաղութների բնակչությանը։ Տպարանի համար միջոցներ գտնելը, նրա տեղափոխության հետ կապված դժվարությունները ծանր բեռ էին ռուսահայ վիճակավորի համար։ Այդ անլուծելի թվացող հոգսերը նկատի ունեք նա, երբ գրում էր. «Ի պատճառս այդմ տպարանի իմ կեանքս մաշեցավ և մաշեալ լինելոց է»²⁶։

Ի վերջո, 1789 թ. հաջողվում է տպարանի հարցը լուծել։ Այդ մասին 1790 թ. հունվարին Արղուժյանը գրում է. «Ահա արդեն՝ զտպարանն առի. թէպետ ՌԲՃ (1200) թուման, սակայն նստավ ի վերա մեր ԲՌ (2000) թուման... և տպարան առեալ այժմ, եկեալ է ի Մոսկով, գալ ի Նախիջևան»²⁷։ Արղուժյանը խորհուրդ է տալիս Թ. Մարությանին, գալուց բացվելու և գետերը նավարկելի դառնալուն պես, տպարանը գետով բերել մինչև Դուբովկա. Դուբովկայի և Դոն գետի միջև ընկած 60 վերստ ցամաքային տարածությունը սալով տեղափոխել և ապա Դոն գետով հասցնել Նոր Նախիջևան։ Նա միաժամանակ առաջարկում էր

Պետերբուրգից կամ Մոսկվայից իր հետ բերել տպագրիչ և կազմարար, որպեսզի տեղում աշակերտներին սովորեցնեն տպագրական գործը²⁸։

Տպարանը տեղափոխվում և նույն՝ 1790 թ. ամառվանից սկսում է գործել Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում, ու այնտեղ մինչև տարեվերջը տպագրվում է երեք գիրք²⁹։ Տպարանը Ս. Խաչ վանքում գործեց մինչև 1796 թվականը, ապա տեղափոխվեց Աստրախան և 1800 թ., Հ. Արղութ-յանի և Թ. Մարությանի մահից հետո, դադարեց գործելուց։

Խաղարկյանի տպարանում պետերբուրգյան տարիներին հրատարակվում է տասնութ, Նոր Նախիջևանում՝ քսան, իսկ Աստրախանում՝ վեց անուն աշխատություն։ Այսպիսով, իր գոյության շուրջ քսան տարում ռուսահայ առաջին տպարանում հրատարակվում է քառասունչորս գիրք։ Դա իր ժամանակի համար բավական պատկառելի թիվ է։ Դժվար է պատկերացնել, որ տպագրական այն ժամանակվա պարզունակ տեխնիկայի պայմաններում, երբ յուրաքանչյուր գրքի հրատարակումը հայ մշակութային կյանքում նկատելի երևույթ էր, աշխատությունները տպագրվում էին առանց խիստ ընտրության ու որոշակի նպատակի։

Ռուսաստանի հայկական առաջին տպարանից դուրս եկած գրքերի բովանդակությանը և հրատարակվելիք աշխատությունների վերաբերյալ Հ. Արղությանի նամակներին ու օրագրություններին ծանոթանալիս ակնհերև է դառնում, որ տպարանը ծառայեցվում էր իրար հետ փոխադարձաբար կապված մի ընդհանուր նպատակի՝ լուսավորության, կուլտուր-կրթական և հայ ազատագրական շարժման գործին։

Հրատարակված գրքերով լուծվում էր հիմնադրված և հիմնադրվելիք դպրոցները դասագրքերով ապահովելու խնդիրը։ Դրանից բացի հրատարակությունը հետամուտ էր հայ ազգաբնակչությանը, մանավանդ նորահաս տատ գաղութների բնակչությանը ռուսերեն սովորեցնելու, ինչպես և նրանց՝ ռուսաց պատմությանը ծանոթացնելու խնդրին։ Տպարանը Պետերբուրգ տեղափոխելու հենց առաջին տարում լույս է տեսնում «Տեսութակ այբբենական» ուսույցը։ Ազատագրական շարժման հայտնի ներկայացուցիչ Մովսես Սարաֆյանի դուստր Կլեոպատրա Սարաֆյանը հրատարակում է «Գիրք որ կոչի բանալի գիտություն» խորագրով աշխատություն, որը ռուսաց լեզու սովորեցնելու ձևնարկի բնույթ ունեցող հայ-ռուսերեն բառարան էր։ 1788-ին հրատարակվում է Գ. Խաղարկյանի կազմած հայ-ռուսերեն բառարանը և այլն։

Իր հայրենակիցներին Ռուսաստանի պատմության փառահեղ դըրվագներին ծանոթացնելու նպատակով Հ. Արղությանը Գ. Խաղարկյանին հայտնում էր Պետրոս Մեծի համառոտ պատմության թարգմանության

մասին և խնդրում 600 օրինակ հայերեն և ռուսերեն և 400 օրինակ հայերեն տպագրել և հասցնել իրեն՝ արտաքին երկրներ առաքելու համար³⁰։ Նա հրատարակում է «Տետրակ համառոտ անուանեալ դուռն ողորմութեան» գիրքը, ուր շարադրում է Թուրքիայի դեմ Սուլթոյի տարած
✓ հաղթանակներից հետո հայերի նկատմամբ ռուսական բանակի և պաշտոնյաների հոգատարությունը և կազմակերպված գաղթը։

Հայ առաջադեմ գործիչները հատուկ ընտրությամբ տպագրած կամ հրատարակության նախապատրաստած աշխատություններով ներկայացնում էին Հայաստանի դրվատելի անցյալը և սերմանում հայրենի երկիրը ազատագրելու գաղափարը։ Այսպես օրինակ, հրատարակության է պատրաստվում Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց»՝ հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարի կոչող երկը։ 1790 թ. հրատարակվում է Ստեփանոս Սյունեցու «Ողբք և հառաչանք ի դիմաց մոր մերոց սրբոյ էջմիածնի» աշխատությունը։ Նկարագրելով իր երկրի ու ժողովրդի տարաբախտ վիճակը, հեղինակը զենքի ունակ բոլոր մարդկանց կոչ է անում պայքարի ելնել տիրողների դեմ։ Հ. Արղությանը հատուկ նամակով ողջունում էր Մ. Երևանցուն՝ Շ. Շահամիրյանի գրքի թարգմանությունը կատարելու և տպագրության պատրաստելու առթիվ։ Միաժամանակ հույժ կարևոր էր համարում Դավիթ Բեկի մասին աշխատության հրատարակությունը³¹։

Անգամ կրոնական թեմատիկայով հրատարակված քարոզգրքերը՝ «Ավետարանը», Ն. Շնորհալու «Գիրք որ կոչի ընդհանրականը» նպատակ ունեին հայ եկեղեցու դավանանքին վերաբերող վեճերի հրատարակությունների միջոցով առատորեն տարածվող կաթոլիկական պրոպագանդային հակադրվելու, հետևարար և մարդկանց արևմտյան կողմնորոշման ազդեցությունից դուրս բերելու կամ դրանից հեռու պահելու։

Հրատարակված գրքերը բազմաթիվ օրինակներով տարածվում էին առաջին հերթին Ռուսաստանի հայկական գաղութներում։ Ռուսաստանի սահմաններից դուրս հատկապես սերտ կապ էր պահպանվում Կոստանդնուպոլսի և Հնդկաստանի գաղութների հետ։ Նոր Նախիջևանից հարյուրավոր օրինակներով «Տետրակ համառոտ անուանեալ դուռն ողորմութեան», «Տարեցույց» և այլ գրքեր էին առաքվում Կ. Պոլիս։ Հայկական գրքերի տարածման համար Հ. Արղությանը հարաբերությունների մեջ էր մտել անգամ Կ. Պոլսի ռուսական դեսպան Բուլգակովի հետ։ Իր նամակներից մեկում նա հորդորում էր իսլադարյանին արագացնել նախա-

տեսված գրքերի և հատկապես «Օրացույցի» տպագրութիւնը, քանի որ դեռսպան Բուլգակովը պահանջում է շտապեցնել դրանց առաքումը³²:

Համանման ձեռք գրքեր էին առաքւում և իրացւում հնդկահայ գաղութներում: Դրան նպաստում էին մասնավորապես լուսավորութեան ու ազատագրական շարժման հարցերում Հ. Արղությանի և Շ. Շահամիրյանի միջև ստեղծված գործարար կապերը³³: Ստեփան քահանա Հարութիւնյանին Հնդկաստան առաքելով, Արղությանը նրա հետ ուղարկել էր երեք օրինակ «Գիրք որ կոչի ընդհանրական» և մտադրութիւն ունէր ուղարկել 100 օրինակ Նդիշիի «Պատմութիւնից»³⁴:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հ. Արղությանի, Հ. Լազարյանի հետ և նրանց ծավալած լուսավորական գործունեութեանը լծվել էր հայրենասեր մտավորականների մի ամբողջ խումբ՝ Մարգար և Փիլիպոս Մանուչարյանները, Մ. Սարաֆյանը, Գ. Կամպանյանը և ուրիշներ: Առաջադեմ այդ գործիչներից էր նաև վաճառական Գրիգոր Խալդարյանը, որն առանձնահատուկ ձգտում ունէր դեպի լուսավորութիւնը: Նրա այդ սերը շմնաց հայեցողական երազանքների ոլորտում, այլ, հանձին իր հիմնադրած տպարանի, գործնական մարմնավորում ստացավ: Խալդարյանը տպարանի անխափան գործունեութիւնը ապահովելուց զատ զբաղւում էր նաև ստեղծագործական աշխատանքով: Մանկավարժական և հատկապես խմբագրական-տպագրական անխոնջ աշխատանք էր կատարում Թ. Մարությանը: Տպարանի գործունեութիւնը թե՛ նոր նախիջեանում, թե՛ Աստրախանում անխզելիորեն կապւում է նրա անվան հետ: Պատահական չէ, որ Կովկաս մեկնելուց առաջ Հ. Լազարյանի խորհրդով Արղությանը հատուկ կտակով տպարանը հանձնում է Մարությանին, իր մահվան դեպքում տեղ ու տնօրինութիւնը նրան անցնելու պայմանով³⁵: Թարգմանչական-հրատարակչական արգասավոր աշխատանք էր տանում ժամանակի գրագետ ու գիտուն դեմքերից մեկը՝ Մարգար Խոջենց Երեւանցին: Նա օտար գրականութիւնից կատարում էր թարգմանութիւններ, խմբագրում ու տպագրութեան պատրաստում աշխատութիւնները: Մ. Երեւանցին Թ. Մարությանի հետ տանում էր հրատարակչական-տպագրական գործի ամբողջ ծանրութիւնը:

Այսպիսով, XVIII դարի վերջին քառորդում ռուսահայ գաղթականներում կուլտուր-կրթական, լուսավորական լայն շարժում էր սկսվել: Այդ շարժումը, տեղի պայմաններից ելնելով և նրա պահանջներին ընդառաջելով հանդերձ, անմիջականորեն արձագանքում ու կապված էր հնդկահայերի ծավալած լուսավորական գործունեութեան հետ և նրա

նման ու նրա հետ ըստ էության ուղղված էր ժողովրդին լուսավորելու, ինքնաճանաչման բերելու ուղիով նրան ազատագրելու նպատակին:

* * *

Հայ ազատագրական շարժման կարևոր միտումներից մեկը, որ նշանաձող էր դարձել ամբողջ XVIII դարում, այն էր, որ Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրությունը նախատեսվում էր իրականացնել Վրաստանի աջակցությամբ ու նրա հետ դաշնակցած: Այդ գաղափարն առավել հասունացավ և գործնական բնույթ ընդունեց դարի վերջին քառորդում, Կովկասում ռուսական քաղաքականության ակտիվացման շրջանում:

Ռուս և հայ-վրացական քաղաքական կապերի մեջ էին ներքաշվել, բնականաբար, հայոց կաթողիկոսները՝ Սիմեոն Երևանցին և հատկապես այդ շրջանում գործող (1780—1799 թթ.) Դուկաս Կարնեցին: Նրանք մշտական դրացիական հարաբերությունների և գործնական կապերի մեջ էին վրաց պետական գործիչների, Հերակլ II թագավորի ու առհասարակ վրացական և վրացահայ հասարակական-քաղաքական շրջանների հետ: Փաստորեն հայ կաթողիկոսներն էին ներկայացնում հայ ժողովրդի հասարակական-քաղաքական շահերը Վրաստանում և ինչ-որ չափով ապավինում հարևան պետությանը: Ռուսաստանի և Հնդկաստանի հայ գործիչների համեմատությամբ, էջմիածինը, ելնելով թուրքական և պարսկական իշխանություններին անհարկի չզրգոքելու, ժողովրդին վտանգի չենթարկելու, բուն Հայաստանի կոնկրետ պայմաններից, առավել զգուշ քաղաքականություն էր վարում: Այսուհանդերձ, Վրաստանի հետ դաշնակցած, Ռուսաստանի օգնությամբ արևելյան բռնատիրական պետությունների լծից ազատագրվելու խնդրում նրանք թեպետև զգուշավոր, սակայն ըստ էության նույն քաղաքականությունն էին տանում, ինչ որ Ռուսաստանի և Հնդկաստանի ազատագրական շարժման գործիչները:

Ռուսահայ շրջանները և հատկապես Հ. Արղուիսյանը անմիջականորեն առնչվում էին Հայաստանի ու Անդրկովկասի հետ կապված իրադարձություններին: Որպես ռուսական թեմի հոգևոր առաջնորդ, նա ենթակա ու սերտ կապերի մեջ էր էջմիածնի հետ: Հաճախ ինքն էր հայ ժողովրդի անունից հանդես գալիս ռուսական պաշտոնական ատյաններում: 1780 թ. հունվարին Հ. Արղուիսյանի ու Հ. Լազարյանի հետ էին բանակցություններ վարում նաև պետական պաշտոնյա Ի. Գորիշը և ապա նախատեսվող կասպիական արշավանքը գլխավորող գեներալ Ա. Սուվորովը³⁶: Արղուիսյանը և Լազարյանը Անդրկովկասը, հետևաբար

Ան Հայաստանը թուրքական և պարսկական լծից ազատագրելու գործում մեծ նշանակություն էին տալիս Վրաստանին, որպես երկրամասում պետականություն ունեցող միակ ունակ ռուսի: Բնականաբար նրանք հետևում և իրենց շահագրգռությունների ու հնարավորությունների սահմաններում նպաստում էին ռուս-վրացական հարաբերություններին: Պատահական չէ, որ Ա. Սուվորովի հետ բանակցելու ժամանակ Հ. Լազարյանը Անդրկովկասի մասին նրան հաղորդած տեղեկությունների մեջ համապատասխան նշանակություն է վերագրում Վրաստանին:

Վրաստանում բնակվող հայությունը, հատկապես վրաց արքունիքի հետ կապված երևելի հայ գործիչները Հայաստանի ու Վրաստանի ազատագրման հեռանկարները կապում էին Ռուսաստանի օգնության հետ: Այդ գործիչներից էին մեկեր-տանուտեր Դ. Բեհբուլյանը, Ս. Թումանյանը, նրա եղբայր Մանուշարը, Ս. Արղունյանը, Հ. Բեհբուլյանը, Հ. Ղորջանյանը: Սրանք բոլորն էլ մեծ կշիռ ունեին Հերակլ II-ի արքունիքի ռուսական կողմնորոշում ունեցող խմբավորման մեջ և մշտական կապ էին պահպանում Հ. Արղունյանի հետ³⁷: Հ. Արղունյանի օրագրություններից (Մատենադարան, ձեռ. № 2699, 2951, 4496) երևում է, որ 1780-ական թվականների կեսերին նա, Ռուսաստանի օգնությամբ Վրաստանը թուրքական տիրապետությունից ազատագրելու և ռուս-վրացական ալյևայլ հարցերի մասին, նամակագրական կապեր էր պահպանում ռուս (Պ. Պոտոլոմկին), վրաց (Հերակլ II և ուրիշներ) և հայ (Հ. և Մ. Լազարյաններ և ուրիշներ) նշանավոր գործիչների հետ: Նա անմիջական մասնակցություն է ունեցել 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրի կնքմանը³⁸ և Հայաստանի ազատագրման համար հեռանկարներ բացող այդ ուրախալի իրադարձության մասին հատուկ նամակով իրազեկ դարձրել Շ. Շահամիրյանին³⁹: Վերջապես, ռուսահայ ազատագրական շարժման գործիչների կողմից Հայաստանի ազատագրումը Վրաստանի հետ առնչելու և ռուս-վրացական հարաբերություններին նպաստելու հանգամանքն այնքան ակնհայտ իրողություն է, որ միահամուռ հավաստվում է ռուսական (Օ. Մարկովա), վրացական (Ն. Բերձինիշվիլի, Ա. Յագարելի, Ն. Տաբաիձե), հայկական (Ա. Ռ. Հովհաննիսյան, Մ. Ներսիսյան, Վ. Մարտիրոսյան և ուրիշներ) պատմագրության կողմից⁴⁰:

1795 թ. Աղա Մահմեդ խանի արշավանքից և Թբիլիսին ավերելուց հետո, հաջորդ տարում Ռուսաստանը ձեռնարկեց կոմս Վ. Զուբովի արշավանքը դեպի Անդրկովկաս: Վերջինիս մոտ Ղզլար է ժամանում Հ. Արղունյանը և տեղի հայ բնակչության օժանդակությամբ ամեն կերպ աջակցում ռուսական զորքերի արշավանքներին: Հ. Արղունյանը և հայ ազա-

տադրական շարժման մյուս գործիչները փայփայում էին այն հույսը, որ Վրաստանի հետ միասին այս անգամ իրականանալու են Հայաստանը ազատագրելու իրենց բաղձանքները: Սակայն, տարաբախտաբար, ինչպես հայտնի է, Եկատերինա II-ի մահով հետագա իրադարձությունները այլ կերպ զարգացան: Այսուհանդերձ, հասկանալի ու բնական է, որ ռուսահայ ազատագրական շարժման ներկայացուցիչները հայ ժողովրդի ազատագրման գործում մեծ նշանակություն էին վերագրում Վրաստանին, վերջինիս հետ ընդհանուր ճակատ ստեղծում Անդրկովկասը Ռուսաստանի միջոցով ազատագրելու համար:

* * *

Այս հարցում թերևս առավել կարևոր է լուսաբանել Անդրկովկասից ու Հայաստանից կտրված, հեռավոր Հնդկաստանի հայկական գաղութների, դրանց առաջադեմ գործիչների վերաբերմունքը:

Հնդկահայ ազատագրական շարժման գործիչներից Հ. Էմինն էր առաջինը, որը տակավին 1763 թ. Մոսկվայից Աստրախանի վրայով գալիս է Վրաստան: Հայերը թե՛ Աստրախանում, թե՛ Հյուսիսային Կովկասում ջերմությամբ են ընդունում նրան, որպես Հայաստանի ապագա ազատարարի: Հարգալից ու պատիվներով է ընդունում նրան նաև Հերակլ թագավորը: Նա ուշադրությամբ ունկնդրում է Եվրոպայում կրթություն ստացած հայ երիտասարդի խորհուրդները՝ լուսավորություն տարածելու և այլ բարեփոխումներ կատարելու վերաբերյալ: 1763 թ. ամռանը, Վրաստանին սպառնացող արտաքին վտանգի պայմաններում Հերակլ II-ը հանձնարարում է Էմինին հայերից հատուկ ջոկատ կազմել և ժամանակի ուղղման գործի պահանջների ոգով վարժեցնել վրացական զորքը⁴¹:

Հուսալիս լինելով Էմինի իրեն հետապնդելու աստիճանի հասցրած զգուշավոր բազաքականությունից և ինչ-որ չափով նաև դրանով պայմանավորված Հերակլի սառը վերաբերմունքից, Էմինը հարկադրված թողնում է Վրաստանը: Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասը ազատագրելու դեպքում Վրաստանը համարող հայ ազատագրական շարժման անխոնջ գործիչը 1767 թ. կրկին վերադառնում է Հերակլ II-ի մոտ, ամբողջ կյանքում իր փայփայած գաղափարները իրականացնելու նպատակով: Սակայն այս անգամ ևս գործնական արդյունքների չհասնելով, հարկադրված է լինում մեկ տարի հետո թողնել Վրաստանը և մեկնել Հնդկաստան, ուր և հաստատվում է մինչև իր կյանքի վերջը՝ 1809 թվականը⁴²:

XVIII դարի վերջին քառորդում, 1770-ական թվականների սկզբներից, Անդրկովկասը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու նույն ճրգ-

տումներով վրացական արքունիքի հետ բարեկամական հարաբերություններ մեջ մտավ Շ. Շահամիրյանը: Պատկառելի կարողության տեր հնդկահայ հայրենասեր վաճառականը մեծ գումար և նվերներ է ուղարկում վրաց թագավորին: Հասկանալի է, որ առանց որևէ միտումի ու նպատակի նման թանկարժեք նվիրաբերություն չէր կատարվի: Շ. Շահամիրյանը քաղաքական ակնկալություններ ուներ վրացական արքունիքից:

✓ Հերակլ II-ը 1775 թ. հատուկ հրովարտակով Շ. Շահամիրյանին է նվիրում Լոռու գավառը: Այդ շնորհագիրը Հնդկաստան տանելու և հրնդկահայ նշանավոր գործչին հանձնելու դժվարին գործը հանձնարարվում է Հովսեփ Դանիրեկյանին⁴³: Դանիրեկյանների տոհմը երկար ժամանակ դիվանագիտական ծառայության մեջ էր վրացական արքունիքում: Նրանցից Հ. Դանիրեկյանը և իր որդի Ռաֆայելը, հայրենասեր այդ անձնավորությունները XVIII դ. վերջին տասնամյակներին և XIX դ. սկզբին, քառորդ դարից ավելի նվիրվեցին վրաց արքունիքի, հայոց կաթողիկոսի և հնդկահայ գաղութների միջև կապեր հաստատելու գործին⁴⁴: Ստանձնելով դիվանագետ-բանագնացի դժվարին ու փորձություններով լի պարտականությունը, նրանք հաճախ իրենց կյանքը վտանգի էին ենթարկում հայրենիքի ազատության գործին ծառայելու համար: Մանավանդ որ պարսկական իշխանությունների ձեռքն ընկնելու երկյուղից Հերակլ II-ի և Շ. Շահամիրյանի նամակներում ղգուշավորություն էր պահպանվում և շատ հարցերի վերաբերյալ նրանց տրվում էին բանավոր հանձնարարություններ:

Հ. Դանիրեկյանը Հերակլ II-ի հիշյալ հրովարտակը տանելու համար առաջին անգամ Հնդկաստան է ուղևորվում 1775 թվականին և վերադառնում 1777-ին, քանի որ այն ժամանակվա պայմաններում Հնդկաստան մեկնելը և վերադառնալը տևում էր ավելի քան երկու տարի: Երկրորդ անգամ Հ. Դանիրեկյանը Հնդկաստան է ուղևորվել 1778—1781 թվականներին: Հնդկաստանից նա նվերներով վերադառնում, հասնում է Բաքու: Այնտեղից հայտնում է, որ նախ կմեկնի Վրաստան, հանձնելու Շահամիրյանի նամակը Հերակլ II-ին և ապա կայցելի կաթողիկոսին⁴⁵: Ժրոք, 1782 թ. հունվարին Հ. Դանիրեկյանը ներկայանում է Ղ. Կարնեցուն և նրան հանձնում Հնդկաստանից բերված նվերներն ու նամակները⁴⁶:

Հ. Դանիրեկյանի այս ուղևորության մասին հիշատակում է նաև կաթողիկոս Ղ. Կարնեցին 1785 թվականի մայիսին, Շ. Շահամիրյանին գրած նամակում⁴⁷:

Ազատագրական նպատակով կատարվող հնդկահայ գործիչների կապերը վրացական արքունիքի հետ այնքան անհրաժեշտ ու նպատակային էին, որ նրանց նամակագրությունը դրանով չվերջացավ, պարբերական բնույթ ստացավ և շարունակվեց մինչև դարի վերջը: Վրաց թագավորը երրորդ անգամ Հ. Դանիբեկյանին Հնդկաստան է ճանապարհել՝ Շ. Շահամիրյանին իշխանական տիտղոս շնորհելու մասին իր 1786 թ. հրովարտակը տանելու համար: Դա պատասխան էր մինչ այդ Շահամիրյանից ստացած թագի և այլ նվերների: Այդ ճանապարհորդության ժամանակ Բաղդադի փաշան բանտարկում է Դանիբեկյանին, խլում Հերակլի նամակն ու շնորհագիրը: Երեքամսյա բանտարկությունից հետո, ի վերջո հետ է ստանում հրովարտակը, շարունակում ճանապարհը և հաջորդ տարին հասնում Մադրաս և նամակն ու շնորհագիրը հանձնում հասցեատիրոջը⁴⁶:

1791 թվականին նա նոր հանձնարարություն մեկնում է Հնդկաստան: Այս անգամ Հ. Դանիբեկյանը տանելու էր Հերակլ II-ի մի հրովարտակը, ինչպես և Լոռին Շահամիրյանին նվիրելու, դեռևս 1775 թ. նրա շնորհագրի՝ Գեորգի արքայազնի վերահաստատման հրովարտակը և Լոռու մանրամասն մի քարտեզ: Հնդկաստան ճանապարհվելիս նա անցնում է էջմիածին, այցելում Ղուկաս կաթողիկոսին: Նրա հետ Հնդկաստան՝ Շահամիրյանի մոտ է ուղևորվում նաև Կարապետ Խաղակյան վաճառականը՝ Հերակլ թագավորի և հայոց կաթողիկոսի հատուկ հանձնարարությամբ⁴⁹:

1796 թ. կրկին Հ. Դանիբեկյանը ճանապարհվում է Հնդկաստան, Գեորգի թագաժառանգի նամակով, ուր նա Շահամիրյանին հայտնում էր Աղա Մահմեդ խանի արշավանքի, Թիֆլիսն ավերելու, ռուսական զորքերի՝ Կովկաս արշավելու մասին: Թագաժառանգը միաժամանակ հայտնում էր, որ նրանից Լոռու գավառի մասին նոր հանձնարարականներ են սպասում:

Հովսեփը չէր վերադարձել Հնդկաստանից, երբ վրաց արքայազնի կարգադրությամբ նրա որդի Ռաֆայել Դանիբեկյանցը 1797 թ. ճանապարհվում է Հնդկաստան, տանելով Գեորգիի նոր նամակը Շահամիրյանին: Նա Հնդկաստան է հասնում 1798 թ., երբ արդեն վախճանվել էր Շ. Շահամիրյանը, և նամակը հանձնում է Հովհաննես Շահամիրյանին: Այդ նույն ժամանակ (1798 թ. հունվար) մահացել էր նաև Հերակլ II-ը և գահ էր բարձրացել Գեորգի XII-ը: Վերջինս պատրաստվում էր Հ. Դանիբեկյանին կրկին ճանապարհել Հնդկաստան, Շահամիրյանին տանելու իր նամակը, ուր հայտնում էր հոր մահը և խնդրում գալ և տեք

դառնալ Լոռու գավառին: Սակայն հայտնի չէ՝ այդ ճանապարհորդությունը տեղի է ունեցել, թե ոչ⁵⁰:

Վերջին անգամ վրաց նոր թագավորը Ռ. Դանիբեկյանցին հատուկ նամակով ու հրովարտակով Հնդկաստան է ուղարկում 1799 թվականին⁵¹:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հնդկահայերի և վրացական արքունիքի միջև սերտ կապեր էին ստեղծվել: Դա լավագույնս վկայում է հնդկահայ գործիչների լայնախոհ ու ռեալ քաղաքական նկրտումների և Հայաստանի ազատագրման հարցում Վրաստանին մեծ դեր վերագրելու մասին:

Նրանց հարաբերություններում, անշուշտ, շոշափվում էին տարբեր հարցեր, այդ թվում և առևտրատնտեսական բնույթի: Շահամիր Շահամիրյանը Հերակլ թագավորին գրել և ցանկություն էր հայտնել տեղափոխվել Վրաստան, այնտեղ հիմնել շաքարի ու արտադրության այլ ճյուղեր⁵²: Շ. Շահամիրյանը 1787 թ. նամակում, թերևս նաև դրանից առաջ, հայտնում էր իր կարծիքը առևտրի մասին, որ կայուն գործ չէ և ենթակա է տարուբերումների՝ հարստանալու կամ սնանկանալու, իսկ երկրագործությունը կամ արտադրությունը այլ է, և ավելացնում է. «Եթե կարելի, զի գնեցից գաւառ մի երկիր անշարժ և ծախիւք իմովք շէն արարից, զի կալով մնասցէ հաստատուն որ ի տարեկան պտղոյ նորա մխիթարեսցի իշխանական կեանս մեր...»⁵³: Հնդկահայ գործիչ այդ ցանկություններին էին ընդառաջում Հերակլ II-ը և թագաժառանգ Գեորգին՝ Լոռու գավառը իր որոշակի սահմաններով հատուկ հրովարտակով Շահամիրյանին նվիրելով և բազմիցս հիշեցնելով նրան այդ գավառը իրեն պատկանելու մասին:

Հնդկահայ գաղութի և վրաց արքունիքի կապերն արտահայտող նամակների մի զգալի մասը մեզ չի հասել: Դրանից զատ, ինչպես նշեցինք, զգուշանալով նամակները օտարների ձեռքն ընկնելու վտանգից, որոշ հարցերի մասին, մանավանդ քաղաքական երանգ ունեցող, հաղորդվել է միայն բանավոր: Սակայն այն, ինչ մեզ է հասել, ինչպես ճիշտ կերպով նշվել է պատմագիտական գրականության մեջ, պարզորոշ վկայում է, որ նրանց հարաբերությունների առանցքը եղել է հարևան երկու ժողովուրդների բարեկամական համագործակցությունը, Վրաստանի աջակցությամբ Հայաստանն ու Անդրկովկասը ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու հարցերը:

Շ. Շահամիրյանն այդ մասին գրում էր նաև բացահայտ. «Ուրեմն կամք Տեառն,— գրում է նա,— այս զի ի ժամանակի թագաւորութեան

քոյ կարգադրեսցի յօրէնս, և ի օրինաց քոց փրկեսցի ազգն հայոց և վրաց ի ծառայութենէ բռնաւորաց»⁵⁴:

Հնդկահայերի քաղաքական դավանանքը արտահայտւում է նաև հետեւյալ խոստուն փաստի մեջ: Հերակլ II-ին նվիրված թանկարժեք թագը Շահամիրյանը զարդարում է վրացական և հայկական գերբերով⁵⁵:

Տարբեր առիթներով Շահամիրյանն ընդգծում էր երկու ժողովուրդների բարեկամական համագործակցութեան անհրաժեշտութիւնը: Խոսելով այդ մասին, Հերակլին ուղղած նամակներից մեկում նա իր միտքը եզրափակում է հետեւյալ ձևով. «Ուրեմն թոյլ տուր, զի այսպէս վայել է մեզ այսօր բանալ և ուսն երջանկութեան և միաբանութեան երկուց ազգաց»⁵⁶:

Շահամիրյանը խորհուրդ էր տալիս վրաց արքային իր պետութիւնը դարձնել իրավական նորմերի, օրենքների վրա հենվող մի տերութիւն, որպեսզի երկրի բոլոր բնակիչները հավասարապես ենթարկվեն և առաջնորդվեն միևնույն օրենքներով: «Մինչ դեռ ժամանակն ի ձեռս քոյ է,— գրում էր նա,— փակեա, լծորդեա, կալանաւորեա ըստ անխախտելի օրինօք ամենայն ինքնակամ շարժմունս և ներգործութիւնս քոյ, և ի քէն ապագայացօղի տեսուն, և արձանագրեա անխախտելիօք յօրէնս վասն կառավարելոյ գահն և աշխարհն և ժողովուրդն տէրութեան քոյ, միևնույն օրինօք, որում դու և իշխանք և գաւառապետք աշխարհի քոյ և հասարակ ժողովուրդք այսօր հաւանիք»⁵⁷:

Շահամիրյանն իր քաբողած դեմոկրատական, առաջադիմական գաղափարները ձգտում էր տարածել վրաստանում և միաժամանակ ցանկանում էր լսել նաև Հեբակլի, հայոց և վրաց կաթողիկոսների և բանիմաց այլ անձնավորութիւնների կարծիքները: Ինչպես նշեցինք, նրա դեմոկրատական-ազատագրական գաղափարները, հասարակական-քաղաքական հայացքներն ու մտորումները իրենց արտահայտութիւնը գտան «Որոգայթ փառաց» աշխատութեան մեջ: Ահա այդ աշխատութեան ձեռագիրը նա ուղարկում է Հերակլ II-ին՝ իր մերձավորների հետ դրան ծանոթանալու, թերութիւնները մատնանշելու, ապա տպագրելու և տարածելու համար: «...տեսարակն անուանեալ «Որոգայթ փառաց», շարագրեալ վասն ազատութեան ազգին հայոց... ոչ իշխեցի տպել վասն բազում պատճառի, նախ, որ ունի սղալանս բազումս, ի պատճառն մերոց ռամկորէն բառից, երկրորդ՝ ի պատճառն ծայրագոյն բանիս, նախ հարկաւոր է լսել քեզ և լսելի առնել սրբազանից հայրապետաց հայոց և վրաց, և լսելի առնել պատուելի իշխանաց և գաւառապետաց բարձրու-

թեան քոյ... զոր ինչ հաճեսցի կամացն հասարակաց սրբագրել և ապա ի հրամանաւ բարձրութենէ քումմէ տպել և ցրուել յերեսս երկրի»⁵⁸;

Նա ուղարկում է գրքի ձեռագրի երեք օրինակ և խնդրում Հերակլ II-ին մեկ օրինակը ճշգրտորեն թարգմանել տալ վրացերեն, անշտապ և ուշադիր ծանոթանալ. «հարկաւոր է տետրակն «Որոգայթ փառաց» հրամայես թարգմանել ի տառըս և ի բարբառըս վրաց անսղալապէս և ընթեռնուս հանդարտութեամբ...»⁵⁹: Մյուս երկու օրինակները հեղինակն առաջարկում է հանձնել կաթողիկոս Ղուկաս Կարնեցուն և Հ. Արղությանին. «... և մի՛ վասն տեսչութեան Սրբազան Տեառն Ղուկաս հայրապետին Հայոց, և միւսն՝ վասն տեսչութեան սրբակրօն Տեառն Յովսէփ արքեպիսկոպոսին, որ ի երկրորդ իջեան, զի այր խելամուտ է և հանձար»⁶⁰:

Հ. Արղությանը այնքան կարեւորություն է տալիս այդ աշխատությանը, որ այն կորչելու վաւանգից փրկելու համար ձեռագրի մեկ օրինակը ընդօրինակել է տալիս Աստրախանում և ապա ձեռնամուխ լինում նրա հրատարակմանը⁶¹:

Թե ինչպիսի ուշադրության արժանացան ձեռագրի մյուս օրինակները, հայտնի չէ: Հնդկաստանի հայ աղատագրական շարժման կենտրոնի հանդեպ վերաբերմունքի լավագույն դրսևորում էր հետևյալ փաստը: Այդ նույն տարիներին (1789 թվականին) արքեպիսկոպոս Գայոսը, հավանաբար, Հերակլ II-ի ցուցումով վրացերեն է թարգմանում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատությունը⁶²:

Վրացական արքունիքի և անձամբ Հերակլ II-ի հետ հնդկահայ և ռուսահայ շրջանների աշխույժ շփումների շրջանում՝ 1783 թ. կնքվեց Գեորգիևսկի պայմանագիրը, որով Վրաստանը, պահպանելով իր պետականությունը, անցնում էր Ռուսաստանի հովանավորության տակ: Բնականաբար հարց է առաջանում. Ռուսաստանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերի առաջադեմ գործիչները, որոնք լավատեղյակ էին ռուս-վրացական հարաբերություններին և անգամ մասնակցել էին Գեորգիևսկի պայմանագրի կնքմանը, իրենց կազմած հայ-ռուսական դաշնագրության նախագծերում արգոյք նկատի՞ էին առել վրացական պայմանագիրը, թե՞ ոչ: Եվ եթե հաշվի էր առնվել, ապա ի՞նչ չափով և ի՞նչ կերպ:

Հայտնի է, որ դեռևս 1771 թ. դեկտեմբերին Հերակլ II-ը հատուկ խնդրագրով դիմել էր Եկատերինա II-ին Վրաստանը Ռուսաստանի հովանավորության տակ վերցնելու համար: Նա առաջարկել էր հինգ կետից բաղկացած իր պայմանները և ինը կետով նշել ստանձնելիք պարտավոր-

րությունները: Այդ խնդրագիրն էր, որ որոշ այլ փաստաթղթերի հետ հետագայում հիմք դարձավ Գեորգիևսկի դաշնագրության համար⁶³:

XVIII դարի 80-ական: թվականների վրացական և հայկական պատմական այդ փաստաթղթերի բաղդատումից պարզվում է հետևյալը՝ Շ. Շահամիրյանի նախագիծը, կրելով եվրոպական լուսավորչների գաղափարական ազդեցությունը, չէր ելնում ռուս-վրաց-հայկական կոնկրետ հարաբերություններից և ստեղծված ռեալ իրավիճակից: Այն որոշակիորեն տարբերվում է և դժվար է զուգահեռներ անցկացնել դրա և Գեորգիևսկի պայմանագրի միջև: Հ. Արղությանի կազմած նախագիծը ավելի մոտ է իրականությանը և ելնում է հին հայկական պետությունից՝ ավանդները վերականգնելու (մայրաքաղաք, դրոշ, գերբ և այլն) հայացակետից: Այս դեպքում ևս դժվար է նկատել Գեորգիևսկի դաշնագրության ազդեցության հետքերը:

Սակայն Արղությանի նախագիծը, Հերակլ II-ի 1771 թ. առաջադրած պայմանների հետ բաղդատելուց, պարզ է դառնում, որ դրանց միջև կան նմանություններ:

Հերակլ II-ը իր պարտավորությունների մեջ (1-ին կետ) խոստանում էր Վրաստանի հանգրից հանվող մետաղի կեսը տալ կայսրությանը⁶⁴: Հ. Արղությանի նախագծի 6-րդ կետով Ռուսաստանին պետք է վճարվեր Հայաստանի ոսկու և արծաթի հանքերից որոշակի չափով հարկ⁶⁵:

Վրաց թագավորը նշում էր (9-րդ կետ), որ իր առաջադրած պայմանները երկուստեք ընդունելու դեպքում թագածառանգներից որևէ մեկը և իշխաններից ու ազնվականներից կուղարկվեն ռուսական արքունիքում մնալու: Հ. Արղությանի նախագծի 5-րդ կետը հետևյալն է. «Լինիցին ի Հայաստան չափաւոր զօրք ռուսաց երանալաւ միով յազգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց՝ Պարսից և Օսմանցւոց և ի ժառանգաց քաղաւորութեան մինն ղնիցի ի դրունս կայսեր» (ընդգծումը մերն է— Վ. Բ.)⁶⁶: Ուրեմն, երկու դեպքում էլ ռուսական արքունիքին պատանդ էր տրվում:

Վրացական նախագծում նախատեսվում է յուրաքանչյուր ծխից 7 կոպեկ հարկ վճարել ռուսական պետությանը (2-րդ կետ): Արղությանի նախագծում (6-րդ կետ) կայսերական գանձարանին նույնպես Հայաստանից հարկ է վճարվում, առանց որոշակի չափը նշելու:

Հիշատակված փաստերը, հոդվածների բովանդակության նույնությունը, կարծում ենք, պատահական զուգահեռություններ չեն, մանավանդ որ դրանք տեղ չեն գտել և դուրս են թողնվել Գեորգիևսկի դաշ-

նագրությունից: Հետևաբար, պետք է ենթադրել, որ Հ. Արղուիսյանը ծանոթ էր Հերակլ II-ի 1771 թ. առաջադրած պայմաններին և իր կազմած նախագծում հաշվի էր առել այդ առաջարկները:

Այսպիսով, հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու իրադարձություններին անմիջականորեն նախորդած ու դրան նախապատրաստող ժամանակաշրջանում Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները ակտիվ գործունեություն էին ծավալել թուրքիայի և Պարսկաստանի ծանր լծից մայր հայրենիքը՝ Հայաստանը, ազատագրելու գործում: Այդ գաղութները XVIII դ. վերջին քառորդում առաջատար դեր էին կատարում և ընթացում հայ ազատագրական շարժման ավանգարդում:

ՄԱՆՈՒՍԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Թ. Ավդալբեգյան, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դ. վերջում (Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969): Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946: Ա. Շ. Մնացականյան, 18-րդ դարում գրված հայ-ռուսական գաղնագրության երկու նախագծերի գնահատման հարցի շուրջը, «Բանբեր մատենադարանի», № 4, 1958: А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947 և այլն:

2 Տե՛ս Е. Дружинина, Северное Причерноморье в 1775—1800 гг., Москва 1959, стр. 68—80 և հետ:

3 Г. А. Эзов, Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, «Кавказский вестник», Тифлис, 1901, стр. 6—8.

4 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, стр. 61.

5 Այդ մասին տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Երևան, 1957:

6 Շ. Շահամիրյան, Որոգայքի փառաց, Թիֆլիս, 1913, էջ 21:

7 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 298—299.

8 «Տևտրակ որ կոչի նշուակ վասն կառավարելոյ ինչս որոց և առանց կտակ ենչելոց», Մադրաս, 1783 թ.:

9 Այդ մասին տե՛ս Թ. Ավդալբեգյան, Շ. Շահամիրյանը և հնդկահայոց համայնական ինքնավարությունը 18-րդ դարում (Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 255—275): А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, стр. 16—158.

10 Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 264:

11 «Տևտրակ որ կոչի նշուակ», էջ 4, 5:

12 ՀեՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), կաթ. դիվան, թ. 6, վ. 10ա:

13 Նույն տեղում, թ. 16, վ. 99:

14 «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 385—393:

15 «Մասեաց աղավնի», 1861, էջ 133—138:

- 16 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2951, ք. 30:
- 17 Հայկական ԽՍՀ պետական պատմական կենտրոնական արխիվ (ՀՊՊԿԱ), ֆ. 54, գ. 209, ք. 2:
- 18 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, ք. 109, գ. 22, վ. 45:
- 19 Նույն տեղում, ձեռ. № 4496, ք. 143:
- 20 Նույն տեղում, ձեռ. № 2949, ք. 470:
- 21 Նույն տեղում, Լազարյանների արխիվ, ք. 102, գ. 6, վ. 9:
- 22 Նույն տեղում, ձեռ. № 4496, ք. 46:
- 23 Նույն տեղում, ձեռ. № 2949, ք. 112:
- 24 Նույն տեղում, կաթ. դիվան, ք. 6, վ. 18, ք. 8:
- 25 Տե՛ս Ե. Շահադիգ, Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը, Թիֆլիս, 1901, էջ 47—48:
- 26 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2949, ք. 189:
- 27 «Դիվան Հայոց պատմության», գիրք Թ, մասն Ա, Թիֆլիս, 1911, էջ 101:
- 28 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2949, ք. 233—234:
- 29 Գր. Խալդարյանի տպարանի մասին մանրամասն տե՛ս Վ. Բաղդասարյան, Ռուսահայերի առաջին տպարանը, Պատմա-բանասիրական հանդես, 1967, № 4:
- 30 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2949, ք. 49:
- 31 Նույն տեղում, ք. 88, 93—94:
- 32 Նույն տեղում, ձեռ. № 2949, ք. 79:
- 33 Տե՛ս А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, стр. 158—177.
- 34 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2949, ք. 174:
- 35 Նույն տեղում, ձեռ. № 2951, ք. 85 ր:
- 36 А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, стр. 21—24; М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956, стр. 43—76.
- 37 Տե՛ս Վ. Մարտիրոսյան, 1783 թ. Գևորգիական դաշնագիրը և հայերը, «Լրաբեր Հաս. գիտ.», 1978, № 9, էջ 93—94:
- 38 Նույն տեղում, էջ 95—96:
- 39 Ռ. Արաբամյան, Շահամիր Շահամիրյանի նորահայտ նամակագրությունը, «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1969, № 3, էջ 149:
- 40 Այդ մասին տե՛ս В. Мартиросян, Георгиевский договор 1783 года и армяне,—«Из истории вековой дружбы», Ереван, 1983, стр. 88—94.
- 41 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 137—138.
- 42 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, стр. 248.
- 43 Տե՛ս Պ. Ա. Զորաբյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981, էջ 81—82:
- 44 Տե՛ս նույն տեղում:
- 45 Նույն տեղում, էջ 83—84:
- 46 Տե՛ս Վ. Ռ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ Հովսեփ Դանիբեկյանի մասին, ՊԲՀ, 1979, № 1, էջ 108—110:
- 47 Դիվան Հայոց պատմության, նոր շարք, հ. 1, աշխատ. Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 525—529:

- 48 ՏԷՍ Պ. Չորանյան, նշվ. աշխ., էջ 85:
- 49 նույն տեղում, էջ 86—87:
- 50 նույն տեղում, էջ 88—89:
- 51 նույն տեղում, էջ 90:
- 52 ՏԷՍ Ա. Բ. Խոաննիսյան, Россия и армянское освободительное движение, стр. 154.
- 53 Պ. Չորանյան, նշվ. աշխ., էջ 178:
- 54 նույն տեղում, էջ 169:
- 55 Ա. Բ. Խոաննիսյան, Россия и армянское освободительное движение, стр. 152.
- 56 Պ. Չորանյան, նշվ. աշխ., էջ 172:
- 57 նույն տեղում, էջ 170:
- 58 նույն տեղում, էջ 171—172:
- 59 նույն տեղում, էջ 173:
- 60 նույն տեղում, էջ 172:
- 61 ՏԷՍ Ա. Շ. Մեղակյան, նշվ. աշխ., էջ 156—157:
- 62 ՏԷՍ Ս. Մ. Մուրադյան, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, стр. 163—164.
- 63 ՏԷՍ Գեորգիևսկի տրակտատ, Исследование, документы, фотокопии В. Мачарадзе, Тбилиси, 1983 г., стр. 35—43.
- 64 նույն տեղում, էջ 36:
- 65 Դիմիտրի Կառլովիչ Վախտանգովսկի, Կ. Դ, Քրիստոս, 1899, էջ 731:
- 66 նույն տեղում:

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ XVIIII ԴԱՐԻ
80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

XVIII դարի 80-ական թվականները հայ-վրացական բազմադարյան փոխառնությունների տարեգրության մեջ իրենց ուրույն տեղն ունեն մեր ժողովուրդների պատմության ուշագրավ, բազում առումներով հետաքրքրական դրվագներով:

Դա մի ժամանակաշրջան էր, երբ Ռուսաստանը վերստին ձեռնամուխ եղավ լուծելու իր արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը՝ ամրապնդել դիրքերը Կասպից ծովի հարավային և արևմտյան ափերին, խնդիր, որ տակավին առաջադրել էր Պետրոս Առաջինը:

Ռուսական զորքերի ձեռնարկվելիք արշավանքը նպատակ ուներ ոչ միայն ապահովելու Ռուսաստանի առևտրատնտեսական շահերը, այլև կանխելու քաղաքական առումով կաթվածահար Իրանի և նրա անդրկովկասյան երբեմնի տիրույթների ներքին գործերին եռանդուն միջամուխ լինելու, նաև իրենց բռնատիրությունն այդ ռեգիոնի վրա տարածելու թուրքական կառավարող շրջանների ակնհայտ ջանքերը: Մի իրողություն, որ հղի էր լուրջ վտանգներով, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հիշյալ երկրների ժողովուրդների համար:

Ռուսական արտաքին քաղաքականության ղեկավարները չէին կարող անտեսել թուրքական նկրտումները Ռուսաստանի համար ստրատեգիական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող այդ ռեգիոնի նկատմամբ: Այդ իսկ պատճառով կյանքի կոչվեցին կասպիականի հարավային և արևմտյան ափերին տիրելու, ձեռքբերվելիք տարածքի անվտանգությունն ապահովելու, մեկընդմիշտ պարսկա-թուրքական տիրապետությունից անջատելու, հայ պետականությունը վերականգնելու ծրագրերը: Ռուսական նշված ծրագրերի բաղկացուցիչ մասն էր կազմում նաև Քարթլ-Կախեթի թագավորությունը Ռուսաստանի հովանավորության ներքո վերցնելը, որը կենսագործվեց 1783 թ. հուլիսի 24-ին, Գեորգիևսկ ամրոցում կնքված պայմանագրով:

Տեսնենք, թե ինչ առնչություն ունենի հայ ազատագրական շարժման գործիչներն այդ պայմանագիրը կյանքի կոչելու հետ, և թե ինչպիսին էր Քարթլ-Կախեթի թագավորության տարածքում հայություն վերաբերմունքը այդ իրողության նկատմամբ: Արդեն նշվեց, որ Գեորգիականի պայմանագիրն Անդրկովկասի, Իրանի և Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի XVIII դարի 80-ական թվականների ընդհանուր քաղաքականության մի կարևոր մասն էր, այդ ծրագրի մի այլ մասն էր կազմում հայ պետականության վերականգնումը Արևելյան Հայաստանի ողջ տարածքում:

Հայ պետականությունը վերականգնելու խնդիրը ուս պետական և հայ ազատագրական շարժման գործիչները քանիցս քննարկել էին, և նույնիսկ Ռուսաստանի ու ապագա հայկական պետության միջև կրնք-վելիք ուս-հայկական սաղմաքաղաքական դաշինքի նախագծեր էին հրապարակ եկել¹:

Արևելյան Հայաստանում հայկական պետության վերականգնման խնդրի արժարժումը, որին, իրերի նպաստավոր ընթացքի դեպքում, պիտի միացվեր նաև թուրքական բռնատիրության ներքո գտնվող Հայաստան աշխարհի մյուս տարածքը, մեծապես ոգևորել էր նաև Քարթլ-Կախեթի հայությանը, որը բազմազան կապերով աղերսվում էր մայր հայրենիքի հետ: Վիրահայությունը, որ կազմում էր Քարթլ-Կախեթի ազգաբնակչության գրեթե մեկ հինգերորդը², հիմնականում քաղաքաբնակ լինելով, զբաղմունքի բերումով կապված էր Ռուսաստանի և մասնավորապես Հյուսիսային Կովկասի շուկաների հետ, լիովին հարեց Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելու կողմնակիցների բանակին:

Քարթլ-Կախեթի և, մասնավորապես, Տփղիսի հայությունը՝ ոգեշնչված հայ պետականության վերականգնման հռոսկարով, ավելի ու ավելի էր համոզվում, որ միայն հզոր Ռուսաստանն է ի վիճակի Վրաստանն ու Հայաստանը վերծ պահել թուրք-պարսկական լծից: Տփղիսի հայերից ուսական կողմնորոշմամբ աչքի էին ընկնում քաղաքի մեծիք-տանուտեր Դարչի Բեհբուջյանը, Հերակլ II-ի արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներ Սուլխան Բեգթաբեգյանը, Սուլխան Թումանյանը, նրա եղբայր Մանուշարը և վերջինիս որդի Շիրոշը, Սողոմոն Արղությանը, Հովսեփ Բեհբուջյանը և Հովսեփ Դորդանյանը: Նրանք բոլորն էլ մեծ կշիռ ունեին արքունի ռուսասեր խմբավորման մեջ: Այս խմբավորման պարագլուխները մշտապես կապ ունեին Հովսեփ Արղությանի հետ: «Մեծ էր ռուսասեր այս խմբավորման ազդեցությունն արքունիքում և պետական գործերի ընթացքի վրա», — նշում է Ս. Կակաբաձեն³:

Գեորգիականի դաշնագրի կնքման խնդրում առանձնապես նշանակալի է հայ ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչ, ռուսահայ թեմի հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղուժյանի դերը:

1784 թ. փետրվարի 20-ին գրած նամակներից մեկում Հովսեփ Արղուժյանը նշում էր. «զանազան գրուածովք իմովք կակղեսցի զսիրտ վրաց արքային, որպէս նորին գրեանքն, որ առ մեզ հաւաստի առնեն զասացեալսն և շնորհակալութիւն մեծ մատուցանէ մեզ...»⁴: Այդ վկայութիւնը եղակի չէ և հավաստւում է մեկ այլ փաստով: Հովսեփ Արղուժյանը 1783 թ. հոկտեմբերի 1-ին նոր Նախիջևանից Մ. Լազարյանին գրում է. «...յայսմ ամի ես մեծապես եմ աշխատեալ վասն թագաւորութեանս ի բանս վրացոց և մեր երկրի, համարեա թէ ամենայն ինչ ըստ գրելոցն իմոց եղև: Երկու անգամ յատուկ գիր է գրեալ և մեզ խնդրեալ Պապ Սերգէյիչն վասն այս բանիցս շնորհակալութեան գրով և բանիւ մատուցեալ առ մեզ»⁵: Բերված քաղվածքն ուշագրավ է ոչ միայն նրանով, որ հավաստում է Հ. Արղուժյանի եռանդուն մասնակցութիւնը հիշյալ դաշնագրի նախապատրաստման և կնքման գործին, այլև այն իրողության բացահայտմամբ, որ հայ ազատագրական շարժման գործիչները, համագործակցելով ռուս և վրաց պետական գործիչների հետ, հոգալով Վրաստանի՝ Ռուսաստանի ռազմաքաղաքական հովանավորութեան ներքո անցնելու խնդիրը, այն չէին անշատում իրենց հայրենիքը օտար լծից ազատելու խնդրից: Տարիներ անց, 1798 թ. սեպտեմբերի 9-ին, Հովսեփ Արղուժյանը եղբորորդուն՝ Սողոմոնին գրած նամակում բացահայտել է իր գործեակերպի դրդապատճառները: Ահա թե ինչ է գրել նա. «...որպէս խօսեցեալ եմ ընդ արքայորդի Դաւիթն, եթէ ոչ է մոռացեալ զայնս, զի իմ կամքն է ծաղկեցուցանել զգոսա (Քարթլ-Կախեթի թագաւորութիւնը— Վ. Մ.) և կոչել ոչ միայն թագաւոր վրաց, այլև հայոց»⁶:

Եթե Հովսեփ Արղուժյանի սույն վկայութեանն ամօքացնենք հայագիտութեան մեջ արդեն արձանագրված այն իրողութիւնը, որ ազատագրական շարժման ականավոր գաղափարախոս Շահամիր Շահամիրյանը «Որոգայթ փառաց»-ում ապագա հայկական հանրապետութեան պրեզիդենտի պաշտոնում ցմահ ընտրվելու իրավունք էր վերապահում միայն Բագթատունիների տանը ներկայացուցչի համար, այսինքն թափանցիկ ակնարկ էր արվում Հերակլ II-ին⁷, վերջինիս Հայաստանի ազատագրման խնդրում մեծապես շահագրգռելու նպատակով, ապա միանգամայն պարզ կդառնան հայ ազատագրական շարժման գործիչների միտումները:

Բերված փաստերը կարևոր են այն առումով, որ վկայում են, թե ինչ տեսանկյունից էին մոտենում հայ ազատագրական շարժման ականավոր գործիչները Վրաստանի հզորացման խնդրին։ Այն է՝ հայկական պետականության վերականգնում՝ հայ-վրացական միացյալ թագավորության կամ թե հայկական առանձին պետականության տեսքով, նայած թե քաղաքական հանգամանքները դրանցից որի օգտին էին զարգանալու, բայց բոլոր դեպքերում Վրաստանը դիտվում էր որպես դաշնակից։

Այս դրույթի օգտին է խոսում հետևյալ պերճախոս իրողությունը։ 1792 թ. փետրվարի 2-ին Նկատերինա II-ին ներկայացվել է մի խիստ ուշագրավ խնդրագիր, որտեղ արծարծված հարցերը մեծապես աղերսվում են 1780 թ. հունվարի 10-ին՝ Հովհաննես Լազարյանի կողմից Ալեքսանդր Սուվորովին ներկայացրած «Պարոն Իվան Լազարևի հուշագիր» անվանումը ստացած վավերագրում առաջ քաշված խնդիրների հետ։ Ի շարս այլ հարցերի, նշված վավերագրի հեղինակն ընդգծում է այն կարևոր հանգամանքը, որ միավորված և հզորացած Վրաստանը կդառնա վերականգնված հայ թագավորության բնական դաշնակիցը. «Եվ եթե բարեհաճեք այդ կատարել (այսինքն հայ պետականությունը վերականգնել — Վ. Մ.) ապա վրաց արքայի որդիներից մեկին արժանացրեք նրանց (այսինքն հայերի — Վ. Մ.) վրա թագավորելու, նրան տալով նաև այն վայրերը, որոնց... այժմ տիրում է վրաց արքան...»⁸, կարողում ենք այդ հետաքրքրական վավերագրում։ Բերենք հայ գործիչների մտայնությունը հավաստող ևս մի փաստ։ Հովսեփ Արղունյանի նամակից տեղեկանալով Գեորգիևսկի դաշնագրի կնքմանը, Շահամիրյանը Մադրասից 1787 թ. հոկտեմբերի 15-ին Հերակլ II-ին ծրագրային մի նամակ է հղում, ուր դարձյալ ընդգծում է հայ-վրացական դաշնակցության անհրաժեշտությունը՝ օտարի լծից առհավետ ձերբազատվելու գործում։ Շահամիրյանը, Հերակլ II-ին առաջարկելով իր պետության մեջ զանազան բարենորոգություններ և երկրի առաջընթացին նպաստող օրենքներ մտցնել, գրում է. «...ի օրինաց քոց փրկեսցի ազգն հայոց և վրաց ի ծառայութենէ բռնատրաց»⁹։

Ոչ միայն ազատագրական շարժման ականավոր ներկայացուցիչներն էին գործուն մասնակցում Գեորգիևսկի դաշնագրի կնքմանը կամ խորին գոհունակություն արտահայտում, այլև Վրաստանի հայ արհեստավորներն ու առևտրականները նույնպես մեծ խանդավառություն ապրեցին այդ առթիվ։ Եթե նկատի առնենք այն իրողությունը, որ «Վրաստանի հինավուրց մայրաքաղաքի 20.000 բնակչությունից 14.500-ը հայեր էին»¹⁰, ապա անվարան կարող ենք պնդել, որ Գեորգիևսկի դաշնագրի

կնքման և վավերացման առթիվ Տփղիսում կայացած ժողովուրդական հանդիսություններին ակտիվորեն մասնակցել են նաև տեղի հայերը:

Այդպիսին էր վրաց և հայ ժողովուրդների, նրանց առաջադեմ գործիչների վերաբերմունքը Գեորգիևսկի դաշնագրի նկատմամբ, դաշնագիր, որը «կտրուկ կերպով թուլացնում էր իրանի և Թուրքիայի դիրքերը Անդրկովկասում»¹¹: Հենց այդ էր հիշյալ դաշնագրի հիմնական քաղաքական նշանակությունը, որն «Օբյեկտիվորեն առաջադիմական երևույթ էր»¹²:

Լ. Ալեքսիձեի այս արդարացի եզրակացությունը հարկ է ավելացնել նաև այն, որ Գեորգիևսկի դաշնագրի շնորհիվ ուժեղանում էր Ռուսաստանի ազդեցությունն Անդրկովկասում, հետևաբար, ավելի իրական էին դառնում թուրք-պարսկական լուծը թոթափելու հայ և վրաց ժողովուրդների ակնկալությունները:

Նշված դաշնագիրը ռուսական ծրագրերի կարևոր օղակներից մեկն էր, մյուսը հայ պետականության հարցն էր: Քաղաքականապես կազմալուծված Իրանում և Արևելյան Հայաստանի երբեմնի նրա տիրույթներում դրության տեղ էին դարձել տեղի խաները, որոնց դեմ էլ ուղղված էր հայ ազատագրական շարժումը: Ապագա հայ պետականության սահմաններում պիտի ընդգրկվեին Երևանի, Նախիջևանի, Արցախի (Ղարաբաղի), Ղարադաղի խանությունները, որոնցից առաջին երկուսը գտնվում էին Հերակլ II-ի գերիշխանության ներքո, իսկ Արցախի նորեկուկ բռնավորը վրաց արքայի դաշնակիցն էր:

Ինչո՞վ բացատրել այս, առաջին հայացքից իրարամերժ, իրողությունները: Ինչպիսի՞ն էր վրացական կողմի վերաբերմունքը հայ պետականությունը վերականգնելու խնդրի նկատմամբ:

Ինչպես տեսանք, հայ ազատագրական շարժման գործիչները սերտ աղերսների մեջ էին Հերակլ II-ի հետ, նրան համարում էին իրենց դաշնակիցը: Մյուս կողմից, Հերակլ II-ը Արցախի բռնավոր Իբրահիմ խանի դաշնակիցն էր:

Բանն այն է, որ XVIII դարի 50—60-ական թվականներին Անդրկովկասում զգալի ուժ դարձած Քարթլ-Կախեթի թագավորությունը Ղարաբաղի խանության հետ դաշնակցում և սատար էր լինում նրան, Դերբենդի Ֆաթալի խանի զավթողական նկրտումները սանձելու, Անդրկովկասում իր առաջնությունը պահպանելու, ինչպես նաև Անդրկովկասի նկատմամբ Իրանի գերիշխանությունը վերականգնելու հավակնություններն ի չիք դարձնելու նպատակով:

Այսպես էր իրավիճակը Անդրկովկասում, մինչև Գեորգիևսկի դաշնագրի կնքումը: Այդ դաշնագիրը ոչ միայն վրաց և հայոց ազատագրական գործիչների լուրջ հաջողությունն էր, այլև ջրբաժան գիծ հակոտնյա քաղաքական ընթացք ունեցող Անդրկովկասի իշխողների համար:

Այս կարևորագույն իրադարձությունը հարկադրում էր տեղական խաներին վերանայել իրենց նախկին փոխհարաբերությունները, հետին պլանի վրա էին մղվում փոխադարձ հակասությունները և Թուրքիայի խրախուսմամբ, գործուն աջակցությամբ ստեղծվում էր հակառուսական-հակավրացական ընդհանուր ճակատ¹³:

Տեսնենք, թե ինչպես էր վերաբերվում Դերբենդի Ֆաթալի խանը Գեորգիևսկի դաշնագրին՝ Անդրկովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման իրողությանը: Հերակլ արքայի ներկայացուցչի՝ Միրզա Միսալի էնիկոլոպյանի հետ ունեցած բանակցությունների ժամանակ Ֆաթալի խանը հայտարարել է, որ «Ինքը ռուսների հետ ոչ մի գործ չունի և չի էլ ուզում ունենալ»¹⁴: Դեռ ավելին, կշտամբելով Հերակլ II-ին Վրաստանում ռուսական զորամասեր բերելու առիթով, շարախնդորեն նկատել է, «արքան (իմա Հերակլ II-ը — Վ. Մ.) սրանից առաջ էլ ռուսներին իր հայրենիքը բերեց (նկատի ունի 1768—1774 թթ. գեներալ Տոտլեբենի հրամանատարությամբ Վրաստան եկած ռուսական զորքերը — Վ. Մ.), բայց ոչ մի օգուտ նրանցից չստացավ և ով է, որ նրանցից (իմա՝ ռուսներից — Վ. Մ.) բարօրության հասել և ի՞նչ եք դուք նրանցից սպասում»¹⁵:

Այս ամենը, իհարկե, կատարվում էր Թուրքիայի սադրանքով, «թուրքական կառավարող շրջանները որոշեցին դիմել Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ֆեոդալների աջակցությանը»¹⁶ Անդրկովկասում ռուսական ազդեցությունը ջլատելու և վերացնելու նպատակով:

Բազմաթիվ են այն փաստերը, որոնք աներկբայորեն վկայում են, որ տեղական խաները Թուրքիայի սադրանքով և գործուն մասնակցությամբ կամենում էին հակավրացական-հակառուսական դաշինք ստեղծել:

Այս հակավրացական ընդհանուր ճակատի ստեղծումը կանխելու միտումով է բացատրվում Հերակլ II-ի միջնորդության իրողությունը, որով նա ձգտում էր գլուխ բերել Իբրահիմ խանի՝ Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելու տարտամ և, ըստ էության, սոսկ ժամանակ շահելու և սեփական իշխանությունն աներեք պահելու նպատակով արված փորձերը:

Հերակլ II-ի միջնորդությունը հիմք է տվել Հ. Արղունթյանին և, վերջինիս վկայության մյուս հենմանով, պատմաբան Լեոյին կշտամբանքի խոսքեր ուղղել Հերակլ II-ի հասցեին, վերջինիս անհեռատեսության և անշրջահայացության մեջ մեղադրելով: 1788 թ. փետրվարի 1-ին Մելիք Մեջլումին և Մելիք Աբովին հղած նամակում Հովսեփ Արղունթյանը գրում էր. «...Կամէին սորա (իմա՝ ռուսները—Վ. Մ.) զիշխողն ձեր բառնալ (այսինքն Իբրահիմ խանին— Վ. Մ.) և զձեզ ի տեղի նորա հաստատել, սակայն յայնժամ նորին արքայական բարձրութիւնն (իմա՝ Հերակլ արքան— Վ. Մ.) բարեկամ գոլով ընդ նմայ, արգել և ոչ եթող թոյլ»¹⁷: Հիմք ունենալով Հովսեփ Արղունթյանի այս կարծիքը, Լեոն գրում է. «Հերակլն էր, որ թույլ չտվեց ռուսներին հեռացնել Իբրահիմ խանին և նրա տեղը դնել Մելիքներին»¹⁸: Այս դատողությունների մեջ դժվար չէ նկատել, նախ, Հերակլ II-ի դերի խիստ գերազնահատուկ մանրակրկիտ ուսական քաղաքականության կենսագործման խնդրում, երկրորդ, բուն այդ քաղաքականության ոչ ճիշտ ընկալելու և մեկնաբանելու իրողությունը¹⁹:

Բանն այն է, որ ինչպես XVIII դարի 20-ական, այնպես էլ հաջորդ տասնամյակներում Անդրկովկասի նկատմամբ ռուսական քաղաքականությունը անկախ, ինքնաբերական մի ամբողջություն չէր, այն մեծապես կախված էր Ռուսաստանի ընդհանուր միջազգային իրավիճակից և գտնվում էր ռուս-թուրքական փոխհարաբերությունների գերակայության ներքո. ռուս-թուրքական առնչություններին էր ստորադասված ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի նկատմամբ ռուսական քաղաքականությունը: Եթե նկատի առնենք, որ նոր էր կնքվել Ղրիմը միացնելու մասին Թուրքիայի հետ համաձայնագիրը (8 հունվարի 1784 թ.), ապա հասկանալի կլինի, որ Ռուսաստանը չէր կարող դիմել այնպիսի քայլերի, որոնք նորանոր բարդություններ, գուցե և ծայրահեղ սրություն մտցնեին ռուս-թուրքական հարաբերություններում:

Թուրքիան, կորցնելով Ղրիմը, ձգտում էր այդ կորուստը հատուցել Պովկասում և Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու միջոցով:

Թուրքիան չէր կարող հանդուրժել ռուսական զորքերի երևան գալը, հայկական պետականության վերականգնումը, Ռուսաստանի ազդեցության ոլորտի աննախադեպ ընդարձակումը և ամրապնդումը: Առանց այդ էլ Թուրքիան Գեորգիևսկի դաշնագրի դեմ գրեթե սրբազան պատերազմի կոչ էր անում և, ինչպես վկայում են փաստերը, այդ կոչը անպատասխան չմնաց:

Իսկ ինչ վերաբերում է Հերակլ II-ին, ապա վերջինս Պ. Ս. Պոտյոմկինին գրած նամակում այսպես է բացատրում իր վարքագիծը Իբրահիմ խանի նկատմամբ. «Քանիցս գրել ենք մենք Ձերդ գերազանցությանը, որ Իբրահիմ խանը, եթե մեր մեջ նույնիսկ չնչին փոփոխության և մտադրության տատանում նկատի... ապա առավելապես կհակվի դեպի թուրքերը և կմիանա նրանց, ու գործն ավելի կբարդանա, Գանձակը կկորցնենք, և Ղարաբաղը մեր դեմ կենի»²⁰: Դեռ ավելին, մինչև ռուսական զորքերի Անդրկովկաս մուտք գործելը, ռուսական կողմը խրախուսում և հավանություն էր տալիս Հերակլ արքայի՝ Իբրահիմ խանի նկատմամբ վարած քաղաքականությանը: Այսպես, Պ. Ս. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլին Ստեփան Բուռնաշովին՝ ռուսական ներկայացուցչին Հերակլի արքունիքում, գրում էր. «Ներշնչեք արքային, որպեսզի նա այս զազրելի խանին (նկատի ունի Իբրահիմին — Վ. Մ.) չօտարացնի, հուսադրելով նրան հանգեցնի ինձ հետ սերտ դաշինք կնքելուն, իսկ այդ ընթացքում ոչ մի բան ձեռքից բաց չթողնի»²¹:

1784 թ. ապրիլի 30-ին և մայիսի 1-ին Տփղիս ժամանած «գնդապետ Վասիլի Տամարայի հետ ունեցած ընդարձակ զրույցների ժամանակ Հերակլը հայտարարել է, որ թեև ինքը երկար տարիներ դաշնակից է Իբրահիմին, սակայն այժմ, Ռուսաստանի հետ դաշնագիր կնքելուց հետո, նա իրեն այնքանով է խանի հետ կապված համարում, որքանով այդ ցանկալի է ռուսներին»²²:

Գոտեպնդված Գեորգիևսկի դաշնագրով Ռուսաստանից ակնկալվող ռազմաքաղաքական օգնությամբ և հովանավորությամբ, Հերակլ արքան առաջ էր քաշում իր թաղավորությանը Երևանի, Գանձակի, Նախիջևանի խանությունները, ռուսական զորքերի օգնությամբ, միացնելու հարցը, գտնելով, որ զորեղացած Վրաստանը Ռուսաստանի հուսալի հենարանը կլինի Անդրկովկասում²³:

Ինչպես տեսնում ենք, թվարկված խանությունները Արևելյան Հայաստանի զգալի մասն էին կազմում: Արդյո՞ք Հերակլը չէր կամենում օգտվել հայկական պետականության վերականգնման վերաբերյալ ռուսական ծրագրերից, իր գալիստների ներքո միավորելով հայկական հողերը՝ վրաց և հայոց արքա տիտղոսով:

1784 թ. մայիսի 13-ին Պ. Ս. Պոտյոմկինին գրած նամակում Հերակլ II-ը նշում է, որ Տփղիս ժամանելիս լավ կլինի, եթե Պավել Պոտյոմկինին ուղեկցի արքեպիսկոպոս Հովսեփ Արղուսյանը, «դա օգտավետ կլինի գործի համար»²⁴:

Վերը շարագրվածից արդեն պարզ է, թե ինչ գործ նկատի ունեւ Հերակլ արքան: Զէ որ Հովսեփ Արղուսյանը ազատագրական շարժման այն ներկայացուցիչն էր, որը սերտ կապերի մեջ էր վրաց արքայի հետ և, շնորհիվ Գ. Ա. Պոտյոմկինի և ուստի այլ պետական գործիչների հետ ունեցած շփումների, ըստ էության, Արցախի մեկիքների, արևելահայ ազատագրական շարժման գործիչների իղձերի թարգմանն էր ուսական արքունիքում: «...Զի իմ կամքն է ծաղկեցուցանել զգոսա և կոշիլ ոչ միայն թագաւոր վրաց, ալլև հայոց»²⁵:

Մեծ հայրենասերի, ազատագրական շարժման ականավոր գործչի թեկուզ զգացմունքների հուժկու պոռթկումով ասածը գալիս է հավաստելու այն միտքը, որ ոչ միայն ինքը՝ վրաց արքան, այլև հայ գործիչները ևս միտում էին Հերակլի ուսերին հայոց արքայի ծիրանին տեսնել:

Հերակլ արքան 1784 թ. մայիսի 3-ին ուսական կողմին ներկայացրած իր ծրագրային հուշագրում շոշափում է նաև հայկական հարցը: Նա գրում է. «Եթե բարձրագույնը կբարեհաճի, որ հայերն ունենան թագավոր, և հենց իրենք էլ այդ հայցեն, ապա այդ հեշտությամբ կարելի է կատարել»²⁶:

Բնականաբար հարց է ծագում, արդյո՞ք վրաց արքան այս առաջարկությամբ չէր կամենում հուշել ուսական արքունիքին հենց իր թեկնածությունը:

Հ. Արղուսյանը սերտ աղերսներ ունեւ վրաց պետական գործիչներին հետ և նրանց հետ վարվող նամակագրություններում անսքող շոշափում էր հայ ազատագրական շարժման ղեկավարներին հուզող հարցեր: Այսպես, 1785 թ. հուլիսի 15-ին Պետերբուրգում վրաց դեսպան Գ. Զավաճաձեին հասցեագրված նամակում կարդում ենք. «Մեկիքաց աղաղակն է, զի զԳանջայն տիրեսցէ արքայն զօրօք ուսաց, յայնժամ նոքա մեր են հաւաստեալ և բերթն Շուշա ոչինչ, որպէս և գիտես»²⁷:

Արդյոք այս հեռահար նպատակը նկատի չունեւ Դուկաս Կարնեցին, երբ 1782 թ. մայիսի 8-ին ուս գնեւրալ Պավել Պոտյոմկինին հղած նամակում Հերակլ արքային հուշակում է «այստեղի ժողովրդի (իմա՝ հայերի— Վ. Մ.) հինավուրց տիրող և պաշտպան»²⁸:

Դուկաս Կարնեցին Հերակլ արքային 1783 թ. ապրիլին գրած նամակում նշում է. «...զքեզ գիտեմք և ճանաչեմք զխաւորագույն հավատարիմ, օգնական և խնամարկու սրբոյ աթոռոյս և մեզ, մերայնոցն և երկրիս մերոյ»²⁹:

Հերակլ արքայի ընտրած քաղաքական ընթացքը ներհակ է Արցախի, Գերբեմդի և Անդրկովկասի այլ խաների քաղաքական միտումներին: Այն

Թշնամանքի կատաղի մոլուցք առաջացրեց Թուրքիայի կառավարող շըր-
ջաններում, որոնք Անդրկովկասին սահմանակից իրենց փաշաներին լայն
արտոնություններ, զորական և նյութական հնարավորություններ ընձե-
ռեցին Քարթլ-Կախեթի թագավորության դեմ փաստորեն չհայտարար-
ված պատերազմ ծավալելու, պատերազմ, որ վարում էին տեղական խա-
ների, Դաղստանի ֆեոդալների միջոցով: Ստեղծված իրավիճակը ան-
հրաժեշտաբար պահանջում էր արագացնել ռուսական, պատշաճ քանա-
կով, զորքերի մուտքը Անդրկովկաս, մի բան, որ հզոր էր լուրջ բարդու-
թյուններով: Ռուսական զորքերի մուտքը, սակայն, ըստ էության, Ռու-
սաստանի համար կնշանակեր ներքաշվել այդ չհայտարարված պատե-
րազմի մեջ, որը Անդրկովկասի թատերաբեմում կարող էր վերաճել ռուս-
թուրքական պատերազմի:

Անդրկովկասում լայն ճակատով պատերազմելու հնարավորությու-
նը բացառված էր Ռուսաստանի համար: Այդ էր պատճառը, որ առժա-
մանակ ռուսական կառավարող շրջանները ձեռնպահ էին մնում ընդա-
ռաջելու վրաց և հայոց գործիչների բազում խնդրանքներին: Ահա թե
ինչու չենք կարող համաձայնել վրաց պատմաբան Գ. Մայսուրաձեի այն
մտքին, թե «շուտով պարզվեց, որ ոչ էլ նրա (իմա՝ Հերակլ արքայի— Վ.
Մ.) հովանավոր դաշնակից մեծ Ռուսաստանն էր Հերակլի արտակարգ
հզորացման կողմնակից: Նա սեփական տիրապետությունն ընդարձակե-
լու համար էր պայքարում և միաժամանակ դաշինք էր կնքում ինչպես
Հերակլի, այնպես էլ Հայաստանի և Ադրբեջանի խանությունների հետ:
80-ական թվականներին ռուսական կառավարությունը ծրագրում էր
Հայաստանի և Աղվանքի թագավորությունների վերականգնում իր հովա-
նավորության ներքո և հասկանալի է, «Հայոց արքայի» տիտղոսի համար
պայքարող Հերակլը այս խնդրում նրա համար պիտանի չէր»³⁰:

«Դեպքերի ամբողջ ընթացքը ակնհայտորեն վկայում էր, որ Անդր-
կովկասի ոչ վրացի բրիտանյանների (այսինքն՝ հայերի— Վ. Մ.) վրա
Հերակլի իշխանության տարածումը չէր համապատասխանում Ռուսաս-
տանի շահերին, և այդ իսկ պատճառով ռուսական կառավարությունը
ցանկալի չէր համարում Քարթլ-Կախեթի հզորացումը»³¹, — կարդում ենք
«Ակնարկներ Վրաստանի պատմության» շորրորդ հատորում:

Դժվար չէ նկատել, որ վրաց պատմաբանները 80-ական թվականնե-
րի իրադարձությունների մասին դատում են շուրջ երկու տասնամյակ
հետո տեղի ունեցած իրողությունից, այսպես ասած, հետադարձ վերլու-
ծության են ենթարկում նախկինում, քսան տարի առաջ տեղի ունեցած
անցքերը: Եվ մեր կարծիքով վրիպում են, որովհետև ոչ թե Քարթլ-Կա-

խեթի թագավորության հզորացումը չէր հրապուրում ռուսական կառավարությանը, այլ Թուրքիայի հետ իր համար աննպաստ պայմաններում զորական բախումներ ունենալու հեռանկարն էր հարկադրում գրվանի տակ դնել իր իսկ առաջ քաշած ծրագիրը:

Հերակլ արքայի և Արցախի բռնակալի փոխհարաբերությունները, ինչպես և պետք էր սպասել, ակնհայտորեն սրվեցին, իրարամերժ քաղաքական կողմնորոշում ընտրած երբեմնի դաշնակիցները դարձան անհաշտ թշնամիներ: Այս պայմաններում արդեն Հերակլ II-ը թաքցնելու ոչինչ չուներ, և նրա դաշինքը հայ մելիքների հետ ավելի բացահայտ բնույթ ստացավ: Իբրահիմ խանի թշնամական ոտնձգությունները կանխելու, նրա նվաճողական ձգտումներին վերջ դնելու նպատակով էր, որ ռուսական ծրագրերը օրակարգից հանելուց հետո էլ Հերակլը սերտ դաշինքի մեջ էր հայ գործիչների, Արցախի մելիքների հետ:

Այսպիսով, բերված փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ Հերակլ արքան 80-ական թվականներին ծավալված հայ ազատագրական շարժման ջերմ համակիրն էր և հայ պետականությունը վերականգնելու կողմնակիցը: Դեռ ավելին, ինքն էր միտում հայոց արքայի թագին տիրել, մի հանգամանք, որ համահնչուն էր հայ ազատագրական գործիչների ձգտումներին:

Ռուսական քաղաքականությունն ուղղված էր Անդրկովկասում գորեղ հակաթուրքական պատվար ստեղծելուն, և այդպիսի պատվար կարող էր լինել Քարթլ-Կախեթի թագավորությունը, որն արդեն գտնվում էր Ռուսաստանի հովանավորության ներքո, և նախատեսվող հայկական պետականությունը: Քարթլ-Կախեթի հետագա հզորացումը չէր հակասում այդ շրջանում ռուսական քաղաքականությանը:

XVIII դարի 80-ական թվականներին հայ-վրաց ազատագրական գործիչների համագործակցությունը ակնկալվող արդյունքին չհասնելով Թուրքիայի ծավալած հակառուսական պայքարի հետևանքով, որի գործուն կիրառողները եղան Դաղստանի իշխողները, ինչպես նաև Ղարաբաղի, Խոյի խաները:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

¹ Այդ նախագծերի մասին տե՛ս Ան, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973: Թ. Ավդալբեգյան, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում («Նորք», գիրք 1, Երևան, 1922): А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVII столетия, Ереван, 1947, М. Г. Нерсисян. Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956: Ա. Մնացականյան, 18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծե՛ք:

քի գնահատման հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», № 4, 1958), Վ. Ա. Դիլյան, Հաղարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960 և այլն:

2 Ն. յոյն տեղում, Նաթանյան, 1923, էջ 205:

3 Տե՛ս նշվ. աշխ., էջ 234:

4 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 4496, Բ. 207—208:

5 Նույն տեղում, Բ. 176:

6 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2951, Բ. 214—215:

7 А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 147:

8 А. А. Цагарели, Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся до Грузии, т. II, вып. II, СПб., 1902, АВПР, ф. СРГ, 1774—1804, д. 18, лл. 153—154.

9 Ս. Վ. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար («Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», հ. 13, 1940, էջ 42):

10 Պարույր Սևակ, Մայր-Նովա, Երևան, 1961, էջ 130—131:

11 О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, с. 171.

12 Л. Алексидзе, Взаимоотношения Грузии с Россией в XVI—XVIII вв. (международно-правовое исследование), (Труды Тбилисского государственного университета, т. 94, Тб., 1963, с. 91).

13 В. М. Мартirosян, Новые документы о политическом положении Закавказья, (80-е годы XVIII века), Вестник общест. наук АН АрмССР, 1979, № 3, с. 92.

14 Նույն տեղում, էջ 96:

15 История СССР, т. III, М., 1976, с. 644.

16 Ան, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 366:

17 Նույն տեղում, էջ 367:

18 Այս կարծիքը պարզունակ համարելով, տաշինը բնագատել և մերժել է ակադեմիկոս Արդար Հովհաննիսյանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 103: Սակայն սխալն անցել է էնոյի աշխատության մեջ ևս, բոլր, առանց որևէ ծանոթագրության, վերահաստատակվել է 1973 թ.:

19 В. Н. Гамрекели, Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х и начало 90-х годов XVIII в.), Документы и материалы, I выпуск, Тб., 1980, с. 212—213.

20 Новые материалы для жизнеописания и деятельности С. Д. Бурнашева, СПб., 1901, с. 21.

21 А. Р. Иоаннисян, նշվ. աշխ., էջ 102:

22 В. Н. Гамрекели, նշվ. աշխ., էջ 172:

23 Նույն տեղում, էջ 168:

24 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2951, Բ. 215:

25 О. П. Маркова, նշվ. աշխ., էջ 174:

26 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4496, Բ. 315—316:

27 ЦГАДА СССР, ф. 23, д. 13, ч. 3/1, л. 104

28 *შ. შაჰთიყის ანკლას შათხნაყარის, პხი. 2803, პ. 147—147ა;*

29 *გ. მაისურაძე, ქართველ და სომეხ ძეღძების ურთიერთობა XIII—XVIII საუკუნეებში, თბ., 1982, ლ. 282;*

30 *გ. მაისურაძე, ზღ. აქს., ლ. 282;*

31 *საქართველოს ისტორიის ნარკვევები ტ. IV, თბ., 1973, ლ. 700;*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան (Վ. Բ. Բարխուդարյան)	5
Վ. Կ. Ոսկանյան. Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (XV—XVIII դդ. սկիզբ)	17
Ս. Է. Քոլանջյան. Հայազգի գործիչների մասնակցությունը միջնադարյան Մուղղ-վայի և Վալախիայի ժողովուրդների հակաօսմանյան պայքարին (XV—XVIII դդ.)	53
Վ. Ա. Բայբուրդյան. Հայաստանի ազատագրման խնդիրը և ջուղայահայ առևտրական բուրժուազիան XVI—XVII դարերում	97
Է. Խ. Թաչիրյան. Հոլանդահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դար)	116
Վ. Ա. Խաչատրյան. Հայ ժողովրդի ազատագրական շարժումները և Աստրախանի հայ գաղութը XVIII դարում	140
Լ. Ա. Պողոսյան. Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերը XVIII դարի հայ-ռուսական հասարակական-քաղաքական հարաբերություններում	155
Ժ. Հ. Անանյան. Հայկական գաղթավայրերի հիմնումը Սև ծովի հյուսիսային շրջաններում և հայ ազատագրական շարժումը XVIII դարի վերջին երեսնամյակում	171
Վ. Բ. Բարխուդարյան. Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները XVIII դարի վերջին քառորդի հայ ազատագրական շարժումներում	187
Վ. Մ. Մարտիրոսյան. Հայ-վրացական համագործակցությունը XVIII դարի 80-ական թվականների ազատագրական պայքարում	217

**XVI—XVIII ԴԱՐՆԵՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅԻՆԵՐԸ**

(Հոդվածների ժողովածու)

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան
Նկարիչ Ս. Ս. Մկրտչյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հատուքյունյան
Սրբագրիչ Գ. Է. Դեմնակյան

ИБ № 1382

Հանձնված է շարվածքի 10. 08. 1988 թ.: Ստորագրված է տպագրության 12. 05. 1989 թ.:
ՎՅ 04017 Չափը $60 \times 84 \frac{1}{16}$ թուղթ № 2: Տառատեսակ «գրքի սովորական» —
բարձր տպագրություն: Պայմ. 13,48 մամ., տպագր. 14,5 մամուլ: Ներկ. մամուլ 13,48:
Հրատ.-հաշվարկ 12,73 մամուլ: Տպաքանակ 3000: Հրատ. № 7374 Պատվեր № 500:
Գինը 1 ռ. 70 կոպ.:

ՀեՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀեՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

1 н. 70 л.

A II
79897